
ASDA՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ)

ASDA - ARMENIAN LAW GOVERNED DERIVATIVES DOCUMENTATION (INCLUDING PROVISIONS FOR SECURITIES FINANCING TRANSACTIONS

Սույն փաստաթղթում ներառված ձևաթղթերը պաշտպանվում են հեղինակային իրավունքով: Շուկայի մասնակիցներն իրավունք ունեն դրանք օգտագործելու բացառապես դրանցով կարգավորվող գործարքների կնքման նպատակով: Ձևաթղթերի կրկնօրինակումը, տարածումը կամ որևէ այլ նպատակով օգտագործումն առանց Կենտրոնական բանկի նախնական գրավոր համաձայնության արգելվում է:

The standard templates included into this document are subject to copyright protection. Market participants are granted the right to use them solely for the purpose of entering into transactions contemplated thereby. Reproduction, distribution or use of the templates for any other purposes without prior written consent of the Central Bank shall be prohibited.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՆԱՄԱԿ / INTRODUCTORY NOTE 4

ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ / MASTER AGREEMENT FOR THE CONCLUSION OF DERIVATIVE FINANCIAL TRANSACTIONS 11

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ / SCHEDULE TO THE MASTER AGREEMENT 87

ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ / CREDIT SUPPORT ANNEX 108

ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ / DERIVATIVES TRANSACTIONS TEMPLATE CONFIRMATIONS 134

ԻՐԱԿԱՆ ԱՌԱՔՄԱՄԲ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՖՈՐՎԱՐԴ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎ / CONFIRMATION OF A PHYSICALLY SETTLED SHARE FORWARD TRANSACTION 135

ՈՉ ԻՐԱԿԱՆ ԱՌԱՔՄԱՄԲ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՖՈՐՎԱՐԴ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎ / CONFIRMATION OF A CASH-SETTLED SETTLED SHARE FORWARD TRANSACTION 147


ԻՐԱԿԱՆ ԱՌԱՔՄԱՄԲ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎ / CONFIRMATION OF A PHYSICALLY SETTLED SHARE SWAP TRANSACTION 159

ՈՉ ԻՐԱԿԱՆ ԱՌԱՔՄԱՄԲ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎ / CONFIRMATION OF A CASH-SETTLED SHARE SWAP TRANSACTION 173

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎ / CONFIRMATION OF FX SWAP TRANSACTION 184

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ / SECURITIES FINANCING TRANSACTION DEFINITIONS 190

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ / EXHIBITS TO THE SECURITIES FINANCING TRANSACTIONS DEFINITIONS TEMPLATE CONFIRMATIONS 250




ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎ / FORM OF CONFIRMATION IN RESPECT OF A LOAN TRANSACTION 251

ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎ / FORM OF CONFIRMATION IN RESPECT OF A REPURCHASE TRANSACTION 257

ԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ «ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ՓԱԿՄԱՆ ԶՈՒՏԱՑՄԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ՀՀ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԵՐՔՈ / LEGAL OPINION ON ENFORCEABILITY UNDER ARMENIAN LAW OF CLOSE-OUT NETTING IN ARMENIAN LAW GOVERNED DERIVATIVE FINANCIAL INSTRUMENTS MASTER AGREEMENT 263

ԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ / COLLATERAL OPINION (COLLATERAL PROVIDER INSOLVENCY) 306



ՆԵՐԱԾԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Պատմական ակնարկ.

2016թ.-ին ընդունվեց ածանցյալներին վերաբերող օրենսդրական փոփոխությունների մեծ փաթեթ, որով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև «Սնանկության մասին» և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքներում ածանցյալ ֆինանսական գործիքներին տրվեց իրավական կարգավորում, իսկ զուտացումը սահմանվեց որպես սնանկության վարույթներում կիրառվող սահմանափակումներից բացառություն:

2019թ.-ից մինչ օրս «Անդերսեն լիգըլ» ՓԲԸ (Անդերսեն Լիգըլի) կողմից պատրաստվել և ISDA-ի կայքում հրապարակվել են նաև ISDA փաստաթղթերի զուտացման և ապահովության դրույթների վերաբերյալ իրավական եզրակացություններ, որոնք յուրաքանչյուր տարի թարմացվել են: Վերջին, 2025 թվականի թարմացումը նախատեսվում է իրականացնել այս տարի:

2017 թ.-ին Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունվեց թիվ 67-Ն որոշումը, որով նախատեսվեցին միջազգային շուկայում լայնորեն կիրառվող ածանցյալ ֆինանսական գործիքների կնքման տիպային համաձայնագրերը՝ դրանց մեջ, ի թիվս այլ ֆինանսական պայմանագրերի, ներառելով

INTRODUCTORY NOTE

Historical Overview.

In 2016, a comprehensive legislative package concerning derivatives was adopted, which introduced legal regulation of derivative financial instruments into the RA Civil Code, the RA Law "On the Securities Market", as well as the RA Laws "On Bankruptcy" and "On the Bankruptcy of Banks, Credit Organizations, Investment Companies, Investment Fund Managers, and Insurance Companies". Netting was established as an exception to the restrictions typically applied in bankruptcy proceedings.

Since 2019, legal opinions on the netting and collateral provisions of ISDA documentation have also been prepared by Andersen Legal CJSC (Andersen Legal) and published on ISDA's website. These opinions have been updated annually, with the latest update for 2025 scheduled for this year.

In 2017, Resolution No. 67-N was adopted by the Board of the Central Bank, which introduced standard agreements for the conclusion of derivative financial instruments widely used in international markets. Among other financial agreements, these included the ISDA Master Agreement and related documents published by the International swaps and Derivatives Association (ISDA)[1].

[1] ISDA-ի մասին ավելին տես այստեղ. https://www.isda.org/about-isda/:

Սվոփերի և ածանցյալների միջազգային ասոցիացիայի (ISDA)[1] կողմից հրապարակված գլխավոր համաձայնագիրը և այլ փաստաթղթերը:

2023-2024թթ.-ին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) և Կենտրոնական բանկի («ԿԲ») կողմից մեկնարկեց ISDA փաստաթղթերի տեղայնացման նախագիծը, իսկ 2025թ.-ին 67-Ն որոշումը փոփոխվեց և այժմ ներառում է նաև այս նախագծի շրջանակներում պատրաստված եւ ԿԲ կողմից հրապարակված փաստաթղթերը:

In 2023-2024, the European Bank for Reconstruction and Development (EBRD) and the Central Bank launched the project for the localization of ISDA documentation, and in 2025, Resolution No. 67-N was amended to also include the documents prepared within the framework of this project and published by the Central Bank.

Ձևաթղթերի նախատիպերը.

Template prototypes.


Փաստաթղթերի տեղայնացման ծրագիրը նախաձեռնվել է ԿԲ կողմից՝ ՎԶԵԲ-ի տեխնիկական աջակցությամբ և Ճապոնիայի կառավարության ֆինանսավորմամբ: Փաստաթղթերի տեղայնացումն իրականացվել, և իրավական եզրակացությունները կազմվել են «Անդերսեն Լիգըլ» ՓԲԸ-ի («Անդերսեն Լիգըլ») կողմից:

The localization project of the documents was initiated by the Central Bank with the technical assistance from the EBRD and the financial support from the Government of Japan. The localization of the documents and the preparation of the legal opinions were carried out by Andersen Legal.

Փաստաթղթերի ձևանմուշները պատրաստվել են ISDA-ի կողմից հրապարակված համապատասխան փաստաթղթերի հիման վրա՝ հիմք ընդունելով միջազգային լավագույն ստանդարտները՝ յուրաքանչյուր դրույթի՝ ՀՀ օրենսդրության շրջանակներում դիտարկման և տեղայնացման մեթոդաբանությամբ: Մասնավորապես, օգտագործվել են 2002թ. Գլխավոր համաձայնագիրը, դրա Հավելվածը (ներառյալ Հավելվածի SFT (Արժեթղթերով ֆինանսավորման գործարքների) դրույթները), 1995թ. Ապահովության հավելվածը (անգլիական իրավունքով կարգավորվող), 2022թ. SFT

The template documents have been prepared based on the relevant documentation published by the ISDA, using international best standards and applying a methodology of reviewing and localizing each provision of these documents within the framework of Armenian legislation. In particular, the following were used: the 2002 ISDA Master Agreement, its Schedule (including the Securities Financing Transactions (SFT) Schedule Provisions of the Schedule), the 1995 Credit Support Annex (governed by English law), the 2022 SFT Definitions, and ISDA's industry legal opinions.

[1] See more about ISDA here: https://www.isda.org/about-isda/.



հասկացությունները, ISDA-ի ոլորտային իրավական եզրակացությունները:

Ծրագրի ընթացքը.

Ձևաթղթերի համար հիմք ծառայած փաստաթղթերի յուրաքանչյուր դրույթի՝ ՀՀ օրենսդրության շրջանակներում դիտարկումից հետո մի քանի փուլով քննարկումներ են տեղի ունեցել ԿԲ, ՎԶԵԲ և Անդերսեն Լիգըլի թիմերի միջև, իսկ զուգահեռ պատրաստվել են ՀՀ իրավունքով կարգավորվող փաստաթղթերի առաջին նախագծերը:

Project Progress.

Following a review of each provision of the underlying documents for the templates within the scope of Armenian legislation, a series of multi-stage discussions took place between the teams of the Central Bank, the EBRD, and Andersen Legal. In parallel, the initial drafts of the documents governed by Armenian law were prepared.

Դրանից հետո փաստաթղթերը շրջանառվել էին շուկայի մասնակիցներին, և ստացվել են մի շարք արձագանքներ, հարցեր և մեկնաբանություններ, որոնց հիման վրա փաստաթղթերի բոլոր ձևանմուշները վերանայվել են երկրորդ փուլով:

Afterwards, the documents were circulated among market participants, and a number of feedback, questions, and comments were received. Based on this feedback, all template documents were reviewed and revised during a second stage.

Այնուհետև տեղայնացվել են նաև SFT հասկացությունները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաթղթերի ձևանմուշները ներառում են նաև SFT դրույթները՝ նախատեսված ռեպո և արժեթղթերով փոխառության գործարքների համար, իսկ դրանց կիրառման ամբողջական կարգավորման համար ISDA-ն հրապարակել է SFT հասկացություններ:


Subsequently, SFT Definitions were also localized, taking into account the fact that the template documents include SFT Provisions intended for repo and securities lending transactions and for the comprehensive regulation of their application ISDA has published a set of SFT Definitions.

Վերջին փուլում պատրաստվել են նաև զուտացման (netting) և ապահովության (collateral) կիրարկելիության վերաբերյալ իրավական եզրակացությունները:

In the final stage, legal opinions regarding the enforceability of netting and collateral provisions were also prepared.

2025 թվականի հունիսի 12-ին փաթեթում ներառված փաստաթղթերի ձևանմուշների կիրառման նպատակների, դրանց հիմնական դրույթների ներկայացման և շուկայի մասնակիցների հարցերի պարզաբանման նպատակով Կենտրոնական բանկի կողմից

On June 12, 2025, the Central Bank organized a training session aimed at presenting the purposes of using the template documents included in the package, outlining their key provisions, and addressing questions from market participants. The session was intended for the technical, operational, and legal staff of market participants that was also attended by the representatives of the EBRD. The



կազմակերպվեց դասընթաց՝ նախատեսված շուկայի մասնակիցների տեխնիկական, օպերացիոն և իրավական անձնակազմերի համար, որին մասնակցում էին նաև ՎՀԵԲ-ի ներկայացուցիչները: Դասընթացը վարեցին Անդերսեն Լիգըլի աշխատակիցները: Նույն օրը փաստաթղթերի ձևանմուշները ներկայացվեցին նաև շուկայի մասնակիցների ղեկավարներին:

training was conducted by Andersen Legal staff. On the same day, the template documents were also presented to the executives of market participants.

Կազմված ձևաթղթերը և դրանց նպատակը.

The drafted templates and their purpose.

ՀՀ օրենսդրությամբ կարգավորվող ածանցյալ ֆինանսական գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը (Master Agreement), դրան կից Հավելվածը (Schedule), ԱՖԳ (SFT) հասկացությունները և Ապահովության պայմանագիրը (Credit Support Annex) նախատեսված են ածանցյալ ֆինանսական գործիքների, ռեպո և արժեթղթերի փոխառության գործարքների պայմանագրային մեխանիզմ ապահովելու համար:

The Armenian law governed Master Agreement for the execution of Derivative Financial Transactions (Master Agreement) together with the attached Schedule, SFT Definitions and the Credit Support Annex, is intended to provide a contractual framework for derivatives, repurchase (repo) and securities lending transactions.

Գլխավոր համաձայնագիրը նախատեսում է երկու կողմերի շրջանակային համաձայնությունը, որի ներքո կարող են կնքվել անհատական գործարքներ:


The Master Agreement provides the framework agreement between two parties under which individual transactions may be entered into.

Հավելվածը (Schedule) սահմանում է Գլխավոր համաձայնագրի՝ անհատականացման/բանակցությունների ենթակա դրույթները, ինչպես նաև լրացուցիչ դրույթներ, որոնք կողմերը կարող են ավելացնել: Հավելվածը ներառվում է Գլխավոր համաձայնագրում, լրացնում է այն և հանդիսանում է դրա մասը:

The Schedule defines the provisions of the Master Agreement that are subject to customization or negotiation, as well as additional provisions which parties might wish to add. The Schedule is incorporated into, supplements and forms a part of the Master Agreement.

Ապահովության պայմանագիրը փաստաթուղթ է, որը կարգավորում է ապահովության երկկողմ պայմանավորվածությունները: Հավելվածի նման՝ Ապահովության պայմանագիրը ներառվում է Գլխավոր համաձայնագրում, լրացնում է այն և հանդիսանում է դրա մասը:

The Credit Support Annex is the document that governs bilateral collateral arrangements between two parties. Similarly to the Schedule, the Credit Support Annex is incorporated into, supplements and forms a part of the Master Agreement.



ԱՖԳ (SFT) հասկացությունները և ԱՖԳ Հավելվածի դրույթները ներառվել են Գլխավոր համաձայնագրի ներքո ռեպո և արժեթղթերի փոխառության գործարքների կնքումն ապահովելու և ԱՖԳ պրոդուկտների ստանդարտ պայմաններն ու մեխանիզմները սահմանելու համար:

The Securities Financing Transactions (SFT) Definitions and the relevant SFT Schedule Provisions have been included to allow for repo and securities lending transactions to be documented under a Master Agreement and provide the standard terms and mechanics for SFT products.

Փաթեթում ներառված են նաև զուտացման և ապահովության վերաբերյալ իրավական եզրակացություններ՝ Գլխավոր համաձայնագրի փակման զուտացման դրույթների և Ապահովության պայմանագրի՝ սեփականության իրավունքի փոխանցմանը (transfer of title) վերաբերելի դրույթների՝ ՀՀ օրենսդրության ներքո վավերության և կիրարկելիության (validity and enforceability) վերլուծություն՝ հատուկ անդրադարձ կատարելով ՀՀ սնանկության օրենսդրության ներքո սնանկության և անվճարունակության ռիսկերին:

The package also includes legal opinions on netting and collateral, analyzing the validity and enforceability of the close-out netting provisions of the Master Agreement and the title transfer provisions of the Credit Support Annex under Armenian law, with a particular focus on insolvency and bankruptcy risks under Armenian insolvency legislation.

Փաթեթին կից նաև հրապարակվում են ռեպո, արժեթղթերի փոխառության գործարքների և ածանցյալ ֆինանսական գործիքների (բաժնետոմսերի ֆորվարդների և սվոփերի, արտարժութային սվոփի), Հաստատումների օրինակներ, որոնք ունեն ուղղորդող բնույթ. շուկայի մասնակիցները պետք է դրանց դրույթները համապատասխանեցնեն իրենց յուրահատուկ առևտրային և իրավական պահանջմունքներին, ինչպես նաև համապատասխան գործարքի և կոնտրագենտի բնույթին:


Sample confirmations for repo and securities lending transactions, as well as for derivative financial instruments (equity forwards and swaps) and FX swap transaction, are also published as part of the package. These serve as guiding templates: market participants are expected to tailor the provisions thereof to their specific commercial and legal requirements, as well as to the nature of the relevant transaction and counterparty.

Ձևաթղթերի կարգավիճակը.

Status of the Templates.

2025թ.-ին 67-Ն որոշման փոփոխության արդյունքում ԿԲ-ի կողմից հրապարակման պահից վերոնշյալ փաստաթղթերը ՀՀ օրենսդրության իմաստով համարվում են ֆինանսական գործարքներ:

As a result of the amendment to Resolution No. 67-N in 2025, from the moment of their publication by the Central Bank, the above-mentioned documents will be considered financial transactions within the meaning of Armenian legislation.



Այսպիսով, ձևանմուշների հիման վրա կնքված գործարքների նկատմամբ կիրառելի կլինեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի ներքո զուտացման դրույթները՝ ապահովելով կողմերի իրավունքները նաև սնանկության վարույթում, ինչպես նաև ֆինանսական գործարքիների ռեժիմում ներառվող այլ կարգավորումները: Այս մասին առավել մանրամասն վերլուծությունն առկա է զուտացման և ապահովության վերաբերյալ իրավական եզրակացություններում:

Accordingly, netting provisions under the RA Civil Code, the RA Laws "On Bankruptcy" and "On the Bankruptcy of Banks, Credit Organizations, Investment Companies, Investment Fund Managers, and Insurance Companies" will apply to transactions concluded based on these templates. This ensures that the parties' rights are protected even in bankruptcy proceedings, as well as other regulations applicable to financial transactions. A more detailed analysis of this is available in the netting and collateral legal opinions.

ՀՀ իրավունքով կարգավորվող՝ Գլխավոր համաձայնագրի և կից փաստաթղթերի ձևանմուշների հրապարակումը կարևոր քայլ է, որը տեղական շուկայի մասնակիցներին թույլ կտա հասանելիություն ստանալ ածանցյալ և ռեպո գործարքների փաստաթղթավորման միջազգային փորձին և կնպաստի ՀՀ-ում այդ շուկաների հետագա զարգացմանը:

The publication of the Armenian law governed templates of Master Agreement and related documents marks a significant milestone, enabling local market participants in Armenia to tap into the international experience in the area of documenting derivatives and repo transactions and contributing to the further development of these markets in Armenia.

Հետագա քայլեր.


Next Steps.

Հրապարակվել են փաստաթղթերի ձևանմուշների ինչպես միայն հայերեն, այնպես էլ երկլեզու (հայերեն և անգլերեն) տարբերակները՝ հնարավորություն ընձեռելով անհրաժեշտության դեպքում անգլերեն տարբերակի օգնությամբ համապատասխան դրույթները դիտարկել ISDA փաստաթղթերի նույնատիպ դրույթների վերաբերյալ հրապարակված ուղեցույցների շրջանակում:

The template documents have been published both in Armenian-only and bilingual (Armenian and English) versions, allowing, when necessary, the use of the English version to review the relevant provisions within the framework of guidance published on similar provisions in ISDA documentation.

ISDA-ի կողմից հրապարակված փաստաթղթերը պարբերաբար թարմացվում են՝ ելնելով շուկայի զարգացումներից, նոր մոտեցումներից կամ

ISDA-published documents are periodically updated based on market developments, new approaches, or geopolitical situations. Consequently, ISDA also publishes relevant guidelines, which are available to




աշխարհաքաղաքական վիճակից: Արդյունքում ISDA-ի կողմից հրապարակվում են նաև համապատասխան ուղեցույցներ, որոնք հասանելի են անդամներին[2] և օգտակար են նոր զարգացումների մասին տեղեկանալու և միջազգային շուկայի մասնակիցների հետ կապեր ստեղծելու արժեքավոր հնարավորություն տրամադրելու տեսանկյուններից:

its members[2] and prove helpful in staying informed about new developments and providing valuable networking opportunities with international market participants.

[2] ISDA-ին անդամակցության մասին ավելին տես այստեղ. https://www.isda.org/membership/:
See more about ISDA membership here: https://www.isda.org/membership/.

Սույն փաստաթուղթը կազմվել է Ճապոնիայի ֆինանսական աջակցությամբ
This document has been produced with the financial assistance of Japan



ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

MASTER AGREEMENT FOR THE CONCLUSION OF DERIVATIVE FINANCIAL TRANSACTIONS

BY AND BETWEEN

[●]

ԵՎ

AND

[●]

ԿՈՂՄԻՑ ԵՎ ՄԻՋԵՎ

ԵՐԵՎԱՆ, YEREVAN

[●] [●]ի 202[●]

Սույն գլխավոր համաձայնագիրը կնքվում է

This master agreement is entered into by and between

[●]-ի (գրանցման համար՝ [●], ՀՎՀՀ՝ [●], հասցե ՝ [●])

[●] (registration number: [●], TIN: [●], address: [●])

և

and

[●]-ի (գրանցման համար՝ [●], ՀՎՀՀ՝ [●], հասցե ՝ [●]) միջև և կողմից

[●] (registration number: [●], TIN: [●], address: [●])

Կողմերը կնքել են և/կամ նախատեսում են կնքել սույն գլխավոր համաձայնագրով (որը ներառում է կից հավելվածը (**«Հավելված»**), ինչպես նաև կողմերի միջև փոխանակվող կամ այլ կերպ Գործարքների կնքումը հավաստող կամ վկայող այլ փաստաթղթեր կամ այլ հավաստող ապացույցներ (որոնցից յուրաքանչյուրը կոչվում է **«Հաստատում»**)) կարգավորվող մեկ կամ մի քանի գործարքներ (որոնցից յուրաքանչյուրն այսուհետ կկոչվի **«Գործարք»**): Սույն գլխավոր համաձայնագիրը և Հավելվածը միասին այսուհետ կանվանվեն **«Գլխավոր համաձայնագիր»**:

The parties have entered and/or anticipate entering into one or more transactions (each a **"Transaction"**) that are or will be governed by this master agreement, which includes the schedule (the **"Schedule"**), and the documents and other confirming evidence (each a **"Confirmation"**) exchanged between the parties or otherwise effective for the purpose of confirming or evidencing those Transactions. This master agreement and the Schedule are together referred to as this **"Master Agreement"**.

Կողմերը պայմանավորվում են հետևյալի շուրջ.

Accordingly, the parties agree as follows:

1. Մեկնաբանում


Interpretation

1.1. ***Հասկացություններ.*** Սույն Գլխավոր համաձայնագրի 2-րդ և այլ բաժիններում սահմանված հասկացությունները սույն Գլխավոր համաձայնագրի նպատակների համար ունեն դրանցում սահմանված նշանակությունը:

Definitions. The terms defined in Section 2 and elsewhere in this Master Agreement will have the meanings therein specified for the purpose of this Master Agreement.

1.2. ***Հակասություններ.*** Հավելվածի և սույն Գլխավոր համաձայնագրի այլ դրույթների միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում գերակայում է Հավելվածը: Որևէ Հաստատման և սույն Գլխավոր համաձայնագրի դրույթների միջև որևէ անհամապատասխանության դեպքում համապատասխան Գործարքի

Inconsistency. In the event of any inconsistency between the provisions of the Schedule and the other provisions of this Master Agreement, the Schedule will prevail. In the event of any inconsistency between the provisions of any Confirmation and this Master Agreement, such Confirmation will prevail for the purpose of the relevant Transaction.



մեկնաբանման նպատակների համար գերակայում է այդ Հաստատումը:

1.3. ***Ամբողջական համաձայնագիր.*** Բոլոր Գործարքները կնքվում են՝ հիմվելով այն փաստի վրա, որ սույն Գլխավոր համաձայնագիրը և բոլոր Հաստատումները կազմում են կողմերի ամբողջական համաձայնությունը (միասին անվանվելով նաև **«Համաձայնագիր»**), և հակառակ դեպքում կողմերը որևէ Գործարքի մասնակից չէին դառնա:

Single Agreement. All Transactions are entered into in reliance on the fact that this Master Agreement and all Confirmations form a single agreement between the parties (collectively referred to as this **"Agreement"**), and the parties would not otherwise enter into any Transactions.

2. Հասկացություններ

Սույն Համաձայնագրում՝

«*Լրացուցիչ հավաստիացում*» *ունի Գլխավոր համաձայնագրի 4-րդ բաժնում սահմանված նշանակությունը:*

«*Դադարեցման լրացուցիչ հիմք*» *ունի 6.2. բաժնում սահմանված նշանակությունը:*

«*Տուժող կողմ*» *ունի 6.2. բաժնում սահմանված նշանակությունը:*

«*Տուժող գործարքներ*» *նշանակում է. (ա) Անհրավաչափության կամ Ֆորս մաժորային իրավիճակ պարունակող Դադարեցման հիմքի դեպքում՝ բոլոր այն Գործարքները, որոնց վրա ազդում է այդ Դադարեցման հիմքը. ընդ որում, Գլխավոր համաձայնագրի 6.1.2. բաժնով նախատեսված Անհրավաչափության կամ 6.2.2. բաժնով նախատեսված Ֆորս մաժորային իրավիճակի դեպքում Տուժող են համարվում այն Գործարքները, որոնք համապատասխան Ապահովության փաստաթղթում նշված են որպես այդպիսին, կամ որոնց համար այդ Ապահովության փաստաթուղթը հանդիսանում է Հաստատում (Ապահովության փաստաթղթում համապատասխան նշման բացակայության/Ապահովության փաստաթղթի՝ Հաստատում չհանդիսանալու դեպքում՝ բոլոր Գործարքները),*
(բ) այլ Դադարեցման հիմքերի ազդեցության դեպքում՝ բոլոր Գործարքները:

Definitions


As used in this Agreement:

"Additional Representation" *has the meaning specified in Section 4.*

"Additional Termination Event" *has the meaning specified in Section 6.2.*


"Affected Party" *has the meaning specified in Section 6.2.*

"Affected Transactions" *means (a) with respect to any Termination Event consisting of an Illegality or a Force Majeure Event, all Transactions affected by the occurrence of such Termination Event (which, in the case of an Illegality under Section 6.1.2. or a Force Majeure Event under Section 6.2.2., means all Transactions unless the relevant Credit Support Document references only certain Transactions, in which case those Transactions and, if the relevant Credit Support Document constitutes a Confirmation for a Transaction, that Transaction) and (b) with respect to any other Termination Event, all Transactions.*



«***Փոխկապակցված անձ***» *ունի Արժեթղթերի շուկայի մասին օրենքով սահմանված նշանակությունը, եթե Հավելվածով այլ բան նախատեսված չէ:*[1]	***"Affiliate"*** *has the meaning specified in the Securities Market Law, unless otherwise specified in the Schedule*[1]*.*
«***Համաձայնագիր***» *ունի Գլխավոր համաձայնագրի 1.3. բաժնում սահմանված նշանակությունը:*	***"Agreement"*** *has the meaning specified in Section 1.3.*
«***ՀՀ դրամ***» *նշանակում է հայկական դրամ՝ Հայաստանի Հանրապետության օրինական արժույթը:*	***"AMD"*** *means Armenian drams, the lawful currency of the Republic of Armenia.*
«***Փակման կիրառելի դրույքաչափ***» *նշանակում է՝*	***"Applicable Close-out Rate"*** *means:*
(ա) Չվճարված գումարի որոշման նպատակով.	*(a) in respect of the determination of an Unpaid Amount:*
(1) *Խախտող կողմի՝ վճարման կամ առաքման ենթակա պարտավորությունների (կամ որոնք ենթակա կլինեին վճարման կամ առաքման, եթե պահպանվեին 3.1.3. բաժնով սահմանված Նախապայմանները) համար՝ Տուժանքը,*	*in respect of obligations payable or deliverable (or which would have been but for Section 3.1.3.) by a Defaulting Party, the Default Rate;*
(2) *Պարտավորությունները չխախտող կողմի՝ վճարման կամ առաքման ենթակա պարտավորությունների (կամ որոնք ենթակա կլինեին վճարման կամ առաքման, եթե պահպանվեին 3.1.3. բաժնով սահմանված Նախապայմանները) դեպքում՝ Խախտմամբ չպայմանավորված դրույքաչափը,*	*in respect of obligations payable or deliverable (or which would have been but for Section 3.1.3.) by a Non-defaulting Party, the Non-default Rate;*
(3) *6.4. բաժնի համաձայն հետաձգված պարտավորությունների դեպքում, եթե չկա Խախտող կողմ և այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունները մնում են հետաձգված՝ Կեպանցի կիրառելի դրույքաչափը, և*	*in respect of obligations deferred pursuant to Section 6.4., if there is no Defaulting Party and for so long as the deferral period continues, the Applicable Deferral Rate; and*
(4) *Այլ Դադարեցման հիմքերի առաջացման դեպքում (բացառությամբ վերոնշյալ (3) կետում նշված այն դեպքերի, երբ կուտակվում են տոկոսներ)՝ Կեպանցի կիրառելի դրույքաչափը, և*	*in all other cases following the occurrence of a Termination Event (except where interest accrues pursuant to clause (3) above), the Applicable Deferral Rate; and*

[1] Կողմերը կարող են այլ սահմանում նախատեսել Հավելվածում:
Parties are free to agree on a different definition in the Schedule.



(բ) Վաղաժամկետ դադարեցման գումարի կապակցությամբ՝

(b) in respect of an Early Termination Amount:

(1) *Համապատասխան Վաղաժամկետ դադարեցման ամսաթվից (ներառյալ) մինչև այն ամսաթիվը (չներառելով) (որոշված 7.4.2. բաժնի համաձայն), երբ փվյալ գումարը ենթակա է վճարման՝*

for the period from (including) the relevant Early Termination Date to (excluding) the date (determined in accordance with Section 7.4.2.) on which that amount is payable:

(1.1) *Տուժանքը, եթե Վաղաժամկետ դադարեցման գումարը ենթակա է վճարման Խախտող կողմի կողմից,*

if the Early Termination Amount is payable by a Defaulting Party, the Default Rate;

(1.2) *Խախտմամբ չպայմանավորված դրույքաչափը, եթե Վաղաժամկետ դադարեցման գումարը ենթակա է վճարման Պարտավորությունները չխախտող կողմի կողմից,*

if the Early Termination Amount is payable by a Non-defaulting Party, the Non-default Rate; and

(1.3) *մնացած բոլոր դեպքերում՝ Կեփանցի կիրառելի դրույքաչափը, և*

in all other cases, the Applicable Deferral Rate; and

(2) *այն ամսաթվից (որոշված 7.4.2. բաժնի համաձայն), երբ այդ գումարը ենթակա է վճարման (ներառյալ) մինչև դրա փաստացի վճարման օրը (չներառելով)՝*

for the period from (and including) the date (determined in accordance with Section 7.4.2.) on which that amount is payable to (but excluding) the date of actual payment:

(2.1) *Կեփանցի կիրառելի դրույքաչափը, եթե կողմը սահմանված ժամկետում Վաղաժամկետ դադարեցման գումարը չի վճարում այնպիսի իրադարձության կամ հանգամանքի առաջացման պատճառով, որը Գործարքով սահմանված վճարման կամ առաքման առնչությամբ տեղի ունենալու դեպքում կստեղծեր Անհրաժեշտություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ, և այնքան ժամանակ, քանի դեռ Վաղաժամկետ դադարեցման գումարը մնում է չվճարված՝ նման իրադարձության կամ հանգամանքի առկայության պատճառով,*


if a party fails to pay the Early Termination Amount due to the occurrence of an event or circumstance which would, if it occurred with respect to a payment or delivery under a Transaction, constitute or give rise to an Illegality or a Force Majeure Event, and for so long as the Early Termination Amount remains unpaid due to the continuing existence of such event or circumstance, the Applicable Deferral Rate;

(2.2) *Տուժանքը, եթե Վաղաժամկետ դադարեցման գումարը ենթակա է վճարման Խախտող կողմի կողմից (բայց բացառելով ցանկացած ժամանակահատված, որի նկատմամբ կիրառվում է վերոնշյալ (1) կետը),*

if the Early Termination Amount is payable by a Defaulting Party (but excluding any period in respect of which clause (1) above applies), the Default Rate;

(2.3) *Խախտմամբ չպայմանավորված դրույքաչափը, եթե Վաղաժամկետ դադարեցման գումարը ենթակա է վճարման*

if the Early Termination Amount is payable by a Non-defaulting Party (but excluding any period



Պարտավորությունները չխախտող կողմի կողմից (բայց բացառելով ցանկացած ժամանակահատված, որի նկատմամբ կիրառվում է վերոնշյալ (1) կետը), և

(2.4) Դադարեցման դրույքաչափը՝ մնացած բոլոր դեպքերում:

«**Կեպանցի կիրառելի դրույքաչափ**» նշանակում է

(ա) 10.8.1.(3)(Ա) բաժնի նպատակով՝ այն փոկոսադրույքը, որը համապատասխան վճարող կողմի հավաստմամբ առաջարկվել է վերջինիս փվյալ արժույթով մեկօրյա ավանդների համար համապատասխան միջբանկային շուկայում գործող որևէ խոշոր բանկի կողմից: Տվյալ բանկը պետք է բարեխղճորեն ընտրված լինի վճարողի կողմից՝ նպատակ ունենալով սպանալ ներկայացուցչական փոկոսադրույք, որը ողջամտորեն կարտացոլի փվյալ շուկայում փվյալ պահին գերակայող պայմանները,

(բ) 10.8.1.(3)(Բ) բաժնի և Փակման կիրառելի դրույքաչափի սահմանման (ա)(3) կետի նպատակով՝ այն փոկոսադրույքը, որը համապատասխան վճարող կողմի հավաստմամբ փվյալ միջբանկային շուկայում գործող որևէ խոշոր բանկ առաջարկել է առաջնակարգ բանկերին համապատասխան արժույթով մեկօրյա ավանդների համար: Տվյալ բանկը պետք է բարեխղճորեն ընտրվի վճարողի կողմից՝ մյուս կողմի հետ խորհրդակցելուց հետո, եթե դա գործնականում հնարավոր է, ներկայացուցչական փոկոսադրույք սպանալու նպատակով, որը ողջամտորեն կարտացոլի փվյալ շուկայում փվյալ պահին գործող պայմանները, և

(գ) 10.8.1.(3)(Գ) բաժնի և Փակման կիրառելի դրույքաչափի սահմանման (ա)(4), (բ)(1)(1.3) և (բ)(2)(2.1) կետերի նպատակով՝ այն փոկոսադրույքը, որը հավասար է վերոնշյալ (ա) կետի համաձայն որոշված փոկոսադրույքի և այն տարեկան փոկոսադրույքի թվաբանական միջինին, որը հավասար է համապատասխան

in respect of which clause (1) above applies), the Non-default Rate; and

in all other cases, the Termination Rate.


"Applicable Deferral Rate" *means*

(a) *for the purpose of Section 10.8.1.(3)(A), the rate certified by the relevant payer to be a rate offered to the payer by a major bank in a relevant interbank market for overnight deposits in the applicable currency, such bank to be selected in good faith by the payer for the purpose of obtaining a representative rate that will reasonably reflect conditions prevailing at the time in that relevant market;*

(b) *for purposes of Section 10.8.1.(3)(B) and clause (a)(3) of the definition of Applicable Close-out Rate, the rate certified by the relevant payer to be a rate offered to prime banks by a major bank in a relevant interbank market for overnight deposits in the applicable currency, such bank to be selected in good faith by the payer after consultation with the other party, if practicable, for the purpose of obtaining a representative rate that will reasonably reflect conditions prevailing at the time in that relevant market; and*

(c) *for purposes of Section 10.8.1.(3)(C) and clauses (a)(4), (b)(1)(1.3) and (b)(2)(2.1) of the definition of Applicable Close-out Rate, a rate equal to the arithmetic mean of the rate determined pursuant to clause (a) above and a rate per annum equal to the cost (without proof or evidence of any actual cost) to the relevant payee (as certified by it) if it were to fund or of funding the relevant amount.*

In any case, the Applicable Deferral Rate may not exceed the twofold of the bank interest rate set by the Central Bank, as provided in Article 411 of the Civil Code.



ստացող կողմի (վերջինիս հավաստմամբ) կողմից փվյալ գումարի ֆինանսավորման ծախսին (առանց փաստացի ծախսի որևէ ապացույցի կամ փաստաթղթի ներկայացման պահանջի):
Յանկացած դեպքում Կեփանցի կիրառելի դրույքաչափը չի կարող գերազանցել Կենտրոնական բանկի սահմանած՝ բանկային փոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը, ինչպես սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով:

***«Ավփոմատ վաղաժամկետ դադարեցում»** ունի Գլխավոր համաձայնագրի 7.1. բաժնում սահմանված նշանակությունը:*

***«Կենտրոնական բանկ»** նշանակում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը:*

***«Քաղաքացիական օրենսգիրք»** նշանակում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը՝ ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին (թիվ ՀՕ-239)՝ ժամանակ առ ժամանակ փոփոխված և/կամ վերաշարադրված ձևով:*

***«Քաղաքացիական դատավարության օրենսգիրք»** նշանակում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը՝ ընդունված 2018 թվականի փետրվարի 9-ին (թիվ ՀՕ-110-Ն)՝ ժամանակ առ ժամանակ փոփոխված և/կամ վերաշարադրված ձևով:*

***«Փակման գումար»** նշանակում է յուրաքանչյուր Դադարեցված գործարքի կամ Դադարեցված գործարքների յուրաքանչյուր խմբի առնչությամբ Որոշող կողմի կորուստների կամ ծախսերի գումարը (արտահայտված դրական թվով) կամ օգուտները (արտահայտված բացասական թվով), որոնք նա կրել/ունեցել է կամ կկրեր/կունենար այդ պահին առկա հանգամանքներում՝ կապված հետևյալ գումարները փոխարինելու կամ դրանց փնտեսական համարժեքը ստանալու հետ.*


***"Automatic Early Termination"** has the meaning specified in Section 7.1.*

***"Central Bank"** means the Central Bank of the Republic of Armenia.*

***"Civil Code"** means the Civil Code of the Republic of Armenia adopted on May 5, 1998 (No ՀՕ-239), as amended and/or restated from time to time.*

***"Civil Procedure Code"** means the Code on Civil Procedure of the Republic of Armenia adopted on February 5, 1998 (No ՀՕ-110-Ն), as amended and/or restated from time to time.*

***"Close-out Amount"** means, with respect to each Terminated Transaction or each group of Terminated Transactions, the amount of the losses or costs of the Determining Party (expressed as a positive number) or gains of the Determining Party that are or would be incurred/realised under then prevailing circumstances (expressed as a negative number) in replacing, or in providing for the Determining Party the economic equivalent of:*



(ա) Դադարեցված գործարքի կամ գործարքների խմբի էական պայմաններով (ներառյալ՝ 3.1.1. բաժնով) սահմանված վճարումները և առաքումները, որոնք կպահանջվեին համապատասխան Վաղաժամկետ դադարեցման ամսաթվից հետո, եթե այդ Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը տեղի չունենար (ենթադրելով, որ պահպանվել են Գլխավոր համաձայնագրի 3.1.3. բաժնում նշված Նախապայմանները) և

(a) the material terms of that Terminated Transaction or group of Terminated Transactions, including the payments and deliveries by the parties under Section 3.1.1. in respect of that Terminated Transaction or group of Terminated Transactions that would, but for the occurrence of the relevant Early Termination Date, have been required after that date (assuming satisfaction of the conditions precedent in Section 3.1.3.) and

(բ) այդ Դադարեցված գործարքի կամ գործարքների խմբի առնչությամբ կողմերի օպցիոնի իրավունքները:

(b) the option rights of the parties in respect of that Terminated Transaction or group of Terminated Transactions.

Փակման գումարը հաշվարկվում է Որոշող կողմի (կամ նրա գործակալի) կողմից, ով գնահատելիս գործում է բարեխղճորեն և կիրառում է առևտրային ողջամիտ ընթացակարգեր՝ առևտրային ողջամիտ արդյունք սպանալու համար: Որոշող կողմը կարող է Փակման գումար սահմանել Դադարեցված գործարքների ցանկացած խմբի կամ ցանկացած առանձին Դադարեցված գործարքի համար: Ընդ որում, Փակման գումար պետք է որոշվի բոլոր Դադարեցված գործարքների համար՝ կամ առանձին, կամ խմբի կազմում: Փակման գումարները որոշվում են Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի դրությամբ կամ, եթե դա առևտրային առումով ողջամիտ չէ, Վաղաժամկետ դադարեցման ամսաթվին հաջորդող օրվա կամ մի քանի օրերի դրությամբ (առևտրային ողջամտությունից ելնելով):


Any Close-out Amount will be determined by the Determining Party (or its agent), which will act in good faith and use commercially reasonable procedures in order to produce a commercially reasonable result. The Determining Party may determine a Close-out Amount for any group of Terminated Transactions or any individual Terminated Transaction but, in the aggregate, for not less than all Terminated Transactions. Each Close-out Amount will be determined as of the Early Termination Date or, if that would not be commercially reasonable, as of the date or dates following the Early Termination Date as would be commercially reasonable.

Չվճարված գումարները՝ կապված Դադարեցված գործարքի կամ գործարքների խմբի հետ, և 12-րդ բաժնում նշված իրավաբանական վճարները և չնախատեսված ծախսերը չեն ներառվում Փակման գումարի հաշվարկում:

Unpaid Amounts in respect of a Terminated Transaction or group of Terminated Transactions and legal fees and out- of-pocket expenses referred to in Section 12 are to be excluded in all determinations of Close-out Amounts.

Փակման գումարը որոշելիս Որոշող կողմը կարող է հաշվի առնել ցանկացած վերաբերելի տեղեկատվություն: Փակման

In determining a Close-out Amount, the Determining Party may consider any relevant information. In calculating a Close-out Amount,



գումարը հաշվարկելիս Որոշող կողմը կարող է նաև հաշվի առնել ցանկացած կորուստ կամ ծախս, որն առաջացել է Դադարեցված գործարքի կամ գործարքների խմբի առնչությամբ հեջավորման գործարքի դադարեցման, լուծման կամ վերականգնման, ինչպես նաև վերաֆինանսավորման հետ կապված (կամ որևէ օգուտ, որը բխում է դրանցից որևէ մեկից):

the Determining Party may in addition consider any loss or cost incurred in connection with its terminating, liquidating or re-establishing any hedge related to a Terminated Transaction or group of Terminated Transactions (or any gain resulting from any of them).

***«Հաստատում»** ունի Գլխավոր համաձայնագրի նախաբանում սահմանված նշանակությունը:*

***"Confirmation"** has the meaning specified in the preamble.*

***«համաձայնություն»** ներառում է ցանկացած տեսակի համաձայնություն, հաստատում, գործողություն, թույլտվություն, պարտավորության կատարումից ազատում, ծանուցում, դիմում, գրանցում:*

***"consent"** includes a consent, approval, action, authorisation, exemption, notice, filing, registration.*

***«Պայմանագրային արժույթ»** ունի Գլխավոր համաձայնագրի 9.1. բաժնում սահմանված նշանակությունը:*

***"Contractual Currency"** has the meaning specified in Section 9.1.*

***«Վերակազմակերպման արդյունքում վարկունակության վատթարացում»** ունի Գլխավոր համաձայնագրի 6.2. բաժնում սահմանված նշանակությունը:*

***"Credit Event Upon Reorganisation"** has the meaning specified in Section 6.2.*

***«Ապահովության փաստաթուղթ»** նշանակում է ցանկացած համաձայնագիր կամ փաստաթուղթ, որը սույն Գլխավոր համաձայնագրում սահմանված է որպես այդպիսին:*

***"Credit Support Document"** means any agreement or instrument that is specified as such in this Master Agreement.*

***«Ապահովություն տրամադրող»** ունի Հավելվածում սահմանված նշանակությունը:*


***"Credit Support Provider"** has the meaning specified in the Schedule.*

***«Խաչաձև խախտում»** ունի 6.1.6. բաժնում սահմանված նշանակությունը:*

***"Cross-Default"** means the event specified in Section 6.1.6.*


***«Սառեցման ամսաթիվ»** նշանակում է Ազդեցություն չկրող կողմի կողմից որոշված ցանկացած Տեղական աշխատանքային օր՝ սկսած (ներառյալ) Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի առաջացման օրվանից: Եթե, Ազդեցություն չկրող կողմի ողջամիտ դատողությամբ, համապատասխան Պատժամիջոցները թույլ չեն տալիս Ազդեցություն չկրող կողմին նշանակել Սառեցման ամսաթիվ, ապա*

***"Crystallization Date"** means any Local Business Day designated by the Non-affected Party during the period from and including the date of the occurrence of the Sanctions Termination Event; provided that if (in the Non-affected Party's reasonable judgment) the relevant Sanctions do not permit the Non-affected Party to designate a Crystallization Date, then the Crystallization Date will occur immediately upon the occurrence of the Sanctions Termination Event and as of the time either immediately preceding the time as of*




Սառեցման ամսաթիվը կհամարվի վրա հասած կա՛մ Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի ի հայտ գալուն պես՝ Պատժամիջոցների ուժի մեջ մտնելուն անմիջապես նախորդող պահին, կա՛մ Ազդեցություն չկրող կողմի՝ առևտրային ողջամիտ ընթացակարգերի պահպանմամբ որոշված պահին (որը հաջորդում է այն պահին, երբ, Ազդեցություն չկրող կողմի կարծիքով, տեղի է ունեցել Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքը)՝ կախված նրանից, թե որ տարբերակն է Հավելվածում նշված որպես կիրառելի:[2]	*which the relevant Sanctions that gave rise to the Sanctions Termination Event took effect, or as determined by the Non-affected Party, acting in a commercially reasonable manner, following the Non-affected Party's determination that the Sanctions Termination Event has occurred, whichever option is determined in the Schedule*[2]*.*
«Տուժանք» *նշանակում է տարեկան տոկոսադրույք, որը հավասար է վճարումը սպացող համապատասխան անձի ծախսին (առանց իրական ծախսերի վերաբերյալ ապացույցի), որը կկատարվեր (իր հավաստմամբ) փվյալ գումարը ֆինանսավորելու կամ կկատարվեր փվյալ գումարը ներգրավելու համար, գումարած տարեկան 1%: Տուժանքը չի կարող գերազանցել Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը: Համաձայնագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել փվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը, ինչպես սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով:*	***"Default Rate"*** *means a rate per annum equal to the cost (without proof or evidence of any actual cost) to the relevant payee (as certified by it) if it were to fund or of funding the relevant amount plus 1% per annum. The Default Rate may not exceed four times the bank interest rate established by the Central Bank. The amount of all fines determined by the Agreement cannot exceed the principal amount of the existing debt, as provided in Article 372 of the Civil Code.*
«Խախտող կողմ» *ունի 7.1. բաժնում սահմանված նշանակությունը:*	***"Defaulting Party"*** *has the meaning specified in Section 7.1.*
«Նախապես սահմանված իրադարձություն» *ունի 6.2.3. բաժնում սահմանված նշանակությունը:*	***"Designated Event"*** *has the meaning specified in Section 6.2.3.*
«Որոշող կողմ» *նշանակում է Փակման գումարը որոշող կողմը:*	***"Determining Party"*** *means the party determining a Close-out Amount.*

[2] Համապատասխան ընտրության համար տե՛ս Հավելվածը:
Please see the Schedule for the appropriate selection.



«Վաղաժամկետ դադարեցման գումար» *ունի 7.5. բաժնում սահմանված նշանակությունը:*	***"Early Termination Amount"*** *has the meaning specified in Section 7.5.*
«Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ» *նշանակում է 7.1. կամ 7.2.3. բաժնի համաձայն որոշված ամսաթիվը:*	***"Early Termination Date"*** *means the date determined in accordance with Section 7.1. or 7.2.3.*
«Էլեկտրոնային հաղորդագրությունները» *ներառում են էլեկտրոնային փոստի նամակները և նշագրման լեզուներով արտահայտված փաստաթղթերը, և* ***«Էլեկտրոնային հաղորդագրությունների համակարգը»*** *մեկնաբանվում է համապատասխանաբար:*	***"electronic messages"*** *includes e-mails and documents expressed in markup languages, and* ***"electronic messaging system"*** *will be construed accordingly.*
«Խախտում» *ունի Գլխավոր համաձայնագրի 6.1. բաժնում և, եթե կիրառելի է, Հավելվածում սահմանված նշանակությունը:*	***"Event of Default"*** *has the meaning specified in Section 6.1. and, if applicable, in the Schedule.*
«Ֆինանսական կազմակերպությունների սնանկության մասին օրենք» *նշանակում է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ընդունված 2001 թվականի նոյեմբերի 6-ին (ՀՕ-262)՝ ներառյալ ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխությունները և/կամ լրացումները:*	***"Financial Institutions Bankruptcy Law"*** *means the Law of the Republic of Armenia on the Bankruptcy of Banks, Credit Organizations, Investment Companies, Investment Fund Managers and Insurance Companies, adopted on November 6, 2001 (No ՀՕ-262), as amended and/or restated from time to time.*
«Ֆորս մաժորային իրավիճակ» *ունի Գլխավոր համաձայնագրի 6.2.2. բաժնում սահմանված նշանակությունը:*	***"Force Majeure Event"*** *has the meaning specified in Section 6.2.2.*
«Ընդհանուր սնանկության մասին օրենք» *նշանակում է «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 25-ին (թիվ ՀՕ-51-Ն)՝ ներառյալ ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխությունները և/կամ լրացումները:*	***"General Bankruptcy Law"*** *means the law of the Republic of Armenia "On Bankruptcy", adopted on December 25, 2006 (No ՀՕ-51-Ն), as amended and/or restated from time to time.*
«Ընդհանուր աշխատանքային օր» *նշանակում է օր, որին առևտրային բանկերը բաց են սովորական գործունեության*	***"General Business Day"*** *means a day on which commercial banks are open for general business (including dealings in foreign exchange and foreign currency deposits).*



(ներառյալ արտարժույթով գործարքների և արտարժութով դեպոնացումների) համար:

«Տեղական աշխատանքային օր» *նշանակում է.*

"Local Business Day" *means:*

(ա) Գլխավոր համաձայնագրի 3.1.1. բաժնով սահմանված պարտավորությունների համար՝ համապատասխան Հաստատման մեջ նշված վայրի (վայրերի) Ընդհանուր աշխատանքային օրերը և այն օրերը, երբ համապատասխան Հաստատման մեջ նշված (իսկ եթե Հաստատման մեջ նշված չէ, կողմերի առանձին գրավոր համաձայնությամբ կամ այլ կերպ Գլխավոր համաձայնագրով սահմանված) հաշվարկային համակարգը բաց է (գործում է),

(a) in relation to any obligation under Section 3.1.1., a General Business Day in the place or places specified in the relevant Confirmation and a day on which a relevant settlement system is open or operating as specified in the relevant Confirmation or, if a place or a settlement system is not so specified, as otherwise agreed by the parties in writing or determined pursuant to provisions contained, or incorporated by reference, in this Agreement;

(բ) Սպասման ժամկետի որոշման համար՝ այն վայրի Ընդհանուր աշխատանքային օրերը, որտեղ տեղի է ունեցել համապատասխան Անհրավաչափությունը կամ Ֆորս մաժորային իրավիճակը,


(b) for the purpose of determining when a Waiting Period expires, a General Business Day in the place where the event or circumstance that constitutes or gives rise to the Illegality or Force Majeure Event, as the case may be, occurs;

(գ) այլ վճարումների համար՝ այն վայրի Ընդհանուր աշխատանքային օրերը, որտեղ վարվում է համապատասխան հաշիվը, իսկ եթե այդ հաշիվը չի վարվում վճարման արժույթի հիմնական ֆինանսական կենտրոնում՝ այդ կենտրոնի (առկայության դեպքում) Ընդհանուր աշխատանքային օրերը: Եթե համապատասխան արժույթը չունի մեկ ճանաչված ֆինանսական կենտրոն, ապա Տեղական աշխատանքային օր է համարվում այն օրը, որին համապատասխան վճարումն իրականացնելու համար անհրաժեշտ հաշվարկային համակարգը բաց է (գործում է),

(c) in relation to any other payment, a General Business Day in the place where the relevant account is located and, if different, in the principal financial centre, if any, of the currency of such payment. If that currency does not have a single recognised principal financial centre, a Local Business Day means a day on which the settlement system necessary to accomplish such payment is open (operating);

(դ) ծանուցումների կամ այլ հաղորդակցության (ներառյալ՝ Գլխավոր համաձայնագրի 6.1.1. բաժնով սահմանված

(d) in relation to any notice or other communication, including notice contemplated under Section 6.1.1., a General Business Day (or



ծանուցման) համար՝ ծանուցման հասցեատիրոջ կողմից տրամադրված հասցեի վայրի Ընդհանուր աշխատանքային օրերը (կամ օր, որը կհամարվեր Ընդհանուր աշխատանքային օր, եթե տեղի չունենար իրադարձություն կամ հանգամանք, որը վճարման, առաքման կամ Գործարքին առնչվող որևէ այլ պահանջի կատարման կապակցությամբ տեղի ունենալու դեպքում կհանդիսանար կամ կհանգեցներ Անիրավաչափության կամ Ֆորս մաժորային իրավիճակի), իսկ Գլխավոր համաձայնագրի 3.2. բաժնում նշված ծանուցման համար՝ այն վայրի Ընդհանուր աշխատանքային օրերը, որտեղ պետք է վարվի նոր հաշիվը, իսկ

a day that would have been a General Business Day but for the occurrence of an event or circumstance which would, if it occurred with respect to payment, delivery or compliance related to a Transaction, constitute or give rise to an Illegality or a Force Majeure Event) in the place specified in the address for notice provided by the recipient and, in the case of a notice contemplated by Section 3.2., in the place where the relevant new account is to be located; and

(ե) 6.1.5(2) բաժնի կապակցությամբ՝ համապատասխան Նախապես սահմանված գործարքի կատարման վայրի Ընդհանուր աշխատանքային օրերը:

(e) in relation to Section 6.1.5(2), a General Business Day in the relevant locations for performance with respect to such Specified Transaction.

***«Անիրավաչափություն»** ունի 6.2.1. բաժնում սահմանված նշանակությունը:*

***"Illegality"** has the meaning specified in Section 6.2.1.*

***«օրենքը»** ներառում է ցանկացած միջազգային պայմանագիր, օրենք, որոշում կամ կանոնակարգ (փոփոխություններով), իսկ **«անօրինական»** եզրույթը մեկնաբանվում է համապատասխանաբար:*

***"law"** includes any treaty, law, rule or regulation (as modified, in the case of tax matters, by the practice of any relevant governmental revenue authority), and **"unlawful"** will be construed accordingly.*

***«Տեղական առաքման օր»** նշանակում է (6.1.1. և 6.4. բաժինների նպատակների համար) օր, երբ համապատասխան առաքումն իրականացնելու համար անհրաժեշտ հաշվարկային համակարգերը գործում են, և ընդունված շուկայական պրակտիկային համապատասխան այդ առաքումը հնարավոր է կատարել:*


***"Local Delivery Day"** means, for purposes of Sections 6.1.1. and 6.4., a day on which settlement systems necessary to accomplish the relevant delivery are generally open for business so that the delivery is capable of being accomplished in accordance with customary market practice.*

***«Գլխավոր համաձայնագիր»** ունի նախաբանում սահմանված նշանակությունը:*

***"Master Agreement"** has the meaning specified in the preamble.*

***«Վերակազմակերպում առանց իրավահաջորդության»** նշանակում է*

***"Reorganisation Without Assumption"** means the event specified in Section 6.1.8.*



Գլխավոր համաձայնագրի 6.1.8. բաժնում նշված իրադարձությունը:

«Առևտրային արբիտրաժի մասին օրենք» նշանակում է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 25-ին (թիվ ՀՕ-55-Ն)՝ ժամանակ առ ժամանակ փոփոխված և/կամ վերաշարադրված ձևով:

"Law on Commercial Arbitration" means the Law of the Republic of Armenia "On Commercial Arbitration" adopted on December 25, 2006 (N ՀՕ-55-Ն), as amended and/or restated from time to time.

«Մեկից ավելի գործարքներով վճարումների զուտացում» ունի Գլխավոր համաձայնագրի 3.3. բաժնում սահմանված նշանակությունը:

"Multiple Transaction Payment Netting" has the meaning specified in Section 3.3.

«Ազդեցություն չկրող կողմ» նշանակում է Տուժող կողմ չհանդիսացող կողմը (եթե կա ընդամենը մեկ Տուժող կողմ):

"Non-affected Party" means, so long as there is only one Affected Party, the other party.

«Խախտմամբ չպայմանավորված դրույքաչափ» նշանակում է Պարտավորությունները չխախտող կողմի որոշված դրույքաչափը, որը հավասար է համապատասխան միջբանկային շուկայում գործող խոշոր բանկի կողմից Պարտավորությունները չխախտող կողմին առաջարկվող՝ համապատասխան արժույթով մեկօրյա ավանդների փոխատրույքին: Այդպիսի բանկը պետք է Պարտավորությունները չխախտող կողմի կողմից ընտրվի բարեխղճորեն՝ այնպիսի փոխատրույքի մասին տեղեկություն ստանալու նպատակով, որը ողջամտորեն կարտացոլի փվյալ պահին փվյալ շուկայում առկա պայմանները:

"Non-default Rate" means the rate certified by the Non-defaulting Party to be a rate offered to the Non-defaulting Party by a major bank in a relevant interbank market for overnight deposits in the applicable currency, such bank to be selected in good faith by the Non-defaulting Party for the purpose of obtaining a representative rate that will reasonably reflect conditions prevailing at the time in that relevant market.

«Պարտավորությունները չխախտող կողմ» ունի Գլխավոր համաձայնագրի 7.1. բաժնում սահմանված նշանակությունը:

"Non-defaulting Party" has the meaning specified in Section 7.1.

«Գրասենյակ» նշանակում է որևէ կողմի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն (ներառյալ՝ այդ կողմի գլխամասային գրասենյակը):


"Office" means a branch or office of a party, which may be such party's head or home office.

«Այլ գումարներ» ունի 7.7. բաժնում սահմանված նշանակությունը:

"Other Amounts" has the meaning specified in Section 7.7.

«Վճարում ստացող» ունի 7.7. բաժնում սահմանված նշանակությունը:

"Payee" has the meaning specified in Section 7.7.



«Վճարող» *ունի 7.7. բաժնում սահմանված նշանակությունը:*

«Պոտենցիալ խախտում» *նշանակում է իրադարձություն, որը ծանուցումից և/կամ ժամանակ անցնելուց հետո կվերածվի Խախտման:*

«Վարույթ» *ունի 14 բաժնում սահմանված նշանակությունը:*

«փոխարժեքը» *ներառում է, առանց սահմանափակման, ցանկացած պրեմիում և փոխանակման ծախսեր, որոնք պետք է վճարվեն Պայմանագրային արժույթի գնման կամ փոխարկման հետ կապված:*

«Պատժամիջոցներ» *նշանակում է Պատժամիջոցներ կիրառող մարմինների կողմից ժամանակ առ ժամանակ սահմանվող, ընդունվող կամ կիրարկվող օրենքներով, կանոնակարգերով, հրամաններով, լիցենզիաներով և այլ իրավական ակտերով սահմանված ֆինանսական կամ տնտեսական պատժամիջոցներ, առևտրային էմբարգոներ կամ այլ նմանատիպ արգելքներ կամ սահմանափակումներ:*

«Պատժամիջոցներ կիրառող մարմին» *նշանակում է ցանկացած մարմին, որը պատասխանատու է պատժամիջոցների սահմանման, կառավարման և (կամ) կիրարկման համար, ներառյալ (առանց սահմանափակման)՝ (ա) Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը (բ) Միացյալ Նահանգները (ներառյալ՝ ԱՄՆ Գանձապետական դեպարտամենտի արտաքին ակտիվների վերահսկման գրասենյակը և ԱՄՆ Պետդեպարտամենտը), (գ) Միացյալ Թագավորությունը (ներառյալ Նորին Մեծության Գանձապետարանի Ֆինանսական Պատժամիջոցների Իրագործման գրասենյակը), (դ) Եվրոպական Միությունը և Եվրոպական Միության անդամ պետությունները, և (ե)*

"Payer" *has the meaning specified in Section 7.7.*


"Potential Event of Default" *means any event which, with the giving of notice or the lapse of time or both, would constitute an Event of Default.*

"Proceedings" *has the meaning specified in Section 14.*

"rate of exchange" *includes, without limitation, any premiums and costs of exchange payable in connection with the purchase of or conversion into the Contractual Currency.*

"Sanctions" *means any economic or financial sanctions, trade embargoes or other similar prohibitions or restrictions on activity pursuant to any laws, regulations, orders or licenses imposed, administered or enforced from time to time by a Sanctions Authority.*

"Sanctions Authority" *means any authority responsible for the imposition, administration and/or enforcement of sanctions, including without limitation: (a) the United Nations Security Council; (b) the United States (including the US Department of Treasury Office of Foreign Assets Control and the US State Department; (c) the United Kingdom (including HM Treasury Office of Financial Sanctions Implementation); (d) the European Union and the Member States of the European Union; and (e) the sanctions authorities of the Republic of Armenia, and, in each case, any successor to, or replacement for, any such authority.*



Հայաստանի Հանրապետության պատժամիջոցներ կիրառող մարմինները, ինչպես նաև Պատժամիջոցներ կիրառող մարմինների իրավահաջորդները կամ փոխարինողները:

«Պատժամիջոցների թիրախ» *նշանակում է ցանկացած սուբյեկտ կամ անձ, որը*

"Sanctions Target" *means any entity or person:*

(ա) ներառված է Պատժամիջոցներ կիրառող մարմնի կողմից հրապարակվող՝ Պատժամիջոցների որևէ ցանկում, կամ

(a) listed in any Sanctions-related list maintained by any Sanctions Authority;

(բ) այլ կերպ հանդիսանում է Պատժամիջոցների թիրախ, ներառյալ (առանց սահմանափակման)՝ վերահսկվում է (այդպիսի վերահսկողությունը կամ դրան համարժեք հայեցակարգերը որոշվում են համապատասխան Պատժամիջոցներով), կամ նրա 50 տոկոսը կամ ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանդիսանում է Պատժամիջոցների թիրախի կամ թիրախների սեփականությունը՝ անկախ նրանից, թե արդյոք այդպիսի անձը հանդիսանում է Պատժամիջոցների թիրախի հետ Փոխկապակցված անձ, թե ոչ:

(b) which otherwise is the target of any Sanctions, including, without limitation, any is controlled (such control or any equivalent concept is determined in accordance with the relevant Sanctions) or 50 percent or more owned in the aggregate, directly or indirectly, by any target or targets of Sanctions (irrespective of whether or not any such entity is an Affiliate of the target of such Sanctions).

«Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմք» *ունի 6.2. բաժնում սահմանված նշանակությունը:*


"Sanctions Termination Event" *has the meaning specified in Section 6.2.*

«Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի ազատման պայման» *նշանակում է, որ (Ազդեցություն չկրող կողմի ողջամիտ դատողությամբ).*

"Sanctions Termination Event Release Condition" *means (in the Non-affected Party's reasonable judgment) that either:*

(ա) համապատասխան Պատժամիջոցներ կիրառող մարմնի կողմից տրվել է Տուժող գործարքների Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ նշանակելու թույլտվություն, կամ

(a) permission is granted by the relevant Sanctions Authority to designate an Early Termination Date in respect of the Affected Transactions; or



(բ) համապատասխան Պատժամիջոցներն այլևս չեն արգելում Ազդեցություն չկրող կողմին նշանակել Տուժող գործարքների Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ:

(b) the relevant Sanctions no longer prohibit the Non-affected Party from designating an Early Termination Date in respect of the of the Affected Transactions.

«Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի կասեցման պայման» *նշանակում է, որ Ազդեցություն չկրող կողմի ողջամիտ դատողությամբ Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքն առաջանալուց հետո որևէ պահի համապատասխան Պատժամիջոցները թույլ չեն տա, որ Ազդեցություն չկրող կողմը Տուժող գործարքների առնչությամբ նշանակի Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ՝ համաձայն Գլխավոր համաձայնագրի 7-րդ բաժնի:*

"Sanctions Termination Event Suspension Condition" *means (in the Non-affected Party's reasonable judgment) that at any time following the occurrence of a Sanctions Termination Event the relevant Sanctions would not permit the Non-affected Party to designate an Early Termination Date in respect of the Affected Transactions in accordance with Section 7 of this Agreement.*

«Հավելված» *ունի նախաբանում սահմանված նշանակությունը:*

"Schedule" has the meaning specified in the preamble.

«Վերջնահաշվարկի նախատեսվող ամսաթիվ» *նշանակում է ամսաթիվ, երբ 3.1.1. բաժնի համաձայն որևէ Գործարքի առնչությամբ պետք է կատարվի վճարում կամ առաքում:*

"Scheduled Settlement Date" *means a date on which a payment or delivery is to be made under Section 3.1.1. with respect to a Transaction.*

«Արժեթղթերի շուկայի մասին օրենք» *նշանակում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ընդունված 2007 թվականի հոկտեմբերի 11-ին (թիվ ՀՕ-195-Ն)՝ ժամանակ առ ժամանակ փոփոխված և/կամ վերաշարադրված ձևով:*

"Securities Market Law" *means the Law of the Republic of Armenia "On Securities Market" adopted on October 11, 2007 (N ՀՕ-195-Ն), as amended and/or restated from time to time.*

«Նախապես սահմանված անձ» *ունի Հավելվածում սահմանված նշանակությունը:*


"Specified Entity" *has the meaning specified in the Schedule.*

«Նախապես սահմանված պարտք» *նշանակում է (Հավելվածում նշված լինելու դեպքում) փոխառու միջոցների նկատմամբ ցանկացած պարտավորություն (ներկա կամ ապագա, հիմնական կամ լրացուցիչ կամ այլ):*

"Specified Indebtedness" *means, subject to the Schedule, any obligation (whether present or future, as principal or surety or otherwise) in respect of borrowed money.*


«Նախապես սահմանված գործարք» *նշանակում է Հավելվածում նշված՝*

"Specified Transaction" *means, subject to the Schedule:*



(ա) կողմերի (կամ նրանց Ապահովություն տրամադրողի կամ Նախապես սահմանված անձի) միջև գոյություն ունեցող կամ Գլխավոր համաձայնագրի կնքումից հետո կնքված գործարք (ներառյալ՝ այդպիսի գործարքի հետ կապված համաձայնագրերը), որը սույն համաձայնագրի ներքո չի համարվում Գործարք: Այդպիսի գործարքը կարող է լինել հետևյալ տեսակների. (i) փոխարժեքային սվոփ, սվոփ օպցիոն, բեյսիս սվոփ, ֆորվարդային փոխարժեքի գործարք, ապրանքային սվոփ, ապրանքային օպցիոն, բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի ինդեքսի սվոփ, բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի ինդեքսային օպցիոն, պարտատոմսերի օպցիոն, փոկոսադրույքային օպցիոն, արտարժութային գործարք, քեփ գործարք, ֆլոր գործարք, քոլար գործարք, արժույթի փոխանակման գործարք, արտարժութային փոխարժեքային սվոփ գործարք, արժութային օպցիոն, ապահովության գործարք, ապահովության սվոփ, վարկային դեֆոլտի սվոփ, վարկային դեֆոլտի օպցիոն, ընդհանուր եկամտի սվոփ, վարկային սփրեդ գործարք, ռեպո գործարք, հակադարձ ռեպո գործարք, առուվաճառքի գործարք, արժեթղթերով ֆինանսավորման գործարք, եղանակային ինդեքսով գործարք կամ արժեթղթի, ապրանքի կամ այլ ֆինանսական գործիքի կամ փոկոսի ֆորվարդային առք (ներառյալ նշված գործարքների հետ կապված օպցիոնները) կամ (ii) (i) կետում նշված գործարքներին նման գործարք, որը կիրառելի

(a) any transaction (including an agreement with respect to any such transaction) existing or entered into after conclusion of this Agreement between one party to this Agreement (or any Credit Support Provider of such party or any applicable Specified Entity of such party) and the other party to this Agreement (or any Credit Support Provider of such other party or any applicable Specified Entity of such other party) which is not a Transaction under this Agreement but (i) which is a rate swap transaction, swap option, basis swap, forward rate transaction, commodity swap, commodity option, equity or equity index swap, equity or equity index option, bond option, interest rate option, foreign exchange transaction, cap transaction, floor transaction, collar transaction, currency swap transaction, cross-currency rate swap transaction, currency option, credit protection transaction, credit swap, credit default swap, credit default option, total return swap, credit spread transaction, repurchase transaction, reverse repurchase transaction, buy/sell-back transaction, securities lending transaction, weather index transaction or forward purchase or sale of a security, commodity or other financial instrument or interest (including any option with respect to any of these transactions) or (ii) which is a type of transaction that is similar to any transaction referred to in clause (i) above that is currently, or in the future becomes, recurrently entered into in the financial markets (including terms and conditions incorporated by reference in such agreement) and which is a forward, swap, future, option or other derivative on one or more rates, currencies, commodities, equity securities or other equity instruments, debt securities or other debt instruments, economic indices or measures of economic risk or value, or other benchmarks against which payments or deliveries are to be made;



ժամանակահատվածում կնքվում է ֆինանսական շուկաներում և հանդիսանում է մեկ կամ մի քանի փոկոսադրույքների, արժույթների, ապրանքների, բաժնային արժեթղթերի կամ այլ բաժնային գործիքների, պարտքային արժեթղթերի կամ այլ պարտքային գործիքների, փնտրեսական ինդեքսների կամ փնտրեսական ռիսկի կամ արժեքի չափումների կամ այլ ակտիվների վրա հիմնված ֆորվարդ, սվոփ, ֆյուչերս, օպցիոն կամ այլ ածանցյալ գործիք, որոնցով վերջնահաշվարկը կատարվում է բնեղենով կամ դրամական միջոցներով,

(բ) նշված գործարքների ցանկացած համակցություն, կամ

(b) any combination of these transactions; and

(գ) սույն Համաձայնագրում կամ համապատասխան Հաստատման մեջ որպես Նախապես սահմանված գործարք ճանաչված ցանկացած այլ գործարք:

(c) any other transaction identified as a Specified Transaction in this Agreement or the relevant confirmation.

«Դադարեցված գործարքներ» նշանակում է (Վաղաժամկետ դադարեցման ցանկացած ամսաթվի առնչությամբ)

"Terminated Transactions" means, with respect to any Early Termination Date:

(ա) 7.2.3. բաժնի համաձայն տրված ծանուցման մեջ նշված բոլոր Տուժող գործարքները, եթե Վաղաժամկետ դադարեցումը Անհրավաչափության կամ Ֆորս մաժորային իրավիճակի արդյունք է,


(a) if resulting from an Illegality or a Force Majeure Event, all Affected Transactions specified in the notice given pursuant to Section 7.2.3.;

(բ) բոլոր Տուժող գործարքները, եթե Վաղաժամկետ դադարեցումը այլ Դադարեցման հիմքի արդյունք է, և

(b) if resulting from any other Termination Event, all Affected Transactions; and

(գ) Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ նշանակելու ծանուցման՝ ստացված համարվելուն անմիջապես նախորդող պահին ուժի մեջ գտնվող բոլոր Գործարքները, եթե Վաղաժամկետ դադարեցումը տեղի է ունենում Խախտման արդյունքում, իսկ եթե կիրառվում է Ավտոմատ վաղաժամկետ դադարեցում, ապա Վաղաժամկետ դադարեցման ամսաթվին անմիջապես նախորդող պահին ուժի մեջ գտնվող բոլոր Գործարքները:

(c) if resulting from an Event of Default, all Transactions in effect either immediately before the notice designating that Early Termination Date is deemed received or, if Automatic Early Termination applies, immediately before that Early Termination Date.



«Դադարեցման արժույթ» *նշանակում է՝*

(ա) եթե Դադարեցման արժույթը նշված է Հավելվածում, և այդ արժույթն ազատորեն հասանելի է, ապա այդ արժույթը,

(բ) հակառակ դեպքում՝ ՀՀ դրամը:

«Համարժեք» *նշանակում է. Դադարեցման արժույթով արտահայտված գումարի դեպքում՝ այդ գումարը, իսկ Դադարեցման արժույթից տարբերվող արժույթով («Այլ արժույթ») արտահայտված գումարի դեպքում՝ որոշում կայացնող կողմի որոշած՝ Դադարեցման արժույթով արտահայտված այն գումարը, որը բավարար է համապատասխան Վաղաժամկետ դադարեցման ամսաթվին (իսկ եթե Փակման գումարը որոշվում է ավելի ուշ ամսաթվով, ապա այդ ամսաթվին) Այլ արժույթով արտահայտված գումարին փոխարկելու համար: Համարժեքը հաշվարկվում է արտարժութային գործակալի (ընտրված սփորև նկարագրված կարգով) սփոթ փոխարժեքով: Սփոթ փոխարժեքն ընտրվում է այնպիսի օրվա առավոտյան ժամը 11:00-ի դրությամբ, որին, գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան, կարող է որոշվել Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի (իսկ եթե Փակման գումարը որոշվում է ավելի ուշ ամսաթվով, ապա այդ ամսաթվի) դրությամբ փոխարկման փոխարժեքը: Եթե 7.5. բաժնի համաձայն միայն մեկ կողմն է պարտավոր որոշում կայացնել, այդ կողմը արտարժութային գործակալին ընտրում է բարեխղճորեն, իսկ հակառակ դեպքում ընտրությունը համաձայնեցվում է կողմերի միջև:*

«Դադարեցման հիմք» *նշանակում է Անիրավաչափություն, Ֆորս մաժորային իրավիճակ, Վերակազմակերպման արդյունքում վարկունակության վատթարացում, Պատժամիջոցներից բխող*


"Termination Currency" *means*

(a) if a Termination Currency is specified in the Schedule and that currency is freely available, that currency; and


(b) otherwise, AMD.

"Termination Currency Equivalent" *means, in respect of any amount denominated in the Termination Currency, such Termination Currency amount and, in respect of any amount denominated in a currency other than the Termination Currency (the "Other Currency"), the amount in the Termination Currency determined by the party making the relevant determination as being required to purchase such amount of such Other Currency as at the relevant Early Termination Date, or, if the relevant Close-out Amount is determined as of a later date, that later date, with the Termination Currency at the rate equal to the spot exchange rate of the foreign exchange agent (selected as provided below) for the purchase of such Other Currency with the Termination Currency at or about 11:00 a.m. on such date as would be customary for the determination of such a rate for the purchase of such Other Currency for value on the relevant Early Termination Date or that later date. The foreign exchange agent will, if only one party is obliged to make a determination under Section 7.5., be selected in good faith by that party and otherwise will be agreed by the parties.*

"Termination Event" *means an Illegality, a Force Majeure Event, a Credit Event upon Reorganisation, a Sanctions Termination event or, if specified to be applicable, an Additional Termination Event.*



դադարեցման հիմք կամ, եթե նշված է որպես կիրառելի, Դադարեցման լրացուցիչ հիմք:	
«Դադարեցման դրույքաչափ» նշանակում է տարեկան դրույքաչափ, որը հավասար է յուրաքանչյուր կողմի (այնպես, ինչպես հավաստվել է այդպիսի կողմի կողմից) ծախսերի (առանց իրական ծախսերի վերաբերյալ ապացույցների) միջին թվաբանականին, որոնք նա կրել է այդ գումարը ֆինանսավորելու համար կամ կկրեր այդ գումարը ֆինանսավորելու դեպքում:	**"Termination Rate"** means a rate per annum equal to the arithmetic mean of the cost (without proof or evidence of any actual cost) to each party (as certified by such party) if it were to fund or of funding such amounts.
«Շեմ» նշանակում է այն գումարը (առկայության դեպքում), որը նշված է որպես այդպիսին Հավելվածում:	**"Threshold Amount"** means the amount, if any, specified as such in the Schedule.
«Գործարք» ունի նախաբանում սահանված նշանակությունը:	**"Transaction"** has the meaning specified in the preamble.
Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի առնչությամբ որևէ կողմին **«Չվճարված գումարներ»** նշանակում է հետևյալ գումարների հանրագումարը.	**"Unpaid Amounts"** owing to any party means, with respect to an Early Termination Date, the aggregate of
(ա) բոլոր Դադարեցված գործարքների առնչությամբ՝ այն գումարները, որոնք Վաղաժամկետ դադարեցման ամսաթվին կամ դրանից առաջ 3.1.1. բաժնի ներքո դարձել են կողմին վճարման ենթակա (կամ կդառնային վճարման ենթակա, սակայն չեն դարձել այդպիսին 3.1.3. կամ 6.4. բաժինների ուժով) և Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի դրությամբ մնում են չվճարված,	(a) in respect of all Terminated Transactions, the amounts that became payable (or that would have become payable but for Section 3.1.3. or due but for Section 6.4.) to such party under Section 3.1.1. on or prior to such Early Termination Date and which remain unpaid as at such Early Termination Date;
(բ) յուրաքանչյուր Դադարեցված գործարքի ներքո այն պարտավորությունների առնչությամբ, որոնք Վաղաժամկետ դադարեցման ամսաթվին կամ դրանից առաջ 3.1.1. բաժնի ներքո դարձել են կողմին առաքման ենթակա (կամ կդառնային առաքման ենթակա, սակայն չեն դարձել այդպիսին 3.1.3. կամ 6.4. բաժինների ուժով) և Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի	(b) in respect of each Terminated Transaction, for each obligation under 3.1.1. which was (or would have been but for Section 3.1.3 or 6.4.) required to be settled by delivery to such party on or prior to such Early Termination Date and which has not been so settled as at such Early Termination Date, an amount equal to the fair market value of that which was (or would have been) required to be delivered; and



դրությամբ մնում են չկատարված՝ այն գումարը, որը հավասար է առաքման ենթակա պարտավորության (կամ որը կլիներ առաքման ենթակա) իրական շուկայական արժեքին, և

(գ) եթե Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը բխում է Խախտումից, Վերակազմակերպման արդյունքում վարկունակության վատթարացումից կամ Դադարեցման լրացուցիչ հիմքից, և բոլոր չմարված Գործարքները Տուժող գործարքներ են, Վաղաժամկետ դադարեցման ցանկացած գումար, որը պետք է վճարվի մինչև այդպիսի Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը, և որը Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի դրությամբ մնում է չվճարված՝ յուրաքանչյուր դեպքում այդ պարտավորության կամ հետաձգված պարտավորության հետ կապված՝ համապատասխանաբար 10.8.2(1) կամ 10.8.2(2) բաժնի (ըստ կիրառելիության) համաձայն հաշվարկված տոկոսների կամ այլ փոխհատուցման հետ միասին: Վերոնշյալ (բ) կետում նշված պարտավորությունների իրական շուկայական արժեքը կորոշվի առաքման սկզբնապես նախատեսված ամսաթվի դրությամբ՝ բարեխղճորեն և օգտագործելով առևտրային ողջամիտ ընթացակարգեր՝ այն կողմի կողմից, որը 7.5. բաժնի համաձայն պարտավոր է կայացնել որոշում, իսկ եթե յուրաքանչյուր կողմ պարտավորված է նման որոշում կայացնել՝ երկու կողմերի կողմից որոշված իրական շուկայական արժեքների Համարժեքների միջինը:


(c) if the Early Termination Date results from an Event of Default, c Credit Event upon Reorganisation or an Additional Termination Event in respect of which all outstanding Transactions are Affected Transactions, any Early Termination Amount due prior to such Early Termination Date and which remains unpaid as of such Early Termination Date, in each case together with any amount of interest accrued or other compensation in respect of that obligation or deferred obligation, as the case may be, pursuant to Section 10.8.2(1) or 10.8.2(2), as appropriate. The fair market value of any obligation referred to in clause (b) above will be determined as of the originally scheduled date for delivery, in good faith and using commercially reasonable procedures, by the party obliged to make the determination under Section 7.5. or, if each party is so obliged, it will be the average of the Termination Currency Equivalents of the fair market values so determined by both parties.

«Սպասման ժամկետ» *նշանակում է՝*

(ա) 6.2.1. բաժնով նախատեսված իրադարձության կամ հանգամանքների առնչությամբ (բացառությամբ 6.2.1.(2) բաժնով նախատեսված դեպքի), երբ համապատասխան վճարումը, առաքումը կամ կատարումը իրականում պահանջվում են համապատասխան օրը, այդ

"Waiting Period" *means:*

(a) in respect of an event or circumstance under Section 6.2.1., other than in the case of Section 6.2.1.(2) where the relevant payment, delivery or compliance is actually required on the relevant day, a period of three Local Business Days (or days that would have been Local Business Days but for the occurrence of that event or



իրադարձության կամ հանգամանքի առաջացմանը հաջորդող երեք Տեղական աշխատանքային օրվա (կամ այնպիսի օրերի, որոնք կլինեին Տեղական աշխատանքային օրեր, եթե տեղի չունենար համապատասխան իրադարձությունը կամ հանգամանքը) ժամանակահատվածը, և

circumstance) following the occurrence of that event or circumstance; and

(բ) 6.2.2. բաժնով նախատեսված իրադարձության կամ հանգամանքների առնչությամբ (բացառությամբ 6.2.2.(2) բաժնով նախատեսված դեպքի), երբ համապատասխան վճարումը, առաքումը կամ կատարումը իրականում պահանջվում են համապատասխան օրը, այդ իրադարձության կամ հանգամանքի առաջացմանը հաջորդող ութ Տեղական աշխատանքային օրվա (կամ այնպիսի օրերի, որոնք կլինեին Տեղական աշխատանքային օրեր, եթե տեղի չունենար համապատասխան իրադարձությունը կամ հանգամանքը) ժամանակահատվածը:

(b) in respect of an event or circumstance under Section 6.2.2., other than in the case of Section 6.2.2.(2) where the relevant payment, delivery or compliance is actually required on the relevant day, a period of eight Local Business Days (or days that would have been Local Business Days but for the occurrence of that event or circumstance) following the occurrence of that event or circumstance.

3. Պարտավորություններ

Obligations

3.1. ***Ընդհանուր Պայմաններ.***


General Conditions.

3.1.1. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է կատարել Հաստատումներով սահմանված՝ իր բոլոր վճարման կամ առաքման պարտավորությունները՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Each party will make each payment or delivery specified in each Confirmation to be made by it, subject to the other provisions of this Agreement.

3.1.2. Սույն համաձայնագրի ներքո վճարումները կատարվում են սահմանված ամսաթվերին՝ այդ ամսաթվերի դրությամբ համապատասխան Հաստատման մեջ նշված հաշվի վարման վայրում առկա կամ այլ կերպ Գլխավոր համաձայնագրով սահմանված արժեքով՝ ազատորեն փոխանցելի միջոցներով և համապատասխան արժույթով վճարումների համար ընդունված սովորույթներով: Եթե վերջնահաշվարկը կատարվում է առաքման (այսինքն՝ վճարումից տարբերվող) միջոցով, ապա այդպիսի առաքումը կատարվում է նմանատիպ պարտավորությունների համար

Payments under this Agreement will be made on the due date for value on that date in the place of the account specified in the relevant Confirmation or otherwise pursuant to this Agreement, in freely transferable funds and in the manner customary for payments in the required currency. Where settlement is by delivery (that is, other than by payment), such delivery will be made for receipt on the due date in the manner customary for the relevant obligation unless otherwise specified in the relevant Confirmation or elsewhere in this Agreement.



սովորաբար կիրառելի եղանակով, եթե այլ բան նշված չէ համապատասխան Հաստատման մեջ կամ սույն Համաձայնագրի որևէ այլ դրույթում:

3.1.3. 3.1.1. ԲԱԺՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԿՈՂՄԵՐԻ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՅԱԼ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ[3] ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ.

Each obligation of each party under Section 3.1.1. is subject to the following conditions precedent:[3]

(1) Մյուս կողմը Խախտում կամ Պոտենցիալ խախտում թույլ չի տվել, և այդպիսիք չեն շարունակվում,

no Event of Default or Potential Event of Default with respect to the other party has occurred and is continuing;

(2) համապատասխան Գործարքի Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ վրա չի հասել և սահմանված կարգով չի նշանակվել, և

no Early Termination Date in respect of the relevant Transaction has occurred or been effectively designated; and

(3) պահպանված են Գլխավոր համաձայնագրով սույն 3.1.3 բաժնի նպատակների համար սահմանված բոլոր այլ նախապայմանները:

each other condition specified in this Agreement to be a condition precedent for the purpose of this Section 3.1.3.

Սույն 3.1.3. բաժնի նպատակների համար՝ Պատժամիջոցներ չկրող կողմի՝ 3.1.1. բաժնի ներքո բոլոր պարտավորությունները ենթակա են հետագա նախապայմանի,[4] որ Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմք առկա չէ և չի շարունակվում:


For the purpose of this Section 3.1.3, each obligation of the Non-sanctioned party under Section 3.1.1. is subject to the further condition precedent[4] that no Sanctions Termination Event has occurred and is continuing.

3.2. ***Հաշվի փոփոխություն.*** Կողմերից յուրաքանչյուրը կարող է փոխել վճարում կամ առաքում ստանալու համար տրամադրած իր հաշիվը՝ մյուս կողմին

Change of Account. Either party may change its account for receiving a payment or delivery by giving notice to the other party at least five Local Business Days prior to the Scheduled Settlement

[3] «Նախապայման» նշանակում է այնպիսի պայման, որը կողմը պետք է պահպանի, որպեսզի իրավասու լինի մյուս կողմից պահանջելու պարտավորության կատարում:
"condition precedent" means a condition that a party must comply with to claim performance of obligations by the other party.

[4] «Հետագա նախապայման» նշանակում է այնպիսի պայման, որը կողմը պետք է պահպանի, որպեսզի իրավասու լինի մյուս կողմից պահանջելու Համաձայնագրով իր հանդեպ կատարման ենթակա պարտավորության կատարման շարունակում: Հետագա նախապայմանը պետք է պահպանված լինի համապատասխան պարտավորության կատարման ամբողջ ընթացքում: Չպահպանումը պարտապանին տալիս է իրավասություն դադարեցնելու պարտավորության կատարումը:
"further condition precedent" means a condition that a party must comply with to claim continuation of performance of obligations by the other party. The further condition precedent must be met during the entire period of fulfilment of the relevant obligation. Non-compliance shall allow the other party not to perform its obligations.



ծանուցելով այն վճարման կամ առաքման Վերջնահաշվարկի նախատեսվող ամսաթվից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ, որը ցանկանում է կատարել փոփոխված հաշվի օգտագործմամբ, եթե մյուս կողմը ողջամիտ ժամկետում ողջամտորեն չի առարկում այդպիսի փոփոխությանը:

Date for the payment or delivery to which such change applies unless such other party gives timely notice of a reasonable objection to such change.

3.3. ***Վճարումների զուտացում.*** Եթե որևէ ամսաթվի կողմերը պետք է միմյանց վճարեն՝

Netting of Payments. If on any date amounts would otherwise be payable:

(1) միևնույն արժույթով արտահայտված, և

in the same currency; and

(2) միևնույն Գործարքից բխող


in respect of the same Transaction;

գումարներ, ապա այդ ամսաթվին կողմերի այդ պարտավորությունները ավտոմատ կերպով բավարարվում և կատարվում են: Եթե մի կողմի՝ վճարման ենթակա գումարների հանրագումարը գերազանցում է մյուս կողմի՝ վճարման ենթակա գումարների հանրագումարը, այդպիսի գումարի վճարման՝ յուրաքանչյուր կողմի պարտավորությունը փոխարինվում է այն կողմի պարտավորությամբ, որի վճարման ենթակա գումարների հանրագումարը գերազանցում է մյուսին՝ այդ հանրագումարների տարբերության չափով:

by each party to the other, then, on such date, each party's obligation to make payment of any such amount will be automatically satisfied and discharged. If the aggregate amount that would otherwise have been payable by one party exceeds the aggregate amount that would otherwise have been payable by the other party, each party's obligation to make payment of any such amount is replaced by an obligation upon the party by which the larger aggregate amount would have been payable to pay to the other party the excess of the larger aggregate amount over the smaller aggregate amount.

Երկու կամ ավելի Գործարքների առնչությամբ կողմերը կարող են ընտրել, որ միևնույն ամսաթվին միևնույն արժույթով վճարման ենթակա՝ այդ Գործարքներից բխող բոլոր գումարների համար հաշվարկվեն զուտ գումար և վճարման պարտավորություն՝ անկախ նրանից, թե արդյոք այդպիսի գումարները ենթակա են վճարման միևնույն Գործարքի, թե տարբեր Գործարքների ներքո: Այս ընտրությունը կարող է իրականացվել Հավելվածում կամ որևէ Հաստատման մեջ՝ նշելով, որ ընտրված Գործարքների նկատմամբ կիրառվում է «Մի շարք գործարքներով վճարումների զուտացումը» (որպիսի դեպքում վերոնշյալ (2) կետը չի տարածվի նման Գործարքների նկատմամբ): Մի շարք

The parties may elect in respect of two or more Transactions that a net amount and payment obligation will be determined in respect of all amounts payable on the same date in the same currency in respect of those Transactions, regardless of whether such amounts are payable in respect of the same Transaction or different Transactions. The election may be made in the Schedule or any Confirmation by specifying that "Multiple Transaction Payment Netting" applies to the Transactions identified as being subject to the election (in which case clause (2) above will not apply to such Transactions). Multiple Transaction Payment Netting is applicable to those Transactions from the starting date specified in the Schedule or such Confirmation, or, if a starting date is not specified in the Schedule or such Confirmation, the starting date otherwise agreed by the parties in writing. This



գործարքներով վճարումների զուտացման գործողությունն ուժի մեջ է մտնում Հավելվածում կամ համապատասխան Հաստատման մեջ նշված ամսաթվից, իսկ դրա բացակայության դեպքում՝ կողմերի կողմից այլ կերպ գրավոր համաձայնեցված ամսաթվից: Այս ընտրությունը կարող է կատարվել առանձին-առանձին՝ Գործարքների տարբեր խմբերի համար և առանձին-առանձին կիրառվել Գրասենյակների այն զույգերի նկատմամբ, որոնց միջոցով կողմերը կատարում և ստանում են վճարումներ կամ առաքումներ:

election may be made separately for different groups of Transactions and will apply separately to each pairing of Offices through which the parties make and receive payments or deliveries.

3.4. ***Հարկում.***

Այն դեպքում, երբ կողմից պահանջվում է Գլխավոր համաձայնագրով սահմանված իր վճարումներից պահել կամ նվազեցնել որևէ հարկ կամ տուրք, որը ենթակա չէ մյուս կողմին վերադարձման, այդ կողմը պետք է լրացուցիչ գումար տրամադրի մյուս կողմին՝ ապահովելով, որ մյուս կողմի ստացած զուտ գումարը (այդպիսի պահումից կամ նվազեցումից հետո) հավասար լինի այն գումարին, որը նա կստանար, եթե պահում կամ նվազեցում տեղի չունենար:

Taxation.

In the event that a party is required to withhold or deduct any taxes or levies from its payments under this Agreement, which are not recoverable from the other party, that party must provide additional amounts to the other party to ensure that the net amount received by the other party, after such withholding or deduction, is equivalent to what it would have received had there been no such withholding or deduction.


4. ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

Կողմերից յուրաքանչյուրը մյուս կողմին է ներկայացնում 4.1., 4.2., 4.3., 4.4., 4.6., 4.7. բաժիններում, իսկ Հավելվածում որպես կիրառելի նշված լինելու դեպքում՝ նաև 4.5. բաժնում պարունակվող հավաստիացումները (որպիսիք կհամարվեն կրկնվող[5] Գործարքի կնքման յուրաքանչյուր ամսաթվին, իսկ 4.6. և 4.7. բաժինների հավաստիացումները՝ մինչև սույն համաձայնագրի դադարեցումն ընկած ցանկացած պահի): Եթե Հավելվածում կամ

Representations

Each party makes the representations contained in Sections 4.1., 4.2., 4.3., 4.4., 4.6., 4.7. and, if specified in the Schedule as applying, 4.5. to the other party (which representations will be deemed to be repeated[7] on each date on which a Transaction is entered into and, in the case of the representations in Section 4.6. and 4.7., at all times until the termination of this Agreement). If any "Additional Representation" is specified in the Schedule or any Confirmation as applying, the party or parties specified for such Additional Representation will make and, if

[5] «Կրկնվող հավաստիացում» նշանակում է հավաստիացում, որը պետք է ճշմարիտ լինի ոչ միայն տրամադրվելու պահի, այլև Գլխավոր համաձայնագրում նշված այլ պահերի դրությամբ:
Repeating representations mean representations that must be true not only at the time of provision, but also at any other point of time specified in this Agreement.



որևէ Հաստատման մեջ որևէ «Լրացուցիչ հավաստիացում» սահմանված է որպես կիրառելի, ապա համապատասխան կողմը (կողմերը) այն ներկայացնում է (են) սահմանված ժամկետում (ժամկետներում) և կրկնում այն (կիրառելիության դեպքում) սահմանված ժամանակահատվածի (ժամանակահատվածների) դրությամբ:

applicable, be deemed to repeat such Additional Representation at the time or times specified for such Additional Representation.

4.1. ***Հիմնական հավաստիացումներ.***

Basic Representations.

4.1.1. ***Կարգավիճակ.*** Կողմը իր գրանցման երկրի օրենսդրության համաձայն պատշաճ կերպով հիմնադրված, գրանցված, լիցենզավորված (եթե անհրաժեշտ է լիցենզիա), գործող և պատշաճ կարգավիճակ ունեցող ընկերություն է,


Status. It is duly organised, registered, licensed (if applicable) and validly existing and in good standing under the laws of the jurisdiction of its organisation or incorporation;

4.1.2. ***Իրավասություններ.*** Կողմն իրավասու է կնքել և վավերացնել սույն Համաձայնագիրը և դրա հետ կապված ցանկացած այլ փաստաթուղթ, որի կողմ է հանդիսանում, կատարել սույն Համաձայնագրով և Ապահովության փաստաթղթերով սահմանված իր պարտավորությունները, և ձեռնարկել է բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են այդպիսի կքման, վավերացման և կատարման իրավասությունները ձեռք բերելու համար (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ ստացել է խոշոր գործարքներին, շահերի բախումներով գործարքներին (շահագրգռվածության առկայությամբ գործարքներ), փոխկապակցված անձանց հետ գործարքներին (բանկերի դեպքում) համաձայնությունները),

Powers. It has the power to execute this Agreement and any other documentation relating to this Agreement to which it is a party, to deliver this Agreement and any other documentation relating to this Agreement that it is required by this Agreement to deliver and to perform its obligations under this Agreement and any obligations it has under any Credit Support Document to which it is a party and has taken all necessary action to authorise such execution, delivery and performance, including, but not limited to, consents to major transactions, transactions with conflicts of interest (interested party transactions), transactions with Affiliates (in case of banks);

4.1.3. ***Խախտման կամ շահերի բախման բացակայություն.*** Այդպիսի կնքումը, վավերացումը և կատարումը չեն խախտում կամ հակասում իր նկատմամբ կիրառելի որևէ օրենքի, հիմնադիր փաստաթղթերի որևէ դրույթի, որևէ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի կամ պետական այլ մարմնի որևէ ակտի կամ

No Violation or Conflict. Such execution, delivery and performance do not violate or conflict with any law applicable to it, any provision of its constitutional documents, any order or judgment of any court or any arbitration tribunal, or other agency of government applicable to it or any of its assets



վճռի, որը կիրառելի է իր կամ իր ակտիվների նկատմամբ, կամ ցանկացած պայմանագրային սահմանափակման, որը պարտադիր է իր համար կամ ազդում է իր կամ իր ակտիվների վրա,

or any contractual restriction binding on or affecting it or any of its assets;

4.1.4. ***Համաձայնություններ.*** Գլխավոր համաձայնագրի կամ որևէ Ապահովության փաստաթղթի առնչությամբ անհրաժեշտ բոլոր պետական և այլ մարմինների համաձայնությունները ձեռք են բերվել և վավեր են, և այդպիսի համաձայնությունների բոլոր պայմանները պահպանվել են, և

Consents. All governmental, and other consents, that are required to have been obtained by it with respect to this Agreement or any Credit Support Document to which it is a party have been obtained and are in full force and effect and all conditions of any such consents have been complied with; and

4.1.5. ***Պարտավորությունների վավերություն.*** սույն Համաձայնագրով և Ապահովության փաստաթղթերով նրա ստանձնած պարտավորությունները իրավական, վավեր և պարտադիր են և ենթակա են կատարման՝ դրանց համապատասխան պայմանների պահպանմամբ (ներառյալ՝ կիրառելի սնանկության, վերակազմակերպման, անվճարունակության, մորատորիումի և այլ՝ պարտատերերի իրավունքների վրա ազդող նմանատիպ դրույթները):


Obligations Binding. Its obligations under this Agreement and any Credit Support Document to which it is a party constitute its legal, valid and binding obligations, enforceable in accordance with their respective terms (subject to applicable bankruptcy, reorganisation, insolvency, moratorium or similar laws affecting creditors' rights generally).

4.2. ***Որոշակի իրադարձությունների բացակայություն.*** Կողմը որևէ Խախտում կամ Պոտենցիալ խախտում թույլ չի տվել, կամ Դադարեցման հիմք առկա չէ (տեղի չի ունեցել), այդպիսիք չեն շարունակվում և սույն Համաձայնագրի կամ որևէ Ապահովության փաստաթղթի կնքման կամ դրանցով սահմանված պարտավորությունների ստանձնման կամ կատարման արդյունքում չեն կարող տեղի ունենալ:

Absence of Certain Events. No Event of Default or Potential Event of Default or, to its knowledge, Termination Event with respect to it has occurred and is continuing and no such event or circumstance would occur as a result of its entering into or performing its obligations under this Agreement or any Credit Support Document to which it is a party.

4.3. ***Դատական վարույթների բացակայություն.*** Առկա չէ իր, իր որևէ Ապահովություն տրամադրողի կամ կիրառելի Նախապես սահմանված անձի նկատմամբ որևէ դատարանի, պետական մարմնի, կազմակերպության կամ

Absence of Litigation. There is not pending or, to its knowledge, threatened against it, any of its Credit Support Providers or any of its applicable Specified Entities any action, suit or proceeding before any court, governmental body, agency or any arbitration institution that is likely to affect



արբիտրաժային տրիբունալի առջև/կողմից որևէ գործընթացի, հայցադիմումի կամ վարույթի նախապատրաստություն կամ սպառնալիք (ըստ իր տեղեկացվածության), որը կարող է ազդել սույն Համաձայնագրի կամ որևէ Ապահովության փաստաթղթի (որի կողմ է հանդիսանում ինքը) օրինականության, վավերականության կամ իր նկատմամբ կիրառելիության կամ դրանցով նախատեսված իր պարտավորությունները կատարելու կարողության վրա:

the legality, validity or enforceability against it of this Agreement or any Credit Support Document to which it is a party or its ability to perform its obligations under this Agreement or such Credit Support Document.

4.4. ***Սահմանված տեղեկատվության ճշգրտություն.*** Իր կողմից կամ իր անունից մյուս կողմին գրավոր տրամադրված բոլոր կիրառելի տեղեկությունները, որոնք Հավելվածում նշված են որպես սույն 4.4. բաժնի նպատակների համար տրամադրվող, այդպիսի տեղեկատվության տրամադրման ամսաթվի դրությամբ հավաստի, ճշգրիտ և ամբողջական են:


Accuracy of Specified Information. All applicable information that is furnished in writing by or on behalf of it to the other party and is identified for the purpose of this Section 4.4. in the Schedule is, as of the date of the information, true, accurate and complete.

4.5. ***Գործակալության բացակայություն.*** Նա կնքում է սույն Համաձայնագիրը (ներառյալ՝ յուրաքանչյուր Գործարք) որպես հիմնական կողմ և ոչ որպես որևէ անձի գործակալ:

No Agency. It is entering into this Agreement, including each Transaction, as principal and not as agent of any person or entity.

4.6. ***Պատժամիջոցների բացակայություն.*** Ո՛չ ինքը, ո՛չ իր որևէ տնօրեն, գործակալ, աշխատակից, Փոխկապակցված անձ կամ իր անունից հանդես եկող որևէ այլ անձ չի հանդիսանում Պատժամիջոցների թիրախ, և նա սույն Համաձայնագիրը կնքում է իր անունից և ոչ որևէ Պատժամիջոցների թիրախի անունից/օգտին:

No Sanctions Status. Neither it nor any director, agent, employee, or any person acting on behalf of it is a Sanctions Target and it is entering into this Agreement as principal and not on behalf of any other person or entity that is a Sanctions Target.



4.7. ***Միջոցների օգտագործում և օժանդակ գործունեություն.*** Գործարքների կնքման ամսաթվերին, ինչպես նաև այն ամբողջ ժամակահատվածում, որի ընթացքում կողմերը կրում են սույն Համաձայնագրով սահմանված պարտավորություններ, կողմը չի կարող ուղղակիորեն կամ անուղղակիորեն, Պատժամիջոցների թիրախի կողմից կամ նրանց հետ իրականացվող գործունեությունը կամ ձեռնարկատիրական գործունեությունը ֆինանսավորելու կամ հեշտացնելու նպատակով կամ որևէ Պատժամիջոց այլ կերպ խախտող եղանակով.

Use of transaction or proceeds and ancillary activities. On each date on which a Transaction is entered into and at all times when any obligations are owed under this Agreement, it shall not directly or indirectly

(ա) օգտագործել (կամ համաձայնել օգտագործել) սույն Համաձայնագրի ներքո կնքված որևէ Գործարք և սույն Համաձայնագրով (այդ թվում՝ որևէ Ապահովության փաստաթղթով) ստացված դրամական միջոցները, արժեթղթերը կամ այլ առաքումները, կամ


(a) use (or agree to use) any Transaction or any cash, securities or other deliveries received by it pursuant to this Agreement (including under any Credit Support Document); or

(բ) այդպիսի դրամական միջոցները, արժեթղթերը կամ այլ առաքումները տրամադրել որպես փոխառություն, փոխանցել կամ տրամադրել այլ կերպ:

(b) lend, contribute or otherwise make available such cash, securities or other deliveries received by it pursuant to this Agreement to or for the benefit of any Sanctions Target or any other person or entity, to finance or facilitate activities or business of or with any Sanctions Target or in any other manner which would violate Sanctions.

Օժանդակ գործունեություն. Գործարքի կնքման յուրաքանչյուր ամսաթվին և ցանկացած ժամանակ, երբ այդպիսի Գործարքով ստանձնված է որևէ պարտավորություն, և այդպիսի Գործարքը կապված չէ այնպիսի պարտքային կամ բաժնային գործիքի թողարկման կամ ձեռքբերման կամ դրանով սահմանված պարտավորությունների կատարման հետ, որը որևէ Պատժամիջոց կիրառող մարմնի կողմից սահմանված՝ գործառնությունների

Ancillary activities. On each date on which a Transaction is entered into and at all times when any obligations are owed with respect to that Transaction, such Transaction is not connected to the issuance or incurrence of, or performance of any obligations under, any debt or equity obligation which is the target of any restrictions on dealings by any Sanctions Authority.



նկատմամբ սահմանափակումների թիրախում է:

5. Համաձայնություններ

Կողմերը համաձայնում են, որ քանի դեռ իրենցից որևէ մեկը սույն Համաձայնագրի կամ որևէ Ապահովության փաստաթղթի (որի կողմ է հանդիսանում ինքը) ներքո ունի կամ կարող է ունենալ որևէ պարտավորություն.

Agreements

Each party agrees with the other that, so long as either party has or may have any obligation under this Agreement or under any Credit Support Document to which it is a party:

5.1. ***Սահմանված տեղեկատվության տրամադրում.*** իրենք Հավելվածում կամ Հաստատման մեջ նշված ամսաթվին կամ, եթե այդպիսին նշված չէ, ապա հնարավորինս շուտ մյուս կողմին կառաքեն այդ Հավելվածում կամ Հաստատումներում նշված բոլոր ձևաթղթերը, փաստաթղթերը կամ հավաստագրերը:


Furnish Specified Information. It will deliver to the other party any forms, documents or certificates specified in the Schedule or any Confirmation; and in each case by the date specified in the Schedule or such Confirmation or, if none is specified, as soon as reasonably practicable.

5.2. ***Թույլտվությունների պահպանում.*** նրանք կգործադրեն բոլոր ողջամիտ ջանքերը՝ ամբողջությամբ պահպանելու և ուժի մեջ պահելու ցանկացած պետական կամ այլ մարմինների բոլոր այն համաձայնությունները, որոնք անհրաժեշտ են սույն Համաձայնագրի կամ որևէ Ապահովության փաստաթղթի (որի կողմ են հանդիսանում) նպատակների համար, ինչպես նաև ձեռք բերելու այնպիսիք, որպիսիք կարող են անհրաժեշտ լինել հետագայում:

Maintain Authorisations. It will use all reasonable efforts to maintain in full force and effect all consents of any governmental or other authority that are required to be obtained by it with respect to this Agreement or any Credit Support Document to which it is a party and will use all reasonable efforts to obtain any that may become necessary in the future.

5.3. ***Օրենսդրության պահպանում.*** նրանք կպահպանեն բոլոր այն կիրառելի օրենքները և այլ իրավական ակտերը, որոնց չպահպանումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ նրանց՝ սույն Համաձայնագրով կամ որևէ Ապահովության փաստաթղթով նախատեսված պարտավորությունների կատարման ունակության վրա:

Comply With Laws. It will comply with all applicable laws and orders to which it may be subject if failure so to comply would materially impair its ability to perform its obligations under this Agreement or any Credit Support Document to which it is a party.



6. Խախտում և Դադարեցման հիմքեր

Events of Default and Termination Events

6.1. ***Խախտում.*** Որևէ պահի կողմի կամ, կիրառելիության դեպքում, նրա Ապահովություն տրամադրողի առնչությամբ հետևյալ իրադարձություններից որևէ մեկի առաջացումը հանդիսանում են (հաշվի առնելով 6.3 և 7.5.5 բաժինները) Խախտումներ («**Խախտում**»).

Events of Default. The occurrence at any time with respect to a party or, if applicable, any Credit Support Provider of such party or any Specified Entity of such party of any of the following events constitutes (subject to Sections 6.3 and 7.5.5) an event of default (an **"Event of Default"**) with respect to such party:

6.1.1. ***Վճարման կամ առաքման ձախողում.*** Կողմի կողմից սույն Համաձայնագրով սահմանված ժամկետում որևէ վճարում կամ 3.1.1. կամ 10.8.1.(2) կամ 10.8.1.(4) բաժինների համաձայն առաքում չկատարելը, եթե այդ ձախողումը չի շտկվում. վճարման դեպքում՝ մինչև դրա մասին ծանուցումը տրվելու պահին հաջորդող առաջին Տեղական աշխատանքային օրը կամ այդ օրվա ընթացքում, իսկ առաքման դեպքում՝ մինչև ծանուցումը ստանալու պահին հաջորդող առաջին Տեղական առաքման օրը կամ այդ օրվա ընթացքում: Կողմերը կարող են երկարաձգել սույն բաժնում նշված արտոնյալ ժամկետը (մեկ Տեղական աշխատանքային օր)՝ Հավելվածում նշելով այլ արտոնյալ ժամկետ:

Failure to Pay or Deliver. Failure by the party to make, when due, any payment under this Agreement or delivery under Section 3.1.1. or 10.8.1.(2) or 10.8.1.(4) required to be made by it if such failure is not remedied on or before the first Local Business Day in the case of any such payment or the first Local Delivery Day in the case of any such delivery after, in each case, notice of such failure is given to the party. The Parties may extend the grace period of one Local Business Day referred to above by specifying another grace period in the Schedule.

6.1.2. ***ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԽԱԽՏՈՒՄ, ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ.***


Breach of Agreement; Repudiation of Agreement.

(1) Կողմի կողմից սույն Համաձայնագրով սահմանված որևէ պարտավորության չկատարումը (բացառությամբ վճարում կատարելու պարտավորությունների կամ 3.1.1. կամ 10.8.1.(2) կամ 10.8.1.(4) բաժինների համաձայն առաքման պարտավորությունների) կամ Դադարեցման հիմքի վերաբերյալ Գլխավոր համաձայնագրով սահմանված ծանուցման չտրամադրումը, եթե դա չի շտկվում այդ չկատարման մասին ծանուցումը տրվելու պահից 30 օրվա ընթացքում, կամ

Failure by the party to comply with or perform any obligation (other than an obligation to make any payment under this Agreement or delivery under Section 3.1.1. or 10.8.1.(2) or 10.8.1.(4) or to give notice of a Termination Event in accordance with this Agreement if such failure is not remedied within 30 days after notice of such failure is given to the party; or

(2) կողմի կողմից սույն Համաձայնագրից ամբողջությամբ կամ մասնակիորեն

rejection by the party, in whole or in part, of this Agreement, or challenge of the validity of, this



հրաժարվելը, սույն Համաձայնագրի, կողմի ստորագրած որևէ Հաստատման կամ այդպիսի Հաստատմամբ հավաստվող Գործարքի վավերության վիճարկումը (կամ այդպիսի գործողությունը կատարվում է այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որը նշանակված կամ լիազորված է կառավարել կողմին կամ գործել նրա անունից):

Agreement, any Confirmation executed and delivered by that party, or any Transaction evidenced by such a Confirmation (or such action is taken by any person or entity appointed or empowered to operate it or act on its behalf).

6.1.3. ***Ապահովության խախտում.***

Credit Support Default.

(1) Կողմի կամ նրա Ապահովություն տրամադրողի կողմից որևէ Ապահովության փաստաթղթով սահմանված որևէ պարտավորության չկատարումը, եթե այն շարունակվում է բոլոր կիրառելի արտոնյալ ժամանակահատվածների ավարտից հետո,

Failure by the party or any Credit Support Provider of such party to comply with or perform any obligation to be complied with or performed by it in accordance with any Credit Support Document if such failure is continuing after any applicable grace period has elapsed;

(2) առանց մյուս կողմի գրավոր համաձայնության այդպիսի Ապահովության փաստաթղթի կամ դրա հիման վրա կողմի կամ նրա Ապահովություն տրամադրողի կողմից շնորհված ապահովության գործողության դադարեցումը մինչև այն բոլոր Գործարքներով կողմի բոլոր պարտավորությունների կատարումը, որոնց վերաբերում է այդ Ապահովության փաստաթուղթը, կամ


the termination of such Credit Support Document, or any security interest granted by such party or such Credit Support Provider to the other party pursuant to any such Credit Support Document prior to the satisfaction of all obligations of such party under each Transaction to which such Credit Support Document relates without the written consent of the other party; or

(3) Կողմի կամ նրա Ապահովություն տրամադրողի կողմից Ապահովության փաստաթղթից ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելը կամ դրա վավերության վիճարկումը (կամ, երբ այդպիսի գործողությունը կատարվում է այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որը նշանակված կամ լիազորված է կառավարել կողմին կամ գործել նրա անունից):

the party or such Credit Support Provider fails or rejects, in whole or in part, or challenges the validity of, such Credit Support Document (or such action is taken by any person or entity appointed or empowered to operate it or act on its behalf).

6.1.4. ***Կեղծ հավաստիացումների տրամադրում.*** սույն Համաձայնագրում կամ Ապահովության փաստաթղթում կողմի կամ Ապահովություն տրամադրողի կողմից տրամադրված/կրկնվող հավաստիացման՝ տրամադրվելու/կրկնվելու կամ

Misrepresentation. A representation made or repeated by the party or any Credit Support Provider of such party in this Agreement or any Credit Support Document proves to have been incorrect or misleading in any material respect



տրամադրված/կրկնված համարվելու պահին էականորեն ապակողմնորոշիչ լինելը:

when made or repeated or deemed to have been made or repeated.

6.1.5. ***Նախապես սահմանված գործարքի խախտում.*** Կողմի, նրա Ապահովություն տրամադրողի կամ Նախապես սահմանված անձի կողմից՝

Default Under Specified Transaction. The party, any Credit Support Provider of such party or any applicable Specified Entity of such party:

(1) Նախապես սահմանված գործարքով կամ դրա հետ կապված Ապահովության փաստաթղթով նախատեսված պարտավորությունների չկատարումը (բացառությամբ առաքում չիրականացնելու դեպքերի), եթե բոլոր կիրառելի ծանուցման կամ արտոնյալ ժամանակահատվածներն անցնելուց հետո այդպիսի չկատարումը հանգեցնում է Նախապես սահմանված գործարքի լուծման, դրանով սահմանված պարտավորությունների վաղաժամկետ կատարման կամ դրա վաղաժամկետ դադարեցման,


defaults (other than by failing to make a delivery) under a Specified Transaction or any credit support arrangement relating to a Specified Transaction and, after giving effect to any applicable notice requirement or grace period, such default results in a liquidation of, an acceleration of obligations under, or an early termination of, that Specified Transaction;

(2) բոլոր կիրառելի ծանուցման կամ արտոնյալ ժամանակահատվածներն անցնելուց հետո Նախապես սահմանված գործարքի ներքո մինչև դրանով նախատեսված վճարման կամ փոխանակման ժամկետի վերջին օրը կամ դրա վաղաժամկետ դադարեցման համատեքստում կատարման ենթակա որևէ վճարման չկատարումը (իսկ կիրառելի ծանուցման և/կամ արտոնյալ ժամանակահատվածների բացակայության դեպքում՝ այդպիսի չկատարման՝ առնվազն մեկ Տեղական աշխատանքային օր շարունակումը),

defaults, after giving effect to any applicable notice requirement or grace period, in making any payment due on the last payment or exchange date of, or any payment on early termination of, a Specified Transaction (or, if there is no applicable notice requirement or grace period, such default continues for at least one Local Business Day);

(3) Նախապես սահմանված գործարքի կամ դրա հետ կապված որևէ Ապահովության փաստաթղթի ներքո որևէ առաքման (ներառյալ՝ վերջին առաքման կամ փոխանակման օրը կատարման ենթակա առաքումները) չկատարումը, եթե բոլոր կիրառելի ծանուցման կամ արտոնյալ ժամանակահատվածներն անցնելուց հետո այդպիսի չկատարումը հանգեցնում է Նախապես սահմանված գործարքի լուծման,

defaults in making any delivery due under (including any delivery due on the last delivery or exchange date of) a Specified Transaction or any credit support arrangement relating to a Specified Transaction and, after giving effect to any applicable notice requirement or grace period, such default results in a liquidation of, an acceleration of obligations under, or an early termination of, all transactions outstanding under the documentation applicable to that Specified Transaction; or



դրանով սահմանված պարտավորությունների վաղաժամկետ կատարման կամ դրա հետ կապված փաստաթղթերի ներքո կատարման ենթակա բոլոր գործարքների վաղաժամկետ դադարեցման, կամ

(4) Նախապես սահմանված գործարքի կամ դրա հետ կապված Ապահովության փաստաթղթի ամբողջությամբ կամ մասամբ չկատարումը, դրանից հրաժարումը կամ վավերության վիճարկումը, եթե այդպիսի չկատարումը, հրաժարումը կամ վիճարկումը հավաստվում է այդ կողմի, Ապահովություն տրամադրողի կամ Նախապես սահմանված անձի կողմից կնքված փաստաթղթով կամ այլ հաստատող ապացույցներով (կամ այդպիսի գործողությունը կատարվում է այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որը նշանակված կամ լիազորված է կառավարել կողմին կամ գործել նրա անունից):


fails or rejects, in whole or in part, or challenges the validity of, a Specified Transaction or any credit support arrangement relating to a Specified Transaction that is, in either case, confirmed or evidenced by a document or other confirming evidence executed by that party, Credit Support Provider or Specified Entity (or such action is taken by any person or entity appointed or empowered to operate it or act on its behalf).

6.1.6. ***ԽԱՉՀԱՃ ԽԱԽՏՈՒՄ.*** Եթե «Խաչաձև խախտումը» Հավելվածում նշված է որպես կողմի նկատմամբ կիրառելի, հետևյալ դեպքերի առաջացումը կամ գոյությունը՝

Cross-Default. If "Cross-Default" is specified in the Schedule as applying to the party, the occurrence or existence of:

(1) կողմի, կողմի ցանկացած Ապահովություն տրամադրողի կամ Նախապես սահմանված անձի առնչությամբ նրանցից որևէ մեկի (առանձին-առանձին կամ միասին) Նախապես սահմանված պարտքին առնչվող մեկ կամ մի քանի պայմանագրերի կամ գործիքների ներքո պարտավորությունների խախտման, չկատարման կամ նմանատիպ այլ պայմանի կամ իրադարձության (ըստ այդ փաստաթղթի նկարագրության) առաջացումը, եթե նման պայմանագրերի կամ գործիքների համախառն մայր գումարը, ինչպես առանձին, այնպես էլ ստորև (2) ենթակետում նշված գումարի հետ միասին (առկայության դեպքում), կազմում է ոչ պակաս, քան կիրառելի Շեմը (ինչպես սահմանված է Հավելվածում), ինչի

a default, event of default or other similar condition or event (however described) in respect of such party, any Credit Support Provider of such party or any applicable Specified Entity of such party under one or more agreements or instruments relating to Specified Indebtedness of any of them (individually or collectively) where the aggregate principal amount of such agreements or instruments, either alone or together with the amount, if any, referred to in clause (2) below, is not less than the applicable Threshold Amount (as specified in the Schedule) which has resulted in such Specified Indebtedness becoming, or becoming capable at such time of being declared, due and payable under such agreements or instruments before it would otherwise have been due and payable; or



արդյունքում այդպիսի Նախապես սահմանված պարտքը դարձել է կամ տվյալ պահին կարող է հայտարարվել այդ համաձայնագրերի կամ գործիքների ներքո վճարման ենթակա ավելի վաղ, քան վճարման ենթակա կդառնար այլ պայմաններում, կամ

(2) այդ համաձայնագրերի կամ գործիքների ներքո սահմանված վճարման ժամկետում (կիրառելի ծանուցման կամ արտոնյալ ժամանակահատվածներն անցնելուց հետո) նման կողմի, Ապահովություն տրամադրողի կամ Նախապես սահմանված անձի (անհատապես կամ միասին) կողմից մեկ կամ մի քանի վճարումների չկատարումը՝ ինչպես առանձին, այնպես էլ վերը նշված (1) ենթակետում նշված գումարի հետ միասին (առկայության դեպքում), եթե այն պակաս չէ կիրառելի Շեմից:

a default by such party, such Credit Support Provider or such Specified Entity (individually or collectively) in making one or more payments under such agreements or instruments on the due date for payment (after giving effect to any applicable notice requirement or grace period) in an aggregate amount, either alone or together with the amount, if any, referred to in clause (1) above, of not less than the applicable Threshold Amount.

6.1.7. ***Անվճարունակություն.*** Կողմը, այդպիսի կողմի Ապահովություն տրամադրողը կամ Նախապես սահմանված անձը՝

Bankruptcy. The party, any Credit Support Provider of such party or any applicable Specified Entity of such party:

(1) լուծարվում է (բացառությամբ վերակազմակերպման դեպքերի),

is dissolved (other than pursuant to a reorganisation);

(2) լուծարվում է սնանկության արդյունքում,

is liquidated in the result of bankruptcy;

(3) դառնում է անվճարունակ կամ անկարող է մարել իր պարտքերը կամ չի մարում դրանք կամ գրավոր ճանաչում է իր պարտքերը ժամանակին մարելու իր ընդհանուր անկարողությունը,


becomes insolvent or is unable to pay its debts or fails or admits in writing its inability generally to pay its debts as they become due;

(4) համապատասխանում է Ընդհանուր սնանկության մասին օրենքով կամ Ֆինանսական կազմակերպությունների սնանկության մասին օրենքով սահմանված սնանկության հիմքերին,

grounds of bankruptcy established by the General Bankruptcy Law or the Financial Institutions Bankruptcy Law exist in relation to the party;

(5) նրա նկատմամբ Ընդհանուր սնանկության մասին օրենքով սահմանված կարգով հարուցվել է սնանկության վտանգի վարույթ,

it is subject to the risk of bankruptcy proceedings under the General Bankruptcy law;



(6) կողմի նկատմամբ որևէ կիրառելի օրենսդրության ներքո գոյություն ունեն (1)-(5) կետերում նկարագրված հանգամանքներին նման հանգամանքներ:

circumstances analogous to the ones described in clauses (1)-(5) under any applicable law exist in relation to the party.

6.1.8. ***Վերակազմակերպում առանց իրավահաջորդության.*** Կողմը կամ նրա Ապահովություն տրամադրողը վերակազմակերպվում է կամ իր բոլոր ակտիվները կամ դրանց էական մասը փոխանցում է այլ իրավաբանական անձի, և այդպիսի վերակազմակերպման/փոխանցման արդյունքում.

Reorganisation Without Assumption. The party or any Credit Support Provider of such party reorganises into or transfers all or substantially all its assets to another entity and, at the time of such reorganisation/transfer:

(1) առաջացող, գոյությունը շարունակող կամ ակտիվները ստացող ընկերությունը չի ստանձնում կողմի կամ Ապահովություն տրամադրողի՝ սույն Համաձայնագրով կամ Ապահովության փաստաթղթով (որի կողմ էր հանդիսանում ինքը կամ նրա իրավանախորդը) սահմանված բոլոր պարտավորությունները[6], կամ

the resulting, surviving or transferee entity fails to assume all the obligations of such party or such Credit Support Provider under this Agreement or any Credit Support Document to which it or its predecessor was a party[6]; or


(2) այդպիսի առաջացող, գոյությունը շարունակող կամ ակտիվները ստացող ընկերության կողմից սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունների կատարումը չի հանգեցնում նրանց կողմից Ապահովության փաստաթղթով օգուտների ստացմանը:

the benefits of any Credit Support Document fail to extend (without the consent of the other party) to the performance by such resulting, surviving or transferee entity of its obligations under this Agreement.

6.2. ***Դադարեցման հիմքեր.*** Գլխավոր համաձայնագրի դադարեցման հիմքեր են. Անիրավաչափություն (նկարագրված ստորև 6.2.1. բաժնում), Ֆորս մաժորային իրավիճակ (նկարագրված ստորև 6.2.2. բաժնում), Վերակազմակերպման հետևանքով վարկունակության վատթարացում (նկարագրված ստորև 6.2.3.

Termination Events. The occurrence at any time with respect to a party or, if applicable, any Credit Support Provider of such party or any Specified Entity of such party of any event specified below constitutes (subject to Section 6.3.) an Illegality if the event is specified in Section 6.2.1. below, a Force Majeure Event if the event is specified in Section 6.2.2. below, a Credit Event upon Reorganisation if the event is

[6] Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերությունների դեպքում սույն դրույթը չպետք է մեկնաբանվի այնպես, որ փոփոխի ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ վերակազմակերպման և իրավահաջորդության կանոնները:
In case of entities incorporated in the Republic of Armenia, this provision shall not be construed to alter, in any manner, the reorganisation and assumption rules of the Civil Code.



բաժնում), Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմք (նկարագրված ստորև 6.2.4. բաժնում) կամ Դադարեցման լրացուցիչ հիմք (նկարագրված ստորև 6.2.5. բաժնում), եթե որևէ պահի դրությամբ առաջացել են Կողմի կամ, եթե կիրառելի է, նրա Ապահովություն տրամադրողի կամ Նախապես սահմանված անձի նկատմամբ (6.3. բաժնի հաշվառմամբ):


specified pursuant to Section 6.2.3. below, and if specified to be applicable, a Sanctions Termination Event if the event is specified in Section 6.2.4. below or an Additional Termination Event if the event is specified pursuant to Section 6.2.5. below shall be a Termination Event under the Master Agreement:

6.2.1. ***Անիրավաչափություն.*** Համապատասխան Հաստատմամբ կամ այլ կերպ սույն Համաձայնագրով սահմանված բոլոր կիրառելի դրույթները, խափանումների դեպքում կիրառվող կամ իրավունքի պաշտպանության միջոցները սպառելուց հետո՝ Գործարքի կնքմանը հաջորդող որևէ իրադարձության կամ հանգամանքի (կողմի կամ, կիրառելիության դեպքում, Ապահովություն տրամադրողների գործողությունների) պատճառով հետևյալներից մեկը որևէ կիրառելի օրենսդրության ներքո (ներառյալ (առանց սահմանափակման)՝ այն երկրների օրենքները, որոնցում պահանջվում է կողմի կամ Ապահովություն տրամադրողի կողմից (ըստ կիրառելիության) այդպիսի վճարման, առաքման կամ այլ էական պարտավորության կատարում) դառնում է անօրինական կամ կդառնար այդպիսին, եթե համապատասխան վճարումը, առաքումը կամ կատարումը պահանջվեր այդ օրը (յուրաքանչյուր դեպքում, բացառությամբ կողմի՝ 5.2. բաժնի խախտման արդյունքում))՝

Illegality. After giving effect to any applicable provision, disruption fallback or remedy specified in, or pursuant to, the relevant Confirmation or elsewhere in this Agreement, due to an event or circumstance (other than any action taken by a party or, if applicable, any Credit Support Provider of such party) occurring after a Transaction is entered into, one of the following becomes unlawful under any applicable law (including without limitation the laws of any country in which payment, delivery or compliance is required by either party or any Credit Support Provider, as the case may be), on any day, or it would be unlawful if the relevant payment, delivery or compliance were required on that day (in each case, other than as a result of a breach by the party of Section 5.2.):

(1) այն Գրասենյակի համար, որի միջոցով այդ կողմը (Տուժող կողմ) այդպիսի Գործարքի ներքո կատարում կամ ստանում է վճարումներ կամ առաքումներ՝ կատարել այդպիսի Գործարքի ներքո վճարում կամ առաքում կատարելու, այդպիսի Գործարքի ներքո վճարում կամ առաքում ստանալու որևէ պարտավորություն կամ պահպանել տվյալ Գործարքին առնչվող՝ սույն

for the Office through which such party (the Affected Party) makes and receives payments or deliveries with respect to such Transaction to perform any obligation to make a payment or delivery in respect of such Transaction, to receive a payment or delivery in respect of such Transaction or to comply with any other material provision of this Agreement relating to such Transaction; or



Համաձայնագրի որևէ այլ էական պայման, կամ

(2) այդ կողմի կամ այդ կողմի որևէ Ապահովություն տրամադրողի համար (Տուժող կողմ)՝ կատարել որևէ Ապահովության փաստաթղթի ներքո վճարում կամ առաքում կատարելու, այդպիսի Ապահովության փաստաթղթի ներքո վճարում կամ առաքում ստանալու որևէ պարտավորություն կամ պահպանել տվյալ Գործարքին առնչվող՝ սույն Համաձայնագրի որևէ այլ էական պայման:

for such party or any Credit Support Provider of such party (Affected Party) to perform any obligation to make a payment or delivery under any Credit Support Document relating to such Transaction, to receive a payment or delivery under such Credit Support Document or to comply with any other material provision of such Credit Support Document.

6.2.2. ***ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ.*** Համապատասխան Հաստատման մեջ կամ սույն Համաձայնագրի որևէ այլ մասում նշված կիրառելի դրույթները, խափանումների դեպքում կիրառվող կամ իրավունքների պաշտպանության միջոցները սպառելուց հետո Գործարքի կնքմանը հաջորդող ֆորս մաժորային իրավիճակի կամ հանրային մարմնի ակտի հետևանքով որևէ օրվա դրությամբ.


FORCE MAJEURE EVENT. After giving effect to any applicable provision, disruption fallback or remedy specified in the relevant Confirmation or elsewhere in this Agreement, by reason of force majeure or act of state occurring after a Transaction is entered into, on any day:

(1) այն Գրասենյակը, որի միջոցով կողմը (Տուժող կողմ) կատարում և ստանում է Գործարքով սահմանված վճարումներ կամ առաքումներ, չի կարողանում կատարել այդպիսի վճարումներ կամ առաքումներ կատարելու որևէ պարտավորություն, ստանալ այդպիսի Գործարքից բխող վճարումներ կամ առաքումներ կամ կատարել այդ Գործարքի հետ կապված՝ սույն Համաձայնագրի որևէ այլ էական պայման (կամ չէր կարողանա, եթե այդպիսի վճարումը, առաքումը կամ այլ կատարումը պահանջվեր տվյալ օրը), կամ այդպիսի վճարումը, առաքումը կամ այլ կատարումը այդպիսի Գրասենյակի համար դառնում է անհնար կամ անիրագործելի (կամ անհնար կամ անիրագործելի կլիներ, եթե այդպիսի վճարումը, առաքումը կամ այլ կատարումը պահանջվեր տվյալ օրը), կամ

the Office through which such party (the Affected Party) makes and receives payments or deliveries with respect to such Transaction is prevented from performing any obligation to make such payment or delivery in respect of such Transaction, from receiving a payment or delivery in respect of such Transaction or from complying with any other material provision of this Agreement relating to such Transaction (or would be so prevented if such payment, delivery or compliance were required on that day), or it becomes impossible or impracticable for such Office so to perform, receive or comply (or it would be impossible or impracticable for such Office so to perform, receive or comply if such payment, delivery or compliance were required on that day); or

(2) կողմը կամ նրա որևէ Ապահովություն տրամադրող (Տուժող կողմ) չի կարողանում

such party or any Credit Support Provider of such party (the Affected Party) is prevented




կատարել այդպիսի Գործարքի հետ կապված Ապահովության փաստաթղթից բխող՝ վճարում կամ առաքում կատարելու պարտավորություն, ստանալ այդպիսի Ապահովության փաստաթղթից բխող վճարում կամ առաքում կամ պահպանել այդպիսի Ապահովության փաստաթղթի որևէ այլ էական պայման (կամ չէր կարողանա, եթե այդ վճարումը, առաքումը կամ կատարումը պահանջվեր տվյալ օրը), կամ այդպիսի վճարումը, առաքումը կամ կատարումը այդ կողմի կամ Ապահովության տրամադրողի համար դառնում է անհնար կամ անիրագործելի (կամ կդառնար այդ կողմի կամ նրա Ապահովություն տրամադրողի համար անհնար կամ անիրագործելի, եթե այդ վճարումը, առաքումը կամ կատարումը պահանջվեր տվյալ օրը): Սույն կետում նկարագրված ֆորս մաժորային իրավիճակը կամ հանրային մարմնի ակտը հանդիսանում է Դադարեցման հիմք, եթե այն դուրս է սույն կետում նկարագրված Գրասենյակի, կողմի կամ Ապահովություն տրամադրողի վերահսկողությունից, և այդպիսի Գրասենյակը, կողմը կամ Ապահովություն տրամադրողը չէին կարող, կիրառելով բոլոր ողջամիտ ջանքերը (որոնք այդպիսի կողմից կամ Ապահովություն տրամադրողից չեն պահանջի կրել ոչ էական ծախսերից տարբերվող այլ վնաս), հաղթահարել պարտավորությունների կատարման անհնարինությունը կամ անիրագործելիությունը:

from performing any obligation to make a payment or delivery under any Credit Support Document relating to such Transaction, from receiving a payment or delivery under such Credit Support Document or from complying with any other material provision of such Credit Support Document (or would be so prevented if such payment, delivery or compliance were required on that day), or it becomes impossible or impracticable for such party or Credit Support Provider so to perform, receive or comply (or it would be impossible or impracticable for such party or Credit Support Provider so to perform, receive or comply if such payment, delivery or compliance were required on that day). The force majeure or act of state referred to herein shall be qualified as a Termination Event so long as the force majeure or act of state is beyond the control of such Office, such party or such Credit Support Provider referred to herein and such Office, party or Credit Support Provider could not, after using all reasonable efforts (which will not require such party or Credit Support Provider to incur a loss, other than immaterial expenses), overcome such prevention, impossibility or impracticability.

6.2.3. ***Վերակազմակերպման հետևանքով վարկունակության վատթարացում.*** Եթե Հավելվածում «Վերակազմակերպման հետևանքով վարկունակության վատթարացում»-ը նշված է որպես կողմի նկատմամբ կիրառելի, այդ կողմի, նրա Ապահովություն տրամադրողի կամ Նախապես սահմանված անձի (յուրաքանչյուր դեպքում՝ «X») նկատմամբ

Credit Event Upon Reorganisation. If "Credit Event Upon Reorganisation" is specified in the Schedule as applying to the party, a Designated Event (as defined below) occurs with respect to such party, any Credit Support Provider of such party or any applicable Specified Entity of such party (in each case, "X"), which does not constitute a Reorganisation Without Assumption, and the creditworthiness of X or, if applicable, the successor, surviving or transferee



տեղի է ունենում Նախապես սահմանված իրադարձություն (նկարագրված ստորև), որը չի հանդիսանում Վերակազմակերպում առանց իրավահաջորդության, և այդ Նախապես սահմանված իրադարձության տեղի ունենալուց անմիջապես հետո X-ի կամ, եթե կիրառելի է, X-ի իրավահաջորդի, վերակազմակերպման արդյունքում գոյությունը շարունակող կամ X-ի ակտիվները ստացող ընկերության վարկունակությունը (հաշվի առնելով ցանկացած կիրառելի Ապահովության փաստաթուղթ) դառնում է էականորեն ավելի ցածր, քան Նախապես սահմանված իրադարձության տեղի ունենալուց անմիջապես առաջ էր (այդ դեպքում այդպիսի կողմը կամ նրա իրավահաջորդը, վերակազմակերպման արդյունքում գոյությունը շարունակող կամ X-ի ակտիվները ստացող ընկերությունը (ըստ կիրառելիության) կլինի Տուժող կողմը):

entity of X (taking into account any applicable Credit Support Document), is materially weaker immediately after the occurrence of such Designated Event than that of X immediately prior to the occurrence of such Designated Event (in any such event, such party or its successor, surviving or transferee entity, as appropriate, will be the Affected Party).

X-ի «Նախապես սահմանված իրադարձություններ» են.

A "Designated Event" with respect to X means that:

(1) X-ը վերակազմակերպվում է կամ իր բոլոր ակտիվները կամ դրանց էական մասը (կամ այն ակտիվների էական մասը, որը կապված է X-ի կողմից սույն Գլխավոր համաձայնագրի ամսաթվի դրությամբ իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ) փոխանցում է այլ ընկերության,


X reorganises into, or transfers all or substantially all its assets (or any substantial part of the assets comprising the business conducted by X as of the date of this Master Agreement) to another entity;

(2) որևէ անձ կամ անձանց խումբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն փաստացի ձեռք է բերում (A) այն բաժնային արժեթղթերը, որոնք տալիս են X-ի տնօրենների խորհրդի (կամ դրա համարժեք մարմնի) անդամների մեծամասնությունը ընտրելու իրավասություն կամ (B) ցանկացած այլ սեփականության իրավունք, որը հնարավորություն է տալիս իրականացնել X-ի նկատմամբ վերահսկողություն, կամ

any person or group of persons acquires directly or indirectly the beneficial ownership of (A) equity securities having the power to elect a majority of the board of directors (or its equivalent) of X or (B) any other ownership interest enabling it to exercise control of X; or

(3) պարտքի թողարկման, ստանձնման կամ երաշխավորման կամ (A) արտոնյալ բաժնետոմսերի կամ պարտքի կամ

X effects any substantial change in its capital structure by means of the issuance, incurrence or guarantee of debt or the issuance of (A)



արտոնյալ բաժնետոմսի փոխարկվող կամ դրանց հետ փոխանակվող այլ արժեթղթերի կամ (Բ) X-ի նկատմամբ որևէ սեփականության իրավունք առաջացնող այլ գործիքի թողարկման հետևանքով X-ի կապիտալի կառուցվածքը ենթարկվում է էական փոփոխության:

preferred stock or other securities convertible into or exchangeable for debt or preferred stock or (B) any other form of ownership interest.

6.2.4. ***Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմք.*** Եթե

Sanctions Termination Event. If

(1) կողմը կամ որևէ տնօրեն, գործակալ, աշխատակից կամ կողմի անունից հանդես եկող որևէ անձ. (Ա) հանդիսանում է կամ դառնում է Պատժամիջոցների թիրախ, կամ (Բ) ուղղակիորեն կամ անուղղակիորեն գործում է Պատժամիջոցների թիրախի անունից,


a party or any director, officer, agent, employee, or any person acting on behalf of the party: (A) is or becomes a Sanctions Target; or (B) acts directly or indirectly on behalf of, a Sanctions Target;

(2) կողմը Համաձայնագրի հիման վրա (այդ թվում՝ ցանկացած Ապահովության փաստաթղթով) ստացած դրամական միջոցները, արժեթղթերը կամ այլ առաքումները ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելի է դարձնում Պատժամիջոցների թիրախին կամ այդպիսի դրամական միջոցները, արժեթղթերը կամ այլ առաքումները կամ որևէ Գործարք ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգտագործում է Պատժամիջոցների թիրախի կամ նրա հետ որևէ գործունեության կամ գործարքի ֆինանսավորման կամ աջակցման համար կամ այլ կերպ՝ Պատժամիջոցներով արգելված ձևով կամ նպատակով,

a party makes available any cash, securities or other deliveries received by a party pursuant to the Agreement (including under any Credit Support Document), directly or indirectly, to a Sanctions Target or otherwise applies or uses, directly or indirectly, such cash, securities or other deliveries or any Transaction to finance or facilitate any activity or transaction of or with a Sanctions Target or otherwise in a manner or for a purpose prohibited by any Sanctions;

(3) Որևէ Պատժամիջոցների հետևանքով որևէ ամսաթվի դրությամբ որևէ կիրառելի օրենսդրությամբ մյուս կողմի («Պատժամիջոցներ չկրող կողմ») կամ Պատժամիջոցներ չկրող կողմի որևէ Ապահովություն տրամադրողի համար անհնարին, անիրականանալի կամ անօրինական է դառնում (կամ կլիներ անհնարին, անիրականանալի կամ անօրինական, եթե պահանջվեր տվյալ ամսաթվին) կատարել սույն

As a result of any Sanctions it becomes impossible, impracticable or unlawful under any applicable law, on any day, or it would be impossible, impracticable or unlawful if the relevant payment, delivery or compliance were required on that day, for the other party (the "Non-sanctioned party") or any Credit Support Provider of the Non-sanctioned party to perform any obligation to make a payment or delivery in respect of this Agreement or any Credit Support Document, to receive a payment or delivery in respect of this Agreement or to comply with any



Համաձայնագրի կամ որևէ Ապահովության փաստաթղթի հետ կապված՝ վճարում կամ առաքում կատարելու որևէ պարտավորություն, ստանալ սույն Համաձայնագրի հետ կապված վճարում կամ առաքում կամ կատարել սույն Համաձայնագրի կամ Ապահովության ցանկացած փաստաթղթի ցանկացած այլ դրույթ:

other provisions of this Agreement or any Credit Support Document.

(4) Պատժամիջոցներ կիրառող մարմնի կողմից կամ նրա անունից արվում է հայտարարություն, որ նա մտադիր է կիրառել Պատժամիջոցներ, որոնք կիրառումից հետո կհանգեցնեն (1), (2) կամ (3) կետերում նկարագրված հանգամանքներից որևէ մեկին:

Any announcement is made by, or on behalf of, any Sanctions Authority that it intends to implement any Sanctions that would, once implemented, give rise to any of the circumstances described in (1), (2) or (3) above.

(5) Ապացուցվում է, որ սույն Համաձայնագրի 4.6. բաժնով սահմանված՝ կողմի տված կամ կրկնած (կամ տրված կամ կրկնված համարվող) հավաստիացումը այն տրվելու, կրկնվելու կամ տրված կամ կրկնված համարվելու պահին որևէ առումով ոչ ճշգրիտ կամ ապակողմնորոշիչ է եղել:

Any representation under Section 4.6. of this Agreement made or repeated or deemed to have been made or repeated by a party proves to have been incorrect or misleading in any respect when made or repeated or deemed to have been made or repeated.

Վերոնշյալ Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքերի համատեքստում Պատժամիջոցներ կրող կողմը միակ Տուժող կողմն է, և բոլոր Գործարքները Տուժող գործարքներ են:

For the purpose of the foregoing Sanctions Termination Events, the Sanctioned Party shall be the sole Affected Party, and all Transactions shall be Affected Transactions.

6.2.5. ***Դադարեցման լրացուցիչ հիմք.*** Հավելվածում կամ որևէ Հաստատման մեջ որևէ «Դադարեցման լրացուցիչ հիմք» որպես կիրառելի սահմանված լինելու դեպքում առաջանում է այդ հիմքը (այդպիսի դեպքում Տուժող կողմը կամ կողմերը նրանք են, որոնք որպես այդպիսին են սահմանված Հավելվածում կամ տվյալ Հաստատման մեջ):


Additional Termination Event. If any "Additional Termination Event" is specified in the Schedule or any Confirmation as applying, the occurrence of such event (and, in such event, the Affected Party or Affected Parties will be as specified for such Additional Termination Event in the Schedule or such Confirmation).

6.3. ***Դադարեցման հիմքերի սպորադասություն (հիերարխիա).***

Priority (Hierarchy) of Termination Events.

6.3.1. Անհրավաչափություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ հանդիսացող կամ դրանց

An event or circumstance that constitutes or gives rise to an Illegality or a Force Majeure



առաջացմանը հանգեցնող իրադարձությունները կամ հանգամանքները, քանի դեռ հանդիսանում են այդպիսին, չեն համարվի Գլխավոր համաձայնագրի 6.1.1, 6.1.2.(1) կամ 6.1.3.(1) բաժիններով սահմանված Խախտումներ և չեն հանգեցնի դրանց, եթե կապված են վճարում կամ առաքում կատարելու ձախողման կամ սույն Համաձայնագրի կամ Ապահովության փաստաթղթի (ըստ կիրառելիության) որևէ այլ էական դրույթի պահպանման անհնարինության հետ:

Event will not, for so long as that is the case, also constitute or give rise to an Event of Default under Section 6.1.1, 6.1.2.(1) or 6.1.3.(1) insofar as they relate to the failure to make any payment or delivery or a failure to comply with any other material provision of this Agreement or a Credit Support Document, as the case may be.

6.3.2. Բացառությամբ 6.3.1. կետում նշված հանգամանքների՝ միաժամանակ Անհրավաչափություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ և Դադարեցման այլ հիմք կամ Խախտում հանդիսացող կամ դրանց հանգեցնող իրադարձությունները կամ հանգամանքները որակվում են որպես Խախտում կամ այդպիսի այլ Դադարեցման հիմք (ըստ կիրառելիության) և չեն հանդիսանում և չեն հանգեցնում Անհրավաչափության կամ Ֆորս մաժորային իրավիճակի:

Except in circumstances contemplated by clause 6.3.1., an event or circumstance which would simultaneously constitute or give rise to an Illegality or a Force Majeure Event and an Event of Default or any other Termination Event will be treated as an Event of Default or such other Termination Event, as the case may be, and will not constitute or give rise to an Illegality or a Force Majeure Event.

6.3.3. Եթե որևէ իրադարձություն կամ հանգամանք, որը կհանդիսանար Ֆորս մաժորային իրավիճակ կամ կհանգեցներ դրան, հանդիսանում է նաև Անհրավաչափություն, ապա այն համարվում է Անհրավաչափություն, բացառությամբ 6.3.2. կետում նկարագրված դեպքերի:


If an event or circumstance which would constitute or give rise to a Force Majeure Event also constitutes an Illegality, it will be treated as an Illegality, except as described in clause 6.3.2., and not a Force Majeure Event.

6.4. ***Սպասման ժամանակահատվածի ընթացքում վճարումների և առաքումների հետաձգումը.*** Եթե Գործարքի կապակցությամբ տեղի է ունեցել և շարունակվում է Անհրավաչափություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ, ապա յուրաքանչյուր վճարում կամ առաքում, որը այլապես կպահանջվեր այդ Գործարքի շրջանակներում, կհետաձգվի և ենթակա չի լինի վճարման մինչև՝

Deferral of Payments and Deliveries During Waiting Period. If an Illegality or a Force Majeure Event has occurred and is continuing with respect to a Transaction, each payment or delivery which would otherwise be required to be made under that Transaction will be deferred to, and will not be due until:

6.4.1. այդ Անհրավաչափության կամ Ֆորս մաժորային իրավիճակի (ըստ

the first Local Business Day or, in the case of a delivery, the first Delivery Day (or the first day



կիրառելիության) համար կիրառելի Սպասման ժամկետի ավարտին հաջորդող առաջին Տեղական աշխատանքային օրը կամ, առաքման դեպքում՝ առաջին Առաքման օրը (կամ առաջին օրը, որը պետք է լիներ Աշխատանքային օր կամ Առաքման օր (ըստ կիրառելիության), եթե տեղի չունենար այդպիսի Անհրավաչափություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ հանդիսացող կամ առաջացնող իրադարձությունը կամ հանգամանքը), կամ


that would have been a Business Day or Delivery Day, as appropriate, but for the occurrence of the event or circumstance constituting or giving rise to that Illegality or Force Majeure Event) following the end of any applicable Waiting Period in respect of that Illegality or Force Majeure Event (as the case may be); or

6.4.2. այն օրը (եթե տեղի է ունենում ավելի վաղ), երբ այդպիսի Անհրավաչափություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ հանդիսացող կամ առաջացնող իրադարձությունը կամ հանգամանքը դադարում է գոյություն ունենալ, կամ, եթե այդ օրը Տեղական աշխատանքային օր կամ Առաքման օր չէ (առաքման դեպքում), ապա հաջորդող առաջին օրը, որը Տեղական աշխատանքային կամ Առաքման օր է (ըստ կիրառելիության):

if earlier, the date on which the event or circumstance constituting or giving rise to that Illegality or Force Majeure Event ceases to exist or, if such date is not a Local Business Day or a Delivery Day, the first following day that is a Business Day or Delivery Day (in the case of a delivery), as appropriate.

6.5. ***Գլխամասի կամ հիմնական գրասենյակի՝ Մասնաճյուղի պարտավորությունները կատարելու անկարողությունը***. Եթե (1) 6.2.1.(1) կամ 6.2.2.(1) բաժնի համաձայն տեղի է ունենում Անհրավաչափություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ, և համապատասխան Գրասենյակը Տուժող կողմի գլխամասային կամ հիմնական գրասենյակը չէ, (2) կիրառվում է 11.1. բաժինը, (3) մյուս կողմը պահանջում է Տուժող կողմի գլխամասային կամ հիմնական գրասենյակի կողմից համապատասխան պարտավորության կատարում կամ համապատասխան դրույթի պահպանում, և (4) Տուժող կողմի գլխամասային կամ հիմնական գրասենյակը այդպիսիք չի կատարում կամ պահպանում այնպիսի իրադարձության կամ

Inability of Head or Home Office to Perform Obligations of Branch. If (1) an Illegality or a Force Majeure Event occurs under Section 6.2.1.(1) or 6.2.2.(1) and the relevant Office is not the Affected Party's head or home office, (2) Section 11.1. applies, (3) the other party seeks performance of the relevant obligation or compliance with the relevant provision by the Affected Party's head or home office and (4) the Affected Party's head or home office fails so to perform or comply due to the occurrence of an event or circumstance which would, if that head or home office were the Office through which the Affected Party makes and receives payments and deliveries with respect to the relevant Transaction, constitute or give rise to an Illegality or a Force Majeure Event, and such failure to perform or comply would otherwise constitute an Event of Default under Section 6.1.1. or 6.1.3.(1), then, for so long as the



հանգամանքի առաջացման պատճառով, որը կստեղծեր Անիրավաչափություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ կամ կհանգեցներ դրան, եթե այդ գլխամասային կամ հիմնական գրասենյակը լիներ այն Գրասենյակը, որի միջոցով Տուժող Կողմը համապատասխան Գործարքի շրջանակներում կատարում և ստանում է վճարումներ և առաքումներ, և նման չկատարումը կամ չպահպանումն այլ հանգամանքներում կհամարվեր 6.1.1. կամ 6.1.3.(1) բաժնով սահմանված Խախտում, ապա, այնքան ժամանակ, քանի դեռ համապատասխան իրադարձությունը կամ հանգամանքը շարունակում է գոյություն ունենալ ինչպես 6.2.1.(1) կամ 6.2.2.(1) բաժնում նշված Գրասենյակի (ըստ կիրառելիության), այնպես էլ Տուժող կողմի գլխամասային կամ հիմնական գրասենյակի առնչությամբ, այդ ձախողումը չի համարվի 6.1.1. կամ 6.1.3.(1) բաժնով սահմանված Խախտում:


relevant event or circumstance continues to exist with respect to both the Office referred to in Section 6.2.1.(1) or 6.2.2.(1), as the case may be, and the Affected Party's head or home office, such failure will not constitute an Event of Default under Section 6.1.1. or 6.1.3.(1).

7. Վաղաժամկետ դադարեցում, Փակման զուտացում

Early Termination; Close-Out Netting

7.1. ***Խախտումից բխող Վաղաժամկետ դադարեցում.*** Եթե որևէ պահի դրությամբ կողմը («Խախտող կողմ») թույլ է տվել Խախտում, և այդ Խախտումը շարունակվում է, մյուս կողմը («Պարտավորությունները չխախտող կողմ») կարող է ոչ ավել, քան 20 օր առաջ Խախտող կողմին ծանուցելով (նշելով համապատասխան Խախտումը), բոլոր չմարված Գործարքների համար որոշել Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ, որը չի կարող լինել ավելի վաղ, քան այդ ծանուցման ստացված համարվելու օրը: Սակայն, եթե Հավելվածում «Ավտոմատ վաղաժամկետ դադարեցումը» նշված է

Right to Terminate Following Event of Default. If at any time an Event of Default with respect to a party (the "Defaulting Party") has occurred and is then continuing, the other party (the "Non-defaulting Party") may, by not more than 20 days' notice to the Defaulting Party specifying the relevant Event of Default, designate an Early Termination Date in respect of all outstanding Transactions, which may not be earlier than the date such notice is deemed to be received. If, however, "Automatic Early Termination" is specified in the Schedule as applying to a party, then an Early Termination Date in respect of all outstanding Transactions will occur immediately upon the occurrence with respect to such party of an Event of Default specified in Section 6.1.7.



որպես կողմի նկատմամբ կիրառելի, ապա բոլոր չմարված Գործարքների Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը 6.1.7. բաժնում նախատեսված Խախտումը տեղի ունենալու ամսաթիվն է:

7.2. ***Դադարեցման հիմքի արդյունքում Համաձայնագիրը լուծելու իրավունքը.***

Right to Terminate the Agreement Following Termination Event.

7.2.1. ***Ծանուցում.*** Եթե ի հայտ է գալիս Ֆորս մաժորային իրավիճակ չհանդիսացող Դադարեցման հիմք, Տուժող կողմը, տեղեկանալով այդ մասին, անհապաղ ծանուցում է մյուս կողմին՝ նշելով այդ Դադարեցման հիմքի բնույթը և յուրաքանչյուր Տուժող գործարքը, ինչպես նաև մյուս կողմին է տրամադրում այդ Դադարեցման հիմքի վերաբերյալ ցանկացած այլ տեղեկատվություն, որը մյուս կողմը կարող է ողջամտորեն պահանջել: Ֆորս մաժորային իրավիճակի առաջացման դեպքում յուրաքանչյուր կողմ, տեղեկանալով այդ մասին, անհապաղ գործադրում է բոլոր ողջամիտ ջանքերը մյուս կողմին ծանուցելու համար՝ նշելով այդ Ֆորս մաժորային իրավիճակի բնույթը, ինչպես նաև մյուս կողմին տրամադրում է այդ Ֆորս մաժորային իրավիճակի վերաբերյալ այնպիսի այլ տեղեկատվություն, որը մյուս կողմը կարող է ողջամտորեն պահանջել:


Notice. If a Termination Event other than a Force Majeure Event occurs, an Affected Party will, promptly upon becoming aware of it, notify the other party, specifying the nature of that Termination Event and each Affected Transaction, and will also give the other party such other information about that Termination Event as the other party may reasonably require. If a Force Majeure Event occurs, each party will, promptly upon becoming aware of it, use all reasonable efforts to notify the other party, specifying the nature of that Force Majeure Event, and will also give the other party such other information about that Force Majeure Event as the other party may reasonably require.

7.2.2. ***Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի դեպքում Վաղաժամկետ դադարեցում.*** Եթե ի հայտ է գալիս Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմք՝

Early Termination following a Sanctions Termination Event. If a Sanctions Termination Event occurs:

1) Ազդեցություն չկրող կողմը պարտավոր չէ սույն Համաձայնագրի 7.2.1. բաժնի համաձայն ծանուցել մյուս կողմին, եթե և այնքան ժամանակ, քանի դեռ Ազդեցություն չկրող կողմի ողջամիտ դատողությամբ, համապատասխան Պատժամիջոցները չեն թույլատրում նման ծանուցման տրամադրումը,

the Non-affected Party shall not be required to give the notice contemplated by Section 7.2.1 of this Agreement to the other party if and for so long as (in the Non-affected Party's reasonable judgment) the relevant Sanctions do not permit such notice to be given;



2) եթե Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի կասեցման պայմանը չի բավարարվում, Ազդեցություն չկրող կողմը կարող է նշանակել Տուժող գործարքների Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ՝ համաձայն Գլխավոր համաձայնագրի 7-րդ բաժնի,

if the Sanctions Termination Event Suspension Condition is not satisfied, the Non-affected Party may designate an Early Termination Date in respect of the Affected Transactions in accordance with Section 7 of the Agreement;

3) եթե Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի կասեցման պայմանը բավարարված է.

if the Sanctions Termination Event Suspension Condition is satisfied:

(Ա) Ազդեցություն չկրող կողմը կարող է գրավոր ծանուցել մյուս կողմին՝ նշելով Սառեցման ամսաթիվ: Ազդեցություն չկրող կողմը պարտավոր չէ նման ծանուցում տալ, եթե և քանի դեռ (Ազդեցություն չկրող կողմի ողջամիտ դատողությամբ) համապատասխան Պատժամիջոցները թույլ չեն տալիս նման ծանուցման տրամադրումը,


(A) the Non-affected Party may give written notice to the other party specifying the Crystallization Date. The Non-affected Party shall not be obliged to give such notice if and for so long as (in the Non-affected Party's reasonable judgment) the relevant Sanctions do not permit such notice to be given;

(Բ) Սառեցման ամսաթվին կամ դրանից հետո՝ ողջամտորեն իրագործելի պահին, Ազդեցություն չկրող կողմը պետք է՝

(B) on or as soon as reasonably practicable following the Crystallization Date, the Non-affected Party shall:

(1) կատարի սույն Համաձայնագրի 7.5. բաժնով նախատեսված հաշվարկները՝ հետևյալ ենթադրությունների հիման վրա. (ա) բոլոր Տուժող Գործարքների համար Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքով պայմանավորված վրա է հասել Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ, և (բ) սույն Համաձայնագրի 7.5. բաժնում «Վաղաժամկետ դադարեցման ամսաթվին» բոլոր հղումները (ներառյալ՝ հարակից սահմանումները) ընդունվում են որպես հղումներ «Սառեցման ամսաթվին», և

make the calculations contemplated by Section 7.5 of this Agreement as if: (a) an Early Termination Date in respect of all Affected Transactions has resulted from the Sanctions Termination Event, and (b) all references to "Early Termination Date" (including in the associated definitions) in Section 7.5. of this Agreement were deemed to be references to "Crystallization Date"; and




(2) պատրաստի հաշվետվություն, որը պարունակում է սույն Համաձայնագրի 7.4.1. բաժնով սահմանված տեղեկատվությունը, և տրամադրի այդ հաշվետվությունը Տուժող կողմին՝ պայմանով, որ Ազդեցություն չկրող կողմը պարտավոր չէ նման հաշվետվություն տրամադրել Տուժող կողմին, եթե և այնքան ժամանակ, քանի դեռ (Ազդեցություն չկրող կողմի ողջամիտ դատողությամբ) համապատասխան Պատժամիջոցները թույլ չեն տալիս նման հաշվետվության տրամադրումը,

prepare a statement containing the information set forth in 7.4.1. of this Agreement and provide that statement to the Affected Party; provided that the Non-affected Party shall not be obliged to provide such statement to the Affected Party if and for so long as (in the Non-affected Party's reasonable judgment) the relevant Sanctions do not permit such statement to be given;

(Գ) Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքից ազատման պայմանի (ինչպես սահմանված է Գլխավոր համաձայնագրի 2-րդ բաժնում) առաջանալուց հետո Ազդեցություն չկրող կողմը կարող է Համաձայնագրի 7-րդ բաժնի համաձայն Տուժող գործարքների առնչությամբ նշանակել Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ,

(C) upon the occurrence of the Sanctions Termination Event Release Condition (as defined in Section 2 of the Master Agreement), the Non-affected Party may designate an Early Termination Date in respect of the Affected Transactions in accordance with Section 7 of the Agreement;




(Դ) Անկախ սույն Համաձայնագրի 7.5. բաժնից՝ վերը նշված (Գ) կետի ներքո Տուժող գործարքների առնչությամբ նշանակված Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի հետ կապված՝ վճարման ենթակա Վաղաժամկետ դադարեցման գումարը կլինի այն գումարը, որը Ազդեցություն չկրող կողմի կողմից որոշվում է վերը նշված (Բ) կետի ներքո Սառեցման ամսաթվի առնչությամբ՝ ճշգրտված կողմերի միջև Սառեցման ամսաթվից (չներառելով) մինչև Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում կատարված կամ արգելափակված հաշիվներին փոխանցված որևէ վճարումների հաշվառմամբ՝ գումարած (եթե և այնքանով, որքանով դա թույլատրվում է համապատասխան Պատժամիջոցներով) այդ գումարի վրա Սառեցման ամսաթվից (չներառելով) մինչև դրա վճարման ամսաթիվը (ներառյալ) հաշվեգրված՝ «Կետանցի կիրառելի տոկոսադրույքի» սահմանման (ա) ենթակետում նշված տոկոսադրույքը, եթե նման տոկոսները Հավելվածում նշվում են որպես կիրառելի:

(D) notwithstanding Section 7.5. of this Agreement, the Early Termination Amount due in respect of the Early Termination Date designated in respect of the Affected Transactions under (C) above shall be the amount determined by the Non-affected Party in respect of the Crystallization Date under (B) above, as adjusted for any payments made between the parties or placed into blocked accounts during the period from (but excluding) the Crystallization Date to (and including) the Early Termination Date, plus (if, and to the extent, permitted by the relevant Sanctions) interest accrued on such amount from (and including) the date of the occurrence of the Crystallization Date to (but excluding) the date on which it is paid at the rate specified in the limb (a) definition of "Applicable Deferral Rate", if such interest is specified to be applicable in the Schedule.

7.2.3. ***Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի տեղի ունենալուց հետո Պարտավորությունների ապահովումը.*** Այնքանով, որքանով որևէ Ապահովության փաստաթուղթ նախատեսում է պարտավորությունների ապահովում, այդպիսի ապահովությունը պետք է այդ Ապահովության փաստաթղթի պայմաններին համապատասխան պահպանվի (համապատասխան Պատժամիջոցներով թույլատրված չափով և արգելափակված հաշիվների միջոցով՝ անհրաժեշտ և թույլատրելի չափով) այնքան ժամանակ, քանի դեռ Տուժող գործարքները չեն դադարեցվել, որից հետո այդպիսի պարտավորության ապահովումը, անկախ նրանից, թե կողմերից որի օգտին կամ մոտ է այն պահվում, պետք է հաշվառվի և հաշվարկվի Վաղաժամկետ դադարեցման

Credit Support following a Sanctions Termination Event. To the extent any Credit Support Document provides for credit support, such credit support shall be maintained in accordance with the terms of such Credit Support Document (to the extent permitted by the relevant Sanctions and through the facility of blocked accounts to the extent necessary and permitted) until such time as the Affected Transactions are terminated, whereupon such credit support, whether held by or for one party or the other, shall be accounted for, reconciled with the calculation of the Early Termination Amount calculated in respect of any Early Termination Date under Section 7.5., and transferred or retained, consistently with such calculation.



որևէ ամսաթվի համար 7.5. բաժնի համաձայն հաշվարկվող Վաղաժամկետ դադարեցման գումարի հետ և համաձայն այդ հաշվարկի՝ փոխանցվի կամ պահպանվի:

7.2.4. ***Լուծման իրավունք.***

(1) Դադարեցման լրացուցիչ հիմքի դեպքում ցանկացած Տուժող կողմը (եթե կան երկու Տուժող կողմեր) կամ, Վերակազմակերպման հետևանքով վարկունակության վատթարացման կամ Դադարեցման լրացուցիչ հիմքի դեպքում՝ Ազդեցություն չկրող կողմը (եթե կա միայն մեկ Տուժող կողմ), կարող է, քանի դեռ համապատասխան Դադարեցման հիմքը շարունակվում է, մյուս կողմին ոչ ավել, քան 20 օր առաջ ծանուցելով, նշանակել բոլոր Տուժող գործարքների Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ, որը չպետք է լինի ավելի վաղ, քան այն օրը, երբ այդ ծանուցումը համարվում է ստացված:

Right to Terminate.

Any Affected Party in the case of an Additional Termination Event if there are two Affected Parties, or the Non-affected Party in the case of a Credit Event Upon Reorganisation or an Additional Termination Event if there is only one Affected Party may, as long as the relevant Termination Event is continuing, by not more than 20 days' notice to the other party, designate a day not earlier than the day such notice is deemed to be received as an Early Termination Date in respect of all Affected Transactions.

(2) Եթե որևէ պահի դրությամբ տեղի է ունեցել Անհրավաչափություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ, և այն շարունակվում է, և կիրառելի Սպասման ժամկետը լրացել է.


If at any time an Illegality or a Force Majeure Event has occurred and is then continuing and applicable Waiting Period has expired:

(Ա) Ստորև (Բ) կետի հաշվառմամբ՝ կողմերից յուրաքանչյուրը կարող է, մյուս կողմին ոչ ավել, քան 20 օր առաջ ծանուցելով, սահմանել.

(A) Subject to clause (B) below, either party may, by not more than 20 days' notice to the other party; designate

1) բոլոր Տուժող գործարքների Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ, որը չի կարող ավելի վաղ լինել, քան այն օրը, երբ այդ ծանուցումը համարվում է ստացված կամ

a day not earlier than the day on which such notice is deemed to be received as an Early Termination Date in respect of all Affected Transactions or



2) ծանուցման մեջ նշել այն Տուժող գործարքները (ոչ բոլոր Տուժող գործարքները), որոնց առնչությամբ նա համապատասխան օրը սահմանում է որպես Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ, որը չի կարող ավելի վաղ լինել, քան այն օրից երկու Տեղական աշխատանքային օր հետո, երբ այդ ծանուցումը համարվում է ստացված: Ոչ բոլոր Տուժող գործարքների Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի նշանակման մասին ծանուցում ստանալուց հետո մյուս կողմը կարող է, նշանակող կողմին ծանուցելով (եթե այդպիսի ծանուցումը ստացված կհամարվի Վաղաժամկետ դադարեցման ամսաթվին կամ դրանից առաջ), նույն օրը նշանակել որպես Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ նաև որևէ այլ կամ բոլոր Տուժող գործարքների համար,

by specifying in that notice the Affected Transactions (less than all Affected Transactions) in respect of which it is designating the relevant day as an Early Termination Date, which cannot be earlier than two Local Business Days following the day on which such notice is deemed to be received. Upon receipt of a notice designating an Early Termination Date in respect of less than all Affected Transactions, the other party may, by notice to the designating party (if such notice is deemed to be received on or before the day so designated) designate that same day as an Early Termination Date in respect of any or all other Affected Transactions.

(Բ) եթե Անիրավաչափությունը կամ Ֆորս մաժորային իրավիճակը կապված է այդ կողմի կամ նրա Ապահովություն տրամադրողի կողմից համապատասխան Ապահովության փաստաթղթի ներքո որևէ վճարում կամ առաքում կատարելու պարտավորության կատարման կամ համապատասխան Ապահովության փաստաթղթի որևէ այլ էական դրույթի պահպանման հետ, ապա Տուժող կողմը իրավունք ունի Գլխավոր համաձայնագրի 7.2.3.(2)(Ա) բաժնով սահմանված կարգով 6.2.1.(2) բաժնով սահմանված Անիրավաչափությունից կամ 6.2.2.(2) բաժնով սահմանված Ֆորս մաժորային իրավիճակից բխող Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ նշանակել մյուս կողմի կողմից ոչ բոլոր Տուժող գործարքների համար այդպիսին նախորոք նշանակվելուց հետո:


(B) if the Illegality or Force Majeure Event relates to performance by such party or any Credit Support Provider of such party of an obligation to make any payment or delivery under, or to compliance with any other material provision of, the relevant Credit Support Document, an Affected Party will only have the right to designate an Early Termination Date under Section 7.2.3.(2)(A) as a result of an Illegality under Section 6.2.1.(2) or a Force Majeure Event under Section 6.2.2.(2) following the prior designation by the other party of an Early Termination Date in respect of less than all Affected Transactions.

7.3. ***Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի նշանակման ազդեցությունը.***

Effect of Designation of an Early Termination Date.

7.3.1. Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը վրա է հասնում Վաղաժամկետ

An Early Termination Date will occur on the date so designated in the notice designating an Early



դադարեցման ամսաթվի նշանակման՝ 8.1. և 8.2. բաժինների համաձայն տրամադրված ծանուցմամբ նշանակված ամսաթվին՝ անկախ նրանից, թե այդ պահին Խախտումը կամ Դադարեցման հիմքը շարունակվում է, թե ոչ:

Termination Date which is given under Section 8.1. or 8.2., whether or not the relevant Event of Default or Termination Event is then continuing.

7.3.2. Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի վրա հասնելուց կամ նշանակվելուց (վավեր դառնալուց) հետո Դադարեցված գործարքներից բխող՝ 3.1.3. կամ 10.8.1. բաժիններով սահմանված հետագա վճարումներ կամ առաքումներ չեն պահանջվում (առանց սույն Համաձայնագրի այլ դրույթների վրա ազդեցության): Առկայության դեպքում՝ Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի հետ կապված վճարման ենթակա գումարը որոշվում է 7.5. և 10.8.2. բաժինների համաձայն:


Upon the occurrence or effective designation (validity) of an Early Termination Date, no further payments or deliveries under Section 3.1.3. or 10.8.1. in respect of the Terminated Transactions will be required to be made (without prejudice to the other provisions of this Agreement). The amount, if any, payable in respect of an Early Termination Date will be determined pursuant to Sections 7.5. and 10.8.2.

7.4. ***Հաշվարկներ, Վճարման օր.***

Calculations; Payment Date.

7.4.1. ***Հաշվետվություն.*** Վաղաժամկետ դադարեցման ամսաթվին կամ դրա տեղի ունենալուց հետո՝ ողջամտորեն իրագործելի պահին, կողմերից յուրաքանչյուրը կատարում է 7.5. բաժնով նախատեսված իր հաշվարկները (առկայության դեպքում) և մյուս կողմին տրամադրում հաշվետվություն, որը ցույց է տալիս այդ հաշվարկները՝ ողջամիտ մանրամասնությամբ (ներառյալ՝ դրանց կատարման համար օգտագործված գնանշումները, շուկայական տվյալները կամ ներքին աղբյուրներից ստացված տեղեկատվությունը), սահմանում է վճարման ենթակա՝ Վաղաժամկետ դադարեցման գումարը (բացառությամբ այն դեպքերի, երբ կան երկու Տուժող կողմեր) և տալիս է համապատասխան հաշվեհամարի տվյալները, որին պետք է վճարվի վճարման ենթակա որևէ գումար: Փակման գումարը որոշելու նպատակով ստացված գնանշման կամ շուկայի տվյալների աղբյուրի գրավոր հաստատման բացակայության դեպքում՝

Statement. On or as soon as reasonably practicable following the occurrence of an Early Termination Date, each party will make the calculations on its part, if any, contemplated by Section 7.5. and will provide to the other party a statement showing, in reasonable detail, such calculations (including any quotations, market data or information from internal sources used in making such calculations), specifying (except where there are two Affected Parties) any Early Termination Amount payable and giving details of the relevant account to which any amount payable to it is to be paid. In the absence of written confirmation from the source of a quotation or market data obtained in determining a Close-out Amount, the records of the party obtaining such quotation or market data will be conclusive evidence of the existence and accuracy of such quotation or market data.



այդ գնանշումները կամ շուկայական տվյալները ստացող կողմի հաշվառումները կդիտվեն որպես այդպիսի գնանշման կամ տվյալների առկայության և ճշգրտության անհերքելի ապացույց:

7.4.2. ***Վճարման ամսաթիվ.*** Որևէ Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի հետ կապված՝ վճարման ենթակա Վաղաժամկետ դադարեցման գումարը 10.8.2.(2) բաժնի համաձայն վճարվող տոկոսների գումարի հետ միասին վճարման ենթակա կլինի.

(1) Խախտման հետևանքով նշանակված կամ տեղի ունեցող Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի դեպքում՝ վճարման ենթակա գումարի մասին ծանուցումը ստացված համարվելու օրը, իսկ

(2) Դադարեցման հիմքի հետևանքով նշանակված Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի դեպքում՝ վճարման ենթակա գումարի մասին ծանուցումն ստացված համարվելու օրվանից հետո երկրորդ Տեղական աշխատանքային օրը (կամ, եթե կան երկու Տուժող կողմեր, ապա այն օրվանից հետո, որին երկրորդ կողմի՝ 7.4.1. բաժնին համապատասխան տրամադրվող հաշվետվությունը համարվում է տրամադրված):

Payment Date. An Early Termination Amount due in respect of any Early Termination Date will, together with any amount of interest payable pursuant to Section 10.8.2.(2), be payable:

in the case of an Early Termination Date which is designated or occurs as a result of an Event of Default, on the day on which notice of the amount payable is effective; and


in the case of an Early Termination Date which is designated as a result of a Termination Event, on the second Local Business Days after the day on which notice of the amount payable is effective (or, if there are two Affected Parties, after the day on which the statement provided pursuant to Section 7.4.1. above by the second party to provide such statement is effective).

7.5. ***Վճարումներ Վաղաժամկետ դադարեցման դեպքում.*** Եթե վրա է հասնում Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ, ապա (առկայության դեպքում) վճարման ենթակա գումարը («Վաղաժամկետ դադարեցման գումար») որոշվում է սույն 7.5. բաժնի համաձայն, և կիրառվում է 7.7. բաժինը:

Payments on Early Termination. If an Early Termination Date occurs, the amount, if any, payable in respect of that Early Termination Date (the "Early Termination Amount") will be determined pursuant to this Section 7.5. and Section 7.7. will apply.

7.5.1. ***Խախտումներ.*** Եթե Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը բխում է Խախտումից, ապա Վաղաժամկետ դադարեցման գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Events of Default. If the Early Termination Date results from an Event of Default, the Early Termination Amount will be calculated by the following formula:



ՓԳ + ՉԳՀ1 - ՉԳՀ2 բանաձև 1

CoA + UAE1 - UAE2 formula 1

որտեղ.

ՓԳ՝ Պարտավորությունները չխախտող կողմի կողմից յուրաքանչյուր Դադարեցված գործարքի կամ Դադարեցված գործարքների խմբի համար որոշված Փակման գումարի կամ գումարների (դրական կամ բացասական) Համարժեք,

ՉԳՀ1՝ Պարտավորությունները չխախտող կողմին վճարման ենթակա Չվճարված գումարի Համարժեք,

ՉԳՀ2՝ Խախտող կողմին վճարման ենթակա Չվճարված գումարի Համարժեք:

Եթե Վաղաժամկետ դադարեցման գումարը դրական թիվ է, ապա Խախտող կողմը այն վճարում է Պարտավորությունները չխախտող կողմին: Եթե այն բացասական թիվ է, ապա Պարտավորությունները չխախտող կողմը Վաղաժամկետ դադարեցման գումարի բացարձակ արժեքը վճարում է Խախտող կողմին:

where:

CoA - Termination Currency Equivalent of the Close-out Amount or Amounts (whether positive or negative) determined by the Non-defaulting Party for each Terminated Transaction or group of Terminated Transactions;

UAE1 - the Termination Currency Equivalent of the Unpaid Amounts owing to the Non-defaulting Party;

UAE2 - the Termination Currency Equivalent of the Unpaid Amounts owing to the Defaulting Party.

If the Early Termination Amount is a positive number, the Defaulting Party will pay it to the Non-defaulting Party. If it is a negative number, the Non-defaulting Party will pay the absolute value of the Early Termination Amount to the Defaulting Party.

7.5.2. ***Դադարեցման հիմքեր.***


Ներքոնշյալ 7.5.3. բաժնի հաշվառմամբ, եթե առկա է մեկ Տուժող կողմ, ապա Վաղաժամկետ դադարեցման գումարը որոշվում է 7.5.1. բաժնով սահմանված կարգով, սակայն «Խախտող կողմ» և «Պարտավորությունները չխախտող կողմ» տերմինները դիտվում են որպես հղումներ համապատասխանաբար «Տուժող կողմ» և «Ազդեցություն չկրող կողմ» տերմիններին:

Ներքոնշյալ 7.5.3. բաժնի հաշվառմամբ, եթե առկա են երկու Տուժող կողմեր, յուրաքանչյուր կողմ յուրաքանչյուր Դադարեցված գործարքի կամ

Termination Events.

Subject to Section 7.5.3. below, if there is one Affected Party, the Early Termination Amount will be determined in accordance with Section 7.5.1., except that references to the Defaulting Party and to the Non-defaulting Party will be deemed to be references to the Affected Party and to the Non-affected Party, respectively.

Subject to Section 7.5.3 below, if there are two Affected Parties, each party will determine the Termination Currency Equivalent of the sum of the Close-out Amount or Close-out Amounts (whether positive or negative) for each



Դադարեցված գործարքների խմբի համար որոշում է Փակման գումարի կամ գումարների (դրական կամ բացասական) Համարժեքը, և Վաղաժամկետ դադարեցման գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

(ՓԳX - ՓԳY) / 2 + ՉԳՀX - ՉԳՀY բանաձև 2

Terminated Transaction or group of Terminated Transactions, and the Early Termination Amount will be calculated by the following formula:

(CoAX - CoAY) / 2 + UAEX-UAEY formula 2

որտեղ.

where:

ՓԳ X՝ ավելի բարձր գնահատված (ըստ «X» կողմի) Փակման գումարի (գումարների) Համարժեք,

CoAX - the higher amount determined (by party "X") of the Close-out Amount (Amounts) Equivalent;

ՓԳY՝ ավելի ցածր գնահատված (ըստ «Y» կողմի) Փակման գումարի (գումարների) Համարժեք,

CoAY - the lower amount so determined (by party "Y") of the Close-out Amount (Amounts) Equivalent;

ՉԳՀX՝ X-ին վճարման ենթակա Չվճարված գումարների Համարժեք,

UAEX - the Termination Currency Equivalent of the Unpaid Amounts owing to X;

ՉԳՀY՝ Y-ին վճարման ենթակա Չվճարված գումարների Համարժեք:


UAEY - the Termination Currency Equivalent of the Unpaid Amounts owing to Y.

Եթե Վաղաժամկետ դադարեցման գումարը դրական թիվ է, Y-ն այն վճարում է X-ին: Եթե այն բացասական թիվ է, X-ը Վաղաժամկետ դադարեցման գումարի բացարձակ արժեքը վճարում է Y-ին:

If the Early Termination Amount is a positive number, Y will pay it to X. If it is a negative number, X will pay the absolute value of the Early Termination Amount to Y.

7.5.3. ***Միջշուկայական իրադարձություններ.*** Եթե Դադարեցման հիմքն Անիրավաչափություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ է, ապա Վաղաժամկետ դադարեցման գումարը որոշվում է վերոնշյալ 7.5.2. բաժնին համապատասխան՝ ըստ կիրառելիության, սակայն Փակման գումարի կամ Փակման գումարների որոշման նպատակով (1) Որոշող կողմն օգտագործում է միջշուկայական արժեքները՝ առանց հաշվի առնելու Որոշող կողմի վարկունակությունը, և (2) եթե

Mid-Market Events. If the Termination Event is an Illegality or a Force Majeure Event, then the Early Termination Amount will be determined in accordance with Section 7.5.2. above, as appropriate, except for the purpose of determining a Close-out Amount or Close-out Amounts: (1) the Determining Party will use mid-market values without regard to the creditworthiness of the Determining Party; and (2) if obtaining quotations from one or more third parties (or from any of the Determining Party's Affiliates), the Determining Party will ask such persons not to take account of the current creditworthiness of the Determining Party or



ստացվում են մեկ կամ մի քանի երրորդ անձանց (կամ Որոշող կողմի հետ Փոխկապակցված անձանց) գնանշումները, ապա Որոշող կողմն այդ անձանց ցուցում է տալիս հաշվի չառնել Որոշող կողմի ընթացիկ վարկունակությունը կամ որևէ ընթացիկ Ապահովության փաստաթուղթ և տրամադրել միջշուկայական գնանշումները:


any existing Credit Support Document and to provide mid-market quotations.

7.5.4. ***Հաշվարկների ճշգրտում Անվճարունակության դեպքում.*** Այն դեպքում, երբ Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը վրա է հասնում կողմի նկատմամբ Ավտոմատ վաղաժամկետ դադարեցման կիրառման հետևանքով, Վաղաժամկետ դադարեցման գումարը ենթակա է ողջամիտ և կիրառելի օրենսդրությամբ թույլատրելի ճշգրտումների, որոնք պետք է արտացոլեն համապատասխան Վաղաժամկետ դադարեցման ամսաթվից մինչև 7.4.2. բաժնով որոշված վճարման ամսաթիվն ընկած ժամանակահատվածում սույն Համաձայնագրի ներքո մի կողմի՝ մյուսին կատարած (և այդ մյուս կողմի պահպանած) վճարումները կամ առաքումները:

Adjustment for Bankruptcy. In circumstances where an Early Termination Date occurs because Automatic Early Termination applies in respect of a party, the Early Termination Amount will be subject to such adjustments as are appropriate and permitted by applicable law to reflect any payments or deliveries made by one party to the other under this Agreement (and retained by such other party) during the period from the relevant Early Termination Date to the date for payment determined under Section 7.4.2.

7.5.5. ***Հաշվարկների ճշգրտում Անիրավաչափության կամ Ֆորս մաժորային իրավիճակի դեպքում.*** Կողմի կամ նրա Ապահովություն տրամադրողի կողմից Վաղաժամկետ դադարեցման գումարի չվճարումը չի հանդիսանում Գլխավոր համաձայնագրի 6.1.1. կամ 6.1.3(1) բաժնով նախատեսված Խախտում, եթե այդ չվճարումը հետևանք է այնպիսի իրադարձության կամ հանգամանքի, որը, եթե հանդիսանար Գործարքով սահմանված վճարման, առաքման կամ այլ պարտավորությունների չկատարման պատճառ, կհանդիսանար կամ կառաջացներ Անիրավաչափություն կամ Ֆորս մաժորային իրավիճակ: Նման գումարի նկատմամբ տոկոսները

Adjustment for Illegality or Force Majeure Event. The failure by a party or any Credit Support Provider of such party to pay any Early Termination Amount will not constitute an Event of Default under Section 6.1.1. or 6.1.3(1) if such failure is due to the occurrence of an event or circumstance which would, if it occurred with respect to payment, delivery or compliance related to a Transaction, constitute or give rise to an Illegality or a Force Majeure Event. Interest on such amount will accrue in the following manner: if subsequently an Event of Default, a Credit Event upon Reorganisation or an Additional Termination Event occurs, which results in an Early Termination Date and in respect of which all outstanding Transactions are Affected Transactions, the Early Termination Amount is treated as an Unpaid Amount owing to the other party. Interest shall accrue in



հաշվարկվում են հետևյալ կարգով. եթե հետագայում տեղի է ունենում Խախտում, Վերակազմակերպման արդյունքում վարկունակության վատթարացում կամ Դադարեցման լրացուցիչ հիմք, որը հանգեցնում է Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի, և որի առնչությամբ բոլոր չմարված Գործարքները Տուժող Գործարքներ են, ապա Վաղաժամկետ դադարեցման գումարը համարվում է մյուս կողմին Չվճարված գումար: Այդպիսի գումարի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ Համաձայնագրով Չվճարված գումարների համար նախատեսված կարգով և չափով: Այլ դեպքերում տոկոսները հաշվարկվում են 10.8.2(2) բաժնի համաձայն:


respect of such amount in the amounts and manner prescribed by the Agreement for Unpaid Amounts. Otherwise, interest accrues in accordance with Section 10.8.2(2).

7.5.6. ***Նախնական գնահատում.*** Կողմերը համաձայնում են, որ սույն 7.5. բաժնի համաձայն փոխհատուցվող գումարը վնասի ողջամիտ նախնական գնահատում է, այլ ոչ թե տույժ: Այդ գումարը ենթակա է վճարման ակնկալվող օգուտների կորստի և ապագա ռիսկերից պաշտպանվածության կորստի դիմաց: Բացառությամբ Համաձայնագրով նախատեսված դեպքերի՝ կողմերից ոչ մեկը իրավունք չունի ստանալու Դադարեցված գործարքների դադարեցման հետևանքով պատճառված որևէ լրացուցիչ վնասների հատուցում:

Pre-Estimate. The parties agree that an amount recoverable under this Section 7.5. is a reasonable pre-estimate of loss and not a penalty. Such amount is payable for the loss of bargain and the loss of protection against future risks. Except as otherwise provided in the Agreement, neither party will be entitled to recover any additional damages as a consequence of the termination of the Terminated Transactions.

7.6. ***Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի դեպքում Վաղաժամկետ դադարեցման վճարումներ.*** Եթե ի հայտ է գալիս Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմք, և Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի կասեցման պայմանը չի բավարարվում, սակայն համապատասխան Պատժամիջոցները թույլ չեն տալիս վճարել Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի առնչությամբ որպես Ազդեցություն չկրող կողմի կողմից Տուժող կողմին վճարման ենթակա հաշվարկված ցանկացած Վաղաժամկետ

Payments on Early Termination following a Sanctions Termination Event. If a Sanctions Termination Event occurs and the Sanctions Termination Event Suspension Condition is not satisfied but the relevant Sanctions do not permit payment of any Early Termination Amount calculated as being payable by the Non-affected Party to the Affected Party in respect of any Early Termination Date, then such amount may, at the option of the Non-affected Party, be placed into a blocked account to the extent permitted by the relevant Sanctions or not paid at all until such time as (in the Non-affected Party's reasonable judgment) permission is




դադարեցման գումար, ապա այդ գումարը Ազդեցություն չկրող կողմի ընտրությամբ կարող է մուտքագրվել արգելափակված հաշվին այնքանով, որքանով դա թույլատրվում է համապատասխան Պատժամիջոցներով, կամ ընդհանրապես չվճարվել մինչև այն պահը, երբ, Ազդեցություն չկրող կողմի ողջամիտ դատողությամբ, համապատասխան Պատժամիջոցներ կիրառող մարմնի կողմից տրվում է վճարումը կատարելու կամ թույլատրելու թույլտվություն, կամ Պատժամիջոցներն այլևս չեն արգելում նման վճարումները, կամ պահանջում են, որ այդ վճարումները պահվեն արգելափակված հաշվում: Տուժող կողմին չվճարված այդպիսի գումարի նկատմամբ հաշվեգրում է տոկոսադրույք (եթե և որքանով թույլատրվում է համապատասխան Պատժամիջոցներով) «Կետանցի կիրառելի տոկոսադրույքի» սահմանման (ա) կետում նշված Կետանցի կիրառելի դրույքաչափով՝ Վաղաժամկետ դադարեցման ամսաթվից (ներառյալ) մինչև (բայց չներառելով) վճարման ամսաթիվը:

granted by the relevant Sanctions Authority to make or release such payment or the Sanctions no longer prohibit such payments or require such payments to be held in a blocked account. Such amount not paid to the Affected Party shall (if, and to the extent, permitted by the relevant Sanctions) accrue interest at the Applicable Deferral Rate, specified in the limb (a) definition of "Applicable Deferral Rate", from (and including) the Early Termination Date to (but excluding) the date of payment.

7.7. ***Հաշվանց.*** Եթե կա Խախտող կողմ կամ մեկ Տուժող կողմ, ապա մի կողմին («Վճարում ստացող») մյուս կողմի («Վճարող») կողմից վճարման ենթակա Վաղաժամկետ դադարեցման գումարը Պարտավորությունները չխախտող կողմի կամ Ազդեցություն չկրող կողմի («X») ընտրությամբ (և առանց մյուս կողմին նախօրոք ծանուցման) նվազեցվում է Վճարում ստացողի կողմից Վճարողին վճարման ենթակա ցանկացած՝ Գլխավոր համաձայնագրից կամ այլ պարտավորությունից բխող գումարից («Այլ գումարներ»)՝ դրա հաշվանցով: Այնքանով, որքանով ցանկացած Այլ գումարներ հաշվանցվել են, այդ գումարները կհամարվեն ամբողջությամբ և բոլոր առումներով մարված՝ առանց հետագա

Set-Off. In circumstances where there is a Defaulting Party or where If there is a Defaulting Party or one Affected Party, then Early Termination Amount payable to one party (the "Payee") by the other party (the "Payer") will, at the option of the Non-defaulting Party or the Non-affected Party ("X") (and without prior notice to the other party), be reduced by its set-off against any other amounts ("Other Amounts") payable by the Payee to the Payer under this Agreement or any other obligation. To the extent that any Other Amounts are so set off, those Other Amounts will be discharged promptly and in all respects. X will give notice to the other party of any set-off effected under this Section 7.7.



պահանջների: X-ը մյուս կողմին տեղեկացնում է սույն 7.7. բաժնի համաձայն կատարված հաշվանցի մասին:

Այդ նպատակով X-ը կարող է կա՛մ Վաղաժամկետ դադարեցման գումարը, կա՛մ Այլ գումարները (կամ այդպիսի գումարների մի մասը) փոխարկել այն արժույթի, որով մյուսն արտահայտված է՝ ընտրված այնպիսի փոխարժեքով, որով այդ կողմը կարող է բարեխղճորեն և, օգտագործելով առևտրային տեսանկյունից ողջամիտ ընթացակարգեր, ձեռք բերել համապատասխան գումարը՝ այդպիսի արժույթով:

For this purpose, either the Early Termination Amount or the Other Amounts (or the relevant portion of such amounts) may be converted by X into the currency in which the other is denominated at the rate of exchange at which such party would be able, in good faith and using commercially reasonable procedures, to purchase the relevant amount of such currency.

Եթե պարտավորության չափն անորոշ է, X-ը կարող է բարեխղճորեն գնահատել այդ պարտավորությունը և հաշվանցել այն: Պարտավորությունը որոշակի դառնալուն պես ավել (պակաս) վճարված գումարը վերադարձվում (վճարվում) է:

If an obligation is unascertained, X may in good faith estimate that obligation and set off. When the obligation is ascertained, the sum paid in excess (not paid) is returned (paid).

Սույն 7.7. բաժնում ոչինչ չի կարող հանգեցնել գրավի կամ այլ ապահովության միջոցների առաջացման: Սույն 7.7. բաժինը չի բացառում և լրացնում է հաշվանցի, փոխհատուցման, հաշիվների համակցության, արգելանքի, պահպանման կամ պահման կամ նմանատիպ իրավունքները կամ պահանջները, որոնք որևէ կողմ կարող է որևէ պահի դրությամբ ունենալ կամ որոնցով կարող է ծանրաբեռնված լինել (օրենքով, պայմանագրով կամ այլ կերպ):


Nothing in this Section 7.7. will be effective to create a charge or other security interest. This Section 7.7. will be without prejudice and in addition to any right of set-off, offset, combination of accounts, lien, right of retention or withholding or similar right or requirement to which any party is at any time otherwise entitled or subject (whether by operation of law, contract or otherwise).

8. Փոխանցում

Ո՛չ սույն Համաձայնագիրը, ո՛չ դրանով կամ դրա ներքո սահմանված որևէ իրավունք կամ պարտավորություն չի կարող որևէ կողմի կողմից փոխանցվել (ներառյալ՝ որպես ապահովություն կամ այլ ձևով) առանց մյուս կողմի նախնական գրավոր համաձայնության, բացառությամբ հետևյալ դեպքերի.

Transfer

Neither this Agreement nor any interest or obligation in or under this Agreement may be transferred (whether by way of security or otherwise) by either party without the prior written consent of the other party, except that for the following cases:



8.1. կողմը կարող է կատարել սույն Համաձայնագրի փոխանցում վերակազմակերպման կամ իր բոլոր ակտիվների կամ դրանց էական մասի՝ մեկ այլ իրավաբանական անձի փոխանցելու արդյունքում (ինչը, սակայն, չի կարող որևէ կերպ փոփոխել սույն Համաձայնագրի ներքո որևէ իրավունք կամ հատուցում),

a party may make a transfer of this Agreement pursuant to a reorganisation, or transfer of all or substantially all its assets to, another entity (but without prejudice to any other right or remedy under this Agreement);

8.2. կողմը կարող է ամբողջությամբ կամ մասամբ փոխանցել իրեն վճարվելիք Վաղաժամկետ դադարեցման գումարի նկատմամբ իր իրավունքները, ներառյալ՝ այդ իրավունքների կապակցությամբ 9-րդ, 10.8. և 12-րդ բաժինների հիման վրա վճարվելիք գումարները,

a party may make a transfer of all or any part of its interest in any Early Termination Amount payable to it, together with any amounts payable on or with respect to that interest pursuant to Sections 9, 10.8. and 12;

8.3. Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի տեղի ունենալու դեպքում Պատժամիջոցներ չկրող կողմը կարող է երրորդ անձի փոխանցել սույն Համաձայնագիրը կամ դրանով սահմանված իր իրավունքները և պարտավորությունները՝ ամբողջությամբ կամ մասամբ (ներառյալ, առանց սահմանափակման, ցանկացած Գործարքի առնչությամբ), և մյուս կողմը համաձայնում է այդպիսի փոխանցմանը: Ցանկացած նախաձեռնված փոխանցում, որը հակասում է սույն 8-րդ բաժնին, առոչինչ է:

The Non-sanctioned party may make such a transfer of this Agreement or all or any part of its rights and obligations under this Agreement (including, without limitation, in respect of any Transaction) following the occurrence of a Sanctions Termination Event and the other party hereby agrees to such transfer.


Any purported transfer that is not in compliance with this Section 8 will be void.

9. Պայմանագրային արժույթ

Contractual Currency

9.1. ***Պայմանագրային արժույթով վճարում.*** Սույն Համաձայնագրով նախատեսված յուրաքանչյուր վճարում պետք է կատարվի այդ վճարման համար սույն Համաձայնագրում նշված արժույթով («Պայմանագրային արժույթ»): Այնքանով, որքանով թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, սույն Համաձայնագրով Պայմանագրային արժույթով վճարումներ կատարելու որևէ պարտավորություն չի կատարվի կամ բավարարվի որևէ

Payment in the Contractual Currency. Each payment under this Agreement will be made in the relevant currency specified in this Agreement for that payment (the "Contractual Currency"). To the extent permitted by applicable law, any obligation to make payments under this Agreement in the Contractual Currency will not be discharged or satisfied in any currency other than the Contractual Currency, except for the cases where the party, acting in good faith and using commercially reasonable procedures in the context of




արժույթով, բացի Պայմանագրային արժույթից, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը, վճարման արժույթը Պայմանագրային արժույթի փոխարկելու համատեքստում, գործելով բարեխղճորեն և օգտագործելով ողջամիտ առևտրային ընթացակարգեր, փաստացի ստանում է իրեն վճարման ենթակա՝ Պայմանագրային արժույթով արտահայտված ամբողջ գումարը: Եթե որևէ պատճառով այդպիսով ստացված գումարը (Պայմանագրային արժույթով) պակաս է սույն Համաձայնագրի հիման վրա վճարման ենթակա՝ Պայմանագրային արժույթով արտահայտված գումարից, ապա վճարումը կատարող կողմը, այնքանով, որքանով թույլատրված է կիրառելի օրենսդրությամբ, անհապաղ վճարում է այն լրացուցիչ գումարը (Պայմանագրային արժույթով), որն անհրաժեշտ է պակաս վճարված գումարը փոխհատուցելու համար: Եթե որևէ պատճառով այդպիսով ստացված գումարը (Պայմանագրային արժույթով) գերազանցում է սույն Համաձայնագրի հիման վրա վճարման ենթակա՝ Պայմանագրային արժույթով արտահայտված գումարը, վճարում ստացող կողմն անհապաղ վերադարձնում է այդպիսի ավելցուկի գումարը:

converting the currency of payment into the Contractual Currency, actually receives the full amount in the Contractual Currency of all amounts payable to it. If for any reason the amount in the Contractual Currency so received falls short of the amount in the Contractual Currency payable in respect of this Agreement, the party required to make the payment will, to the extent permitted by applicable law, immediately pay such additional amount in the Contractual Currency as may be necessary to compensate for the shortfall. If for any reason the amount in the Contractual Currency so received exceeds the amount in the Contractual Currency payable in respect of this Agreement, the party receiving the payment will refund promptly the amount of such excess.

9.2. ***Վճիռներ.*** Այնքանով, որքանով թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, եթե որևէ դատական կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ կամ այլ ակտ՝ արտահայտված Պայմանագրային արժույթից տարբերվող արժույթով, տրված է սույն Համաձայնագրի առնչությամբ որևէ պարտավորություն վճարելու համար, սույն Համաձայնագրի կապակցությամբ որևէ վաղաժամկետ դադարեցման հետ կապված ցանկացած գումարի վճարման համար կամ նշված գումարների վճարման վերաբերյալ մեկ այլ դատարանի վճռի կամ կարգադրության առնչությամբ,

Judgments. To the extent permitted by applicable law, if any judgment, or arbitral award or order expressed in a currency other than the Contractual Currency is rendered for the payment of any obligation owing in respect of this Agreement, for the payment of any amount relating to any early termination in respect of this Agreement or in respect of a judgment or order of another court for the payment of any of those amounts, the party seeking recovery, after recovery in full of the aggregate amount to which such party is entitled pursuant to the judgment or order, will be entitled to receive immediately from the other party the amount of any shortfall of the Contractual Currency received by such party as




փոխհատուցում հայցող կողմը ամբողջ գումարի փոխհատուցումից հետո, որի իրավունքն այդ կողմն ունի՝ համաձայն վճռի կամ ակտի, իրավունք կունենա մյուս կողմից անմիջապես ստանալ Պայմանագրային արժույթի ցանկացած պակասուրդի գումարը, որն առաջացել է այդ կողմի կողմից նման այլ արժույթով վճարված գումարների հետևանքով և անհապաղ կվերադարձնի մյուս կողմին Պայմանագրային արժույթի ցանկացած ավելցուկ, որն առաջացել է այդ կողմի կողմից՝ որպես այլ արժույթով գումարների վճարման հետևանք, եթե այդպիսի պակասուրդը կամ ավելցուկը ծագում է կամ առաջանում է Պայմանագրային արժույթի՝ վճռի կամ կարգադրության մեջ նշված արժույթի փոխանակման փոխարժեքի որևէ փոփոխության, և այն փոխարժեքի միջև տարբերության հետևանքով, որով այդ կողմը կարող է, գործելով բարեխղճորեն և օգտագործելով առևտրային բնույթի ողջամիտ ընթացակարգեր, ստացված արժույթը Պայմանագրային արժույթի փոխարկել՝ այդ կողմի կողմից փաստացի ստացված վճռի կամ կարգադրության արժույթի չափով Պայմանագրային արժույթ ձեռք բերելու համար:

a consequence of sums paid in such other currency and will refund promptly to the other party any excess of the Contractual Currency received by such party as a consequence of sums paid in such other currency if such shortfall or such excess arises or results from any variation between the rate of exchange at which the Contractual Currency is converted into the currency of the judgment or order for the purpose of such judgment or order and the rate of exchange at which such party is able, acting in good faith and using commercially reasonable procedures in converting the currency received into the Contractual Currency, to purchase the Contractual Currency with the amount of the currency of the judgment or order actually received by such party.

9.3. ***Առանձին հատուցումներ.*** Այնքանով, որքանով թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, սույն 9-րդ բաժնով սահմանված հատուցումները սույն Համաձայնագրով նախատեսված այլ պարտավորություններից առանձին և անկախ պարտավորություններ են: Իրավասու կողմը կարող է պահանջել դրանց կատարում՝ անկախ կողմի տված ցանկացած արտոնությունից, որին այդ կողմը պարտք է որևէ վճարում, և սույն Համաձայնագրի առնչությամբ վճարման ենթակա որևէ այլ գումարի վերաբերյալ կայացված վճիռը կամ արբիտրաժային վճիռը կամ կատարված պահանջն

Separate Indemnities. To the extent permitted by applicable law, the indemnities in this Section 9 constitute separate and independent obligations from the other obligations in this Agreement. The relevant party may claim their enforcement notwithstanding any indulgence granted by the party to which any payment is owed, and such enforcement will not be affected by judgment or arbitral award being obtained or claim being made for any other sums payable in respect of this Agreement.



ազդեցություն չեն ունենա այդպիսի կատարման հնարավորության վրա:

9.4. ***Վնասների ապացույցներ.*** Սույն 9-րդ բաժնի նպատակների համար վնասը համարվում է առկա, եթե կողմը ցույց է տալիս, որ փաստացի փոխանակման կամ գնման տեղի ունենալու դեպքում ինքը վնաս կկրեր:

Evidence of Loss. For the purpose of this Section 9, a loss is deemed to exist if a party demonstrates that it would have suffered a loss had an actual exchange or purchase been made.

10. Այլ պայմաններ

Miscellaneous

10.1. ***Ամբողջական պայմանագիր.*** Սույն Համաձայնագիրը հանդիսանում է դրա առարկայի վերաբերյալ կողմերի լիակատար համաձայնությունն ու փոխըմբռնումը: Կողմերից յուրաքանչյուրը հաստատում է, որ սույն Համաձայնագիրը կնքելիս չի ապավինել որևէ բանավոր կամ գրավոր հայտարարության, երաշխիքի կամ այլ հավաստիացումների և հրաժարվում է դրանցով պայմանավորված բոլոր իրավունքներից, որոնք այլ կերպ իրեն հասանելի կլինեին (բացառությամբ սույն Համաձայնագրում տառացի նշված դեպքերի): Սույն Համաձայնագրի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես խարդախության և/կամ խաբեության և/կամ կեղծիքի համար պատասխանատվությունից ազատում կամ դրա սահմանափակում:


Entire Agreement. This Agreement constitutes the entire agreement and understanding of the parties with respect to its subject matter. Each of the parties acknowledges that in entering into this Agreement it has not relied on any oral or written representation, warranty or other assurance (except as provided for or referred to in this Agreement) and waives all rights and remedies which might otherwise be available to it in respect thereof. No provision in this Agreement will be construed to limit or exclude any liability of a party for fraud.

10.2. ***Փոփոխություններ.*** Գլխավոր համաձայնագրի փոփոխությունները, լրացումները կամ դրանով ամրագրված իրավունքներից հրաժարումը ուժի մեջ են մտնում միայն այն դեպքում, եթե դրանք կազմված են գրավոր և կնքված են կողմերից յուրաքանչյուրի կողմից գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածը:

Amendments. Amendments, additions or waiver of rights to the Master Agreement shall enter into force only if they are made in writing and signed by each of the parties in writing or electronically, based on Article 450 of the Civil Code.

10.3. ***Պարտավորությունների ուժի մեջ մնալը.*** Գլխավոր համաձայնագրով կողմերի պարտավորությունները ուժի մեջ են մնում և

Survival of Obligations. Without prejudice to Sections 3.1.3. and 7.2.3., the obligations of the



գործում Գործարքների դադարումից հետո, բացառությամբ Գլխավոր համաձայնագրի 3.1.3. և 7.2.3. բաժիններով սահմանված դեպքերի:

parties under this Agreement will survive the termination of any Transaction.

10.4. ***Իրավունքների պաշտպանության լրացուցիչ միջոցներ.*** Բացառությամբ սույն Գլխավոր համաձայնագրով նախատեսված դեպքերի, սույն Գլխավոր համաձայնագրով նախատեսված իրավունքները, լիազորությունները, իրավունքների պաշտպանության միջոցները և արտոնությունները լրացնում են և չեն բացառում կիրառելի իրավունքով նախատեսված որևէ իրավունք, լիազորություն, իրավունքների պաշտպանության միջոց և արտոնություն:

Remedies Cumulative. Except as provided in this Master Agreement, the rights, powers, remedies and privileges provided in this Master Agreement are cumulative and not exclusive of any rights, powers, remedies and privileges provided by law.

10.5. ***Բնօրինակներ և հաստատումներ***


10.5.1. Համաձայնագիրը (ներառյալ՝ դրա լրացումները, փոփոխությունները և հրաժարումները) կարող է կնքվել մի քանի օրինակից (գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով՝ Քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածով սահմանված կարգով), որոնցից յուրաքանչյուրը կհամարվի բնօրինակ:

Counterparts and Confirmations.

The Agreement (including each amendment, and waiver in respect of it) may be executed and delivered in multiple copies (in writing, including electronically, under Article 450 of the Civil Code), each of which shall be deemed an original.

10.5.2. Կողմերը համաձայնում են, որ ցանկացած Գործարքի պայմանները պարտադիր են նրանց համար՝ այդ պայմաններին համաձայնելու պահից (բանավոր կամ գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային ձևով): Հաստատումը կուղարկվի որքան հնարավոր է շուտ և կարող է ձևակերպվել մի քանի օրինակից (գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով՝ հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածը), որոնցից յուրաքանչյուրը կհամարվի բնօրինակ: Կողմերը տվյալ փաստաթղթում կամ այլ արդյունավետ եղանակով կսահմանեն, որ ցանկացած նման բնօրինակ համարվում է Հաստատում:

The parties intend that they are legally bound by the terms of each Transaction from the moment they agree to those terms (whether orally or in writing, including electronically). A Confirmation will be entered into as soon as practicable and may be executed and delivered in counterparts (in writing, including electronically, under Article 450 of the Civil Code), each of which shall be deemed an original. The parties will specify therein or through another effective means that any such counterpart constitutes a Confirmation.



10.6. ***Իրավունքներից հրաժարման սահմանափակում.*** Գլխավոր համաձայնագրի առնչությամբ որևէ իրավունքի, լիազորության կամ արտոնության չկատարումը կամ կատարման ուշացումը չի համարվում համաձայնագրից հրաժարում, և որևէ իրավունքի, լիազորության կամ արտոնության առանձին կամ մասնակի կիրարկումը չի ընդունվի որպես այդ իրավունքի, իրավասության կամ արտոնության հետագա իրականացում կամ որևէ այլ իրավունքի, լիազորության կամ արտոնության իրականացում:

No Waiver of Rights. A failure or delay in exercising any right, power or privilege in respect of the Master Agreement will not be presumed to operate as a waiver, and a single or partial exercise of any right, power or privilege will not be presumed to preclude any subsequent or further exercise, of that right, power or privilege or the exercise of any other right, power or privilege.

10.7. ***Վերնագրեր.*** Սույն Գլխավոր համաձայնագրում օգտագործվող վերնագրերը նախատեսված են բացառապես կիրառման հարմարավետության համար և չպետք է ազդեն դրա կառուցվածքի վրա կամ հաշվի առնվեն սույն Գլխավոր համաձայնագրի մեկնաբանման ժամանակ:

Headings. The headings used in this Master Agreement are for convenience of reference only and are not to affect the construction of or to be taken into consideration in interpreting this Master Agreement.

10.8. ***Տոկոսներ և փոխհատուցում.***


Interest and Compensation.

10.8.1. ***Մինչև Վաղաժամկետ դադարեցումը.*** Մինչև համապատասխան Գործարքի Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի նշանակումը և վրա հասնելը տոկոսները և հատուցումները հաշվարկվում են հետևյալ կարգով.

Prior to Early Termination. Prior to the occurrence or effective designation of an Early Termination Date in respect of the relevant Transaction:

(1) *Տուժանքներ*. Եթե կողմը թույլ է տալիս վճարման որևէ պարտավորության Խախտում, ապա այնքանով, որքանով թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, և Գլխավոր համաձայնագրի 7.3. բաժնի համաձայն մյուս կողմի պահանջով նրան վճարում է ժամկետանց գումարի դիմաց տոկոսներ, նույն արժույթով, ինչ ժամկետանց գումարը՝ Տուժանքի դրույքաչափով՝ սկսած վճարման սահմանված ամսաթվից (ներառյալ) մինչև փաստացի վճարման ամսաթիվը

Interest on Defaulted Payments. If a party defaults in the performance of any payment obligation, it will, to the extent permitted by applicable law and subject to Section 7.3., pay interest (before as well as after judgment) on the overdue amount to the other party on demand in the same currency as the overdue amount, for the period from (and including) the original due date for payment to (but excluding) the date of actual payment (and excluding any period in respect of which interest or compensation in respect of the overdue amount



(չներառելով) (և չհաշված ցանկացած ժամանակաշրջան, որի նկատմամբ ժամկետանց գումարի դիմաց վճարվում է տոկոս կամ փոխհատուցում ստորև 10.8.1.(3)(Բ) կամ 10.8.1.(3)(Գ) կետի համաձայն):

is due pursuant to clause 10.8.1.(3)(B) or 10.8.1.(3)(C) below), at the Default Rate.


(2) *Փոխհատուցում չկատարված առաքումների համար*. Եթե կողմը խախտում է առաքման միջոցով կատարման ենթակա որևէ պարտավորություն, ապա նա ըստ պահանջի (Ա) մյուս կողմին փոխհատուցում է համապատասխան Հաստատմամբ կամ Գլխավոր համաձայնագրով նախատեսված չափով, իսկ (Բ) եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան Հաստատման մեջ կամ Գլխավոր համաձայնագրում, այնքանով, որքանով դա թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ և համաձայն 7.3. բաժնի՝ առաքման պարտավորության ողջամիտ շուկայական արժեքի նկատմամբ Տուժանքի դրույքաչափով վճարում է տոկոսներ (ինչպես վճռից առաջ, այնպես էլ դրանից հետո)՝ այն օրվանից (ներառյալ), երբ համապատասխան առաքումը պետք է կատարվեր, մինչև (չներառելով) դրա փաստացի կատարման օրը (չներառելով որևէ ժամանակահատված, որի ընթացքում ներքոնշյալ (4) կետի համաձայն պետք է վճարվեն տոկոսներ կամ փոխհատուցում): Վերոնշյալ առաքման պարտավորության շուկայական արժեքը որոշվում է բարեխղճորեն և առևտրային ողջամիտ ընթացակարգերի կիրառմամբ՝ այն կողմի կողմից, որն իրավասու էր ստանալու առաքումը:

Compensation for Defaulted Deliveries. If a party defaults in the performance of any obligation required to be settled by delivery, it will on demand (A) compensate the other party to the extent provided for in the relevant Confirmation or elsewhere in the Master Agreement and (B) unless otherwise provided in the relevant Confirmation or elsewhere in the Master Agreement, to the extent permitted by applicable law and subject to Section 7.3., pay to the other party interest (before as well as after judgment) on an amount equal to the fair market value of that which was required to be delivered in the same currency as that amount, for the period from (and including) the originally scheduled date for delivery to (but excluding) the date of actual delivery (and excluding any period in respect of which interest or compensation in respect of that amount is due pursuant to clause (4) below), at the Default Rate. The fair market value of any delivery obligation referred to above will be determined as of the originally scheduled date for delivery, in good faith and using commercially reasonable procedures, by the party that was entitled to take delivery.

(3) *Կեպանցի վճարումների տոկոսները*. Եթե (Ա) կողմը չի վճարում որևէ գումար, որը վճարման ենթակա կլիներ, եթե չկիրառվեր 3.1.3. բաժինը, ապա այնքանով, որքանով թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ և 7.3. բաժնով և ստորև (Ա) և (Բ) կետերով, նա պարտավոր է այդ գումարը վճարման ենթակա դառնալուց հետո մյուս կողմի

Interest on Deferred Payments. If:

(A) a party does not pay any amount that, but for Section 3.1.3., would have been payable, it will, to the extent permitted by applicable law and subject to Section 7.3. and clauses (A) and (B) below, pay interest (before as well as after judgment) on that amount to the other party on demand (after such amount becomes payable)



պահանջով վերջինիս վճարել տոկոսներ (ինչպես վճռից առաջ, այնպես էլ դրանից հետո)՝ նույն արժույթով և Կետանցի կիրառելի դրույքաչափով՝ այն ամսաթվից (ներառյալ), երբ գումարը ենթակա կլիներ վճարման, եթե չկիրառվեր 3.1.3. բաժինը, մինչև այն ամսաթիվը (չներառելով), երբ գումարը իրականում դառնում է վճարման ենթակա,


in the same currency as that amount, for the period from (including) the date the amount would, but for Section 3.1.3., have been payable to (but excluding) the date the amount actually becomes payable, at the Applicable Deferral Rate;

(Բ) վճարումը հետաձգվում է 6.4. բաժնի համաձայն, կողմը, որն այլ պայմաններում պետք է կատարեր այդ վճարումը, այդ գումարը վճարման ենթակա դառնալուց հետո կիրառելի օրենսդրությամբ և 7.3. բաժնով թույլատրված չափով և քանի դեռ այդ կողմի առնչությամբ տեղի չի ունեցել և չի շարունակվում Խախտում կամ Պոտենցիալ խախտում, մյուս կողմի պահանջով (այդ գումարը վճարման ենթակա դառնալուց հետո) նրան վճարում է տոկոսներ (ինչպես վճռից առաջ, այնպես էլ դրանից հետո)՝ նույն արժույթով և Կետանցի կիրառելի դրույքաչափով՝ այն ամսաթվից (ներառյալ), երբ գումարը ենթակա կլիներ վճարման, եթե չկիրառվեր 6.4. բաժինը, մինչև հետևյալ իրադարձություններից ավելի շուտ վրա հասնողի ամսաթիվը (չներառելով)՝ վճարումն այլևս չի հետաձգվում 6.4. բաժնի հիմքով, կամ կողմը թույլ է տալիս Խախտում կամ Պոտենցիալ Խախտում,

(B) a payment is deferred pursuant to Section 6.4., the party which would otherwise have been required to make that payment will, to the extent permitted by applicable law, subject to Section 7.3. and for so long as no Event of Default or Potential Event of Default with respect to that party has occurred and is continuing, pay interest (before as well as after judgment) on the amount of the deferred payment to the other party on demand (after such amount becomes payable) in the same currency as the deferred payment, for the period from (and including) the date the amount would, but for Section 6.4., have been payable to (but excluding) the earlier of the date the payment is no longer deferred pursuant to Section 6.4. and the date during the deferral period upon which an Event of Default or Potential Event of Default with respect to that party occurs, at the Applicable Deferral Rate; or

(Գ) Ֆորս մաժորային իրավիճակի կամ Անիրավաչափության պատճառով կողմը վերոնշյալ 10.8.1.(3)(Բ) կետում մատնանշված հետաձգման ժամկետների լրացումից հետո չի կատարում որևէ վճարում, նա կիրառելի օրենսդրությամբ թույլատրված չափով 7.3. բաժնի համաձայն և քանի դեռ այդ կողմի առնչությամբ տեղի չի ունեցել և չի շարունակվում Խախտում կամ Պոտենցիալ խախտում, մյուս կողմի պահանջով չվճարված գումարի նկատմամբ վճարում է տոկոսներ (ինչպես վճռից առաջ, այնպես էլ դրանից հետո)՝ Կետանցի

(C) a party fails to make any payment due to the occurrence of an Illegality or a Force Majeure Event after giving effect to any deferral period contemplated by clause 10.8.1.(3)(B) above, it will, to the extent permitted by applicable law, subject to Section 7.3. and for so long as the event or circumstance giving rise to that Illegality or Force Majeure Event continues and no Event of Default or Potential Event of Default with respect to that party has occurred and is continuing, pay interest (before as well as after judgment) on the overdue amount to the other party on demand in the same currency as the overdue amount, for the period from (including)



կիրառելի դրույքաչափով և նույն արժույթով՝ այն ամսաթվից (ներառյալ), երբ Ֆորս մաժորային իրավիճակի կամ Անիրավաչափության պատճառով գումարը չի վճարվում (իսկ եթե վճարումը հետաձգվել է 6.4. բաժնով սահմանված կարգով, այդ բաժնով սահմանված հիմքերի վերացման ամսաթվից) մինչև հետևյալ իրադարձություններից ավելի շուտ վրա հասնողի ամսաթիվը (չներառելով)՝ Ֆորս մաժորային իրավիճակի կամ Անիրավաչափության հանգեցնող իրադարձության կամ հանգամանքի վերացում կամ կողմի՝ Խախտում կամ Պոտենցիալ խախտում թույլ տալը (նշված ժամկետում չեն ներառվում ժամանակահատվածները, որոնց ընթացքում կետանցված գումարի առնչությամբ ենթակա են վճարման վերոնշյալ 10.8.1.(3)(Բ) կետով սահմանված տոկոսներ կամ փոխհատուցում):

the date the party fails to make the payment due to the occurrence of the relevant Illegality or Force Majeure Event (or, if later, the date the payment is no longer deferred pursuant to Section 6.4.) to (excluding) the earlier of the date the event or circumstance giving rise to that Illegality or Force Majeure Event ceases to exist and the date during the period upon which an Event of Default or Potential Event of Default with respect to that party occurs (excluding any period in respect of which interest or compensation in respect of the overdue amount is due pursuant to clause 10.8.1.(3)(B) above), at the Applicable Deferral Rate.

(4) *Փոխհատուցում կետանցված առաքումների համար.*

Եթե՝

(Ա) կողմը չի կատարում որևէ պարտավորություն, որը ենթակա կլիներ առաքմամբ կատարման, եթե չկիրառվեր Գլխավոր համաձայնագրի 3.1.3. բաժինը,

(Բ) առաքումը հետաձգվում է 6.4. բաժնի համաձայն, կամ

(Գ) կողմը չի կատարում առաքում Անիրավաչափության կամ Ֆորս մաժորային իրավիճակի առաջացման պատճառով, և սպառվել են բոլոր կիրառելի Սպասման ժամկետները,

կողմը, որը պարտավոր է (կամ այլ կերպ պարտավոր կլիներ) կատարել առաքում, կիրառելի օրենսդրությամբ թույլատրվող չափով և 7.3. բաժնի համաձայն մյուս կողմի պահանջով փոխհատուցում է նրան և վճարում տոկոսներ (վերոնշյալ (Ա) և (Բ)

Compensation for Deferred Deliveries.


If:

(A) a party does not perform any obligation that, but for Section 3.1.3., would have been required to be settled by delivery;

(B) a delivery is deferred pursuant to Section 6.4.; or

(C) a party fails to make a delivery due to the occurrence of an Illegality or a Force Majeure Event at a time when any applicable Waiting Period has expired,

the party required (or that would otherwise have been required) to make the delivery will, to the extent permitted by applicable law and subject to Section 7.3., compensate and pay interest to the other party on demand (after, in the case of clauses (A) and (B) above, such delivery is required) if and to the extent provided for in the



կետերի դեպքում՝ այն պահից հետո, երբ պահանջվում է նման առաքում), եթե և այն չափով, որը նախատեսված է համապատասխան Հաստատմամբ կամ սույն Համաձայնագրի այլ դրույթներով:

relevant Confirmation or elsewhere in this Agreement.

10.8.2. ***Վաղաժամկետ դադարեցում.*** Գործարքի Վաղաժամկետ դադարեցման ամսաթվի վրա հասնելու կամ ուժի մեջ մտնելու դեպքում Չվճարված գումարները և Վաղաժամկետ դադարեցման գումարները հաշվարկվում են հետևյալ կարգով.


Early Termination. Upon the occurrence or effective designation of an Early Termination Date in respect of a Transaction:

(1) *Չվճարված գումարներ*. Համապատասխան Գործարքի առնչությամբ Չվճարված գումարը որոշելու նպատակով կիրառելի օրենսդրությամբ թույլատրելի չափով վճարման պարտավորության գումարի կամ առաքման պարտավորության շուկայական արժեքի վրա հաշվեգրվում են տոկոսներ՝ սկսած այն պահից (ներառյալ), երբ համապատասխան պարտավորությունը պահանջվում էր կատարել (կամ կպահանջվեր 3.1.3. կամ 6.4. բաժնի համաձայն) մինչև համապատասխան Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը (չներառելով)՝ Փակման կիրառելի դրույքաչափով:

Unpaid Amounts. For the purpose of determining an Unpaid Amount in respect of the relevant Transaction, and to the extent permitted by applicable law, interest will accrue on the amount of any payment obligation or the amount equal to the fair market value of any obligation required to be settled by delivery included in such determination in the same currency as that amount, for the period from (including) the date the relevant obligation was (or would have been but for Section 3.1.3. or 6.4.) required to have been performed to (excluding) the relevant Early Termination Date, at the Applicable Close-out Rate.

(2) *Վաղաժամկետ դադարեցման գումարների նկատմամբ տոկոսներ*. Վաղաժամկետ դադարեցման գումարը կիրառելի օրենսդրությամբ թույլատրելի չափով վճարվում է Վաղաժամկետ դադարեցման ամսաթվից (ներառյալ) մինչև գումարի փաստացի վճարման ամսաթիվը (չներառելով)՝ Փակման կիրառելի դրույքաչափով՝ հաշվարկված տոկոսների (ինչպես վճռից/արբիտրաժային վճռից առաջ, այնպես էլ դրանից հետո) հետ միասին՝ համապատասխան Դադարեցման արժույթով:

Interest on Early Termination Amounts. Early Termination Amount will, to the extent permitted by applicable law, be paid together with interest (before as well as after judgment/arbitral award) on that amount in the Termination Currency, for the period from (including) such Early Termination Date to (excluding) the date the amount is paid, at the Applicable Close-out Rate.



10.8.3. ***Տոկոսների հաշվարկ.*** Սույն 10.8. բաժնով սահմանված բոլոր տոկոսները հաշվարկվում են օրական կուտակումների և փաստացի անցած օրերի քանակի հիման վրա:

Interest Calculation. Any interest pursuant to this Section 10.8. will be calculated on the basis of daily compounding and the actual number of days elapsed.

11. Գրասենյակներ, Բազմամասնաճյուղ կողմեր

Offices; Multibranch Parties

11.1. Եթե Հավելվածում կողմը նշված է որպես Բազմամասնաճյուղ կողմ, ապա այդ կողմը, 11.2. բաժնի համաձայն, կարող է Գործարք կնքել և կատարել և ստանալ Գործարքի հետ կապված վճարումներ և առաքումներ Հավելվածում նշված ցանկացած Գրասենյակի միջոցով՝ (բայց ոչ այլ՝ Հավելվածում չնշված Գրասենյակի միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի միջև գրավոր համաձայնությամբ):

If a party is specified as a Multibranch Party in the Schedule, such party may, subject to Section 11.2., enter into a Transaction through, book a Transaction in and make and receive payments and deliveries with respect to a Transaction through any Office listed in respect of that party in the Schedule (but not any other Office unless otherwise agreed by the parties in writing).

11.2. Կողմը Գործարք է կնքում այն Գրասենյակի միջոցով, որը նշված է համապատասխան Հաստատման մեջ կամ այլ կերպ գրավոր համաձայնեցված է կողմերի միջև, և եթե այդպիսին առկա չէ, նրա գլխամասային գրասենյակի միջոցով: Եթե կողմերի գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, Գործարքը հաշվառվում է այն գրասենյակի հաշվեկշռում (այլ կիրառելի փաստաթղթերում), և վճարումները և առաքումները կատարվում և ստացվում են այն Գրասենյակի միջոցով, որի միջոցով կողմը Գործարք է կնքել: Ելնելով 7.2.2. բաժնից՝ կողմը չի կարող առանց մյուս կողմի նախնական գրավոր համաձայնության փոխել Գրասենյակը, որտեղ նա հաշվառում է Գործարքը, կամ որի միջոցով կատարում և ստանում է Գործարքից բխող վճարումներ կամ առաքումներ:


The Office through which a party enters into a Transaction will be the Office specified for that party in the relevant Confirmation or as otherwise agreed by the parties in writing, and, if an Office for that party is not specified in the Confirmation or otherwise agreed by the parties in writing, its head or home office. Unless the parties otherwise agree in writing, the Office through which a party enters into a Transaction will also be the Office in which it books the Transaction and the Office through which it makes and receives payments and deliveries with respect to the Transaction. Subject to Section 7.2.2., neither party may change the Office in which it books the Transaction or the Office through which it makes and receives payments or deliveries with respect to a Transaction without the prior written consent of the other party.

12. Ծախսեր

Expenses

Խախտում թույլ տված կողմը պարտավորվում է հատուցել և զերծ պահել մյուս կողմին բոլոր ողջամիտ ծախսերից, ներառյալ՝ դատական ծախսերը,

A Defaulting Party will on demand indemnify and hold harmless the other party for and against all reasonable out-of-pocket expenses, including legal fees, execution fees, state fees,



կատարողական վճարները, պետական տուրքերը, արբիտրաժային վճարները, փորձագետների վճարները և այլ հարակից և պարտադիր վճարները, որոնք այդ մյուս կողմը կրել է սույն Համաձայնագրով կամ Ապահովության ցանկացած փաստաթղթով, որի կողմը հանդիսանում է Խախտում թույլ տված կողմը, կամ ցանկացած Գործարքի վաղաժամկետ դադարեցման պատճառով (ներառյալ (բայց չսահմանափակվելով)՝ հավաքագրման ծախսերը):[7]

arbitration fees, expert fees and other related fees and mandatory payments, incurred by such other party by reason of the enforcement and protection of its rights under this Agreement or any Credit Support Document to which the Defaulting Party is a party or by reason of the early termination of any Transaction (including (but not limited to) costs of collection).[7]

13. Ծանուցումներ

13.1. ***Վավերություն.*** Սույն Համաձայնագրի ներքո ցանկացած ծանուցում կամ այլ հաղորդագրություն կարող է ուղարկվել ստորև նկարագրված ցանկացած եղանակով՝ կողմերի տրամադրած հասցեներով կամ էլեկտրոնային հաղորդագրությունների համակարգի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (տե՛ս Հավելվածը) և համարվում են պատշաճ տրամադրված.


- գրավոր կազմված լինելու և առձեռն կամ փոստային ծառայության (վերադարձի անդորրագրի պահանջով) միջոցով առաքվելու դեպքում՝ այդպիսի առաքման օրը,
- էլեկտրոնային փոստով ուղարկվելու դեպքում՝ ստանալու օրը,
- վավերացված կամ գրանցված փոստով կամ համարժեք միջոցով (վերադարձի անդորրագրի պահանջով) ուղարկվելու դեպքում՝ առաքման օրը,

Notices

Effectiveness. Any notice or other communication under this Agreement may be sent by any of the methods described below to the address or number or in accordance with the electronic messaging system or e-mail provided (see the Schedule) and shall be deemed to have been duly given as follows:

- if in writing and delivered personally or by postal service (return receipt requested), on the date of such delivery,
- if sent by e-mail, on the date of receipt;
- if sent by certified or registered mail or equivalent (return receipt requested), on the day of delivery;
- if sent via an electronic platform or electronic messaging system, the date of receipt;

[7] Այս դրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ որոշակի ֆինանսական կազմակերպությունների (օրինակ՝ կենսաթոշակային և այլ ներդրումային ֆոնդեր) վրա դրվեն այնպիսի ծախսեր, որոնք թույլատրված չեն (սահմանափակված են) կիրառելի օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, և այդ չափով չի կիրառվի:
This provision shall in no event be construed to impose on specific financial institutions (e. g. pension and other investment funds) any expenses not permitted (limited) under applicable laws and regulations and shall be disapplied to such extent.




- էլեկտրոնային հարթակի կամ էլեկտրոնային հաղորդագրությունների համակարգի միջոցով ուղարկվելու դեպքում՝ ստանալու օրը,

բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի առաքման (կամ առաքման փորձի) կամ ստացման ամսաթիվը, կախված ուղարկման ձևից, Տեղական աշխատանքային օր չէ, կամ երբ հաղորդագրությունը առաքվում է (կամ կատարվում է առաքման փորձ) կամ ստացվում է Տեղական աշխատանքային օրը Ծանուցման առաքման սահմանված վերջնաժամկետից հետո, որի դեպքում այդ հաղորդագրությունը համարվում է պատշաճ տրված և ստացված Տեղական աշխատանքային օր հանդիսացող հաջորդ օրը:

unless the date of that delivery (or attempted delivery) or receipt, as applicable, is not a Local Business Day or that communication is delivered (or attempted) or received after the Notice Delivery Cut-off on a Local Business Day, in which case that communication will be deemed given and received on the first following day that is a Local Business Day.

13.2. ***Ծանուցում էլեկտրոնային փոստով***. Հավելվածում նշված էլեկտրոնային փոստի հասցեները համարվում են պատշաճ ծանուցման հասցեներ. այդպիսի հասցեներին ուղարկված ծանուցումները համարվում են պատշաճ կերպով ուղարկված ծանուցումներ, և ծանուցող կողմը պարտավոր չէ ապացուցել, որ մյուս կողմն իսկապես ստացել և (կամ) կարդացել է ծանուցումը, բայց վեճի կամ անհամաձայնության դեպքում պետք է ապացուցի, որ ծանուցումն իրականում ուղարկվել է նշված էլ. փոստի հասցեին: Սույն համաձայնության նկատմամբ կիրառելի են Քաղաքացիական օրենսգրքի 20.1 բաժինը և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասը, և կողմի խնդրանքով դատարանը, արբիտրաժային տրիբունալը, ինչպես նաև հանրային մարմինները կարող են Համաձայնագրով կողմերի միջև նախատեսված ծանուցման կարգը կիրառել Համաձայնագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների և

E-mail Notices. The e-mail addresses mentioned in the Schedule shall be deemed as due notification addresses, notifications made to such addresses shall be deemed as duly made notifications, the notifying party is not required to prove that the other party has actually received and (or) read the notice, although in case of a dispute or disagreement shall prove that the notification has actually been made to the exchanged e-mail address. Section 20.1 of the Civil Code and Article 94(6) of the Civil Procedure Code is applicable to this arrangement and at the request of a party the court, arbitration tribunal, as well as public agencies may apply the notification regime stipulated in the Agreement between the parties when settling disputes or exercising rights and obligation arising from the Agreement between the parties.



պարտականությունների իրականացման ժամանակ:

13.3. ***Վավերապայմանների փոփոխությունը.*** Կողմերից յուրաքանչյուրը կարող է, մյուս կողմին ծանուցելով, փոխել հասցեն, էլեկտրոնային հաղորդագրությունների համակարգը կամ էլեկտրոնային փոստի հասցեն, որով նրան պետք է տրամադրվեն ծանուցումներ կամ այլ հաղորդագրություններ:

Change of Details. Either party may by notice to the other change the address, email or number or electronic messaging system or e-mail details at which notices, or other communications are to be given to it.

Սույն 12-րդ բաժնի նպատակով՝

For the purpose of this Section 12:

«Ծանուցման առաքման սահմանված վերջնաժամկետ»-*ը* նշանակում է սույն Համաձայնագրի 12-րդ բաժնի շրջանակներում ծանուցման առաքման կապակցությամբ տվյալ ծանուցումը ստացողի համար սահմանված Ծանուցման առաքման վերջնաժամկետի ժամը՝ ըստ Ծանուցման առաքման վայրի:

"***Notice Delivery Cut-off***" means, in connection with the delivery of a notice under Section 12 of this Agreement, the Notice Delivery Cut-off Time in the Notice Delivery Location for the recipient of such notice.

14. Կիրառելի իրավունք, վեճերի լուծում, բնօրինակներ և լեզու

Governing Law, Dispute Resolution, Copies and Language.

14.1. ***Կիրառելի իրավունք.*** Սույն Համաձայնագիրը և դրանից բխող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն կարգավորվում և մեկնաբանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Governing Law. This Agreement and any non-contractual obligations arising out of or in connection with it shall be governed by and construed in accordance with the laws of the Republic of Armenia.

14.2. ***Վեճերի լուծման կարգը.*** Սույն Համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած վեճի կապակցությամբ ցանկացած հայցի, գործողության կամ վարույթի («Վարույթ») առնչությամբ յուրաքանչյուր կողմ անվերապահորեն՝

Dispute Resolution. With respect to any suit, action or proceedings relating to any dispute arising out of or in connection with this Agreement ("Proceedings"), each party irrevocably:

Դիմում է

submits:

(1) Հայաստանի Հանրապետության դատարաններին,

to the courts of the Republic of Armenia; or

(2) եթե Հավելվածում որպես վեճերը լուծող մարմին ընտրված է որևէ արբիտրաժ, այդ արբիտրաժին:

if such election is made in the Schedule, to the arbitration tribunal specified in the Schedule.

14.3. ***Բնօրինակները և Համաձայնագրի լեզուն.***

Copies and Language.

14.3.1. Սույն Համաձայնագիրը կազմված է երկու օրինակից. մեկական օրինակ տրամադրվում է կողմերից յուրաքանչյուրին:

This Agreement is executed in two originals, a copy will be given to each of the Parties.

14.3.2. Սույն Համաձայնագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

This Agreement is made in Armenian and English languages. In case of any discrepancy between the Armenian and English versions of this Agreement, the Armenian version shall prevail.

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ՝ կողմերը սույն փաստաթուղթը ստորագրել են ստորև նշված համապատասխան ամսաթվերին: Գլխավոր համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Գլխավոր համաձայնագրի առաջին էջում նշված ամսաթվից:

IN WITNESS WHEREOF the parties have executed this document on the respective dates specified below. The Master Agreement shall have effect from the date specified on the first page of this document.

.....
(Կողմի անվանումը / Name of Party)

Ներկայացուցիչ / By: .....

Անունը, ազգանունը / Name, Surname:

Պաշտոնը / Title:

Օրը / Date:

.....
(Կողմի անվանումը / Name of Party)


Ներկայացուցիչ / By: .....

Անունը, ազգանունը / Name, Surname:

Պաշտոնը / Title:

Օրը / Date:

Սույն փաստաթուղթը կազմվել է Ճապոնիայի ֆինանսական աջակցությամբ
This document has been produced with the financial assistance of Japan



ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ

SCHEDULE TO THE MASTER AGREEMENT FOR THE CONCLUSION OF DERIVATIVE FINANCIAL TRANSACTIONS

BY AND BETWEEN

[●]

ԵՎ

AND


[●]

ԿՈՂՄԻՑ ԵՎ ՄԻՋԵՎ

ԵՐԵՎԱՆ, YEREVAN

[●] [●]ի 202[●]

Սույն փաստաթուղթը կազմվել է Ճապոնիայի ֆինանսական աջակցությամբ
This document has been produced with the financial assistance of Japan



ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ

SCHEDULE TO THE MASTER AGREEMENT

Երևան [●]

Գլխավոր համաձայնագրին կից սույն Հավելվածը կնքվում է

[●]-ի (գրանցման համար՝ [●], ՀՎՀՀ՝ [●], հասցե ՝ [●]) (այսուհետ՝ «Կողմ Ա») և

[●]-ի (գրանցման համար՝ [●], ՀՎՀՀ՝ [●], հասցե ՝ [●]) (այսուհետ՝ «Կողմ Բ») միջև և կողմից

Yerevan [●]

This Schedule to the Master Agreement is entered into by and between

[●] (registration number: [●], TIN: [●], address: [●]) (hereafter "Party A") and

[●] (registration number: [●], TIN: [●], address: [●]) (hereafter "Party B")

Մաս 1. **Դադարեցման դրույթներ.**

«Նախապես սահմանված անձ» նշանակում է Կողմ Ա-ի համար՝

6.1.5. բաժնի նպատակով՝ [●]

6.1.6. բաժնի նպատակով՝ [●]

6.1.7. բաժնի նպատակով՝ [●]

և Կողմ Բ-ի համար՝

6.1.5. բաժնի նպատակով՝ [●]

6.1.6. բաժնի նպատակով՝ [●]

6.1.7. բաժնի նպատակով՝ [●]

«Նախապես սահմանված գործարք» [կունենա Գլխավոր համաձայնագրի 2-րդ

PART 1. TERMINATION PROVISIONS.

"Specified Entity" means in relation to Party A for the purpose of:

Section 6.1.5., [●]

Section 6.1.6., [●]

Section 6.1.7., [●]


and in relation to Party B for the purpose of:

Section 6.1.5, [●]

Section 6.1.6., [●]


Section 6.1.7., [●]

"Specified Transaction" [will have the meaning specified in Section 2 of the Master Agreement.][means [●]]*



բաժնում սահմանված նշանակությունը:] [նշանակում է [●]]*	
6.1.6. բաժնի ***«Խաչաձև խախտում»*** դրույթը [կիրառելի է] [կիրառելի չէ]* Կողմ Ա-ի նկատմամբ [կիրառելի է] [կիրառելի չէ]* Կողմ Բ-ի նկատմամբ	The ***"Cross-Default"*** provisions of Section 6.1.6. [will][will not]* apply to Party A [will][will not]* apply to Party B
[***«Նախապես սահմանված պարտք»*** [կունենա Գլխավոր համաձայնագրի 2-րդ բաժնում սահմանված նշանակությունը:] [նշանակում է [●]*	[***"Specified Indebtedness"*** [will have the meaning specified in Section 2 of the Master Agreement.][means [●]]*
«Շեմ» *նշանակում է* [●]]**	***"Threshold Amount"*** means [●]]**
6.2.3. բաժնով սահմանված **«Վերակազմակերպման հետևանքով վարկունակության վատթարացում»** դրույթը *[կկիրառվի] / [չի կիրառվի]* * Կողմ Ա-ի համար: *[կկիրառվի] / [չի կիրառվի]* * Կողմ Բ-ի համար:	The ***"Credit Event Upon Reorganisation"*** provisions of Section 6.2.3. [will][will not]* apply to Party A [will][will not]* apply to Party B
7.1. բաժնով սահմանված ***«Ավտոմատ վաղաժամկետ դադարեցում»*** դրույթը *[կկիրառվի] / [չի կիրառվի]* * Կողմ Ա-ի համար: *[կկիրառվի] / [չի կիրառվի]* * Կողմ Բ-ի համար:	The ***"Automatic Early Termination"*** provision of Section 7.1. [will][will not]* apply to Party A [will][will not]* apply to Party B
«Դադարեցման արժույթ» [կունենա Գլխավոր համաձայնագրի 2-րդ բաժնում սահմանված նշանակությունը:] / [նշանակում է [●]]*	***"Termination Currency"*** [will have the meaning specified in Section 2 of the Agreement.][means [●]]*
«Դադարեցման լրացուցիչ հիմք» *[կկիրառվի] / [չի կիրառվի]*. *[Հետևյալ իրադարձությունները կհանդիսանան Դադարեցման լրացուցիչ հիմքեր՝* [●]	***"Additional Termination Event"*** [will][will not]* apply. [The following will constitute an Additional Termination Event: [●]

* Հեռացնել, ինչպես կիրառելի է:
** Ներառել, եթե խաչաձև խախտումը կիրառելի է Ա կամ Բ կողմերից որևէ մեկի նկատմամբ:



Վերոնշյալ Դադարեցման լրացուցիչ հիմքի իմաստով Տուժող կողմը կամ Տուժող կողմերը կլինեն:
[●]]***

For the purpose of the foregoing Termination Event, the Affected Party or Affected Parties will be:
[●]]***

Մաս 2. **Փաստաթղթերի փոխանցման համաձայնություն.**
Գլխավոր համաձայնագրի 5-րդ բաժնի նպատակների համար յուրաքանչյուր կողմ պարտավորվում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը, եթե կիրառելի է՝

Part 2. **Agreement to Deliver Documents.**

For the purpose of Section 5 of this Agreement, each party agrees to deliver the following documents, as applicable:

Կողմ Ա-ն պարտավոր է Կողմ Բ-ին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
Party A is obliged to deliver to Party B the following documents:

Փաստաթղթի անվանումը / Name of the document	Փաստաթղթերի տրամադրման ժամկետը / Date by which to be delivered	Ներառվում է 4.4. բաժնով սահմանված հավաստիացման ներքո / Covered by Section 4.4. representation
[●]	[●]	[Այո]/[Ոչ]* [Yes]/[No]

Կողմ Բ-ն պարտավոր է Կողմ Ա-ին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
Party B is obliged to deliver to Party A the following documents:

Փաստաթղթի անվանումը / name of the document	Փաստաթղթերի տրամադրման ժամկետը / Date by which to be delivered	Ներառվում է 4.4. բաժնով սահմանված հավաստիացման ներքո / Covered by Section 4.4. representation
[●]	[●]	[Այո]/[Ոչ]* [Yes]/[No]


Մաս 3. **Այլ դրույթներ**

Part 3. **Miscellaneous.**

(ա) ***Ծանուցումներ ստանալու հասցեներ.*** Գլխավոր համաձայնագրի 13.1. բաժնի նպատակների համար՝


(a) ***Addresses for Notices.*** For the purpose of Section 13.1. of the Agreement:

*** Ներառել, եթե կիրառվում է Լրացուցիչ դադարեցման հիմք:
*** Include if Additional Termination Event will apply




Կողմ Ա-ին ծանուցումներ կամ հաղորդագրություններ ուղարկելու հասցեներն են՝	Address for notices or communications to Party A:
Հասցե՝ [●] Ում՝ [●] Հեռախոս՝ [●] Էլեկտրոնային հաղորդակցության համակարգ՝ [●] Էլ. հասցե՝ [●] Հատուկ հրահանգներ՝ [●]	Address: [●] Attention: [●] Telephone No.: [●] Electronic Messaging System Details: [●] E-mail: [●] Specific Instructions: [●]
Կողմ Բ-ին ծանուցումներ կամ հաղորդագրություններ ուղարկելու հասցեներն են՝	Address for notices or communications to Party B:
Հասցե՝ [●] Ում՝ [●] Հեռախոս՝ [●] Էլեկտրոնային հաղորդակցության համակարգ՝ [●] Էլ. հասցե՝ [●] Հատուկ հրահանգներ՝ [●]	Address: [●] Attention: [●] Telephone No.: [●] Electronic Messaging System Details: [●] E-mail: [●] Specific Instructions: [●]
(բ) ***Գրասենյակներ.*** Գլխավոր համաձայնագրի 11.1. բաժնի դրույթները [կիրառելի են] [կիրառելի չեն]*	(b) ***Offices.*** Section 11.1. of the ***Agreement*** is [applicable] [not applicable]*
(գ) ***Բազմամասնաճյուղ կողմ.*** Գլխավոր համաձայնագրի 11.1. բաժնի նպատակների համար՝	(c) ***Multibranch Party.*** For the purpose of Section 11.1. of the Agreement:
Կողմ Ա-ն [չի հանդիսանում Բազմամասնաճյուղ կողմ] [Բազմամասնաճյուղ կողմ է և կարող է գործարքներ կատարել հետևյալ Գրասենյակներից որևէ մեկի միջոցով: [●]]*	Party A [is not a Multibranch Party.][is a Multibranch Party and may enter into a Transaction through any of the following Offices: [●]]*

* Հեռացնել, ինչպես կիրառելի է:
* Delete as applicable.



Կողմ Բ-ն [չի հանդիսանում Բազմամասնաճյուղ կողմ] [Բազմամասնաճյուղ կողմ է և կարող է գործարքներ կատարել հետևյալ գրասենյակներից որևէ մեկի միջոցով: [●]]*	Party B [is not a Multibranch Party.][is a Multibranch Party and may enter into a Transaction through any of the following Offices: [●]]*
[***Հաշվարկային գործակալ.*** նշանակում է [●], եթե համապատասխան Գործարքի Հատատման մեջ այլ բան նախատեսված չէ:]**	[***Calculation Agent***. The Calculation Agent is [], unless otherwise specified in a Confirmation in relation to the relevant Transaction.]**
[(դ)] ***Ապահովության փաստաթուղթ.*** Գլխավոր համաձայնագրով սահմանված պարտավորությունների ապահովման նպատակով կողմերը կնքելու են հետևյալ Ապահովության փաստաթղթերը՝	[(d)] ***Credit Support Document.*** In order to ensure the obligations established by the Master Agreement, the parties will execute the following Credit Support Documents:
Կողմ Ա-ի համար՝ [Ապահովության փաստաթղթի մասին տեղեկատվություն]	For Party A: [Details of any Credit Support Documents]
Կողմ Բ-ի համար՝ [Ապահովության փաստաթղթի մասին տեղեկատվություն]	For party B: [Details of any Credit Support Documents]
[Ապահովության փաստաթուղթ չի կնքվում]]*	[none]]*
[(ե)] ***Ապահովություն տրամադրող***. Ապահովություն տրամադրող նշանակում է՝	[(e)] ***Credit Support Provider.*** Credit Support Provider means
Կողմ Ա-ի համար՝ [●] / [կիրառելի չէ]*	in relation to Party A, [●] / [none]*
Կողմ Բ-ի համար՝ [●] / [կիրառելի չէ]*	in relation to Party B, [●] / [none]*



[(զ)] ***Վճարումների զուտացում.*** «Մեկից ավելի գործարքներով վճարումների զուտացումը» *[չի կիրառվի Գլխավոր համաձայնագրի 3.3. բաժնի նպատակների համար: Ամեն դեպքում, Մեկից ավելի գործարքներով վճարումների զուտացումը կկիրառվի (բոլոր Գործարքների կամ դրանց որոշակի խմբի նկատմամբ) այն ամսաթվին, երբ Գլխավոր համաձայնագրի երկու կողմերը գրավոր կհամաձայնեն, որ նրանք գործառնական առումով պատրաստ են միմյանց հետ իրականացնելու Մեկից ավելի գործարքներով վճարումների զուտացում:]] [կկիրառվի Գլխավոր համաձայնագրի 3.3. բաժնի նպատակների համար [բոլոր Գործարքների][հետևյալ Գործարքների կամ դրանք խմբի նկատմամբ]՝ (յուրաքանչյուր դեպքում՝ սկսած [Գլխավոր համաձայնագրի կնքման օրվանից])**
[[•]]

[(f)] ***Netting of Payments.*** "Multiple Transaction Payment Netting" *[will not apply for the purpose of Section 3.3. of the Agreement. However, Multiple Transaction Payment Netting will apply (either to all or certain groups of Transactions) on the date on which both parties to the Agreement agree in writing that they are operationally able to effect such Multiple Transaction Payment Netting with each other.][will apply for the purpose of Section 3.3. of this Agreement to [all Transactions][the following Transactions or groups of Transactions: (in each case starting from [the date of the Agreement])* *
[•]]

[(է)] ***«Փոխկապակցված անձ»*** [կունենա Գլխավոր համաձայնագրի 2-րդ բաժնում սահմանված նշանակությունը:] / [նշանակում է [●]]*

[(g)] ***"Affiliate"*** [will have the meaning specified in Section 2 of the Agreement.][means [●]]*

[(ը)] ***Դատական վարույթների բացակայություն.*** Գլխավոր համաձայնագրի 4.3. բաժնի նպատակների համար՝


[(h)] ***Absence of Litigation.*** For the purpose of Section 4.3. of the Agreement:

«Նախապես սահմանված անձ» նշանակում է
Կողմ Ա-ի համար՝ [●]
Կողմ Բ-ի համար՝ [●]

"Specified Entity" means in relation to Party A, [●]
"Specified Entity" means in relation to Party B, [●]

[(թ)] ***Գործակալության բացակայություն.*** 4.5. բաժնի դրույթները *[կկիրառվեն][չեն կիրառվի]** սույն Գլխավոր համաձայնագրի նկատմամբ:

[(i)] ***No Agency.*** The provisions of Section 4.5. [will][will not]* apply to this Agreement.



[(ժ)] ***Լրացուցիչ հավաստիացում*** [կկիրառվի] / [չի կիրառվի]*: [Գլխավոր համաձայնագրի 4-րդ բաժնի նպատակների համար ներքոնշյալը կհամարվի Լրացուցիչ հավաստիացում՝

[(j)] ***Additional Representation*** [will][will not]* apply. [For the purpose of Section 4 of this Agreement, the following will constitute an Additional Representation:


[(հ)] ***Կողմերի միջև հարաբերությունները***. Յուրաքանչյուր կողմ կհամարվի Գործարքի կնքման օրվա դրությամբ մյուս կողմին հետևյալ հավաստիացումները տրամադրած (բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է կողմերի միջև գրավոր համաձայնություն, որը տվյալ Գործարքի համար ուղղակիորեն նախատեսում է այդ հավաստիացումներին հակասող դրական պարտավորություններ)՝

[[(k)] ***Relationship Between Parties.*** Each party will be deemed to represent to the other party on the date on which it enters into a Transaction that (absent a written agreement between the parties that expressly imposes affirmative obligations to the contrary for that Transaction):

[(1)] *Ինքնուրույնություն*. Նա գործում է իր հաշվին և կայացրել է սեփական անկախ որոշումները՝ կնքելու տվյալ Գործարքը, և այն մասին, թե արդյոք տվյալ Գործարքը տեղին է կամ կիրառելի է իր համար՝ հիմնվելով իր սեփական դատողության և այնպիսի խորհրդատուների խորհրդատվության վրա, որոնք անհրաժեշտ է համարել: Նա չի հիմնվում մյուս կողմի հետ որևէ հաղորդակցության (գրավոր կամ բանավոր) վրա՝ որպես ներդրումային խորհրդատվության կամ Գործարքը կնքելու խորհրդի՝ հասկանալով, որ Գործարքի դրույթներին և պայմաններին առնչվող տեղեկատվությունը և բացատրությունները չեն համարվում ներդրումային խորհրդատվություն կամ տվյալ Գործարքը կնքելու խորհուրդ: Մյուս կողմից ստացված ոչ մի հաղորդագրություն (գրավոր կամ բանավոր) չի կարող համարվել այդ Գործարքի ակնկալվող արդյունքների վերաբերյալ հավաստում կամ երաշխիք:

[(1)] *Non-Reliance.* It is acting for its own account, and it has made its own independent decisions to enter into that Transaction and as to whether that Transaction is appropriate or proper for it based upon its own judgment and upon advice from such advisers as it has deemed necessary. It is not relying on any communication (written or oral) of the other party as investment advice or as a recommendation to enter into that Transaction, it being understood that information and explanations related to the terms and conditions of a Transaction will not be considered investment advice or a recommendation to enter into that Transaction. No communication (written or oral) received from the other party will be deemed to be an assurance or guarantee as to the expected results of that Transaction.

* Հեռացնել, ինչպես կիրառելի է:
* Delete as applicable.



[(2)] *Գնահատում և գիտակցում.* Նա ունակ է (ինքնուրույն կամ անկախ մասնագիտական խորհրդատվության միջոցով) գնահատել և գիտակցել կնքվող Գործարքի պայմանները, դրույթները և ռիսկերը, ինչպես նաև հասկանում և ընդունում է դրանք: Նա նաև ի վիճակի է ստանձնել և ստանձնում է այդպիսի Գործարքի ռիսկերը:

[(2)] *Assessment and Understanding.* It is capable of assessing the merits of and understanding (on its own behalf or through independent professional advice), and understands and accepts, the terms, conditions and risks of that Transaction. It is also capable of assuming, and assumes, the risks of that Transaction.

[(3)] *Կողմերի կարգավիճակը.* Կնքվող Գործարքի առնչությամբ կողմը հանդես չի գալիս որպես մյուս կողմի ներկայացուցիչ կամ խորհրդատու:]]*

[(3)] *Status of Parties.* The other party is not acting as a fiduciary for or an adviser to it in respect of that Transaction.]]*

[(լ)] ***Հաղորդակցության ձայնագրում.*** Յուրաքանչյուր կողմ համաձայնում է.

- կողմերի առևտրային, մարքեթինգային և այլ համապատասխան անձնակազմի միջև հեռախոսային խոսակցությունների ձայնագրմանը՝ կապված Գլխավոր համաձայնագրի կամ կնքվող որևէ Գործարքի հետ,
- ստանալ իր համապատասխան անձնակազմի՝ նման ձայնագրության համար անհրաժեշտ բոլոր համաձայնությունները և իրականացնել բոլոր անհրաժեշտ ծանուցումները, և
- ձայնագրությունների՝ ցանկացած Վարույթում որպես ապացույց ներկայացվելուն (այնքանով, որքանով դա թույլատրվում է Կիրառելի իրավունքով):]*

[[(l)] ***Recording of Conversations.*** Each party consents to:

- the recording of telephone conversations between the trading, marketing and other relevant personnel of the parties in connection with this Agreement or any potential Transaction,
- to obtain any necessary consent of, and give any necessary notice of such recording to, its relevant personnel, and
- to the extent permitted by applicable law, that recordings may be submitted in evidence in any Proceedings.]*

(խ) ***Սառեցման ամսաթիվ.*** Գլխավոր համաձայնագրի 7.2.2.(3)(Դ) բաժնով

(m) ***Crystallization Date***. the interest specified in Section 7.2.2.(3)(D) of the Agreement [will][will not]* apply.

* Հեռացնել, ինչպես կիրառելի է:
* Delete as applicable.

սահմանված տոկոսները *[կկիրառվեն] / [չեն կիրառվի]*:*

[(ծ)] Գլխավոր համաձայնագրի 7.6. բաժնով սահմանված տոկոսները *[կկիրառվեն] / [չեն կիրառվի]*:*

[[(n)] The interest set forth in Section 7.6. of the Agreement [will][will not]* apply.

Եթե (Ազդեցություն չկրող կողմի ողջամիտ դատողությամբ) համապատասխան Պատժամիջոցները թույլ չեն տալիս Ազդեցություն չկրող կողմին նշանակել Սառեցման ամսաթիվ, ապա Սառեցման ամսաթիվը կհամարվի վրա հասած՝

If (in the Non-affected Party's reasonable judgment) the relevant Sanctions do not permit the Non-affected Party to designate a Crystallization Date, then the Crystallization Date will occur

[Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքի ի հայտ գալուն պես՝ Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքն առաջացնող Պատժամիջոցների ուժի մեջ մտնելուն անմիջապես նախորդող պահից]

[immediately upon the occurrence of the Sanctions Termination Event and as of the time immediately preceding the time as of which the relevant Sanctions that gave rise to the Sanctions Termination Event took effect]

[Ազդեցություն չկրող կողմի՝ առևտրային ողջամիտ ընթացակարգերի պահպանմամբ որոշված պահին, որը հաջորդում է այն պահին, երբ, Ազդեցություն չկրող կողմի դատողությամբ, տեղի է ունեցել Պատժամիջոցներից բխող դադարեցման հիմքը]:*

[as determined by the Non-affected Party, acting in a commercially reasonable manner, following the Non-affected Party's determination that the Sanctions Termination Event has occurred].*

Մաս 4. **Վեճերի լուծման կարգը, Բնօրինակները և Համաձայնագրի լեզուն.**

Part 4. **Jurisdiction/Arbitration, Copies and Language.**


(ա) ***Վեճերի լուծման կարգը***. Գլխավոր համաձայնագրի 14.2. բաժնի նպատակով՝

(a) ***Jurisdiction/Arbitration***. For the purpose of Section 14.2. of the Agreement:

Արբիտրաժը *[կիրառվում է] / [չի կիրառվում]** *Գլխավոր համաձայնագրի նկատմամբ*

Arbitration will *[apply] / [not apply]** to the Agreement

* Հեռացնել, ինչպես կիրառելի է:
* Delete as applicable.



*[**Արբիտրաժ.** Գլխավոր համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ, պահանջ, տարաձայնություն կամ հակասություն, ներառյալ՝ դրա գոյության, վավերության, մեկնաբանման, կատարման, խախտման կամ դադարեցման կամ դրա անվավերության հետևանքների վերաբերյալ վեճերը («Վեճ»), քննվում և վերջնականորեն լուծվում են արբիտրաժի միջոցով:*

Կողմերը պայմանավորվում են, որ իրենց միջև ցանկացած վեճ կհանձնվի [որոշվում է կողմերի համաձայնությամբ] արբիտրաժային դատարանին:

Արբիտրաժային դատարանում, որը ձևավորվում է արբիտրաժային դատարանի կանոնակարգերին համապատասխան, գործի քննությունն իրականացվում է [Առևտրային արբիտրաժի մասին օրենքին/կիրառելի օրենքներին] և արբիտրաժի կանոններին («Կանոններ») համապատասխան, որոնք հասանելի են [որոշվում է կողմերի համաձայնությամբ]:

Արբիտրաժային դատարանը կազմված է [կողմերը համաձայնությամբ (կենտ թիվ)] արբիտրներից, ով/ովքեր նշանակվում է/են արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Արբիտրաժային վարույթի լեզուն է [որոշվում է կողմերի համաձայնությամբ], արբիտրաժի վայրը՝ [որոշվում է կողմերի համաձայնությամբ]:

Մաս 5. **Այլ դրույթներ.**

*[(ա)**Վճարման ձախողում.** Գլխավոր համաձայնագրի 6.1.1. բաժնում «առաջին» բառը փոխարինվում է «[•]» բառով]*

*[**Arbitration.** Any dispute, claim, difference or controversy arising out of, relating to or having any connection with the Agreement, including any dispute as to its existence, validity, interpretation, performance, breach or termination or the consequences of its nullity and any dispute relating to any non-contractual obligations arising out of or in connection with it (a "Dispute"), shall be referred to and finally resolved by arbitration.*

The Parties agree that any dispute between them shall be submitted to [for parties to determine] arbitration tribunal.

In the arbitration tribunal, which is formed in accordance with the regulations of the arbitration tribunal, the examination of the case will be conducted in accordance with the [Law on Commercial Arbitration/applicable laws] and the rules of the arbitration tribunal ("Rules"), which are located [for parties to determine].

The arbitral tribunal shall consist of [for parties to determine (odd number)] arbitrator, who shall be appointed in accordance with the Rules. The language of the arbitration proceedings is [for parties to determine], the place of arbitration is [for parties to determine].

Part 5. **Other Provisions.**

*[(a) [**Failure to Pay**. Section 6.1.1. of the Master Agreement shall be amended so that each reference therein to "first" shall be replaced by a reference to "[•]"]*

Մաս 6. **ԱՖԳ դրույթներ**

Part 6. **SFT Provisions**



(ա) ***Ընդհանուր դրույթներ.***

(i) *ԱՖԳ դրույթների ներառումը.* ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ Արժեթղթերով ֆինանսավորման գործարքների հասկացությունները («ԱՖԳ հասկացություններ») ներառվում են Համաձայնագրում: ԱՖԳ հասկացությունները [ներառյալ՝ *Համաձայնագրի ամսաթվից հետո դրանցում կատարվող փոփոխությունները և/կամ լրացումները] կիրառվում են կողմերի միջև կնքվող յուրաքանչյուր ԱՖԳ գործարքի նկատմամբ [, անկախ սույն փաստաթղթի կնքման օրից հետո այդ Սահմանումներում կատարված փոփոխություններից]:[Եթե ԱՖԳ սահմանումները ենթարկվում են փոփոխությունների, փոփոխված ԱՖԳ սահմանումները կիրառելի են այդպիսի փոփոխությունից հետո կնքված յուրաքանչյուր ԱՖԳ գործարքի նկատմամբ:]**

(ii) *Համաձայնագրի կիրառումը ԱՖԳ գործարքների նկատմամբ.* Յուրաքանչյուր կողմ համաձայնում է, որ Համաձայնագրի ներքո կնքված ԱՖԳ գործարքները կարգավորվում են Համաձայնագրով:

(iii) *Ապահովության փաստաթղթեր.* ԱՖԳ գործարքները Ածանցյալ ֆինանսական գործարքների Ապահովության փաստաթղթերի իմաստով չեն համարվում «Գործարքներ» կամ «Ծածկված գործարքներ» և չեն կարգավորվում դրանցով:

«Ածանցյալ ֆինանսական գործարքների ապահովության փաստաթուղթ» նշանակում է *[Կողմերի միջև կնքված Ապահովության պայմանագիր)]/[այլ՝ Կողմերի սահմանմանը ենթակա]:**

(a) ***General.***

(i) *Incorporation of SFT Definitions*. The definitions and provisions contained in the Securities Financing Transactions Definitions, as published by the Central Bank of Armenia (the "SFT Definitions"), are incorporated into the Agreement. Each SFT Transaction between the parties shall be subject to the SFT Definitions *[, without regard to any amendment to those Definitions subsequent to the date hereof].[If the SFT Definitions are amended, the amended SFT Definitions shall apply to any SFT Transaction entered into after such amendment.] **

(ii) *Application of the Agreement to SFT Transactions*. Each party agrees that the Agreement shall govern each SFT Transaction identified as being subject to this Agreement.

(iii) *Credit Support Documentation*. No SFT Transaction will be a "Transaction" or "Covered Transaction" for the purposes of each Derivatives Credit Support Document.

"Derivatives Credit Support Document" means *[any Credit Support Annex entered into between the parties]/[Parties to specify].**



«ԱՖԳ-ի կիրառման համար նախատեսված ապահովության փաստաթուղթ» նշանակում է. *[Ոչ կիրառելի]/[Կողմերի սահմանմանը ենթակա]:**	"SFT Applicable Credit Support Document" means: [*None]/[Parties to specify].**
«ԱՖԳ սահմանումների իմաստով ապահովության տրամադրող» նշանակում է՝ կողմ Ա-ի համար. *[Ոչ կիրառելի]/[Կողմերի սահմանմանը ենթակա]:**	"SFT Applicable Credit Support Provider" means, in relation to Party A: [None]/[Parties to specify].*
«ԱՖԳ սահմանումների իմաստով ապահովության տրամադրող» նշանակում է՝ կողմ Բ-ի համար. *[Ոչ կիրառելի]/[Կողմերի սահմանմանը ենթակա]:**	"SFT Applicable Credit Support Provider" means, in relation to Party B: [None]/[Parties to specify].*
*[ԱՖԳ-ի կիրառման համար նախատեսված ապահովության փաստաթուղթը Ապահովության պայմանագիր է, և յուրաքանչյուր ԱՖԳ սահմանումների իմաստով ապահովություն տրամադրող Ապահովություն տրամադրող է:] **	*[The SFT Applicable Credit Support Document is a Credit Support Document and each SFT Applicable Credit Support Provider is a Credit Support Provider.] **
(բ) ***ԱՖԳ գործարքների վերաբերյալ ընտրություններ՝***	(b) ***SFT Transaction Elections.***
Կկիրառվեն հետևյալ ընտրությունները՝ (i) ԱՖԳ հիմնական արժույթը, ԱՖԳ-ի ընդունելի արժույթը և ԱՖԳ-ի ընդունելի արժեթղթերի մարժան՝	The following elections shall apply: (i) SFT Base Currency, SFT Eligible Currency and SFT Eligible Securities Margin.
(ա) «ԱՖԳ հիմնական արժույթ» նշանակում է *[ՀՀ դրամը]/[Կողմերի սահմանմանը ենթակա*]:	(a) "SFT Base Currency" means *[AMD]/[parties to specify].*
(բ) «ԱՖԳ-ի ընդունելի արժույթ» նշանակում է *[Կողմերի սահմանմանը ենթակա]:**	*(b)* "SFT Eligible Currency" means *[parties to specify].**
(գ) «ԱՖԳ-ի ընդունելի արժեթղթերի մարժա» նշանակում է *[Կողմերի սահմանմանը ենթակա]:*	(c) ["SFT Eligible Securities Margin" means *[parties to specify].]*
(ii) Փոխանցումների հետաձգման փոխհատուցումը՝ *[կիրառելի է] / [կիրառելի չէ]:*	(ii) Compensation for Delays in Transfers: *[Applicable]/[Not Applicable].*



(iii) Սկզբնական վերջնահաշվարկի/Գնման օրը փոխանցման ձախողումը.

Սկզբնական վերջնահաշվարկի/Գնման օրը Արժեթղթերի փոխանցման ձախողումը՝ *[կիրառելի է] / [կիրառելի չէ]:**

(iv)Գործարքի ռիսկի հաշվարկը.

(1) [«Գնագոյացման համապատասխան աղբյուր» նշանակում է [Կողմերի սահմանմանը ենթակա]:]

(2) Աշխատանքային օրվա ընթացքում Գործարքի (գործառնությունների) ռիսկի հաշվարկի որոշման ժամերը. *[Կողմերի սահմանմանը ենթակա]:*

(v) Մարժայի պահպանում.

(1) [Յուրաքանչյուր Մարժայի կամ Համարժեք մարժայի փոխանցում պետք է կատարվի [կողմերը պետք է նշեն Մարժայի և Համարժեք մարժայի փոխանցման համար կիրառելի կտրման ժամկետները]/[այնպիսի ժամանակահատվածում, որը սովորաբար պահանջվում է համապատասխան դրամական միջոցների կամ արժեթղթերի վերջնահաշվարկի կամ փոխանցման համար]:]

*(2) Համախառն հիմք՝ [կիրառելի է]/[կիրառելի չէ]:**

(3) Առանձին Գործարքի հիմք. *[կիրառելի է]/[կիրառելի չէ]:**

(4) [[Մարժայի պահպանմամբ բոլոր գործարքները պետք է կազմեն Մարժայի մեկ համակցություն:] / [Մարժայի պահպանմամբ բոլոր գործարքները, որոնք Փոխառության գործարքներ են, պետք է կազմեն մեկ մարժայի համակցություն]/[մարժայի պահպանմամբ բոլոր գործառնությունները, որոնք Ռեպո

(iii) Failure to Transfer on the Initial Settlement Date/Purchase Date.

Initial Settlement Date/Purchase Date Securities Transfer Failure: *[Applicable]/[Not Applicable].**

(iv) Transaction Exposure.

(1) *["Relevant Pricing Source" means [parties to specify].]*

(2) Timing for determining Transaction Exposure(s) on any Business Day: *[parties to specify].*


(v) Margin Maintenance.

(1) *[Each Transfer of Margin or Equivalent Margin shall be made [parties to specify cut-off times for deliveries of Margin and Equivalent Margin]/[within such time period as is customarily required for the settlement or delivery of the relevant Cash or Securities].]*


(2) Aggregate Basis: *[Applicable]/[Not Applicable].**

(3) Individual Transaction Basis: *[Applicable]/[Not Applicable].**

(4) *[[All Margin Maintenance Transactions shall form a single Margin Set.]/[All Margin Maintenance Transactions which are Loan Transactions shall form a single Margin Set]/[All Margin Maintenance Transactions which are Repurchase Transactions shall form a single Margin Set]/[parties to specify].]****



*գործարքներ են, պետք է կազմեն մեկ մարժայի համակցություն]/[կողմերը պետք է նշեն]:] ****	
(vi) Դադարեցման օրը/Հետգնման օրը Փոխանցման անհնարինությունը Դադարեցման օրը/Հետգնման օրը արժեթղթերի չփոխանցումը. *[կիրառելի է]/[կիրառելի չէ]:**	(vi) Failure to Transfer on the Termination Date/Repurchase Date. Termination Date/Repurchase Date Securities Transfer Failure: *[Applicable]/[Not Applicable].**
(vii) Հավաստիացումներ, լրացուցիչ պայմաններ և բացահայտումներ.	(vii) Representations, Additional Covenants and Disclosure.
(1) *[Նպատակի հավաստիացում.*	(1) *[Purpose Representation.*
*Կողմ Ա՝ [կիրառելի է]/[կիրառելի չէ]:** *Կողմ Բ՝ [կիրառելի է]/[կիրառելի չէ]:**	*Party A: [Applicable]/[Not Applicable].** *Party B: [Applicable]/[Not Applicable].]**
(viii) *[Փոխարինումներ.* *(1) Փոխառության գործարքներ՝ [կիրառելի է]/[կիրառելի չէ]:** *(2) Ռեպո գործարքներ՝ [կիրառելի է]/[կիրառելի չէ]:]**	*(viii) [Substitutions.* *(1) Loan Transactions: [Applicable]/[Not Applicable].** *(2) Repurchase Transactions: [Applicable]/[Not Applicable].]**
(ix) Դրույքաչափեր և տոկոսներ. *(1) [Արժեթղթերի փոխանցման վճար.*	(ix) Rates and Interest. (1) *[Transferred Securities Fee.*
*(Ա) Փոխառության գործարք. [կիրառելի է]/[կիրառելի չէ]:** *(Բ) Ռեպո գործարք. [կիրառելի է]/[կիրառելի չէ]:]**	*(A) Loan Transactions: [Applicable]/[Not Applicable].** *(B) Repurchase Transactions: [Applicable]/[Not Applicable].]**
(2) [«Փոխանցվող արժեթղթերի փոխարժեքը» պետք է լինի [ենթակա է Կողմերի սահմանմանը]:]	(2) *[The "Transferred Securities Rate" shall be [parties to specify].]*
(3) [Դրամական միջոցների մարժայի տոկոսադրույքի ընտրություն.	(3) *[Cash Margin Interest Election.*



*(Ա) Փոխառության գործարք. [կիրառելի է]/[կիրառելի չէ]:**	*(A) Loan Transactions: [Applicable]/[Not Applicable].**
*(Բ) Ռեպո գործարք. [կիրառելի է]/[կիրառելի չէ]:]**	*(B) Repurchase Transactions: [Applicable]/[Not Applicable].]**
(4) [«Դրամական միջոցների մարժայի տոկոսադրույքը» սահմանված է սփորև՝]	(4) *[The "Cash Margin Interest Rate" shall be as set out in the table below.]*

ԱՖԳ ընդունելի արժույթ SFT Eligible Currency	Դրամական միջոցների մարժայի տոկոսադրույք Cash Margin Interest Rate

(5) [Գումարների/տոկոսների վճարում. Փոխանցված արժեթղթերի դրույքաչափերը և Դրամական միջոցների մարժայի տոկոսները պետք է համապատասխան կողմի կողմից վճարվեն մինչև [այն օրացուցային ամսվա վերջին Աշխատանքային օրվան հաջորդող [ենթակա է կողմերի սահմանմանը] Աշխատանքային օրը, որին վերաբերում են այդպիսի վճարումները]/[ենթակա է կողմերի սահմանմանը]:]	(5) *[Payment of Amounts/Interest. Transferred Securities Rates and Cash Margin Interest shall be paid by the relevant party not later than [the Business Day which is the [parties to specify Business Day] Business Day after the last Business Day of the calendar month to which such payments relate]/[parties to specify].]*
(x) *[Բաշխումներ և կորպորատիվ գործողություններ.*	(xi) *[Distributions and Corporate Actions.*
*(1) [Կանխիկ Բաշխման գումարի պահում. [կիրառելի է]/[կիրառելի չէ]:]**	(1) *[Retention of Cash Distribution Amount. [Applicable]/[Not Applicable].]**
(2) *Կորպորատիվ գործողություններ.*	(2) *Corporate Actions.*
*(Ա) Փոխառության գործարք. [կիրառելի է]/[կիրառելի չէ]:**	*(A) Loan Transactions: [Applicable]/[Not Applicable].**
*(Բ) Ռեպո գործարք. [կիրառելի է]/[կիրառելի չէ]:]**	*(B) Repurchase Transactions: [Applicable]/[Not Applicable].]**



(գ) ***Համաձայնագրի 3.1.3. բաժնի չկիրառումը.***

Համաձայնագրի 3.1.3. բաժնում նշված նախապայմանները չեն տարածվում կողմերի՝ Գլխավոր համաձայնագրի 2.1.1. բաժնով սահմանված այն պարտավորությունների վրա, որոնք կապված են ԱՖԳ Գործարքի հետ:

(c) ***Disapplication of Section 3.1.3 of the Agreement.***

The conditions precedent in Section 3.1.3. of the Agreement shall not apply to any obligation of either party under Section 2.1.1. of the Agreement in respect of an SFT Transaction.

(դ) ***Խախտումներ և Դադարեցման հիմքեր.***
(i) Կեղծ հավաստիացումների տրամադրման ձևով Խախտման վերանայում.

(d) ***Events of Default and Termination Events.***
(i) Amendments to Misrepresentation Event of Default.

(1) Խախտում՝ Կեղծ հավաստիացումների տրամադրման ձևով. Եթե պարզվում է, որ կողմի տրամադրած, կրկնված (կամ տրամադրված կամ կրկնված համարվող)՝ միայն ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ հավաստիացումը կամ միայն ԱՖԳ-ի վերաբերյալ հավաստիացումը այն արվելու, կրկնվելու կամ այդպիսին համարվելու պահին որևէ էական առումով սխալ կամ ապակողմնորոշիչ էր, ապա դա Համաձայնագրի 6.1.4. բաժնի իմաստով չի համարվի Խախտում:

(1) Misrepresentation Event of Default. If a Derivatives-only Representation or an SFT-only Representation made or repeated or deemed to have been made or repeated by a party proves to have been incorrect or misleading in any material respect when made or repeated or deemed to have been made or repeated, it shall not be an Event of Default for the purposes of Section 6.1.4. of the Agreement.

(2) Դադարեցման լրացուցիչ հիմք. Եթե պարզվում է, որ կողմի տրամադրած, կրկնված (կամ տրամադրված կամ կրկնված համարվող)՝ միայն ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ հավաստիացումը կամ միայն ԱՖԳ-ի վերաբերյալ հավաստիացումը այն արվելու, կրկնվելու կամ այդպիսին համարվելու պահին որևէ էական առումով սխալ կամ ապակողմնորոշիչ էր, ապա այն համարվում է Դադարեցման լրացուցիչ հիմք, որի դեպքում *[[ենթակա է կողմերի սահմանմանը] կլինի Տուժող կողմ]/[Երկու կողմերը կլինեն Տուժող կողմեր]* և,

(2) Additional Termination Event. If a Derivatives-only Representation or an SFT-only Representation made or repeated or deemed to have been made or repeated by a party proves to have been incorrect or misleading in any material respect when made or repeated or deemed to have been made or repeated, it shall be treated as an Additional Termination Event, for the purpose of which *[[parties to specify] will be an Affected Party]/[both parties will be Affected Parties]* and:



(Ա) Միայն ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ հավաստիացման դեպքում բոլոր Գործարքները, բացի ԱՖԳ գործարքներից, կհանդիսանան Տուժող գործարքներ, և

(A) in the case of a Derivatives-only Representation, all Transactions other than SFT Transactions will be Affected Transactions; and

(Բ) Միայն ԱՖԳ-ի վերաբերյալ հավաստիացման դեպքում միայն ԱՖԳ գործարքները կհանդիսանան Տուժող գործարքներ:

(B) in the case of an SFT-only Representation, SFT Transactions only will be Affected Transactions.

(3) Միայն ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ հավաստիացումներ և միայն ԱՖԳ-ի վերաբերյալ հավաստիացումներ. Հետևյալ հավաստիացումները (առկայության դեպքում) միայն ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ հավաստիացումներ կամ միայն ԱՖԳ-ի վերաբերյալ հավաստիացումներ են:

(3) Derivatives-only Representations and SFT-only Representations. The following representations (if any) will be Derivatives-only Representations or SFT-only Representations:

Միայն ածանցյալ ֆինանսական գործարքների վերաբերյալ հավաստիացումներ՝ *[Առկա չեն]/[Համաձայնագրի* [●] *բաժնով]/սույն Հավելվածի* [●] *մասով սահմանված հավաստիացումներ]:**

Derivatives-only Representations: *[None]/[a representation under [Section* [●] of the Agreement*]/[Part* [●] *of this Schedule]].**

Միայն ԱՖԳ-ի վերաբերյալ հավաստիացումներ՝ *[Համաձայնագրով [բաժին]]/[մաս] սահմանված հավաստիացումներ]* :*

SFT-only Representations: *[Section [ ]]/[Part [ ]]* of the Agreement*].**


(ii) Խախտման և Դադարեցման հիմքերի դրույթների փոփոխություններ.

(ii) Amendments to Events of Default and Termination Events.

(1) [Վճարման կամ փոխանցման ձախողումը. «Համաձայնագրի 6.1.1. բաժինը «առաքման դեպքում» բառերից հետո լրացնել հետևյալ բառերով՝

(1) [Failure to Pay or Deliver. Section 6.1.1. of the Agreement shall be amended by inserting the following after “in the case of any such delivery”:

«կամ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ ԱՖԳ գործառնության հետ կապված Դրամական միջոցների բաշխման



գումարների ցանկացած վճարման դեպքում»:]	*"or the third Business Day in the case of any payment of Cash Distribution Amounts in respect of an SFT Transaction".]*
(2) Որոշակի Խախտումների վերաբերյալ դրույթների չկիրառում. Միայն ածանցյալ ֆինանսական գործարքների հետ կապված իրադարձությունը և միայն ԱՖԳ-ի հետ կապված իրադարձությունը Խախտումներ չեն:	(2) Disapplication of certain Events of Default. The occurrence of a Derivatives-only Event or an SFT-only Event shall not constitute an Event of Default.
(3) Դադարեցման լրացուցիչ հիմքեր. Միայն ածանցյալ գործիքների հետ կապված իրադարձությունը և միայն ԱՖԳ-ի հետ կապված իրադարձությունը հանդիսանում են Դադարեցման լրացուցիչ հիմքեր, որոնց դեպքում *[[ենթակա է կողմերի սահմանմանը] կլինի Տուժող կողմ]/[Երկու կողմերը կլինեն Տուժող կողմեր]*:*	(3) Additional Termination Events. A Derivatives-only Event (if any) or an SFT-only Event (if any) are Additional Termination Events. For the purpose of the foregoing Termination Event, [[parties to specify] will be an Affected Party]/[both parties will be Affected Parties]* and:
(Ա) Միայն ածանցյալ ֆինանսական գործարքների հետ կապված իրադարձության դեպքում բոլոր Գործարքները, բացի ԱՖԳ գործարքներից, կհանդիսանան Տուժող գործարքներ, իսկ	(A) in the case of a Derivatives-only Event, all Transactions other than SFT Transactions will be Affected Transactions; and
(Բ) Միայն ԱՖԳ-ի հետ կապված իրադարձության դեպքում միայն ԱՖԳ գործարքները կհանդիսանան Տուժող գործարքներ:	(B) in the case of an SFT-only Event, SFT Transactions only will be Affected Transactions.
(4) Միայն ածանցյալ ֆինանսական գործարքների հետ կապված իրադարձություններ և միայն ԱՖԳ-ի հետ կապված իրադարձություններ. Հետևյալ Խախտումները (եթե այդպիսիք կան) համարվում են միայն ածանցյալ ֆինանսական գործարքների հետ կապված իրադարձություններ կամ միայն ԱՖԳ-ի հետ կապված իրադարձություններ՝	(4) Derivatives-only Events and SFT-only Events. The following Events of Default (if any) will be Derivatives-only Events or SFT-only Events:
Միայն ածանցյալ ֆինանսական գործարքների հետ կապված իրադարձություններ՝ *[Չկան]/[Գլխավոր*	Derivatives-only Events: *[None]/[an event described in [Section [ ]].] **

*համաձայնագրի [Բաժին]]/[մաս]ում նկարագրված Խախտում]:**	
Միայն ԱՖԳ-ի հետ կապված իրադարձություններ՝ *[Չկան]/[Գլխավոր համաձայնագրի ըստ [Բաժին]]/[մաս]ում նկարագրված Խախտում]:**	SFT-only Events: *[None]/[a representation under [Section [ ]].]**
(5) [Դադարեցման հիմքեր. Համաձայնագրի [[ենթակա է կողմերի սահմանմանը]] բաժիններում նշված Դադարեցման հիմքերի [և Հավելվածի] [[ենթակա է կողմերի սահմանման]] բաժիններում նշված Դադարեցման լրացուցիչ հիմքերի նպատակների համար ԱՖԳ գործարքները չեն հանդիսանում Տուժող գործարքներ:]	(5) *[Termination Events. For the purposes of the [Termination Events in Sections [parties to specify] of the Agreement] [and] [the Additional Termination Events in Parts [parties to specify] of this Schedule], each SFT Transaction will not be an Affected Transaction.]*
(6) [Արժեթղթերի բորսայից հեռացումը՝ որպես Լրացուցիչ դադարեցման հիմք. Հետևյալ իրադարաձությունը հանդիսանում է Լրացուցիչ դադարեցման հիմք.	*(6) [Suspension from securities exchange Additional Termination Event. The following will constitute an Additional Termination Event:*
Կողմը («Բորսայում խախտող կողմ» որևէ հայտարարվում է որևէ արժեթղթերի բորսայի կանոնների խախտող, կամ կասեցվում կամ դադարեցվում է այդ բորսային նրա անդամակցությունը կամ մասնակցությունը, կամ որևէ կարգավորողի կողմից նրան արգելվում է արժեթղթերով գործարքներ իրականացնել՝ յուրաքանչյուր դեպքում ֆինանսական ռեսուրսների կամ վարկունակության հետ կապված որևէ պահանջների չկատարման հիմքով: *Նշված Դադարեցման հիմքի նպատակների համար Բորսայում խախտող կողմը համարվում է միակ Տուժող կողմ, և [բոլոր գործարքները]/[միայն ԱՖԳ գործարքները]* համարվում են Տուժող գործարքներ:]*	*A party (the "Exchange Defaulting Party") is declared in default or suspended or expelled from membership of, or participation in, any securities exchange or suspended or prohibited from dealing in securities by any regulatory authority, in each case on the grounds that it has failed to meet any requirements relating to financial resources or credit rating.* *For the purpose of the foregoing Termination Event, the Exchange Defaulting Party will be the sole Affected Party and [all Transactions]/[SFT Transactions only]* will be Affected Transactions.]*
1(3) Վաղաժամկետ դադարեցում.	1(3) Early Termination.



(i) Դադարեցման արժույթ. Եթե Վաղաժամկետ դադարեցման ամսաթվին բոլոր Դադարեցված գործարքները ԱՖԳ գործարքներ են, Դադարեցման արժույթը ԱՖԳ-ի հիմնական արժույթն է:	(i) Termination Currency. In respect of an Early Termination Date on which all Terminated Transactions are SFT Transactions, the Termination Currency shall be the SFT Base Currency.
(ii) Փակման գումարը. յուրաքանչյուր Դադարեցված ԱՖԳ գործարքի համար «Փակման գումար»-ը ԱՖԳ-ի Փակման գումարն է:	(ii) Close-Out Amount. In respect of each Terminated SFT Transaction, "Close-out Amount" means the SFT Close-out Amount.
(iii) Չվճարված գումարներ. Համաձայնագրի 2-րդ բաժնի՝ «Չվճարված գումարների» սահմանումն ամբողջությամբ փոխարինվում է ԱՖԳ սահմանումներում «Չվճարված գումարներ» սահմանմամբ:	(iii) Unpaid Amounts. The definition of "Unpaid Amounts" in Section 2 of the Agreement is replaced in its entirety with the definition of "Unpaid Amounts" in the SFT Definitions.

.....
(Կողմի անվանումը / Name of Party)

Ներկայացուցիչ / By: .....

Անունը, ազգանունը / Name, Surname:

Պաշտոնը / Title:

Օրը / Date:

.....
(Կողմի անվանումը / Name of Party)


Ներկայացուցիչ / By: .....

Անունը, ազգանունը / Name, Surname:

Պաշտոնը / Title:

Օրը / Date:

Սույն փաստաթուղթը կազմվել է Ճապոնիայի ֆինանսական աջակցությամբ
This document has been produced with the financial assistance of Japan



ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

CREDIT SUPPORT ANNEX

BY AND BETWEEN

[●]

ԵՎ
AND

[●]

ԿՈՂՄԻՑ ԵՎ ՄԻՋԵՎ

ԵՐԵՎԱՆ, YEREVAN

[●] [●]ի 202[●]

ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կցված է Գլխավոր համաձայնագրի Հավելվածին

Երևան [●]

Սույն ապահովության պայմանագիրը («Պայմանագիր») կնքված է

[●] (գրանցման համար՝ [●], ՀՎՀՀ՝ [●], հասցե՝ [●]) (այսուհետ՝ "[●]")

և

[●] (գրանցման համար՝ [●], ՀՎՀՀ՝ [●], հասցե՝ [●]) (այսուհետ՝ "[●]") միջև և վերջիններիս կողմից:

Պայմանագրի կնքման համար կողմերը հիմք են ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին մասը: Պայմանագիրը լրացնում է վերոնշյալ գլխավոր համաձայնագիրը («Գլխավոր համաձայնագիր») և հանդիսանում է դրա Հավելվածի մասը: Գլխավոր համաձայնագրի, ներառյալ, բայց չսահմանափակվելով, 1.3, 3.1, 6 և 7 բաժինների, իմաստով սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների ապահովության պայմանավորվածությունները հանդիսանում են Գործարքներ, իսկ Պայմանագիրը՝ այդ Գործարքների Հաստատում:

Պարբերություն 1. Մեկնաբանում

Մեծատառով նշված տերմինները, որոնք այլ կերպ սահմանված չեն սույն Պայմանագրում կամ Գլխավոր համաձայնագրում, ունեն 2-րդ պարբերությամբ սահմանված իմաստները, և սույն Պայմանագրում բոլոր

CREDIT SUPPORT ANNEX

to the Schedule to the Master Agreement

Yerevan [●]

This Credit Support Annex ("Annex") is entered into by and between

[●] (registration number: [●], TIN: [●], address: [●]) (hereafter "[●]")


and

[●] (registration number: [●], TIN: [●], address: [●]) (hereafter "[●]")

The parties have concluded this Annex based on Article 368(1) of the Civil Code of the Republic of Armenia. This Annex supplements, forms part of, and is subject to, the Master Agreement ("Agreement") referred to above and is part of its Schedule. For the purposes of the Agreement, including, without limitation, Sections 1.3, 3.1, 6 and 7, the credit support arrangements set out in this Annex constitute a Transaction (for which this Annex constitutes the Confirmation).

Paragraph 1. Interpretation

Capitalised terms not otherwise defined in this Annex or in the Agreement have the meanings specified pursuant to Paragraph 2, and all references in this Annex to Paragraphs are to Paragraphs of this Annex. In the event of any inconsistency between this Annex and the other provisions of this Schedule, this Annex will prevail, and in the event of any



հղումները պարբերություններին վերաբերում են սույն Պայմանագրի պարբերություններին: Պայմանագրի և Հավելվածի այլ դրույթների միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում է Պայմանագիրը, իսկ 11-րդ պարբերության և Պայմանագրի այլ դրույթների միջև անհամապատասխանության դեպքում գերակայում է 11-րդ պարբերությունը: Կասկածից խուսափելու համար սույն Պայմանագրում «փոխանցման» մասին հիշատակումները նշանակում են դրամական միջոցների դեպքում՝ վճարում, և այլ ակտիվների առնչությամբ՝ դրանց առաքում:

inconsistency between Paragraph 11 and the other provisions of this Annex, Paragraph 11 will prevail. For the avoidance of doubt, references to "transfer" in this Annex mean, in relation to cash, payment and, in relation to other assets, delivery.

Պարբերություն 2. Սահմանումներ
Սույն Հավելվածում օգտագործված՝

Paragraph 2. Definitions
As used in this Annex:

«Հիմնական արժույթը» նշանակում է 11(ա)(1) պարբերությունում որպես այդպիսին նշված արժույթը:

"Base Currency" means the currency specified as such in Paragraph 11(a)(1).

«Հիմնական արժույթով համարժեքը» նշանակում է Գնահատման ամսաթվի դրությամբ՝ Հիմնական արժույթով արտահայտված գումարի դեպքում՝ այդ գումարը, իսկ որևէ այլ արժույթով («Այլ արժույթ») արտահայտված գումարի դեպքում՝ սփոթ փոխարժեքով Հիմնական արժույթի փոխարկված՝ այդ գումարը: Սփոթ փոխարժեքը որոշվում է Գնահատող գործակալի կողմից՝ Գնահատման այդ ամսաթվի համար:


"Base Currency Equivalent" means, with respect to an amount on a Valuation Date, in the case of an amount denominated in the Base Currency, such Base Currency amount and, in the case of an amount denominated in a currency other than the Base Currency (the "Other Currency"), the amount of Base Currency required to purchase such amount of the Other Currency at the spot exchange rate determined by the Valuation Agent for value on such Valuation Date.

«Ապահովության գումարը» նշանակում է Գնահատման ամսաթվի դրությամբ Փոխանցողի համար հետևյալ բանաձևով հաշվարկվող գումարը.

"Credit Support Amount" means, with respect to a Transferor on a Valuation Date, the amount determined by the following formula:

E+IA1-IA2-T

E+IA1-IA2-T



որտեղ **E՝** Ստացողի Ռիսկի հաշվարկ, **IA1՝** Փոխանցողի նկատմամբ կիրառելի բոլոր Անկախ գումարներ (դրանց առկայության դեպքում), **IA2՝** Ստացողի նկատմամբ կիրառելի բոլոր Անկախ գումարներ (դրանց առկայության դեպքում), **T՝** Փոխանցողի Շեմ:

Where **E** - the Transferee's Exposure, **IA1** - all Independent Amounts applicable to the Transferor (if any), **IA2** - all Independent Amounts applicable to the Transferee (if any), T - Transferor's Threshold.

Եթե Ապահովության գումարի հաշվարկի արդյունքում ստացվում է զրոյից փոքր թիվ, ապա Ապահովության գումարը համարվում է զրո:

The Credit Support Amount will be deemed to be zero whenever the calculation of Credit Support Amount yields a number less than zero.

«Ապահովության մնացորդը» նշանակում է Գնահատման ամսաթվի դրությամբ Փոխանցողի կողմից Ստացողին փոխանցված բոլոր Ընդունելի ապահովությունների, ներառյալ՝ բոլոր Բաշխումների և այդպիսի Ընդունելի ապահովություններից կամ Բաշխումներից բխող բոլոր եկամուտների հանրագումարը: Պայմանագրի 6(գ)(i) կամ (ii) պարբերության համաձայն չփոխանցված Համարժեք բաշխումները և Տոկոսագումարները (դրանց կիրառելի մասը) ևս ներառվում են Ապահովության մնացորդի կազմում: Ապահովության մնացորդը նվազեցվում է Պայմանագրի 3(բ), 4(գ)(ii) կամ 7-րդ պարբերությունների համաձայն:

"Credit Support Balance" means, with respect to a Transferor on a Valuation Date, the aggregate of all Eligible Credit Support that has been transferred to or received by the Transferee under this Annex, together with any Distributions and all proceeds of any such Eligible Credit Support or Distributions, Any Equivalent Distributions or Interest Amount (or portion of either) not transferred pursuant to Paragraph 6(c)(i) or (ii) will form part of the Credit Support Balance. The Credit Support Balance is reduced pursuant to Paragraph 3(b), 4(c)(ii) or 7.

«Առաքման գումարն» ունի 3(ա) պարբերությամբ սահմանված նշանակությունը:


"Delivery Amount" has the meaning specified in Paragraph 3(a).

«Վիճող կողմն» ունի 5-րդ պարբերությամբ սահմանված նշանակությունը:

"Disputing Party" has the meaning specified in Paragraph 5.

«Բաշխումները» նշանակում է, Ապահովության մնացորդում ներառված Ընդունելի Ապահովություն՝ կազմված արժեթղթերից և միևնույն տեսակ, դաս, անվանական արժեք և այլ վավերապայմաններ ունեցող արժեթղթերի

"Distributions" means, with respect to any Eligible Credit Support comprised in the Credit Support Balance consisting of securities, all principal, interest and other payments and distributions of cash or other property to which a holder of securities of the same type, nominal value, description and amount



սեփականատերերին հասանելիք բոլոր մայր գումարներից, արժեկտրոններից և այլ տոկոսային վճարումներից, դրամական և այլ գույքային բաշխումներից:

as such Eligible Credit Support would be entitled from time to time.

«Բաշխման ամսաթիվը» նշանակում է Ապահովության մնացորդում ներառված՝ դրամական միջոցներից տարբերվող ցանկացած Ընդունելի ապահովության առնչությամբ այն ամսաթիվը, երբ այդպիսի Ընդունելի ապահովության տիրապետող անձն իրավունք ունի ստանալու Բաշխումներ, կամ, եթե այդ ամսաթիվը Տեղական աշխատանքային օր չէ, ապա դրան հաջորդ Տեղական աշխատանքային օրը:

"Distributions Date" means, with respect to any Eligible Credit Support comprised in the Credit Support Balance other than cash, each date on which a holder of such Eligible Credit Support is entitled to receive Distributions or, if that date is not a Business Day, the next following Business Day.

«Ընդունելի Ապահովությունը» նշանակում է 11(բ)(ii) պարբերության համաձայն կողմի համար որպես այդպիսիք ճանաչված գույքը, ներառյալ՝ արժեթղթերի թողարկողի կողմից դրանց ամբողջական կամ մասնակի մարման արդյունքում ստացվող միջոցները:

"Eligible Credit Support" means, with respect to a party, the items, if any, specified as such for that party in Paragraph 11(b)(ii) including, in relation to any securities, if applicable, the proceeds of any redemption in whole or in part of such securities by the relevant issuer.

«Ընդունելի արժույթը» նշանակում է 11(ա)(ii) պարբերությամբ որպես այդպիսին ճանաչված յուրաքանչյուր արժույթ:

"Eligible Currency" means each currency specified as such in Paragraph 11(a)(ii):

«Համարժեք Ապահովությունը» նշանակում է, Ապահովության մնացորդում ներառված ցանկացած Ընդունելի Ապահովության առնչությամբ, միևնույն տեսակի, անվանական արժեքի, նկարագրության և քանակի Ընդունելի ապահովություն:


"Equivalent Credit Support" means, in relation to any Eligible Credit Support comprised in the Credit Support Balance, Eligible Credit Support of the same type, nominal value, description and amount as that Eligible Credit Support.

«Համարժեք բաշխումներն» ունի 6(գ)(i) պարբերությամբ սահմանված նշանակությունը:

"Equivalent Distributions" has the meaning specified in Paragraph 6(c)(i).

«Փոխանակման ամսաթիվն» ունի 11(դ) պարբերությամբ սահմանված նշանակությունը:

"Exchange Date" has the meaning specified in Paragraph 11(d).




«Ռիսկի հաշվարկը» նշանակում է (կողմի առնչությամբ) Գնահատման ամսաթվի կամ որևէ այլ ամսաթվի դրությամբ 5-րդ պարբերության (վեճի առկայության դեպքում) և Գլխավոր համաձայնագրի 7.5.2. բաժնի համաձայն տվյալ կողմին մյուս կողմի կողմից (արտահայտված դրական թվով) կամ մյուս կողմին տվյալ կողմի կողմից (արտահայտված բացասական թվով) վճարման ենթակա գումարը, եթե բոլոր Գործարքները դադարեցվեին մինչև համապատասխան Գնահատման ժամը՝ պայմանով, որ (i) այդ կողմը Տուժող կողմը չէ, և (ii) Հիմնական արժույթը Դադարեցման արժույթն է, ինչպես նաև Գնահատող գործակալը Փակման գումարը որոշում է այդ կողմի համար՝ հիմք ընդունելով այն գումարների համար իր կատարած միջշուկայական հաշվարկները, որոնք վճարման ենթակա կլինեին այդ Գործարքների էական պայմանների տնտեսական համարժեքներով կնքված գործարքների ներքո, ներառյալ՝ կողմերի՝ Գործարքների առնչությամբ Գլխավոր համաձայնագրի 3.1.1. բաժնով սահմանված վճարումները և առաքումները, որոնք Վաղաժամկետ դադարեցման ամսաթվից հետո կդառնային վճարման/առաքման ենթակա, եթե այդ Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը տեղի չունենար (և պահպանվեին Գլխավոր համաձայնագրի 3.1.3. բաժնով սահմանված նախապայմանները[1]), և այդ Գործարքների հետ կապված՝ կողմերի օպցիոնի իրավունքները:

"Exposure" means, with respect to a party on a Valuation Date and subject to Paragraph 5 in the case of a dispute, the amount, if any, that would be payable to that party by the other party (expressed as a positive number) or by that party to the other party (expressed as a negative number) pursuant to Section 7.5.2. of the Agreement if all Transactions were being terminated as of the relevant Valuation Time, on the basis that (i) that party is not the Affected Party and (ii) the Base Currency is the Termination Currency; provided that the Close-out Amount will be determined by the Valuation Agent on behalf of that party using its estimates at mid-market of the amounts that would be paid for transactions providing the economic equivalent of the material terms of the Transactions, including the payments and deliveries by the parties under Section 3.1.1 in respect of the Transactions that would, but for the occurrence of the relevant Early Termination Date, have been required after that date (assuming satisfaction of the conditions precedent[1] in Section 3.1.3. of the Agreement), and the option rights of the parties in respect of the Transactions.

"Independent Amount" means, with respect to a party, the Base Currency Equivalent of the amount

[1] «նախապայման» նշանակում է այնպիսի պայման, որը կողմը պետք է պահպանի, որպեսզի իրավասու լինի մյուս կողմից պահանջելու պարտավորության կատարում:
"condition precedent" means a condition that a party must comply with to claim performance of obligations by the other party.



«Անկախ գումարը» նշանակում է 11(բ)(iii)(Ա) պարբերությունում կողմի համար որպես այդպիսին նշված գումարի Հիմնական արժույթով համարժեքը, իսկ եթե այդպիսի գումար նշված չէ, ապա՝ զրո:

specified as such for that party in Paragraph 11 (b)(iii)(A); if no amount is specified, zero.

«Տոկոսագումարը» նշանակում է Տոկոսագումարների վճարման ժամանակահատվածի յուրաքանչյուր օրվա համար Ապահովության մնացորդի՝ կիրառելի արժույթով դրամական միջոցներից բաղկացած մասի մայր գումարի նկատմամբ որոշված տոկոսների գումարների Հիմնական արժույթով համարժեքների հանրագումարը: Այն յուրաքանչյուր օրվա համար որոշվում է Գնահատող գործակալի կողմից հետևյալ կերպ.
(ա) տվյալ օրվա դրությամբ առկա՝ տվյալ արժույթով դրամական միջոցների գումարը
բազմապատկած
(բ) այդ օրվա դրությամբ սահմանված Տոկոսադրույքով,
բաժանած
(գ) 360-ի (կամ ՀՀ դրամի և ֆունտ ստեռլինգի դեպքում՝ 365):

"Interest Amount" means, the aggregate sum of the Base Currency Equivalents of the amounts of interest determined for each relevant currency and calculated for each day in that Interest Period on the principal amount of the portion of the Credit Support Balance comprised of cash in such currency. It is determined by the Valuation Agent for each such day as follows:


(a) the amount of that cash in such currency on that day, multiplied by

(b) the Interest Rate in effect for that day; divided by

(c) 360 (or, in the case of AMD and pounds sterling, 365).

«Տոկոսագումարների վճարման ժամանակահատվածը» նշանակում է Տոկոսագումարների վճարման վերջին Տեղական աշխատանքային օրից (իսկ եթե Տոկոսագումարներ չեն վճարվել, այն Տեղական աշխատանքային օրից, երբ դրամական միջոցներով արտահայտված Ընդունելի Ապահովությունը կամ Համարժեք ապահովությունը փոխանցվել է Ստացողին կամ ստացվել է նրա կողմից) (ներառյալ) մինչև ընթացիկ Տոկոսագումարների վճարման Տեղական աշխատանքային օրը (չներառելով) ընկած ժամանակահատվածը:

"Interest Period" means the period from (and including) the last Business Day on which an Interest Amount was transferred (or, if no Interest Amount has yet been transferred, the Business Day on which Eligible Credit Support or Equivalent Credit Support in the form of cash was transferred to or received by the Transferee) to (but excluding) the Business Day on which the current Interest Amount is transferred.



«Տոկոսադրույքն» ունի Ընդունելի արժույթի համար 11(զ)(i) պարբերությամբ սահմանված նշանակությունը:

“Interest Rate” means, with respect to an Eligible Currency, the rate specified in Paragraph 11(f)(i) for that currency.

«Տեղական աշխատանքային օրը» նշանակում է (եթե այլ բան սահմանված չէ 11(ը) պարբերությամբ):

“Local Business Day”, unless otherwise specified in Paragraph 11(h), means:

(i) սույն Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների կամ արժեթղթերից տարբերվող այլ գույքի փոխանցման դեպքում՝ այն օրը, երբ Հայաստանի Հանրապետությունում և այդպիսի վճարման հիմնական ֆինանսական կենտրոնում (առակայության դեպքում եթե այն Հայաստանի Հանրապետությունում չէ) առևտրային բանկերը բաց են գործունեության (ներառյալ՝ արտարժույթի փոխանակման գործառնությունների և արտարժութային ավանդներով գործարքների) համար,


(i) in relation to a transfer of cash or other property (other than securities) under this Annex, a day on which commercial banks are open for business (including dealings in foreign exchange and foreign currency deposits) in the Republic of Armenia and in the principal financial centre of the currency of such payment (if any and if not in the Republic of Armenia);

(ii) սույն Պայմանագրի հիման վրա արժեթղթերի փոխանցման դեպքում՝ այն օրը, երբ արժեթղթերի առաքման համար կողմերի միջև համաձայնեցված քլիրինգային համակարգը բաց է վերջնահաշվարկի հանձնարարականների ընդունման և կատարման համար, կամ, եթե արժեթղթերի առաքումը նախատեսվում է իրականացնել այլ միջոցներով, ապա այն օրը, երբ առևտրային բանկերը բաց են գործունեության (ներառյալ արտարժույթի փոխանակման գործառնությունների և արտարժութային ավանդներով գործարքների) համար,

(ii) in relation to a transfer of securities under this Annex, a day on which the clearance system agreed between the parties for delivery of the securities is open for the acceptance and execution of settlement instructions or, if delivery of the securities is contemplated by other means, a day on which commercial banks are open for business (including dealings in foreign exchange and foreign currency deposits) in the place(s) agreed between the parties for this purpose;

(iii) սույն Պայմանագրի համաձայն իրականացվող գնահատման կապակցությամբ՝ այն օրը, երբ Գնահատող գործակալի գտնվելու վայրում և այդ նպատակով կողմերի միջև համաձայնեցված վայր(եր)ում առևտրային բանկերը բաց են գործունեության (ներառյալ՝ արտարժույթի փոխանակման

(iii) in relation to a valuation under this Annex, a day on which commercial banks are open for business (including dealings in foreign exchange and foreign currency deposits) in the place of location of the Valuation Agent and in the place(s) agreed between the parties for this purpose; and



գործառնությունների և արտարժութային ավանդներով գործարքների) համար, և

(iv) սույն Պայմանագրի ներքո ցանկացած ծանուցման կամ այլ հաղորդակցության կապակցությամբ՝ այն օրը, երբ հասցեատիրոջ կողմից տրամադրված՝ իր ծանուցման վերջին հասցեի գտնվելու վայրում առևտրային բանկերը բաց են գործունեության (ներառյալ՝ արտարժույթի փոխանակման գործառնությունների և արտարժութային ավանդներով գործարքների) համար:

(iv) in relation to any notice or other communication under this Annex, a day on which commercial banks are open for business (including dealings in foreign exchange and foreign currency deposits) in the place specified in the address for notice most recently provided by the recipient.

«Նվազագույն փոխանցման գումարը» նշանակում է կողմի համար 11(բ)(iii)(Գ) պարբերությամբ որպես այդպիսին նշված գումարը, իսկ եթե գումար նշված չէ, ապա՝ զրո:

"Minimum Transfer Amount" means, with respect to a party, the amount specified as such for that party in Paragraph 11(b)(iii)(C); if no amount is specified, zero.

«Նոր ապահովությունն» ունի 4(գ)(i) պարբերությամբ սահմանված նշանակությունը:

"New Credit Support" has the meaning specified in Paragraph 4(c)(i).

«Ծանուցման ժամն» ունի 11(գ)(iv) պարբերությամբ սահմանված նշանակությունը:


"Notification Time" has the meaning specified in Paragraph 11(c)(iv).

«Վերահաշվարկի ամսաթիվը» նշանակում է Գնահատման ամսաթիվ, որը 5-րդ պարբերության համաձայն հանգեցրել է վեճի: Այնուամենայնիվ, եթե մինչև վեճի վերջնական լուծումը 3-րդ պարբերության ներքո վրա է հասնում հաջորդ Գնահատման ամսաթիվը, ապա որպես «Վերահաշվարկի ամսաթիվ» է ընդունվում ամենավերջին Գնահատման ամսաթիվը:

"Recalculation Date" means the Valuation Date that gives rise to the dispute under Paragraph 5. However, if a subsequent Valuation Date occurs under Paragraph 3 prior to the resolution of the dispute, then the "Recalculation Date" means the most recent Valuation Date under Paragraph 3.

«Վեճի լուծման ժամկետն» ունի 11(ե)(i) պարբերությամբ սահմանված նշանակությունը:

"Resolution Time" has the meaning specified in Paragraph 11(e)(i).



«Վերադարձվող գումարն» ունի 3(բ) պարբերությամբ սահմանված նշանակությունը:

"Return Amount" has the meaning specified in Paragraph 3(b).

«Վերջնահաշվարկի օրը»՝ որպես ամսաթիվ, նշանակում է. (i) դրամական միջոցների կամ արժեթուղթ չհանդիսացող այլ գույքի փոխանցման դեպքում՝ հաջորդ Տեղական աշխատանքային օրը, իսկ (ii) արժեթղթերի փոխանցման դեպքում՝ կողմերի միջև համաձայնեցված հաշվառման համակարգի գործարար շրջանառության սովորույթներով այդպիսի արժեթղթերի առաքման համար սահմանված օրվան հաջորդող առաջին Տեղական աշխատանքային օրը (իսկ եթե այդպիսի գործարար շրջանառության սովորույթներ առկա չեն, այն օրվան հաջորդող առաջին Տեղական աշխատանքային օրը, երբ ողջամտորեն հնարավոր է նման արժեթղթերի փոխանցումը):

"Settlement Day" means, in relation to a date, (i) with respect to a transfer of cash or other property (other than securities), the next Local Business Day and (ii) with respect to a transfer of securities, the first Local Business Day after such date on which settlement of a trade in the relevant securities, if effected on such date, would have been settled in accordance with customary practice when settling through the clearance system agreed between the parties for delivery of such securities or, otherwise, on the market in which such securities are principally traded (or, if there is no such customary practice, on the first Local Business Day after such date on which it is reasonably practicable to deliver such securities).

«Շեմ» նշանակում է (կողմի առնչությամբ) (11(բ)(iii)(Բ) պարբերությամբ այդ կողմի համար որպես այդպիսին նշված գումարի Հիմնական արժույթով համարժեքը, իսկ եթե այդպիսի գումար նշված չէ, ապա՝ զրո:

"Threshold" means, with respect to a party, the Base Currency Equivalent of the amount specified as such for that party in Paragraph 11(b)(iii)(B); if no amount is specified, zero.

«Ստացողը» նշանակում է այն կողմը, որի Ռիսկի հաշվարկը տվյալ Գնահատման ամսաթվի դրությամբ դրական թիվ է, իսկ Ապահովության մնացորդի առնչությամբ՝ այն կողմը, որը, սույն Պայմանագրի համաձայն, մյուս կողմին պետք է վճարի այդ Ապահովության մնացորդը կամ դրա Արժեքը:


"Transferee" means, in relation to each Valuation Date, the party in respect of which Exposure is a positive number and, in relation to a Credit Support Balance, the party which, subject to this Annex, owes such Credit Support Balance or the Value of such Credit Support Balance to the other party.

«Փոխանցողը» նշանակում է Ստացող չհամարվող կողմը:

"Transferor" means, in relation to a Transferee, the other party.

«Գնահատող գործակալն» ունի 11(գ)(i) պարբերությամբ սահմանված նշանակությունը:

"Valuation Agent" has the meaning specified in Paragraph 11(c)(i).



«Գնահատման ամսաթիվը» նշանակում է 11(գ)(ii) պարբերությամբ սահմանված կամ դրա համաձայն այլ կերպ որոշված ամսաթիվ:

"Valuation Date" means each date specified in or otherwise determined pursuant to Paragraph 11(c)(ii).

«Գնահատման հարաբերակցությունը» ունի 11(բ)(ii) պարբերությամբ Ընդունելի ապահովության յուրաքանչյուր տարրի համար սահմանված նշանակությունը:

"Valuation Percentage" means, for any item of Eligible Credit Support, the percentage specified in Paragraph 11(b)(ii).

«Գնահատման ժամն» ունի 11(գ)(iii) պարբերությամբ սահմանված նշանակությունը:

"Valuation Time" has the meaning specified in Paragraph 11(c)(iii).

«Արժեքը» նշանակում է Գնահատման ցանկացած ամսաթվի կամ այլ ամսաթվի համար, որի դրությամբ Արժեքը հաշվարկվում է (իսկ վեճի առկայության դեպքում՝ նաև հաշվի առնելով 5-րդ պարբերությունը), Ապահովության մնացորդի մեջ ներառված տարրերի՝ հետևյալ կարգով հաշվարկվող արժեքը.

"Value" means, for any Valuation Date or other date for which Value is calculated, and subject to Paragraph 5 in the case of a dispute, with respect to, the values of the elements of the Credit Support Balance calculated in the following manner:

(i) Ապահովության մնացորդում ներառված Ընդունելի Ապահովության մեջ ներառվող.

(i) Eligible Credit Support comprised in a Credit Support Balance that is:

(Ա) դրամական միջոցների համար՝ դրանց Հիմնական արժույթով համարժեքի և Գնահատման հարաբերակցության (կիրռելիության դեպքում) բազմապատիկը, իսկ


(A) an amount of cash, the Base Currency Equivalent of such amount multiplied by the applicable Valuation Percentage, if any; and

(Բ) արժեթղթերի համար՝ դրանց՝ Գնահատող գործակալի կողմից որոշված գնանշման Հիմնական արժույթով համարժեքի և Գնահատման հարաբերակցության (կիրռելիության դեպքում) բազմապատիկը, և

(B) a security, the Base Currency Equivalent of the bid price obtained by the Valuation Agent multiplied by the applicable Valuation Percentage, if any; and

(ii) Ապահովության մնացորդում ներառված և Ընդունելի ապահովություն չհանդիսացող տարրերի համար՝ զրո:

(ii) items that are comprised in a Credit Support Balance and are not Eligible Credit Support, zero.



Պարբերություն 3. Ապահովության պարտավորություններ


(ա) ***Առաքման գումարը.*** Փոխանցողի կողմից առաքման ենթակա գումարը («Առաքման գումար») հաշվարկվում է յուրաքանչյուր Գնահատման ամսաթվի համար և հավասար է Ապահովության գումարի և տվյալ Գնահատման ամսաթվի դրությամբ Փոխանցողի Ապահովության մնացորդի Արժեքի տարբերությանը (ճշգրտված այնպես, որ ներառի այն նախորդող Առաքման գումարները և չներառի այն նախորդող Վերադարձվող գումարները, որոնք դեռևս չեն փոխանցվել, և որոնց Վերջնահաշվարկի օրը այդ Գնահատման ամսաթվին է կամ դրանից հետո), եթե Պայմանագրի 11(բ) պարբերությամբ այլ բան սահմանված չէ: Եթե Գնահատման ամսաթվի դրությամբ Առաքման գումարը հավասար է Փոխանցողի Նվազագույն փոխանցման գումարին կամ գերազանցում է այն, ապա Փոխանցողը այդ Գնահատման ամսաթվին կամ անմիջապես դրանից հետո Ստացողի ներկայացրած պահանջով վերջինիս փոխանցում է Ընդունելի Ապահովություն՝ հաշվի առնելով 4-րդ և 5-րդ պարբերությունների կարգավորումները: Փոխանցվող Ընդունելի Ապահովության Արժեքը փոխանցման ամսաթվի դրությամբ առնվազն հավասար է կիրառելի Առաքման գումարին (կլորացված 11(բ)(iii)(Դ) պարբերության համաձայն):

Paragraph 3. Credit Support Obligations

(a) ***Delivery Amount.*** The amount subject to delivery by the Transferor (the "Delivery Amount") will be calculated as of each Valuation Date and will equal the amount by which the Credit Support Amount exceeds the Value as of that Valuation Date of the Transferor's Credit Support Balance (adjusted to include any prior Delivery Amount and to exclude any prior Return Amount, the transfer of which has not yet been completed and for which the relevant Settlement Day falls on or after such Valuation Date), unless otherwise specified in Paragraph 11(b). If the Delivery Amount for a Valuation Date equals or exceeds the Transferor's Minimum Transfer Amount, then the Transferor will, upon a demand made by the Transferee on or promptly following that Valuation Date, transfer to the Transferee Eligible Credit Support, subject to Paragraphs 4 and 5. The Value of the Eligible Credit Support being transferred as of the date of the transfer shall be at least equal to the applicable Delivery Amount (rounded pursuant to Paragraph 11(b)(iii)(D)).

(բ) ***Վերադարձվող գումարը.*** Ստացողի կողմից վերադարձման ենթակա գումարը («Վերադարձվող գումար») հաշվարկվում է յուրաքանչյուր Գնահատման ամսաթվի համար և հավասար է տվյալ Գնահատման ամսաթվի դրությամբ Փոխանցողի Ապահովության մնացորդի Արժեքի (ճշգրտված այնպես, որ ներառի այն նախորդող Առաքման գումարները և

(b) ***Return Amount.*** The amount subject to return by the Transferee (the "Return Amount") will be calculated as of each Valuation Date and will equal the amount by which the Value as of that Valuation Date of the Transferor's Credit Support Balance (adjusted to include any prior Delivery Amount and to exclude any prior Return Amount, the transfer of which, in either case, has not yet been completed and for which the relevant Settlement Day falls on or after such Valuation Date) exceeds the Credit



չներառի այն նախորդող Վերադարձվող գումարները, որոնց փոխանցումը (երկու դեպքում էլ) դեռևս չի ավարտվել, և որոնց համապատասխան Վերջնահաշվարկի օրը համընկնում է նշված Գնահատման ամսաթվի հետ կամ հաջորդում է դրան) և Ապահովության գումարի տարբերությանը, եթե Պայմանագրի 11(բ) պարբերությամբ այլ բան սահմանված չէ: Եթե Գնահատման ամսաթվի դրությամբ Վերադարձվող գումարը հավասար է Ստացողի Նվազագույն փոխանցման գումարին կամ գերազանցում է այն, ապա Ստացողը Գնահատման ամսաթվին կամ անմիջապես դրանից հետո Փոխանցողի ներկայացրած պահանջով նրան է փոխանցում Փոխանցողի կողմից այդ պահանջում նշված Համարժեք Ապահովությունը՝ հաշվի առնելով 4-րդ և 5-րդ պարբերությունների կարգավորումները: Փոխանցվող Համարժեք Ապահովության Արժեքը պետք է փոխանցման ամսաթվի դրությամբ հնարավորինս մոտ լինի կիրառելի Վերադարձվող գումարին (կլորացվում է 11(բ)(iii)(Դ) պարբերության համաձայն): Այդ փոխանցման հետևանքով Ապահովության մնացորդը համապատասխանաբար նվազեցվում է:

Support Amount, unless otherwise specified in Paragraph 11(b). If the Return Amount for a Valuation Date equals or exceeds the Transferee's Minimum Transfer Amount, then the Transferee will, upon a demand made by the Transferor on or promptly following that Valuation Date, transfer to the Transferor Equivalent Credit Support specified by the Transferor in that demand, subject to Paragraphs 4 and 5. The Value of the Equivalent Credit Support being transferred as of the date of the transfer shall be as close as practicable to the applicable Return Amount (rounded pursuant to Paragraph 11(b)(iii)(D)). The Credit Support Balance will, upon such transfer, be reduced accordingly.

Պարբերություն 4. Փոխանցումներ, հաշվարկներ և փոխարինումներ

(ա) ***Փոխանցումներ.*** Ընդունելի ապահովության, Համարժեք ապահովության, Տոկոսագումարների կամ Համարժեք բաշխումների՝ սույն Պայմանագրով նախատեսված բոլոր փոխանցումները պետք է կատարվեն Ստացողի կամ Փոխանցողի ցուցումներին համապատասխան, ըստ կիրառելիության.

Paragraph 4. Transfers, Calculations and Exchanges

(a) ***Transfers.*** All transfers under this Annex of any Eligible Credit Support, Equivalent Credit Support, Interest Amount or Equivalent Distributions shall be made in accordance with the instructions of the Transferee or Transferor, as applicable:

(i) դրամական միջոցների դեպքում՝ ստացողի կողմից նշված՝ մեկ կամ ավելի բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով.

(i) in the case of cash, by transfer into one or more bank accounts specified by the recipient;

(ii) հավաստագրերով թողարկված արժեթղթերի դեպքում, որոնք չեն կարող առաքվել կամ կողմերի համաձայնությամբ չեն առաքվի հաշվառման համակարգերի միջոցով՝ ստացողին կամ նրա համապատասխան հաշվին հավաստագրի պատշաճ մատակարարմամբ: Առաքվող հավաստագիրը պետք է զուգորդվի պատշաճորեն վավերացված փոխանցման, փոխանցման համար վճարված հարկերի կնքիներով և այլ՝ փոխանցող կողմի իրավական և փաստացի տիտղոսի՝ ստացողին պատշաճ փոխանցման համար անհրաժեշտ փաստաթղթերով.


(ii) in the case of certificated securities which cannot or which the parties have agreed will not be delivered by book-entry, by delivery in appropriate physical form to the recipient or its account. The certificate being delivered shall be accompanied by any duly executed instruments of transfer, transfer tax stamps and any other documents necessary to constitute a legally valid transfer of the transferring party's legal and beneficial title to the recipient;

(iii) այն արժեթղթերի դեպքում, որոնք կողմերը համաձայնել են մատակարարել ապանյութականացված ձևով, համապատասխան պահառուին կամ ստացողի կողմից նշված այլ անձին փոխանցողի իրավական և փաստացի տիտղոսի պատշաճ փոխանցման համար անհրաժեշտ գրավոր (ներառյալ՝ հեռախոսով, ֆաքսով և էլեկտրոնային հաղորդագրությունների համակարգով) հանձնարարականներ տալու միջոցով: Հանձնարարականների գրավոր պատճենները պետք է ուղարկվեն ստացողին:

(iii) in the case of securities which the parties have agreed will be delivered by book-entry, by the giving of written instructions (including instructions given by telex, facsimile transmission or electronic messaging system) to the relevant depository institution or other entity specified by the recipient, sufficient to result in a legally effective transfer of the transferring party's legal and beneficial titles to the recipient. The written copies of the instructions shall be sent to the recipient;

Այն պարագայում, երբ կողմերի համաձայնությամբ կամ 5-րդ պարբերությամբ այլ բան նախատեսված չէ, և Ընդունելի Ապահովության կամ Համարժեք Ապահովության փոխանցման պահանջը ստացվել է մինչև Ծանուցման ժամը, ապա համապատասխան փոխանցումը պետք է կատարվի ոչ ուշ,

Subject to Paragraph 5 and unless otherwise specified, if a demand for the transfer of Eligible Credit Support or Equivalent Credit Support is received by the Notification Time, then the relevant transfer will be made not later than the close of business on the Settlement Day relating to the date such demand is received. If a demand is received after the Notification Time, then the relevant transfer will be made not later than the close of



քան այդ պահանջի ստացման Վերջնահաշվարկի օրվա աշխատանքային ժամի ավարտը: Եթե պահանջը ստացվել է Ծանուցման ժամից հետո, ապա համապատասխան փոխանցումը պետք է կատարվի ոչ ուշ, քան այդ պահանջի ստացման ամսաթվին հաջորդող Վերջնահաշվարկի օրվա աշխատանքային ժամի ավարտը:

business on the Settlement Day relating to the day after the date such demand is received.

բ) ***Հաշվարկներ.*** 3-րդ և 5(ա) պարբերությունների նպատակների համար Արժեքի և Ռիսկի հաշվարկի բոլոր հաշվարկները պետք է կատարվեն Գնահատող գործակալի կողմից համապատասխան Գնահատման ժամի դրությամբ: Գնահատող գործակալը կողմերին (կամ միայն մյուս կողմին, եթե Գնահատող գործակալը կողմերից մեկն է) ծանուցում է իր հաշվարկների մասին ոչ ուշ, քան համապատասխան Գնահատման ամսաթվին (իսկ 5(ա) պարբերությամբ սահմանված դեպքում՝ հաշվարկման ամսաթվին) հաջորդող Տեղական աշխատանքային օրվա Ծանուցման ժամը:

(b) ***Calculations.*** All calculations of Value and Exposure for purposes of Paragraphs 3 and 5(a) will be made by the relevant Valuation Agent as of the relevant Valuation Time. The Valuation Agent will notify each party (or the other party, if the Valuation Agent is a party) of its calculations not later than the Notification Time on the Local Business Day following the applicable Valuation Date (or, in the case of Paragraph 5(a), following the date of calculation).

գ) ***Փոխարինումներ.***


(i) Եթե այլ բան նախատեսված չէ 11-րդ պարբերությամբ, Փոխանցողը կարող է ցանկացած Տեղական աշխատանքային օր ծանուցման միջոցով տեղեկացնել Ստացողին, որ ցանկանում է Փոխանցողի Ապահովության մնացորդի մաս կազմող որոշակի Ընդունելի ապահովությունը («Սկզբնական ապահովություն») փոխարինել այդ ծանուցման մեջ նշված Ընդունելի ապահովությամբ («Նոր Ապահովություն»):

(c) ***Exchanges.***

(i) Unless otherwise specified in Paragraph 11, the Transferor may on any Local Business Day by notice inform the Transferee that it wishes to transfer to the Transferee Eligible Credit Support specified in that notice (the "New Credit Support") in exchange for certain Eligible Credit Support (the "Original Credit Support") specified in that notice comprised in the Transferor's Credit Support Balance.

(ii) Առաջարկվող փոխարինմանն Ստացողի համաձայնության մասին ծանուցում ստանալու դեպքում (Ա) Փոխանցողը պարտավոր է Ստացողին փոխանցել Նոր Ապահովությունը՝ Ստացողի համաձայնության մասին նրա

(ii) If the Transferee notifies the Transferor that it has consented to the proposed exchange, (A) the Transferor will be obliged to transfer the New Credit Support to the Transferee on the first Settlement Day following the date on which it receives notice (which may be oral telephonic notice) from the Transferee of its consent and (B) the Transferee will



ծանուցումը (որը կարող է լինել բանավոր հեռախոսային ծանուցում) ստանալու ամսաթվին հաջորդող առաջին Վերջնահաշվարկի օրը, և (Բ) Ստացողը պարտավոր է Փոխանցողին փոխանցել Սկզբնական ապահովությանը Համարժեք Ապահովություն ոչ ուշ, քան Ստացողի կողմից Նոր ապահովության ստացման ամսաթվին հաջորդող Վերջնահաշվարկի օրը, եթե այլ բան նախատեսված չէ 11(դ) պարբերությամբ («Փոխանակման ամսաթիվ»): Ստացողը միայն պարտավոր է փոխանցել Համարժեք Ապահովությունն այնպիսի Արժեքով, որը փոխանցման ամսաթվի դրությամբ հնարավորինս մոտ է այդ ամսաթվի դրությամբ Նոր ապահովության արժեքին, բայց ամեն դեպքում չի գերազանցում այն:

be obliged to transfer to the Transferor Equivalent Credit Support in respect of the Original Credit Support not later than the Settlement Day following the date on which the Transferee receives the New Credit Support, unless otherwise specified in Paragraph 11(d) (the "Exchange Date"). The Transferee will only be obliged to transfer Equivalent Credit Support with a Value as of the date of transfer as close as practicable to, but in any event not more than, the Value of the New Credit Support as of that date.

Պարբերություն 5. Վեճերի լուծում


(ա) ***Վիճելի հաշվարկներ կամ գնահատումներ.*** Եթե կողմը («Վիճարկող կողմ») ողջամտորեն վիճարկում է (I) Գնահատող գործակալի կողմից կատարված՝ Առաքման գումարի կամ Վերադարձվող գումարի հաշվարկը կամ (II) Ընդունելի ապահովության կամ Համարժեք ապահովության որևէ փոխանցման Արժեքը, ապա

Paragraph 5. Dispute Resolution

(a) ***Disputed Calculations or Valuations.*** If a party (a "Disputing Party") reasonably disputes (I) the Valuation Agent's calculation of a Delivery Amount or a Return Amount or (II) the Value of any transfer of Eligible Credit Support or Equivalent Credit Support, then:

(1) այդ մասին տեղեկացնում է մյուս կողմին և Գնահատող գործակալին (եթե մյուս կողմը Գնահատող Գործակալը չէ) վերոնշյալ (I) դեպքում՝ ոչ ուշ, քան 3-րդ պարբերությամբ սահմանված՝ պահանջի ստացման ամսաթվին (Առաքման գումարի կամ Վերադարձվող գումարի հաշվարկը վիճարկելու դեպքում) կամ, վերոնշյալ (II) դեպքում, Փոխանցման ամսաթվին (Ընդունելի ապահովության կամ Համարժեք ապահովության Արժեքը վիճարկելու դեպքում) հաջորդող Տեղական

(1) the Disputing Party will notify the other party and the Valuation Agent (if the Valuation Agent is not the other party) not later than the close of business on the Local Business Day following, in the case of (I) above (disputing the calculation of a Delivery Amount or a Return Amount), the date that the demand is received under Paragraph 3 or, in the case of (II) above (disputing the Value of a transfer of Eligible Credit Support or Equivalent Credit Support), the date of transfer;



աշխատանքային օրը՝ մինչև աշխատանքային ժամի ավարտը:

(2) վերոնշյալ (I) դեպքում համապատասխան կողմը չվիճարկվող գումարը փոխանցում է մյուս կողմին ոչ ուշ, քան Պայմանագրի 3-րդ պարբերությամբ սահմանված՝ պահանջը ստանալու ամսաթվին հաջորդող Վերջնահաշվարկի օրը՝ մինչև աշխատանքային ժամի ավարտը:

(2) in the case of (I) above, the appropriate party will transfer the undisputed amount to the other party not later than the close of business on the Settlement Day following the date that the demand is received under Paragraph 3;

(3) կողմերը խորհրդակցում են միմյանց հետ՝ փորձելով լուծել վեճը:

(3) the parties will consult with each other in an attempt to resolve the dispute; and

(4) Եթե նրանք չեն կարողանում լուծել վեճը մինչև Վեճի լուծման ժամկետի ավարտը, ապա

(4) if they fail to resolve the dispute by the Resolution Time, then:

(i) Առաքման գումարի կամ Վերադարձվող գումարի հետ կապված վեճի դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրի 11(գ) պարբերությամբ, Գնահատող գործակալը պետք է Վերահաշվարկի ամսաթվի դրությամբ վերահաշվարկի Ռիսկի հաշվարկը և Արժեքը հետևյալ կերպ.


(i) in the case of a dispute involving a Delivery Amount or Return Amount, unless otherwise specified in Paragraph 11(c), the Valuation Agent will recalculate the Exposure and the Value as of the Recalculation Date by:

(Ա) Ռիսկի հաշվարկի այն մասի համար, որը կապված է վեճի առարկա չհանդիսացող Գործարքների հետ, հիմք են ընդունվում Գնահատող գործակալի հաշվարկները,

(A) utilising any calculations of that part of the Exposure attributable to the Transactions that the parties have agreed are not in dispute;

(Բ) Ռիսկի հաշվարկի՝ Վիճարկվող Գործարքներին վերաբերող մասը կատարվում է՝ Փակման գումարը որոշելու նպատակով մասնագիտացված անձանցից ստանալով չորս միջշուկայական գնանշումներ և հաշվարկելով դրանց միջին թվաբանականը: Տվյալ Գործարքի համար չորսից պակաս թվով գնանշումներ հասանելի լինելու դեպքում կարող են օգտագործվել չորսից պակաս թվով

(B) calculating that part of the Exposure attributable to the Transactions in dispute by seeking four actual quotations at mid-market from third parties for purposes of calculating the relevant Close-out Amount, and taking the arithmetic average of those obtained. If four quotations are not available for a particular Transaction, then fewer than four quotations may be used for that Transaction. If no quotations are available for a particular Transaction, then the Valuation Agent's original calculations will be used for that Transaction; and



գնանշումները: Եթե տվյալ Գործարքի համար որևէ գնանշում հասանելի չէ, ապա օգտագործվում են Գնահատող գործակալի սկզբնական հաշվարկները:

(Գ) Վճարման ենթակա Ապահովության մնացորդի Արժեքը հաշվարկվում է (վիճարկվելու դեպքում)՝ կիրառելով 11(ե)(ii) պարբերությամբ սահմանված ընթացակարգերը:

(C) utilising the procedures specified in Paragraph 11(e)(ii) for calculating the Value, if disputed, of the outstanding Credit Support Balance;

(ii) Ընդունելի ապահովության կամ Համարժեք ապահովության Արժեքի հետ կապված վեճի դեպքում Գնահատող գործակալը պետք է դրանց Արժեքը վերահաշվարկի փոխանցման ամսաթվի դրությամբ՝ համաձայն 11(ե)(ii) պարբերության:


(ii) in the case of a dispute involving the Value of any transfer of Eligible Credit Support or Equivalent Credit Support, the Valuation Agent will recalculate the Value as of the date of transfer pursuant to Paragraph 11(e)(ii).

Գնահատող գործակալը կողմերին (կամ միայն մյուս կողմին, եթե Գնահատող գործակալը կողմերից մեկն է) ծանուցում է սույն պարբերության համաձայն կատարված վերահաշվարկի մասին որքան հնարավոր է շուտ, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան Վեճի լուծման ժամկետին հաջորդող Տեղական աշխատանքային օրվա Ծանուցման ժամը: Ծանուցումը ստանալուց հետո համապատասխան կողմը Գնահատող գործակալի պահանջով կամ սույն պարբերության ներքո վեճի լուծման հետևանքով (հաշվի առնելով 4(ա) պարբերությունը) պետք է կատարի համապատասխան փոխանցում:

Following a recalculation pursuant to this Paragraph, the Valuation Agent will notify each party (or the other party, if the Valuation Agent is a party) as soon as possible but in any event not later than the Notification Time on the Local Business Day following the Resolution Time. The appropriate party will, upon demand following such notice given by the Valuation Agent or a resolution pursuant to this Paragraph and subject to Paragraph 4(a), make the appropriate transfer.

(բ) ***Խախտման բացառում.*** 5(ա) պարբերության ներքո վեճի առարկա գումարը չփոխանցելը չի հանդիսանում Խախտում, եթե պահպանվում են սույն 5-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգերը: Գլխավոր համաձայնագրի 7.1.1. բաժինը կիրառելի է կողմի՝ համապատասխան ամսաթվին

(b) ***No Event of Default.*** The failure by a party to make a transfer of any amount which is the subject of a dispute to which Paragraph 5(a) applies will not constitute an Event of Default for as long as the procedures set out in this Paragraph 5 are being carried out. Section 7.1.1. of the Agreement will apply to any failure by a party to make transfer required under the final sentence of Paragraph 5(a) on the relevant due date.



5(ա) պարբերության ներքո կայացված վերջնական վճռից բխող փոխանցման չկատարման նակատմամբ:

Պարբերություն 6. Սեփականության իրավունքի փոխանցում, Ապահովված իրավունքի բացառում, Բաշխումներ և Տոկոսագումարներ

Paragraph 6. Transfer of Title, No Security Interest, Distributions and Interest Amount

(ա) ***Սեփականության իրավունքի փոխանցում***. Կողմերը համաձայնում են, որ Պայմանագրի հիման վրա փոխանցվող Ընդունելի ապահովության, Համարժեք ապահովության, Համարժեք բաշխումների և/կամ Տոկոսների նկատմամբ և դրանցից բխող բոլոր իրավունքները, տիտղոսները և շահերը փոխանցվում են փոխանցող կողմի և/կամ երրորդ անձանց օգտին որևէ սահմանափակումներից, պահանջներից, արգելադրումներից կամ ծանրաբեռնումներից կամ որևէ այլ իրավունքներից ազատ (բացառությամբ համապատասխան հաշվառման համակարգերում արժեթղթերի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումների)):

(a) ***Transfer of Title.*** Each party agrees that all right, title and interest in and to any Eligible Credit Support, Equivalent Credit Support, Equivalent Distributions or Interest Amount which it transfers to the other party under the terms of this Annex shall vest in the recipient free and clear of any liens, claims, charges or encumbrances or any other interest of the transferring party or of any third person (other than restrictions routinely imposed on all securities in a relevant clearance system).

(բ) ***Ապահովված իրավունքի բացառում***. Պայմանագիրը դրա հիման վրա փոխանցված դրամական միջոցների կամ այլ գույքի նկատմամբ կողմերից որևէ մեկի օգտին արգելադրում, սահմանափակում, գրավ, ծանրաբեռնում կամ Ապահովության այլ միջոց չի առաջացնում:


(b) ***No Security Interest.*** Nothing in this Annex is intended to create or does create in favour of either party any mortgage, charge, lien, pledge, encumbrance or other security interest in any cash or other property transferred by one party to the other party under the terms of this Annex.

(գ) **Բաշխումներ և *Տոկոսագումարներ.***

(c) **Distributions and Interest Amount.**

(i) ***Բաշխումներ.*** Ստացողը ոչ ուշ, քան Բաշխման ամսաթվին հաջորդող Վերջնահաշվարկի օրը Փոխանցողին փոխանցում է համապատասխան Բաշխումների տեսակի, անվանական արժեքի, նկարագրության և քանակի դրամական միջոցներ, արժեթղթեր կամ

(i) ***Distributions.*** The Transferee will transfer to the Transferor not later than the Settlement Day following each Distributions Date cash, securities or other property of the same type, nominal value, description and amount as the relevant Distributions ("Equivalent Distributions"). Such transfer may not result in creation or increase of a Delivery Amount, as calculated by the Valuation Agent. The date of



այլ գույք («Համարժեք բաշխումներ»): Այդպիսի փոխանցումը չի կարող հանգեցնել Առաքման գումարի առաջացման/ավելացման՝ Գնահատող գործակալի հաշվարկմամբ: Այդ հաշվարկման ամսաթիվը այդ նպատակով հանդիսանում է Գնահատման ամսաթիվ:

such calculation will be deemed a Valuation Date for this purpose.

(ii) ***Տոկոսագումարներ.*** Եթե այլ բան նախատեսված չէ 11(գ)(iii) պարբերությամբ, Ստացողը 11(գ)(ii) պարբերությամբ սահմանված ժամկետներում Փոխանցողին է փոխանցում համապատասխան Տոկոսագումարները: Այդպիսի փոխանցումը չի կարող հանգեցնել Առաքման գումարի առաջացման/ավելացման՝ Գնահատող գործակալի հաշվարկմամբ: Այդ հաշվարկման ամսաթիվը սույն կետի նպատակով հանդիսանում է Գնահատման ամսաթիվ:


(ii) ***Interest Amount.*** Unless otherwise specified in Paragraph 11(f)(iii), the Transferee will transfer to the Transferor at the times specified in Paragraph 11(f)(ii) the relevant Interest Amount. Such transfer may not result in creation or increase of a Delivery Amount, as calculated by the Valuation Agent. The date of such calculation will be deemed a Valuation Date for this purpose.

Պարբերություն 7. Խախտում

Եթե նշանակվել է Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվ, կամ այդպիսին վրա է հասել կողմի Խախտման հետևանքով, ապա Ապահովության մնացորդի Արժեքի գումարը, որը որոշվում է՝ ենթադրելով, որ Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը Գնահատման ամսաթիվ է, Գլխավոր համաձայնագրի 7.5. բաժնի նպատակների համար պետք է համարվի Փոխանցողին (անկախ նրանից՝ վերջինս Խախտող կողմն է, թե ոչ) վճարման ենթակա Չվճարված Գումար: Սույն Պայմանագրի առարկա Գործարքի՝ 7.5. բաժնի համաձայն որոշված Փակման գումարը կհամարվի զրո: Սույն պարբերության նպատակների համար Ապահովության մնացորդի Արժեքը որոշվում է՝ համարելով, որ Ապահովության մնացորդում ներառված յուրաքանչյուր տարրի նկատմամբ կիրառելի

Paragraph 7. Default

If an Early Termination Date is designated or deemed to occur as a result of an Event of Default in relation to a party, an amount equal to the Value of the Credit Support Balance, determined as though the Early Termination Date were a Valuation Date, will be deemed to be an Unpaid Amount due to the Transferor (which may or may not be the Defaulting Party) for purposes of Section 7.5. The Close-out Amount determined under Section 7.5. in relation to the Transaction constituted by this Annex will be deemed to be zero. For purposes of this Paragraph, the Value of the Credit Support Balance shall be determined on the basis that the Valuation Percentage applicable to each item of Eligible Credit Support is 100%.



Գնահատման հարաբերակցությունը 100% է:

Պարբերություն 8. Հավաստիացում

«Մարժայի պահպանմամբ գործարքը» նշանակում է ԱՖԳ գործարք, որի նկատմամբ կիրառվում է «Մարժայի պահպանությունը»:

Margin Maintenance Transaction.

"Margin Maintenance Transaction" means an SFT Transaction in respect of which "Margin Maintenance" applies.

3.4.6. **Գումարը ստացող կողմը**

«Գումարը ստացող կողմը» նշանակում է՝ որևէ Աշխատանքային օրվա դրությամբ.

In-the-Money Party.

"In-the-Money Party" means, on any Business Day:

(i) եթե կիրառվում է «Համընդհանուր հիմքը», այն կողմը, որի նկատմամբ Ռիսկի հաշվարկը՝ համապատասխան Մարժայի կազմի համար, դրական է, և

if "Aggregate Basis" applies, the party in respect of which the Net Exposure is positive for the relevant Margin Set; and

(ii) եթե կիրառվում է «Անհատական գործարքի հիմքը», և.

if "Individual Transaction Basis" applies and:

(ա) համապատասխան Մարժայի պահպանմամբ գործարքի Ռիսկի հաշվարկը դրական է՝ Վարկատուն/Վաճառողը, կամ


(a) the Transaction Exposure is positive for the relevant Margin Maintenance Transaction, the Lender/Seller; or

(բ) համապատասխան Մարժայի պահպանմամբ գործարքի Ռիսկի հաշվարկը բացասական է՝ Վարկառուն/Գնորդը:

(b) the Transaction Exposure is negative for the relevant Margin Maintenance Transaction, the Borrower/Buyer.

3.4.7. **Գումարը փոխանցող կողմը**

Out-of-the Money Party.



«Գումարը փոխանցող կողմը» նշանակում է այն կողմը, որը որևէ Աշխատանքային օրվա դրությամբ չի հանդիսանում Գումարը ստացող կողմ:

"Out-of-the-Money Party" means, on any Business Day, the party that is not the In-the-Money Party.

3.4.8. **Զուտ ռիսկի հաշվարկ**

«Զուտ ռիսկի հաշվարկը» նշանակում է՝ որևէ Աշխատանքային օրվա դրությամբ կողմի առնչությամբ.

Net Exposure.

"Net Exposure" means, in respect of a party on any Business Day:

(i) այդ կողմի՝ համապատասխան Մարժայի կազմում ներառված յուրաքանչյուր Մարժայի պահպանմամբ գործարքի առնչությամբ Ռիսկի հաշվարկների գումարի

the sum of that party's Transaction Exposures in respect of each Margin Maintenance Transaction in the relevant Margin Set; minus

(ii) մյուս կողմի՝ համապատասխան Մարժայի կազմում ներառված յուրաքանչյուր Մարժայի պահպանմամբ գործարքի առնչությամբ Ռիսկի հաշվարկների գումարի տարերությունը:

the sum of the other party's Transaction Exposures in respect of each Margin Maintenance Transaction in the relevant Margin Set.

3.4.9. **Գործարքի ռիսկի հաշվարկ**

Transaction Exposure.

Որևէ Աշխատանքային օրվա դրությամբ որևէ Մարժայի պահպանմամբ գործարքի **«Գործարքի ռիսկի հաշվարկը»** նշանակում է.

"Transaction Exposure" on any Business Day in respect of a Margin Maintenance Transaction means:

(i) եթե այդ Մարժայի պահպանմամբ գործարքը Փոխառության գործարք է.


if that Margin Maintenance Transaction is a Loan Transaction:

(ա) Փոխանցվող արժեթղթերի շուկայական արժեքը բազմապատկած Մարժայի նկատմամբ կիրառելի Մարժայի տոկոսադրույքով՝ Փոխատուի Մարժայի գումարում ներառված յուրաքանչյուր Մարժայի տեսակի և Փոխանցվող արժեթղթերի՝ այդ Մարժայի տեսակով ներակայցված մասի համար, գումարած՝

(a) the Market Value of the Transferred Securities multiplied by, for each type of Margin comprising the Lender Margin Amount and in respect of the portion of the Transferred Securities represented by that type of Margin, the Margin Percentage applicable to such Margin; plus

(բ) եթե համաձայնեցված է կողմերի միջև, 9.1.2 (Դրամական բաշխումներին հաջորդող վճարումներ) բաժնին համաձայն Փոխառուին

(b) if agreed between the parties, the amount of any Cash Distribution Amounts payable by the Borrower in accordance with Section 9.1.2 (Payments following Cash



վճարվելիք, բայց այդ Աշխատանքային օրին կամ մինչ այդ չվճարված Դրամական բաշխումներին հաջորդող վճարումները, հանած՝

Distributions), but not paid on or before that Business Day; minus

(գ) Փոխատուի Մարժայի գումարը (ճշգրտված այնպես, որ ներառի Փոխանցվող Մարժաները և չներառի Փոխանցվող Համարժեք մարժաները, որոնց Փոխանցումը դեռևս չի ավարտվել), հանած՝

(c) the Lender Margin Amount (adjusted to include any Margin and to exclude any Equivalent Margin being Transferred but the Transfer of which, in either case, has not yet been completed); minus

(դ) եթե համաձայնեցված է կողմերի միջև, Փոխատուի կողմից 9.1.2 (Դրամական բաշխումներին հաջորդող վճարումներ) բաժնին համաձայն Փոխառուին վճարվելիք, բայց այդ Աշխատանքային օրին կամ մինչ այդ չվճարված Դրամական բաշխումների գումարները,

(d) if agreed between the parties, the amount of any Cash Distribution Amounts payable by the Lender in accordance with Section 9.1.2. (Payments following Cash Distributions), but not paid on or before that Business Day;

(ii) եթե այդ Մարժայի պահպանմամբ գործարքը Ռեպո գործարք է, և «Հեյրքաթ»-ը չի կիրառվում


if that Margin Maintenance Transaction is a Repurchase Transaction and "Haircut" does not apply:

(ա) Փոխանցվող արժեթղթերի Շուկայական արժեքը, գումարած՝

(a) the Market Value of the Transferred Securities; plus

(բ) Գնորդի Մարժայի գումարը կազմող յուրաքանչյուր տեսակի Մարժայի Շուկայական արժեքի գումարը՝ բազմապատկած այդ Մարժայի նկատմամբ կիրառելի Մարժայի տոկոսադրույքով (ճշգրտված այնպես, որ ներառի Վաճառողի կողմից Փոխանցվող այն Մարժաները և չներառի

(b) the sum of the Market Value of each type of Margin comprising the Buyer Margin Amount multiplied by the Margin Percentage applicable to such Margin (adjusted to include any Margin being Transferred by the Seller and to exclude any Equivalent Margin being Transferred by the Buyer the Transfer of which, in either case, has not yet been completed); plus



Գնորդի կողմից Փոխանցվող այն Համարժեք մարժաները, որոնց Փոխանցումը դեռևս չի ավարտվել), գումարած

(գ) եթե համաձայնեցված է կողմերի միջև, Գնորդի կողմից 9.1.2 (Դրամական բաշխումներին հաջորդող վճարումներ) բաժնին համաձայն վճարվելիք, բայց այդ Աշխատանքային օրին կամ մինչ այդ չվճարված Դրամական բաշխումների գումարները, հանած

(դ) Ռեպո գումարը՝ բազմապատկած Մարժայի դրույքաչափով, հանած

(ե) Վաճառողի Մարժայի գումարը կազմող յուրաքանչյուր տեսակի Մարժայի Շուկայական արժեքի գումարը՝ բազմապատկած այդ Մարժայի նկատմամբ կիրառելի Մարժայի տոկոսադրույքով (ճշգրտված այնպես, որ ներառի Գնորդի կողմից Փոխանցվող այն Մարժաները և չներառի Վաճառողի կողմից Փոխանցվող այն Համարժեք մարժաները, որոնց Փոխանցումը դեռևս չի ավարտվել), հանած


(զ) եթե համաձայնեցված է կողմերի միջև, Վաճառողի կողմից 9.1.2 (Դրամական բաշխումներին հաջորդող վճարումներ) բաժնին համաձայն վճարվելիք, բայց այդ Աշխատանքային օրին կամ մինչ այդ չվճարված Դրամական բաշխումների գումարները,

(c) if agreed between the parties, the amount of any Cash Distribution Amounts payable by the Buyer in accordance with Section 9.1.2 (Payments following Cash Distributions), but not paid on or before that Business Day; minus

(d) the Repurchase Price multiplied by the Margin Ratio; minus

(e) the sum of the Market Value of each type of Margin comprising the Seller Margin Amount multiplied by the Margin Percentage applicable to such Margin (adjusted to include any Margin Transferred by the Buyer and to exclude any Equivalent Margin Transferred by the Seller the Transfer of which, in either case, has not yet been completed); minus

(f) if agreed between the parties, the amount of any Cash Distribution Amounts payable by the Seller in accordance with Section 9.1.2 (Payments following Cash Distributions), but not paid on or before that Business Day;



(iii) եթե այդ Մարժայի պահպանմամբ գործարքը Ռեպո գործարք է, և «Հեյրքաթ»-ը կիրառվում է.

(ա) Փոխանցվող արժեթղթերի Ճշգրտված շուկայական արժեքը (կամ, եթե ռեպո գործարքը վերաբերում է մեկից ավելի տեսակի Արժեթղթերի, Փոխանցվող արժեթղթերի յուրաքանչյուր տեսակի Ճշգրտված շուկայական արժեքների հնարագումարը), գումարած՝

(բ) Գնորդի Մարժայի գումարը կազմող յուրաքանչյուր տեսակի Մարժայի Շուկայական արժեքի գումարը՝ բազմապատկած այդ Մարժայի նկատմամբ կիրառելի Մարժայի տոկոսադրույքով (ճշգրտված այնպես, որ ներառի Վաճառողի կողմից Փոխանցվող այն Մարժաները և չներառի Գնորդի կողմից Փոխանցվող այն Համարժեք մարժաները, որոնց Փոխանցումը դեռևս չի ավարտվել), գումարած

(գ) եթե համաձայնեցված է կողմերի միջև, Գնորդի կողմից 9.1.2 (Դրամական բաշխումներին հաջորդող վճարումներ) բաժնին համաձայն վճարվելիք, բայց այդ Աշխատանքային օրին կամ մինչ այդ չվճարված Դրամական բաշխումների գումարները, հանած

(դ) Ռեպո գումարը, հանած


if that Margin Maintenance Transaction is a Repurchase Transaction and "Haircut" applies:

(a) the Adjusted Market Value of the Transferred Securities (or, if a Repurchase Transaction relates to Securities of more than one type, the sum of the Adjusted Market Values of each type of Transferred Securities); plus

(b) the sum of the Market Value of each type of Margin comprising the Buyer Margin Amount multiplied by the Margin Percentage applicable to such Margin (adjusted to include any Margin Transferred by the Seller and to exclude any Equivalent Margin Transferred by the Buyer the Transfer of which, in either case, has not yet been completed); plus

(c) if agreed between the parties, the amount of any Cash Distribution Amounts payable by the Buyer in accordance with Section 9.1.2 (Payments following Cash Distributions), but not paid on or before that Business Day; minus

(d) the Repurchase Price; minus



(ե) Վաճառողի Մարժայի գումարը կազմող յուրաքանչյուր տեսակի Մարժայի Շուկայական արժեքի հանրագումարը՝ բազմապատկած այդ Մարժայի նկատմամբ կիրառելի Մարժայի տոկոսադրույքով (ճշգրտված այնպես, որ ներառի Գնորդի կողմից Փոխանցվող այն Մարժաները և չներառի Վաճառողի կողմից Փոխանցվող այն Համարժեք մարժաները, որոնց Փոխանցումը դեռևս չի ավարտվել), հանած

(e) the sum of the Market Values of each type of Margin comprising the Seller Margin Amount multiplied by the Margin Percentage applicable to such Margin (adjusted to include the Margin Transferred by the Buyer and to exclude the Equivalent Margin Transferred by the Seller the Transfer of which has not yet been completed); minus

(զ) եթե համաձայնեցված է կողմերի միջև, Վաճառողի կողմից 9.1.2 (Դրամական բաշխումներին հաջորդող վճարումներ) բաժնին համաձայն վճարվելիք, բայց այդ Աշխատանքային օրին կամ մինչ այդ չվճարված Դրամական բաշխումների գումարները, իսկ

(f) if agreed between the parties, the amount of any Cash Distribution Amounts payable by the Seller in accordance with Section 9.1.2 (Payments following Cash Distributions), but not paid on that Business Day or before; and

(iv) այլ դեպքերում՝ ունի սահմանված նշանակությունը:

otherwise, has the meaning specified.

Եթե Գործարքի Ռիսկի հաշվարկը դրական է, Փոխատուի/Վաճառողի Ռիսկի հաշվարկը հավասար է այդ Ռիսկի հաշվարկին: Եթե Ռիսկի հաշվարկը բացասական է, Փոխառուի/Գնորդի Ռիսկի հաշվարկը հավասար է այդ Ռիսկի հաշվարկի բացարձակ արժեքին:


If the Transaction Exposure is positive, the Lender/Seller has a Transaction Exposure equal to the Transaction Exposure. If the Transaction Exposure is negative, the Borrower/Buyer has a Transaction Exposure equal to the absolute value of the Transaction Exposure.

3.4.10. Մարժայի տոկոսադրույք

«Մարժայի տոկոսադրույք»-ը նշանակում է համապատասխան տեսակի Մարժայի համար սահմանված տոկոսադրույքը, իսկ այդպիսին

Margin Percentage.

"Margin Percentage" means, with respect to a type of Margin, the percentage specified with respect to such Margin or, if none is specified, 100 per cent.



սահմանված չլինելու դեպքում՝ 100 տոկոս:

3.4.11. Մարժայի դրույքաչափ

«Մարժայի դրույքաչափ»-ը նշանակում է (Ռեպո գործարքի առնչությամբ).

(i) ԱՖԳ գործարքի կնքման պահին Փոխանցվող արժեթղթերի Շուկայական արժեքը՝ բաժանած Գնման գնով, կամ

(ii) այլ սահմանված դրույքաչափ:

3.4.12. Ճշգրտված շուկայական արժեք

«Ճշգրտված շուկայական արժեք»-ը նշանակում է (որևէ Փոխանցվող արժեթղթերի և որևէ ամսաթվի որևէ ժամի առնչությամբ) Արժեթղթերի արժեքը՝ հաշվարկված հետևյալ կերպ.

Ճշգրտված շուկայական արժեք = Մ (100%-Հ)

որտեղ

(i) «Մ»՝ այդ Արժեթղթերի Շուկայական արժեքը,

(ii) «Հ»՝ այդ Արժեթղթերի առնչությամբ որպես «Հեյրքաթ տոկոսադրույք» սահմանված տոկոսադրույքը (կամ, եթե այդպիսի տոկոսադրույք սահմանված չէ, զրո):

3.4.13. Մարժայի գումար

(i) **Գնորդի մարժայի գումարը**

«Գնորդի մարժայի գումարը»-ը նշանակում է (Գնորդի և Ռեպո գործարքի առնչությամբ) Գնորդին Փոխանցված այն Մարժայի գումարը, որի կապակցությամբ Գնորդը Վաճառողին չի Փոխանցել Համարժեք մարժա:

(ii) **Փոխատուի մարժայի գումարը**

«Փոխատուի մարժայի գումարը»-ը նշանակում է (Փոխատուի և Փոխառության գործարքի առնչությամբ) Փոխատուին Փոխանցված այն Մարժայի գումարը, որի կապակցությամբ Փոխատուն Փոխառուին չի Փոխանցել Համարժեք մարժա:

(iii) **Վաճառողի մարժայի գումարը**

Margin Ratio.

"**Margin Ratio**" means, in respect of a Repurchase Transaction:

the Market Value of the Transferred Securities at the time the SFT Transaction was entered into divided by the Purchase Price; or

any other ratio that is specified.

Adjusted Market Value.

"Adjusted Market Value" means (in respect of any Transferred Securities and any time on any date) the value of the Securities calculated as follows:

Adjusted Market Value = M (100%-H)

where:

"M" is the Market Value of such Securities;

"H" is the percentage specified as the "Haircut percentage" in respect of such Securities (or, if no such percentage is specified, zero).

Margin Amount.


Buyer Margin Amount.

"Buyer Margin Amount" means (in respect of the Buyer and a Repurchase Transaction) the amount of Margin Transferred to the Buyer in respect of which the Buyer has not Transferred Equivalent Margin to the Seller.

Lender Margin Amount.

"Lender Margin Amount" means (in respect of the Lender and a Loan Transaction) the amount of Margin Transferred to the Lender in respect of which the Lender has not Transferred Equivalent Margin to the Borrower.

Seller Margin Amount.



«Վաճառողի մարժայի գումարը»-ը նշանակում է (Վաճառողի և Ռեպո գործարքի առնչությամբ) Վաճառողին Փոխանցված այն Մարժայի գումարը, որի կապակցությամբ Վաճառողը Գնորդին չի Փոխանցել Համարժեք մարժա:

"Seller Margin Amount" means (in respect of the Seller and a Repurchase Transaction) the amount of Margin Transferred to the Seller in respect of which the Seller has not Transferred Equivalent Margin to the Buyer.

3.5. Դրամական մարժայի այլընտրանքի կիրառումը

Application of Cash Margin Fallback.

3.5.1. Դրամական մարժայի այլընտրանք

Cash Margin Fallback.

Եթե Ռեպո գործարքի կողմի համար առաջանում է Համարժեք արժեթղթերի մարժայի Փոխանցման պարտավորություն, սակայն ողջամիտ ջանքեր ներդնելուց հետո՝ Արժեթղթերի կամ դրանց Փոխանցման համար նախատեսված քլիրինգային համակարգի հետ կապված որևէ պատճառով, չի կարողանում Փոխանցել Համարժեք արժեթղթերի մարժան.

If a party to a Repurchase Transaction becomes obligated to Transfer Equivalent Securities Margin and, having made reasonable efforts to do so, is, for any reason relating to the Securities or the clearing system through which the Securities are to be Transferred, unable to Transfer Equivalent Securities Margin:

(i) Փոխանցողն Ստացողին անմիջապես վճարում է Դրամական մարժա, որը պետք է առնվազն հավասար լինի այդ Համարժեք Արժեթղթերի մարժայի Շուկայական արժեքին (եթե կողմերն այլ կերպ չեն համաձայնել, այդպիսի Դրամական մարժայի նկատմամբ տոկոսներ չեն հաշվարկվի), և

the Transferor shall immediately pay to the Transferee Cash Margin, which shall be at least equal to the Market Value of that Equivalent Securities Margin (if the parties have not agreed otherwise, no interest shall be calculated on such Cash Margin); and

(ii) եթե ձախողումը շարունակվում է երկու Աշխատանքային օր կամ ավելի, Ստացողը կարող է, Փոխանցողին ծանուցելով, պահանջել վճարել Համարժեք արժեթղթերի մարժայի Դեֆոլտ շուկայական արժեքին՝ հաշվարկված Ստացողի կողմից:

if the failure is continuing for two Business Days or more, the Transferee may, by notice to the Transferor, require to pay an amount equal to the Default Market Value of the Equivalent Securities Margin determined by the Transferee.

3.6. Վերագնանշում


Repricing.

3.6.1. Վերագնանշման կիրառում

Application of Repricing.

Ռեպո գործարքի դեպքում ցանկացած Աշխատանքային օր, երբ Գումարը ստացող կողմն իրավասու է ուղղել Մարժայի պահանջ, կողմերը կարող են համաձայնել դրա փոխարեն վերացնել

In the case of a Repurchase Transaction, on any Business Day on which an In-the-Money Party is entitled to make a Margin demand, the parties may agree instead to eliminate or reduce the Transaction Exposure or Net



կամ նվազեցնել Գործարքի ռիսկի հաշվարկը կամ Զուտ ռիսկի հաշվարկը՝ վերագնանշելով Ռեպո գործարքը, որի դեպքում համարվում է, որ համաձայնեցված Վերագնանշման ամսաթվին.

Exposure by repricing the Repurchase Transaction, in which case it is deemed that on the agreed Repricing Date:

(i) վրա է հասնում այդ Ռեպո գործարքի ներքո Դադարեցման ամսաթիվը/Հետգնման ամսաթիվը, և

the Termination Date/Repurchase Date under that Repurchase Transaction occurs; and

(ii) կողմերը կնքում են Վերագնանշված գործարքը:

the parties enter into a Repriced Transaction.

3.6.2. Վերագնանշման ամսաթիվ

«**Վերագնանշման ամսաթիվ**»-ը նշանակում է Գնման ամսաթվին հաջորդող Աշխատանքային օրից սկսած (ներառյալ) մինչև Հետգնման ամսաթվին նախորդող Աշխատանքային օրն ընկած որևէ Աշխատանքային օր, որին, ըստ կողմերի համաձայնության, Ռեպո գործարքը վերագնանշվում է:

Repricing Date.

"Repricing Date" means any Business Day from (including) the Business Day following the Purchase Date until the Business Day preceding the Repurchase Date, on which, as agreed by the parties, the Repurchase Transaction shall be repriced.

3.6.3. Վերագնանշված գործարք

(i) «**Վերագնանշված գործարք**»-ը նշանակում է Ռեպո գործարք, որի դեպքում.

Repriced Transaction.

"Repriced Transaction" means a Repurchase Transaction in respect of which:

(ա) Փոխանցվող արժեթղթերը համարժեք են սկզբնական Ռեպո գործարքի (որի նկատմամբ կիրառվում է վերագնանշումը) ներքո Փոխանցվող արժեթղթերին,


(a) the Transferred Securities are Securities equivalent to the Transferred Securities under the initial Repurchase Transaction (in respect of which the repricing is applied);

(բ) Գնման ամսաթիվը Վերագնանշման ամսաթիվն է,

(b) the Purchase Date is the Repricing Date;

(գ) Գնման գինը այն գումարն է, որը Ռեպո գործարքի (որի նկատմամբ կիրառվում է վերագնանշումը) նկատմամբ կիրառելի Մարժայի դրույքաչափով բազմապատկվելու դեպքում հավասարվում է Վերագնանշման ամսաթվին Ռեպո գործարքի (որի նկատմամբ կիրառվում է վերագնանշումը) ներքո Փոխանցվող արժեթղթերի Շուկայական արժեքին, և

(c) the Purchase Price is the amount which, when multiplied by the Margin Ratio applicable to the Repurchase Transaction (to which the repricing is applied), equals the Market Value of the Transferred Securities under the Repurchase Transaction (to which the repricing is applied) on the Repricing Date; and



(դ) մյուս պայմանները նույնական են Ռեպո գործարքի (որի նկատմամբ կիրառվում է վերագնանշումը) պայմաններին:

(ii) Վերագնանշված գործարքի ներքո Փոխանցվող արժեթղթերի Փոխանցման և Գնման գնի վճարման կապակցությամբ կողմերի պարտավորությունները նվազեցվում են՝ հաշվանցվելով նրանց՝ Ռեպո գործարքի (որի նկատմամբ կիրառվում է վերագնանշումը) ներքո Համարժեք փոխանցվող արժեթղթերի Փոխանցման և Հետգնման գնի վճարման կապակցությամբ պարտավորությունների դիմաց: Այդպիսի հաշվանցի հետևանքով միայն զուտ գումարն է ենթակա վճարման: Այդ գումարը վճարվում է սահմանված ժամկետում, կամ, եթե ժամկետ սահմանված չէ, համապատասխան արժույթի վերջնահաշվարկի կամ առաքման համար գործարար շրջանառության սովորույթներով պահանջվող ժամկետում:

(d) the other terms are identical to those of the Repurchase Transaction (to which the repricing is applied).

(ii) The obligations of the parties in respect of the Transfer of the Transferred Securities and the payment of the Purchase Price under any Repriced Transaction shall be reduced by their being set off against their obligations in respect of Transfer of Equivalent Transferred Securities and payment of the Repurchase Price under the Repurchase Transaction (to which the repricing is applied). In the result of such set-off only the net amount shall be payable following such set off. Such amount will be paid within the time period specified or, if no time period is specified, within the time period customarily required for the settlement or delivery of the relevant currency.

3.7. Ճշգրտում

3.7.1. Ճշգրտման կիրառումը.

Ռեպո գործարքի դեպքում ցանկացած Աշխատանքային օր, որին Գումարը ստացող կողմն իրավասու է ուղղել Մարժայի պահանջ, կողմերը կարող են համաձայնել դրա փոխարեն վերացնել կամ նվազեցնել Գործարքի ռիսկի հաշվարկը կամ Զուտ ռիսկի հաշվարկը՝ ճշգրտելով Ռեպո գործարքը, ինչի դեպքում համարվում է, որ համաձայնեցված Ճշգրտման ամսաթվին.

(i) վրա է հասնում այդ Ռեպո գործարքի ներքո Հետգնման ամսաթիվը, և

(ii) կողմերը կնքում են Փոխարինող գործարք:

3.7.2. Ճշգրտման ամսաթիվ.

3.7. Adjustment.


3.7.1. Application of Adjustment.

In the case of a Repurchase Transaction, on any Business Day on which an In-the-Money Party is entitled to make a Margin demand, the parties may agree instead to eliminate or reduce the Transaction Exposure or Net Exposure by adjusting the Repurchase Transaction, in which case on the agreed Adjustment Date:

(i) the Repurchase Date under that Repurchase Transaction shall be deemed to occur; and

(ii) the parties shall be deemed to have entered into a Replacement Transaction.

3.7.2. Adjustment Date.



«**Ճշգրտման ամսաթիվ**»-ը նշանակում է Գնման ամսաթվին հաջորդող Աշխատանքային օրից սկսած (ներառյալ) մինչև (ներառյալ) Հետգնման ամսաթվին նախորդող Աշխատանքային օրն ընկած որևէ Աշխատանքային օր, որը, ըստ կողմերի համաձայնության, Փոխարինող գործարքի (այն Ռեպո գործարքի, որի նկատմամբ կիրառվում է ճշգրտումը) Գնման ամսաթիվն է, եթե այլ բան սահմանված չէ:

"Adjustment Date" means any Business Day from (including) the Business Day following the Purchase Date until (including) the Business Day preceding the Repurchase Date, which, as agreed by the parties, is the Purchase Date for a Replacement Transaction (in respect of a Repurchase Transaction to which the adjustment is applied), unless otherwise specified.

3.7.3. **Փոխարինող գործարք**

Replacement Transaction.

(i) «**Փոխարինող գործարք**»-ը նշանակում է Ռեպո գործարք, որի դեպքում.

"Replacement Transaction" means a Repurchase Transaction in respect of which:

(ա) Փոխանցվող արժեթղթերը կողմերի՝ Ճշգրտման ամսաթվին կամ մինչ այդ համաձայնեցրած Արժեթղթերն են (որոնց համընդհանուր Շուկայական արժեքը Ճշգրտման ամսաթվին էականորեն հավասար է Հետգնման գնին՝ բազմապատկած սկզբնական Ռեպո գործարքի նկատմամբ կիրառելի Մարժայի դրույքաչափով, կամ, եթե «Հեյրքաթ»-ը կիրառվում է, որոնց համընդհանուր Ճշգրտված շուկայական արժեքը Ճշգրտման ամսաթվին էականորեն հավասար է սկզբնական Ռեպո գործարքի նկատմամբ կիրառելի Գնման գնին),

(a) the Transferred Securities are the Securities agreed by the parties on or before the Adjustment Date (the aggregate Market Value of which at the Adjustment Date is substantially equal to the Repurchase Price multiplied by the Margin Ratio applicable to the original Repurchase Transaction or, if "Haircut" applies, being Securities the aggregate Adjusted Market Value of which as at the Adjustment Date is substantially equal to the Repurchase Price applicable to the original Repurchase Transaction);

(բ) Գնման ամսաթիվը Ճշգրտման ամսաթիվն է, և


(b) the Purchase Date is the Adjustment Date; and

(գ) մյուս պայմանները համաձայնեցվել են կողմերի միջև Ճշգրտման ամսաթվին կամ մինչ այդ:

(c) the remaining terms are those agreed by the parties on or before the Adjustment Date.

(ii) Վաճառողի՝ Փոխարինված գործարքի ներքո Հետգնման գինը վճարելու պարտավորությունները հաշվանցվում են Գնորդի՝ Փոխարինող գործարքի ներքո

The obligations of the Seller with respect to payment of the Repurchase Price under the Replaced Transaction shall be set off against the obligations of the Buyer with respect to



Գնման գինը վճարելու պարտավորությունների դիմաց: Փոխարինված գործարքի ներքո Համարժեք փոխանցվող արժեթղթերի Փոխանցումը և Փոխարինող գործարքի ներքո Փոխանցվող արժեթղթերի Փոխանցումը, այնքանով, որքանով չեն հաշվանցվել միմյանց դեմ, կատարվում են սահմանված ժամկետում, կամ, եթե ժամկետ սահմանված չէ, համապատասխան Արժեթղթերի վերջնահաշվարկի կամ առաքման համար գործարար շրջանառության սովորույթներով պահանջվող ժամկետում:

payment of the Purchase Price under the Replacement Transaction. Transfer of the Equivalent Transferred Securities under the Replaced Transaction and Transfer of Transferred Securities under the Replacement Transaction shall, to the extent not set off against each other, be made within the time period specified or, if no time period is specified, within the time period customarily required for the settlement or delivery of the relevant Securities.

3.7.4. **Փոխարինված գործարք**

«**Փոխարինված գործարք**»-ը նշանակում է Ռեպո գործարք, որի վերաբերյալ Ճշգրտման ամսաթվին կատարվում է ճշգրտում:

Replaced Transaction.

"Replaced Transaction" means a Repurchase Transaction to which an adjustment relates on an Adjustment Date.

4. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԱՄՍԱԹՎԻՆ/ՀԵՏԳՆՄԱՆ ԱՄՍԱԹՎԻՆ

4. TRANSFERS ON THE TERMINATION DATE/REPURCHASE DATE

4.1. Դադարեցման ամսաթվի/Հետգնման ամսաթվի Փոխանցումները

4.1. Termination Date/Repurchase Date Transfers.

4.1.1. **Ռեպո գործարքներ**

Ռեպո գործարքի ներքո Հենտգնման ամսաթվին.

4.1.1. **Repurchase Transactions.**

On the Repurchase Date in respect of a Repurchase Transaction:

(i) Գնորդը Վաճառողին Փոխանցում է.

(ա) Համարժեք փոխնցված արժեթղթերը և

(բ) Համարժեք մարժա՝ հավասար Գնորդի մարժայի գումարին՝ հանած այդ Ռեպո գործարքի ներքո Վաճառողի կողմից վճարման ենթակա, բայց չվճարված գումարները, և

(i) the Buyer shall Transfer to the Seller:

(a) Equivalent Transferred Securities; and


(b) Equivalent Margin in an amount equal to any Buyer Margin Amount, less any amounts due from the Seller in respect of that Repurchase Transaction but not paid; and

(ii) Վաճառողը.

(ա) Գնորդին վճարում է Հետգնման գինը և

(ii) the Seller shall:

(a) pay to the Buyer the Repurchase Price; and



(բ) Գնորդին Փոխանցում է Համարժեք մարժա՝ հավասար Վաճառողի մարժայի գումարին՝ հանած այդ Ռեպո գործարքի ներքո Գնորդի կողմից վճարման ենթակա, բայց չվճարված գումարները:

(b) Transfer to the Buyer Equivalent Margin in an amount equal to any Seller Margin Amount, less any amounts due from the Buyer in respect of that Repurchase Transaction but not paid.

4.1.2. **Փոխառության գործարքներ.** Փոխառության գործարքի ներքո Դադարեցման ամսաթվին.

Loan Transactions. On the Termination Date in respect of a Loan Transaction:

(i) Փոխառուն Փոխատուին Փոխանցում է Համարժեք փոխանցվող արժեթղթեր՝ հանած այդ Փոխառության գործարքի ներքո Փոխատուի կողմից վճարման ենթակա, բայց չվճարված գումարները, և

the Borrower shall Transfer Equivalent Transferred Securities to the Lender less any amounts due from the Lender in respect of that Loan Transaction but not paid; and

(ii) Փոխատուն Փոխառուին Փոխանցում է Համարժեք մարժա՝ հավասար Փոխատուի մարժայի գումարին՝ հանած այդ Փոխառության գործարքի ներքո Փոխառուի կողմից վճարման ենթակա, բայց չվճարված գումարները:

the Lender shall Transfer Equivalent Margin in an amount equal to the Lender Margin Amount less any amounts due from the Borrower in respect of that Loan Transaction but not paid.

4.2. **Դադարեցման ամսաթիվ կամ Հետգնման ամսաթիվ**

Termination Date or Repurchase Date.

4.2.1. **Դադարեցման ամսաթիվ**

«**Դադարեցման ամսաթիվ**»-ը նշանակում է Փոխառության գործարքի կապակցությամբ որպես «Դադարեցման ամսաթիվ» սահմանված ամսաթիվը, կամ, եթե սահմանված է «Ըստ պահանջի դադարեցվող», որևէ կողմի՝ հեռախոսով կամ այլ կերպ մյուս կողմին ծանուցված ամսաթիվը՝ պայմանով, որ եթե այլ բան համաձայնեցված չէ, այդ ամսաթիվը չպետք է ավելի շուտ լինի, քան Սովորութային դադարեցման ամսաթիվը:

Termination Date


"Termination Date" means the date specified as the "Termination Date" in respect of a Loan Transaction, or if "Terminable On Demand" is specified, the date notified by either party to the other party, by telephone or otherwise, provided that, unless otherwise agreed, that date shall be no earlier than the Customary Termination Date.

4.2.2. **Հետգնման ամսաթիվ**

«**Հետգնման ամսաթիվ**»-ը նշանակում է Ռեպո գործարքի կապակցությամբ որպես «Հետգնման ամսաթիվ» սահմանված ամսաթիվը, կամ, եթե սահմանված է «Ըստ պահանջի դադարեցվող», որևէ կողմի՝ հեռախոսով կամ այլ կերպ մյուս կողմին ծանուցված

Repurchase Date

"Repurchase Date" means the date specified as the "Repurchase Date" in respect of a Repurchase Transaction, or if "Terminable On Demand" is specified, the date notified by either party to the other party, by telephone or otherwise, provided that, unless otherwise agreed, that date shall be no earlier than the Customary Termination Date.



ամսաթիվը՝ պայմանով, որ, եթե այլ բան համաձայնեցված չէ, այդ ամսաթիվը չպետք է ավելի շուտ լինի, քան Սովորութային դադարեցման ամսաթիվը:

4.2.3 **Դադարեցման ամսաթիվ/Հետգնման ամսաթիվ**

«**Դադարեցման ամսաթիվ/Հետգնման ամսաթիվ**»-ը նշանակում է Դադարեցման ամսաթիվը կամ Հետգնման ամսաթիվը:

Termination Date/Repurchase Date.

"Termination Date/Repurchase Date" means either the Termination Date or the Repurchase Date.

4.2.4 **Սովորութային դադարեցման ամսաթիվ**

«**Սովորութային դադարեցման ամսաթիվ**»-ը նշանակում է ԱՖԳ գործարքի դադարեցման հետևանքով Փոպանցվող Համարժեք փոխանցվող արժեթղթերի և/կամ Համարժեք արժեթղթերի մարժայի վերջնահաշվարկի կամ առաքման համար գործարար շրջանառության սովորույթներով պահանջվող նվազագույն ժամկետին անմիջականորեն հաջորդող Աշխատանքային օրը:

Customary Termination Date.

"Customary Termination Date" means the Business Day immediately following the minimum period customarily required for the settlement or delivery of any Equivalent Transferred Securities and/or Equivalent Securities Margin to be Transferred on the termination of the SFT Transaction.

5. ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

5. EARLY TERMINATION

5.1. **Դադարեցման ամսաթվին /Հետգնման ամսաթվին Փոխանցման ձախողումը.**

Failure to Transfer on the Termination Date/Repurchase Date.

5.1.1. **Գլխավոր համաձայնագրի 6.1.1. բաժնի չկիրառումը.**


Եթե «Դադարեցման ամսաթվին /Հետգնման ամսաթվին արժեթղթերի փոխանցման ձախողում»-ը կիրառելի է, ապա Գլխավոր համաձայնագրի 6.1.1. բաժինը չի կիրառվի Դադարեցման ամսաթվին /Հետգնման ամսաթվին Արժեթղթերի փոխանցման ձախողման նկատմամբ:

Disapplication of Section 6.1.1. of the Master Agreement.


If "Termination Date/Repurchase Date Securities Transfer Failure" applies, Section 6.1.1. of the Master Agreement will not apply in respect of a Termination Date/Repurchase Date Securities Transfer Failure.

5.1.2. **Դադարեցման ամսաթվին /Հետգնման ամսաթվին արժեթղթերի փոխանցման ձախողման վրա հասնելը.**


Occurrence of a Termination Date/Repurchase Date Securities Transfer Failure.



	Դադարեցման ամսաթվին /Հետգնման ամսաթվին արժեթղթերի փոխանցման ձախողման վրա հասնելու դեպքում՝	On the occurrence of a Termination Date/Repurchase Date Securities Transfer Failure:
(i)	եթե Ռեպո գործարքի շրջանակում Վաճառողը վճարել է Հետգնման գինը, Վաճառողը կարող է պահանջել Գնորդից վերադարձնել Հետգնման գինը,	if the Seller under a Repurchase Transaction has paid the Repurchase Price, the Seller may require the Buyer to repay the Repurchase Price;
(ii)	եթե Վաճառողը տվյալ ԱՖԳ գործարքի շրջանակում ունի Գնորդի հետ կապված Գործարքի ռիսկի հաշվարկ, Վաճառողը կարող է գրավոր ծանուցմամբ Գնորդից պահանջել ժամանակ առ ժամանակ վճարել Դրամական միջոցների մարժա՝ համարժեք կամ ավելի մեծ այդ Գործարքի ռիսկի հաշվարկից, և	if the Seller has a Transaction Exposure to the Buyer in respect of the relevant SFT Transaction, the Seller may on notice to the Buyer require the Buyer from time to time to pay Cash Margin at least equal to such Transaction Exposure; and
(iii)	նման դեպքը (Փոխառության գործարքի կամ Ռեպո գործարքի շրջանակում) համարվում է Դադարեցման լրացուցիչ հիմք (ինչպես սահմանված է Գլխավոր համաձայնագրում), որի շրջանակում Ձախողած կողմը կհամարվի միակ Տուժող կողմը, իսկ տվյալ ԱՖԳ գործարքը՝ միակ Տուժող գործարքը (ինչպես սահմանված է Գլխավոր համաձայնագրում):	such occurrence (with respect to a Loan Transaction or a Repurchase Transaction) shall be an Additional Termination Event (as such term is defined in the Master Agreement) in respect of which the Failing Party will be the sole Affected Party (as such term is defined in the Master Agreement) and the relevant SFT Transaction shall be the sole Affected Transaction (as such term is defined in the Master Agreement).
5.1.3.	**Դադարեցման ամսաթվին/Հետգնման ամսաթվին արժեթղթերի փոխանցման ձախողումը.**	**Termination Date/Repurchase Date Securities Transfer Failure.**
	«Դադարեցման ամսաթվին /Հետգնման ամսաթվին Արժեթղթերի փոխանցման ձախողում»-ը նշանակում է՝	**"Termination Date/Repurchase Date Securities Transfer Failure"** means:
(i)	Փոխառուի/Գնորդի կողմից Փոխատուին/Վաճառողին Դադարեցման ամսաթվին /Հետգնման ամսաթվին Համարժեք Փոխանցվող արժեթղթերի փոխանցման ձախողումը, կամ	a failure by the Borrower/Buyer to Transfer Equivalent Transferred Securities to the Lender/Seller on the Termination Date/Repurchase Date; or
(ii)	կողմերից որևէ մեկի կողմից Դադարեցման ամսաթվին /Հետգնման ամսաթվին Համարժեք արժեթղթերի մարժայի փոխանցման ձախողումը:	a failure by either party to Transfer Equivalent Securities Margin on the Termination Date/Repurchase Date.
5.1.4.	**Ձախողած կողմը.**	**Falling Party.**



	«Ձախողած կողմ»-ը նշանակում է (Դադարեցման ամսաթվին /Հետգնման ամսաթվին արժեթղթերի փոխանցման ձախողման համատեքստում) այն կողմը, որը չի իրականացրել Արժեթղթերի Փոխանցումը:	**"Failing Party"** means, in respect of a Termination Date/Repurchase Date Securities Transfer Failure, the party that has failed to Transfer Securities.
5.1.5.	**Ձախողած կողմ.** **«Ձախողած կողմ»-ը** նշանակում է (Դադարեցման ամսաթվին /Հետգնման ամսաթվին արժեթղթերի փոխանցման ձախողման համատեքստում) այն կողմը, որը չի հանդիսանում Ձախողած կողմ:	**Non-failing Party.** **"Non-failing Party"** means, in respect of a Termination Date/Repurchase Date Securities Transfer Failure, the party that is not the Failing Party.
5.2.	**ԱՖԳ Փակման գումարի որոշումը.**	**Determination of SFT Close-out Amount.**
5.2.1.	**ԱՖԳ Փակման գումար.** **«ԱՖԳ Փակման գումար»** նշանակում է, յուրաքանչյուր Դադարեցված ԱՖԳ գործարքի կամ Դադարեցված ԱՖԳ գործարքների խմբի կապակցությամբ, գումար, որը հավասար է հետևյալի հանրագումարին.	**SFT Close-out Amount.** **"SFT Close-out Amount"** means, in respect of each Terminated SFT Transaction or group of Terminated SFT Transactions, an amount equal to the sum of.
(i)	այն Համարժեք Փոխանցվող արժեթղթերի և Համարժեք Արժեթղթերի մարժայի Դեֆոլտ շուկայական արժեքները, որոնք ենթակա են փոխանցման որևէ կողմի կողմից՝ որոշված Համապատասխան սահմանման ամսաթվի դրությամբ,	the Default Market Values of any Equivalent Transferred Securities and Equivalent Securities Margin to be Transferred by either party, determined as of the Relevant Determination Date;
(ii)	Համապատասխան սահմանման ամսաթվի դրությամբ կողմերից որևիցե մեկի կողմից վճարման ենթակա Համարժեք դրամական մարժայի գումարի (ներառյալ այն տոկոսները, որոնք հաշվարկվել են 8.2 (Դրամական մարժայի տոկոսների կիրառում) բաժնի համաձայն),	the amount of any Equivalent Cash Margin payable by either party as of the Relevant Determination Date (including interest accrued in accordance with Section 8.2 (Application of Cash Margin Interest));
(iii)	միայն Ռեպո գործարքի դեպքում՝ Համապատասխան սահմանման ամսաթվի դրությամբ կողմերից որևիցե մեկի կողմից վճարման ենթակա Հետգնման գնի, և	in respect of a Repurchase Transaction only, the Repurchase Price payable by either party as of the Relevant Determination Date; and
(iv)	առանց վերոնշյալ (i)-(iii) ենթակետերում հաշվարկված գումարների կրկնության՝	without duplication of amounts determined under paragraphs (i) to (iii) above, any loss



ԱՖԳ Սահմանող կողմի կրած ցանկացած վնաս, կամ ստացած ցանկացած շահույթ՝ Դադարեցված ԱՖԳ գործարքի կամ Դադարեցված ԱՖԳ գործարքների խմբի փոխարեն նոր գործարքներ կնքելու կամ դրանց հետ կապված որևէ հեջավորման գործարք վերակնքելու, վերացնելու կամ լուծելու արդյունքում:

incurred, or gain realized by the SFT Determining Party in entering into replacement transactions or terminating, liquidating or re-establishing any hedge related to a Terminated SFT Transaction or group of Terminated SFT Transactions;

յուրաքանչյուր դեպքում՝ բացառությամբ որևէ Չվճարված գումարների: Եթե Դադարեցված ԱՖԳ գործարքը կամ Դադարեցված ԱՖԳ գործարքների խումբը հանդիսանում է ավելի լայն Մարժայի փաթեթի մաս, որի նկատմամբ կիրառվում են «Մարժայի պահպանության» և «Համընդհանուր հիմք» սկզբունքները, ապա ԱՖԳ Սահմանող կողմը պետք է հաշվարկի փոխանցման ենթակա Համարժեք արժեթղթերի մարժան և փոխանցման ենթակա կամ վճարվելիք Համարժեք դրամական մարժան այնպես, ինչպես եթե յուրաքանչյուր Դադարեցված ԱՖԳ գործարք հանդիսանար ԱՖԳ գործարք, որի նկատմամբ կիրառվում են «Մարժայի պահպանության» և «Անհատական գործարքի հիմքը» սկզբունքները:

in each case, excluding any Unpaid Amounts. If a Terminated SFT Transaction or group of Terminated SFT Transactions is part of a broader Margin Set to which "Margin Maintenance" and "Aggregate Basis" apply, the Equivalent Margin Securities and Equivalent Cash Margin to be Transferred or paid shall be calculated by the SFT Determining Party as if each Terminated SFT Transaction had been an SFT Transaction to which "Margin Maintenance" and "Individual Transaction Basis" applied.

ԱՖԳ Սահմանող կողմին վերոնշյալ (i)-(iii) ենթաբաժիններով վճարման ենթակա ցանկացած գումար պետք է արտահայտված լինի դրական թվով, իսկ ԱՖԳ Սահմանող կողմի կողմից վճարվելիք ցանկացած գումար՝ բացասական թվով: Նույն կերպ, ԱՖԳ Սահմանող կողմի (4) ենթակետով կրած որևէ վնաս պետք է արտահայտվի դրական թվով, իսկ ստացած որևէ շահույթ՝ բացասական թվով:


An amount owed to the SFT Determining Party under paragraphs (i) to (iii) above shall be expressed as a positive number and an amount owed by the SFT Determining Party shall be expressed as a negative number. Any loss incurred by the SFT Determining Party under paragraph (4) above shall be expressed as a positive number and any gain realized by the SFT Determining Party shall be expressed as a negative number.

5.3. Համապատասխան սահմանման ամսաթվի որոշումը.


Determination of Relevant Determination Date.

5.3.1. Համապատասխան սահմանման ամսաթիվ.

Relevant Determination Date.



	«Համապատասխան սահմանման ամսաթիվ»-ը նշանակում է՝	**"Relevant Determination Date"** means:
(i)	3.5.1 (Դրամական մարժայի այլընտրանք) բաժնի (ii) ենթակետի կիրառման դեպքում այն օրը, երբ մյուս կողմի կողմից տրված ծանուցումը, որին հղում է կատարվում այդ ենթակետում, մտնում է ուժի մեջ, և	if paragraph (ii) of Section 3.5.1 (Cash Margin Fallback) applies, the date on which the notice given by the other party referred to in that paragraph is effective; and
(ii)	բոլոր այլ դեպքերում՝ Գլխավոր համաձայնագրում սահմանված՝ Վաղաժամկետ դադարեցման ամսաթիվը:	in all other cases, the Early Termination Date (as such term is defined in the Master Agreement).
5.4.	**ԱՖԳ Սահմանող կողմի որոշումը.**	**Designation of SFT Determining Party.**
5.4.1.	**ԱՖԳ Սահմանող կողմ.**	**SFT Determining Party.**
	«ԱՖԳ Սահմանող կողմ» նշանակում է՝	**"SFT Determining Party"** means:
(i)	Դադարեցման ամսաթվին/Հետգնման ամսաթվին արժեթղթերի փոխանցման ձախողմանը հաջորդող ԱՖԳ Փակման գումարի որոշման կապակցությամբ՝ Չձախողած կողմը,	in respect of the determination of an SFT Close-out Amount following the occurrence of a Termination Date/Repurchase Date Securities Transfer Failure, the Non-failing Party;
(ii)	3.5.1 (Դրամական մարժայի այլընտրանք) բաժնի (ii) ենթաբաժնի կիրառման դեպքում՝ այդ ենթաբաժնում նշված Ստացողը, և	if paragraph (ii) of Section 3.5.1 (Cash Margin Fallback) applies, the Transferee, as referred to in that paragraph, and
(iii)	բոլոր այլ դեպքերում՝ համապատասխան գումարը սահմանող կողմը:	in all other cases, the party determining the relevant amount.
5.5.	**Դեֆոլտ շուկայական արժեքի որոշումը.**	**Determination of Default Market Value.**
5.5.1.	**Դեֆոլտ շուկայական արժեք.**	**Default Market Value.**
	«Դեֆոլտ շուկայական արժեք» նշանակում է, ցանկացած օրվա դրությամբ, այն գումարը, որը որոշվում է ստորև նշված դրույթներին համաձայն.	**"Default Market Value"** means, as of any date, an amount determined in accordance with the provisions set out below:
(i)	Եթե ԱՖԳ Սահմանող կողմը, Համապատասխան սահմանման ամսաթվին կամ դրանից հետո հնարավորինս շուտ, Համապատասխան շուկայում (կամ կոմերցիոն առումով ողջամիտ այլ կերպ) գնել է (Ստացման ենթակա արժեթղթերի դեպքում) կամ վաճառել է (Փոխանցման ենթակա արժեթղթերի դեպքում) այն	If the SFF Determining Party has, on or as soon as reasonably practicable following the Relevant Determination Date, purchased, in the case of Receivable Securities, or sold, in the case of Deliverable Securities, securities which form part of the same issue and are of an identical type and description as the relevant Equivalent Transferred Securities or Equivalent Securities Margin in an Appropriate Market (or otherwise in a commercially reasonable



արժեթղթերը, որոնք կազմում են միևնույն թողարկման մաս և ունեն նույն տեսակը և նկարագիրը, ինչ համապատասխան Համարժեք Փոխանցվող արժեթղթերը կամ Համարժեք արժեթղթերի մարժան, անկախ նրանից՝ արդյոք ավարտվել է այդ առքերի կամ վաճառքների վերջնահաշվարկը, ԱՖԳ Սահմանող կողմը կարող է դրանք համարել Դեֆոլտ շուկայական արժեք՝

manner), and regardless as to whether or not such sales or purchases have settled, the SFT Determining Party may elect to treat as the Default Market Value:

(ա) Փոխանցման ենթակա արժեթղթերի դեպքում՝ այդ վաճառքից ստացված զուտ եկամուտը՝ Գործարքի հետ կապված բոլոր ծախսերը հանելուց հետո,

(a) in the case of Deliverable Securities, the net proceeds of such sale after deducting all Transaction Costs; or

(բ) Ստացման ենթակա արժեթղթերի դեպքում՝ այդ գնման ընդհանուր ծախսը, ներառյալ Գործարքի հետ կապված բոլոր ծախսերը:

(b) in the case of Receivable Securities, the aggregate cost of such purchase, including all Transaction Costs.

(ii) Այնուամենայնիվ, եթե վաճառված կամ գնված արժեթղթերը, ինչպես կիրառելի է, նույնական չեն Համարժեք Փոխանցվող արժեթղթերի կամ Համարժեք արժեթղթերի մարժայի արժեքին, ապա ԱՖԳ Սահմանող կողմը կարող է, գործելով բարեխիղճ, անել հետևյալը՝

(ii) However, if the securities sold or purchased, as applicable, are not identical in amount to the Equivalent Transferred Securities or Equivalent Securities Margin, the SFT Determining Party may, acting in good faith, either:

(ա) Ճշգրտված զուտ գումարը համարել Դեֆոլտ շուկայական արժեք, կամ


(a) elect to treat the Adjusted Net Amount as the Default Market Value; or

(բ) Իրացված գումարը համարել Համապատասխան արժեթղթերի չափի Դոֆելտ շուկայական գին, որի դեպքում Համարժեք Փոխանցվող արժեթղթերի կամ Համարժեք արժեթղթերի մարժայի մնացորդի Դեֆոլտ շուկայական գինը պետք է որոշվի առանձին՝ ըստ ստորև (iii) կամ (iv) կետերի:

(b) elect to treat the Realized Amount as the Default Market Value of the Relevant Securities Portion, in which case, the Default Market Value of the balance of the Equivalent Transferred Securities or Equivalent Securities Margin shall be determined separately in accordance with paragraph (iii) or (iv) below.

(iii) Եթե ԱՖԳ Սահմանող կողմը, Ստացման ենթակա արժեթղթերի դեպքում, ստացել

(iii) If the SFT Determining Party has received, in the case of Receivable Securities, offer



է վաճառքի գնային առաջարկներ կամ, Փոխանցման ենթակա արժեթղթերի դեպքում՝ առքի գնային առաջարկներ (յուրաքանչյուր դեպքում՝ հստակ կամ ցուցանիշային), որոնք վերաբերում են առևտրային առումով ողջամիտ չափով (ինչպես որոշում է ԱՖԳ Սահմանող կողմը) երկու կամ ավելի երրորդ անձ դիլերներից համապատասխան նկարագիր ունեցող արժեթղթերին՝ օգտագործելով նմանատիպ արժեթղթերի համար ընդունելի գնային մեթոդաբանությունը (ինչպես որոշում է ԱՖԳ Սահմանող կողմը), ապա ԱՖԳ Սահմանող կողմը կարող է որպես համապատասխան Համարժեք Փոխանցվող արժեթղթերի կամ Համարժեք արժեթղթերի մարժայի Դեֆոլտ շուկայական արժեք ընդունել.

quotations or, in the case of Deliverable Securities, bid quotations (in each case, whether firm or indicative) in respect of securities of the relevant description from two or more third-party dealers in the Appropriate Market in a commercially reasonable size (as determined by the SFT Determining Party) and using pricing methodology which is customary for the relevant type of security (as determined by the SFT Determining Party), the SFT Determining Party may elect to treat as the Default Market Value of the relevant Equivalent Transferred Securities or Equivalent Securities Margin:

(ա) որպես այդպիսին տրամադրված արժեքների միջին թվաբանականը՝ Ստացման ենթակա արժեթղթերի դեպքում՝ համապատասխան դիլերի կողմից նման արժեթղթերի վաճառքի, կամ Փոխանցման ենթակա արժեթղթերի դեպքում՝ համապատասխան դիլերի կողմից նման արժեթղթերի գնման, հաշվի առնելով, որ նշված գինը կարող է առևտրային տեսանկյունից ողջամիտ ձևով ճշգրտվել ԱՖԳ Սահմանող կողմի կողմից՝ այն չվճարված, սակայն կուտակված եկամուտները ներառելու նպատակով, որոնք արտացոլված չեն տվյալ արժեթղթերի համար տրամադրված գնի մեջ, և


(a) the Arithmetic Mean of the prices so quoted for, in the case of Receivable Securities, the sale by the relevant dealer of such securities or, in the case of Deliverable Securities, the purchase by the relevant dealer of such securities, provided that the price quoted may be adjusted in a commercially reasonable manner by the SFT Determining Party to reflect accrued but unpaid distributions not reflected in the price quoted in respect of those Securities; and

(բ) Փոխանցման ենթակա արժեթղթերի դեպքում այդ արժեքներից հանելով, իսկ Ստացման ենթակա արժեթղթերի դեպքում՝ ավելացնելով այն Գործարքի ծախսերը, որոնք տվյալ կողմը կկրի գործարքի կապակցությամբ:

(b) after deducting, in the case of Deliverable Securities or adding in the case of Receivable Securities, the Transaction Costs that would be incurred in connection with such a transaction.

(iv) Եթե, գործելով բարեխիղճ՝

If, acting in good faith, either:



(ա) ԱՖԳ Սահմանող կողմը փորձել է, բայց չի կարողացել, վաճառել կամ գնել արժեթղթեր ըստ վերոնշյալ (i) ենթակետի կամ ստանալ գնանշումներ ըստ վերոնշյալ (iii) ենթակետի (կամ երկուսն էլ), կամ

(բ) ԱՖԳ Սահմանող կողմը որոշել է, որ տնտեսապես նպատակահարմար չէ տրամադրված գնանշումներով վաճառել կամ գնել արժեթղթեր կամ ստանալ նման գնանշումներ, կամ որ տնտեսապես նպատակահարմար չէ օգտագործել գնանշումները, որոնք նա ստացել է վերոնշյալ (iii) ենթակետի համաձայն,

ԱՖԳ Սահմանող կողմը կարող է, Համապատասխան սահմանման ամսաթվի դրությամբ, որոշել համապատասխան Համարժեք Փոխանցվող արժեթղթերի կամ Համարժեք արժեթղթերի մարժայի Զուտ արժեքը և այդ Զուտ արժեքը համարել տվյալ համապատասխան Համարժեք Փոխանցվող արժեթղթերի կամ Համարժեք արժեթղթերի մարժայի Դեֆոլտ շուկայական արժեքը:

(a) the SFT Determining Party has attempted but been unable to sell or purchase Securities in accordance with paragraph (i) above or to obtain quotations in accordance with paragraph (iii) above (or both); or

(b) the SFT Determining Party has determined that it would not be commercially reasonable to sell or purchase Securities at the prices bid or offered or to obtain such quotations, or that it would not be commercially reasonable to use any quotations which it has obtained under paragraph (iii) above,


the SFT Determining Party may determine as of the Relevant Determination Date the Net Value of the relevant Equivalent Transferred Securities or Equivalent Securities Margin and treat such Net Value as the Default Market Value of the relevant Equivalent Transferred Securities or Equivalent Securities Margin.

(v) Յուրաքանչյուր կողմ գիտակցում և համաձայնում է, որ յուրաքանչյուր ԱՖԳ գործարքի շրջանակներում Արժեթղթերը կարող են արագորեն արժեզրկվել և հանդիսանում են Համապատասխան շուկայում սովորաբար վաճառվող տեսակի Արժեթղթեր, և, համապատասխանաբար, ԱՖԳ Սահմանող կողմը պարտավոր չէ նախապես ծանուցել մյուս կողմին Արժեթղթերի որևէ վաճառքի մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ նման ծանուցումը պահանջվում է կիրառելի օրենսդրությամբ և մյուս կողմը չի կարող դրանից հրաժարվել:

Each party acknowledges and agrees that the Securities in respect of each SFT Transaction may decline speedily in value and are of a type customarily sold in an Appropriate Market, and, accordingly, the SFT Determining Party is not required to provide prior notice of any sale of Securities to the other party, except any notice that is required under applicable law and cannot be waived.

5.6. Զուտ արժեք.

Net Value.



«Զուտ արժեք»-ը նշանակում է (ցանկացած պահի դրությամբ) Փոխանցման ենթակա արժեթղթերի կամ Ստացման ենթակա արժեթղթերի կապակցությամբ այն գումարը, որը, ԱՖԳ Սահմանող կողմի ողջամիտ կարծիքով, ներկայացնում է դրանց ողջամիտ շուկայական արժեքը՝ հաշվի առնելով համապատասխան գնանշման աղբյուրներն ու մեթոդները (որը կարող է ներառել, առանց սահմանափակման, այն գները, որոնք առկա են նմանատիպ մարման ժամկետով, պայմաններով ու վարկունակության հատկանիշներով արժեթղթերի համար), որոնք ԱՖԳ Սահմանող կողմը հարմար կգտնի, բացառությամբ, Փոխանցման ենթակա արժեթղթերի դեպքում՝ Գործարքի հետ կապված բոլոր ծախսերի, որոնք պետք է կրվեն արժեթղթերի առուվաճառքի համար:

Խնդրում ենք սույն Հաստատման՝ կից օրինակի ստորագրմամբ և մեզ վերադարձմամբ կամ էական պայմաններով սույն նամակին նույնական՝ Գործարքի էական պայմանները և այդ պայմաններին Ձեր համաձայնությունը սահմանող նամակի ուղարկմամբ հաստատել, որ վերոնշյալը ճշգրտորեն արտացոլում է մեր համաձայնության պայմանները:

Please confirm that the foregoing correctly sets forth the terms of our agreement by executing the copy of this Confirmation enclosed and returning it to us or by sending to us a letter substantially similar to this letter, which letter sets forth the material terms of the Transaction and indicates your agreement to those terms.

Հարգանքով,

Yours faithfully,

[ԿՈՂՄ Ա]

[PARTY A]

By: _____
Անուն/Name:
Պաշտոն/Title:

Հաստատված է վերոնշյալ ամսաթվի դրությամբ.

Confirmed as of the date above written:

[ԿՈՂՄ Բ]

[PARTY B]

By: _____
Անուն/Name:
Պաշտոն/Title:

Սույն փաստաթուղթը կազմվել է Ճապոնիայի ֆինանսական աջակցությամբ
This document has been produced with the financial assistance of Japan

ANDERSEN

Հասցեագրված է ՀՀ կենտրոնական բանկին, ՀՀ ֆինանսական շուկայի մասնակիցներին

3 հուլիսի, 2025թ.

Addressed to the Central Bank of Armenia, the Armenian financial market participants

3 July, 2025


ԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ «ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ՓԱԿՄԱՆ ԶՈՒՏԱՑՄԱՆ ԿԻՐԱՌԿՈՒՄԸ ՀՀ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԵՐՔՈ

LEGAL OPINION ON ENFORCEABILITY UNDER ARMENIAN LAW OF CLOSE-OUT NETTING IN ARMENIAN LAW GOVERNED DERIVATIVE FINANCIAL INSTRUMENTS MASTER AGREEMENT

Սույն եզրակացությունն անդրադառնում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ Հայաստանի օրենսդրությամբ կարգավորվող «Ածանցյալ ֆինանսական գործարքների կնքման գլխավոր համաձայնագրի» («Գլխավոր համաձայնագիր») զուտացման (դադարեցման զուտացման, երկկողմ փակման զուտացաման և բազմակողմ զուտացման) դրույթների՝ հայկական իրավունքի ներքո կիրարկման հնարավորությանը:

This opinion addresses the enforceability under Armenian law of the termination, bilateral close-out netting and multibranch netting provisions of privately negotiated derivatives transactions entered into under an agreement between two parties based on the Armenian law governed Derivative Financial Instruments Master Agreement (“Master Agreement”) published by the Central Bank of Armenia.

Garegin Hovsepyan Street 180, 0011, Yerevan, Armenia
t +374 12 810 180
am.Andersen.com
email info@am.Andersen.com



1. ՀԻՄՔ, ՇՐՋԱՆԱԿ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

BASIS, SCOPE, GENERAL INFORMATION, DEFINITIONS AND INTERPRETATION

1.1. Սույն եզրակացությունը դիտարկում է Գլխավոր համաձայնագրի 6.1. և 7-րդ բաժինները և դրանց հետ կապված՝ Նախաբանի և 2-րդ բաժնի հասկացությունները և չի տարածվում դրա այլ դրույթների վրա:

This opinion is focused on the provisions of Section 6.1., Section 7, and related definitions in the Preamble and Section 2 of the Master Agreement and does not extend to other provisions thereof.

1.2. Սույն եզրակացությունն անդրադառնում է բացառապես հետևյալ անձանց՝ որպես հնարավոր կոնտրագենտների՝


This opinion addresses exclusively the following entities as possible counterparts:

(i) «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի, Քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերություններ մասին» օրենքի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի (ըստ կիրառելիության) ներքո բաց կամ փակ բաժնետիրական ընկերության, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ կոոպերատիվի կազակերպական-իրավական ձևով ստեղծված և կարգավորվող բանկեր: Մասնաճյուղերի հիշատակման դեպքում սույն եզրակացությունը կիրառվում է նաև ՀՀ բանկերի՝ այլ պետություններում ստեղծված մասնաճյուղերի և այլ պետությունների բանկերի՝ ՀՀ-ում ստեղծված մասնաճյուղերի նկատմամբ,

banks incorporated in the form of an open or closed joint stock company, a limited liability company, or a cooperative under the Banks and Banking Law, Civil Code, the Joint Stock Companies Law, Limited Liability Companies Law (as applicable) and regulated under the Banks and Banking Law (defined below). Where we make specific reference to branches, this opinion also addresses branches of Armenian banks located in other countries and Armenian branches of foreign banks;

(ii) «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի, Քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերություններ մասին» օրենքի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի (ըստ կիրառելիության) ներքո բաց կամ փակ բաժնետիրական ընկերության, սահմանափակ պատասխանատվությամբ

credit organizations incorporated in the form of an open or closed joint stock company, a limited liability company or a cooperative under the Credit Organizations Law, the Civil Code, the Joint Stock Companies Law, or Limited Liability Companies Law (as applicable) and regulated under the Credit Organizations Law; and



ընկերության կամ կոոպերատիվի կազակերպական-իրավական ձևով ստեղծված և կարգավորվող վարկային կազմակերպություններ, և

(iii) «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի, Քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի (ըստ կիրառելիության) ներքո բաց կամ փակ բաժնետիրական ընկերության, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազակերպական-իրավական ձևով ստեղծված և կարգավորվող ներդրումային ընկերություններ:


investment companies incorporated in the form of an open or closed joint stock company or a limited liability company under the Securities Market Law (definition below), Civil Code, and the Joint Stock Companies Law or the Limited Liability Companies Law (as applicable) and regulated under the Securities Market Law.

1.3. Սույն եզրակացությունը հիմնված է բացառապես դրա տրամադրման ամսաթվի դրությամբ գործող և ՀՀ օրենսդրության հանրային աղբյուրներում հրապարակված և հասանելի՝ ՀՀ օրենսդրության վրա: Մենք չենք դիտարկել որևէ այլ իրավունքի ազդեցություն նույնիսկ այն պարագաներում, երբ իրավունքների բախումը կարգավորող՝ ՀՀ օրենսդրության նորմերի համաձայն կիրառելի է որևէ օտարերկրյա իրավունք:

This opinion is based solely on laws of the Republic of Armenia in force as of the date of this opinion and published and contained in publicly available sources of Armenian legislation. We do not consider the impact of any laws other than Armenian laws, even in a situation where, as a matter of Armenian conflict of laws rules, foreign law would apply.

1.4. Մենք չենք ստանձնում օրենսդրության, փաստերի կամ հանգամանքների փոփոխության հետևանքով սույն եզրակացությունը թարմացնելու պարտավորություն, եթե չստանանք թարմացման առանձին հանձնարարություն: Այնուամենայնիվ, սույն եզրակացության տրամադրման ամսաթվի դրությամբ մեզ հայտնի չեն օրենսդրության որևէ սպասվող փոփոխություններ, որոնք կարող են էական և բացասական ազդեցություն ունենալ սույն եզրակացությամբ արտահայտված եզրահանգումների վրա:

We assume no obligation to update the opinions expressed herein if laws, facts or circumstances change after the date hereof, unless separately instructed to provide an update. However, as of the date of this opinion, we are not aware of any pending developments which would have a material and adverse impact on the conclusions herein.



1.5. Քանի որ Գլխավոր համաձայնագրի դադարեցման, երկկողմ փակման և բազմակողմ զուտացման դրույթների կիրարկման հնարավորության վերաբերյալ դատական պրակտիկա առկա չէ, «կարծում ենք» և այլ նմանատիպ արտահայտությունները նշանակում են, որ մեր եզրահանգումները հիմնված են գործող ՀՀ օրենսդրության մեր վերլուծության վրա: Այդպիսի վերլուծության համար օգտագործել են մեր մասնագիտական փորձը և սույն եզրակացության ամսաթվի դրությամբ հասանելի իրավական աղբյուրները:

For the purposes of this opinion and because no guiding case law has been generated on the issues of enforceability of the termination, bilateral close-out netting and multibranch netting provisions of the Master Agreement, any reference to "belief" or words of similar import means that our assessment is based upon our own analysis of Armenian law presently in effect, using our professional experience and the relevant legal sources available as of the date of this opinion.

1.6. Սույն եզրակացության մեջ «կիրարկման ենթակա» և այլ նմանատիպ արտահայտությունները օգտագործվում են՝ արտահայտելու կողմի կարողությունը՝ իր պայմանագրային իրավունքներն իրականացնել պայմանագրային դրույթներին համապատասխան՝ այնպես, ինչպես, մեր կարծիքով, համահունչ է սույն եզրակացության տրամադրման ամսաթվի դրությամբ գործող ՀՀ օրենսդրության հետ: Այդպիսի կարծիքները չպետք է մեկնաբանվեն որպես մեր հավաստիացումներ առ այն, որ ՀՀ դատարանները կթույլատրեն որևէ համաձայնության/դրույթի հարկադիր կատարումը:

For the purposes of this opinion, references to the word "enforceable" and similar terms are used to refer to the ability of a party to exercise its contractual rights in accordance with their terms in a manner which, according to our belief, is consistent with the Armenian laws in force as of the date of this opinion. Any such reference shall not be deemed an assurance from our side that the Armenian courts will enforce a specific arrangement/provision.

1.7. Մեծատառերով սկսվող և սույն եզրակացությամբ չսահմանված հասկացություններն ունեն Գլխավոր համաձայնագրով դրանց տրված նշանակությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ համատեքստից այլ նշանակություն է բխում: Սույն եզրակացության մեջ.


Capitalized terms used and not defined herein shall have the meanings ascribed to them in the Master Agreement, unless the context requires otherwise. In addition, in this opinion letter:

(i) «Քաղաքացիական օրենսգիրք» նշանակում է 1998թ. մայիսի 5-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (No ՀՕ-239),

"Civil Code" means Civil Code of the Republic of Armenia, adopted on May 5, 1998 (No ՀՕ-239);



(ii)	«Քաղաքացիական դատավարության օրենսգիրք» նշանակում է 2018թ. փետրվարի 9-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (No ՀՕ-110-Ն),	"Civil Procedure Code" means Code of the Republic of Armenia on Civil Procedure adopted on February 9, 2018 (No ՀՕ-110-Ն);
(iii)	«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենք» նշանակում է 2001թ. սեպտեմբերի 25-ին ընդունված «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք (No ՀՕ-232),	"Joint Stock Companies Law" means Law of the Republic of Armenia on Joint Stock Companies adopted on September 25, 2001 (No ՀՕ-232);
(iv)	«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենք» նշանակում է 2001թ. սեպտեմբերի 24-ին ընդունված «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք (No ՀՕ-252),	"Limited Liability Companies Law" means Law of the Republic of Armenia on Limited Liability Companies adopted on October 24, 2001 (No ՀՕ-252);
(v)	«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենք» նշանակում է 1996թ. հունիսի 30-ին ընդունված «Բանկերի և բանկային գործունեության մասին » ՀՀ օրենք (No ՀՕ-68),	"Banks and Banking Law" means Law of the Republic of Armenian on Banks and Banking adopted on June 30, 1996 (No ՀՕ-68);
(vi)	«Վարկային կազմակերպությունների մասին» օրենք» նշանակում է 2002թ. մայիսի 29-ին ընդունված «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (No ՀՕ-359-Ն),	"Credit Organizations Law" means Law of the Republic of Armenia on Credit Organizations adopted on May 29, 2002 (No ՀՕ-359-Ն);
(vii)	«Արժեթղթերի շուկայի մասին» օրենք» նշանակում է 2007թ. հոկտեմբերի 11-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք (No ՀՕ-195-Ն),	"Securities Market Law" means Law of the Republic of Armenia on Securities Market adopted on October 11, 2007 (No ՀՕ-195-Ն);
(viii)	«Սնանկության ընդհանուր օրենք» նշանակում է 2006թ. դեկտեմբերի 25-ին ընդունված «Սնանկության մասին» ՀՀ օրենք (No ՀՕ-51-Ն),	"General Bankruptcy Law" means Law of the Republic of Armenia on Bankruptcy adopted on December 25, 2006 (No ՀՕ-51-Ն);
(ix)	«Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենք» նշանակում է 2001թ. նոյեմբերի 6-ին ընդունված «Բանկերի,	"Financial Institutions Bankruptcy Law" means Law of the Republic of Armenia on Bankruptcy of Banks, Credit Organizations, Investment Companies, Investment Fund Managers and



վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենք (No ՀՕ-262-Ն),

Insurance Companies adopted on November 6, 2001 (No ՀՕ-262-Ն);

(x) «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենք» նշանակում է 2004թ. նոյեմբերի 24-ին ընդունված «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենք (No ՀՕ-135-Ն),

"Currency Regulation and Currency Control Law" means Law of the Republic of Armenia on Currency Regulation and Currency Control adopted on November 24, 2004 (No ՀՕ-135-Ն);

(xi) «ՀՕ-294-Ն օրենք» նշանակում է 2019թ. դեկտեմբերի 12-ին ընդունված «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (No ՀՕ-294-Ն),

"Law ՀՕ-294-Ն" means Law of the Republic of Armenia on Making Amendments and Additions to the Law on Bankruptcy adopted on December 12, 2019 (No ՀՕ-294-Ն);

(xii) «ՀՕ-445-Ն օրենք» նշանակում է 2020թ. սեպտեմբերի 18-ին ընդունված «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (No ՀՕ-445-Ն),


"Law ՀՕ-445-Ն" means Law of the Republic of Armenia on Making Amendments to the Law on Bankruptcy adopted on September 18, 2020 (No ՀՕ-445-Ն);

(xiii) «ՀՕ-359-Ն օրենք» նշանակում է 2020թ. հուլիսի 8-ին ընդունված «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (No ՀՕ-359-Ն),

"Law ՀՕ-359-Ն" means Law of the Republic of Armenia on Making an Amendment and Additions to the Law on Currency Regulation and Currency Control adopted on July 8, 2020 (No ՀՕ-359-Ն);

(xiv) «Որոշում 67» նշանակում է 2017թ. մարտի 17-ին ընդունված Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված «Միջազգային շուկաներում լայնորեն կիրառվող ածանցյալ ֆինանսական գործիքների և ֆինանսական գործարքների տիպային պայմանագրերը սահմանելու, ինչպես նաև գլխավոր համաձայնագրերի վերաբերյալ պահանջները սահմանելու մասին»

"Resolution 67" means Resolution No 67 of the board of the Central Bank on Defining Model Agreements for Derivative Financial Instruments and Financial Transactions Widely Used in International Markets, as well as Setting Forth Requirements on Master Agreements adopted on March 17, 2017;



օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշում,

(xv) «Կենտրոնական բանկ» նշանակում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

"Central Bank" means the Central Bank of the Republic of Armenia;

(xvi) «Զուտացման համաձայնություն» նշանակում է Ընդհանուր սնանկության օրենքի 40.1(2) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(3) հոդվածներով սահմանված զուտացման համաձայնություն:

"Netting Arrangement" means a netting arrangement as defined under Article 40.1(2) of the General Bankruptcy Law and Article 16.1(3) of the Financial Institutions Bankruptcy Law.

2. ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ASSUMPIONS AND QUALIFICATIONS

2.1. Սույն եզրակացության տրամադրման նպատակով մենք հիմնվել ենք հետևյալ ենթադրությունների վրա.

We have prepared this opinion on the basis of the following assumptions:

2.1.1. Գլխավոր համաձայնագրի ներքո փակման զուտացում

Close-out Netting Under the Master Agreement

(a) Երկու անձինք, որոնցից յուրաքանչյուրը սույն եզրակացության 1.1. կետում նշված անձ է, կնքել են Գլխավոր համաձայնագիր:


Two institutions, each of which is a type of entity referred to in section 1.1. of this opinion, have entered into an Master Agreement.

(b) Գլխավոր համաձայնագրի այն դրույթները, որոնք մենք համարում ենք սույն եզրակացության համար կարևոր, որևէ էական փոփոխությունների չեն ենթարկվել: Թյուրըմբռնումներից խուսափելու համար՝ Գլխավոր համաձայնագրի ներքո՝ Հավելվածով կամ Հաստատմամբ կատարված ընտրությունները չեն համարվում էական փոփոխություններ:

Provisions of the Master Agreement that we deem crucial to our opinion have not been altered in any material respect. For the avoidance of doubt, any selections contemplated by the Master Agreement and made pursuant to a Schedule to the Master Agreement or in a Confirmation of a Transaction would not be considered material alterations.

(c) Հաշվի առնելով Գլխավոր համաձայնագրի դրույթները և պայմանները և այլ կիրառելի հանգամանքները, գործելով Գլխավոր համաձայնագրով սահմանված մտադրությունների համատեքստում՝

On the basis of the terms and conditions of the Master Agreement and other relevant factors and acting in a manner consistent with the intentions stated in the Master Agreement, the parties over time enter into a number of Transactions that are intended to be governed by the Master Agreement.



կողմերը ժամանակ առ ժամանակ կնքում են Գլխավոր համաձայնագրով կարգավորվող Գործարքներ:

(d) Որոշ Գործարքներ սահմանում են կողմերի միջև դրամական միջոցների փոխանակում, մինչդեռ այլ Գործարքներով սահմանված է բաժնետոմսերի, պարտատոմսերի կամ ապրանքների իրական առաքմամբ դրանց փոխանակում դրամական միջոցներով:

Some of the Transactions provide for an exchange of cash by both parties and others provide for the physical delivery of shares, bonds or commodities in exchange for cash.

(e) Նշված Գործարքների կնքումից հետո՝ մինչև դրանց մարումը, ՀՀ-ում գրանցված կողմերից մեկը դառնում է կամավոր կամ պարտադիր սնանկության վարույթի թիրախ (պարտապան)՝ սնանկությունը կարգավորող ՀՀ օրենքների իմաստով: Սնանկության վարույթը սկսվելուց հետո կողմը կամ սնանկության կառավարիչը փորձում է պնդել, որ պարտապանի համար շահավետ Գործարքների Հաստատումները վավեր են, սակայն ժխտում է անշահավետ Գործարքների Հատատումները:

After entering into these Transactions and prior to the maturity thereof, one of the parties, which is organized in Armenia, becomes the subject of a voluntary or involuntary case under the insolvency laws of Armenia (debtor) and, subsequent to the commencement of the insolvency, either that party or an insolvency official seeks to assume the Confirmations representing profitable Transactions for the debtor and reject the Confirmations representing unprofitable Transactions for the insolvent party.

2.1.2. Բազմամասնաճյուղ կողմերի փակման զուտացումը


Close-out Netting for Multibranch Parties

Ի հավելումն վերոնշյալ 2.1.1. կետով սահմանված ենթադրությունների (ըստ կիրառելիության)՝ ենթադրվում են հետևյալ փոփոխությունները.


In addition to assumptions under 0. above (as applicable), the following modifications are assumed:

(a) Հարց 1-ի շրջանակներում (տես սույն եզրակացության 5.B.5.5 կետը) մենք ենթադրել ենք, որ Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված բանկը կնքել է Գլխավոր համաձայնագիր՝ որպես բազմամասնաճյուղ կողմ: Տեղական բանկը Գլխավոր համաձայնագրում նշել է, որ դրա 11.1 կետը կիրառելի է իր նկատմամբ: Այնուհետև տեղական բանկը Գլխավոր համաձայնագրի ներքո կնքել է Գործարքներ ինչպես Հայաստանի

When addressing Issue 1 (see Section 5.0.0 of this opinion), we have assumed that a bank organized in Armenia has entered into a Master Agreement on a multibranch basis. In the Master Agreement , the local bank has specified that Section 11.1 applies to it. The local bank then has entered into Transactions under the Master Agreement through the head office in Armenia and also through one or more branches located in other countries that had been specified in the Schedules to the bank's Master Agreement. After entering into these Transactions and prior to the maturity thereof, the local bank becomes the subject of a



	Հանրապետությունում գործող՝ բանկի գլխամասային գրասենյակի, այնպես էլ այլ երկրներում տեղակայված և բանկի կողմից կնքված Գլխավոր համաձայնագրի Հավելվածներում նշված մասնաճյուղերի միջոցով: Այդ Գործարքների կնքումից հետո, սակայն դրանց մարումից առաջ տեղական բանկը դառնում է կամավոր կամ հարկադիր սնանկության վարույթի առարկա՝ Հայաստանի Հանրապետության սնանկության օրենսդրության ներքո:	voluntary or involuntary proceeding under the insolvency laws of Armenia.
(b)	Հարցեր 2-ի և 3-ի շրջանակներում (տես սույն եզրակացության 5.B.5.6 և 5.7 կետերը) մենք ենթադրել ենք, որ որևէ այլ (ոչ Հայաստանի Հանրապետությունում) երկրում («Երկիր Հ») լիցենզավորված և գործող (գլխամասային գրասենյակը գտնվում է այդ երկրում) բանկը («Բանկ Ֆ») կնքել է Գլխավոր համաձայնագիր՝ որպես բազմամասնաճյուղ կողմ: Բանկ Ֆ-ն Գլխավոր համաձայնագրի ներքո կնքել է Գործարքներ ինչպես իր գլխամասային գրասենյակի և այլ երկրներում տեղակայված մասնաճյուղերի, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված և գործող և բանկի կողմից կնքված Գլխավոր համաձայնագրի Հավելվածներում նշված մասնաճյուղերի միջոցով («Տեղական մասնաճյուղ»): Այդ Գործարքների կնքումից հետո, սակայն դրանց մարումից առաջ Բանկ Ֆ-ն դառնում է կամավոր կամ հարկադիր սնանկության վարույթի առարկա՝ Երկիր Հ-ի սնանկության օրենսդրության ներքո:	When addressing Issues 2 and 3 (see Sections 0.0.0 and 0), we have assumed that a bank ("Bank F") organized and with its headquarters in a country ("Country H") other than Armenia has entered into Master Agreement on a multibranch basis. Bank F has entered into Transactions under Master Agreement through Bank F (head office) and also through one or more branches located in other countries that Bank F had specified in the Schedules to Master Agreements, including in each case a branch of Bank F located in and subject to the laws of Armenia (the "Local Branch"). After entering into these Transactions and prior to the maturity thereof, Bank F becomes the subject of a voluntary or involuntary proceeding under the insolvency laws of Country H.
2.2	Միևնույն ժամանակ, մենք սույն եզրակացությունը պատրաստել ենք՝ հիմնվելով հետևյալ ենթադրությունների վրա.	Additionally, we have prepared this opinion upon the following assumptions:
2.2.1	Գլխավոր համաձայնագրի յուրաքանչյուր կողմ իր գրանցման երկրի օրենսդրության	Each party to the Master Agreement is duly incorporated and validly existing and operating under the laws of jurisdiction of its incorporation.



ներքո պատշաճորեն ստեղծված և գործող անձ է:

2.2.2 Գլխավոր համաձայնագրի յուրաքանչյուր կողմ ունի (ստացել է) դրա և Գործարքների օրինական կնքման համար անհրաժեշտ իրավական կարգավիճակը, իրավասությունները, լիազորությունները, համաձայնությունները և ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ կորպորատիվ, կարգավորման, վարչական և այլ գործողությունները:

Each party to the Master Agreement has due legal capacity, authority and power, has obtained all licenses, authorizations and consents and has taken all corporate, regulatory, administrative and other actions necessary to lawfully enter into the Master Agreement and the Transactions.

2.2.3 Գլխավոր համաձայնագիրը և յուրաքանչյուր Գործարք պատշաճորեն կնքվել է յուրաքանչյուր կողմի՝ ստորագրելու լիազորություն ունեցող անձի կողմից:

The Master Agreement and each Transaction has been duly executed by duly authorized signatories of each party.

2.2.4 Գլխավոր համաձայնագրի և յուրաքանչյուր Գործարքի կողմերի կամահայտնության առնչությամբ որևէ թյուրըմբռնման, կեղծիքի, հարկադրման, սպառնալիքի կամ այլ ոչ պատշաճ ազդեցության կամ բացասական հանգամանքի բացակայություն:

The absence of any misunderstanding, fraud, coercion, threat or other undue influence or deficiency in terms of intention on the part of any of the parties to the Master Agreement and each Transaction.

2.2.5 Որևէ կողմ չի կնքում Գլխավոր համաձայնագիրը կամ որևէ Գործարք մեկ այլ գործարք քողարկելու (մասամբ կամ ամբողջությամբ) նպատակով. կողմերից յուրաքանչյուրը նպատակ է ունեցել կնքել Գլխավոր համաձայնագիրը և յուրաքանչյուր Գործարքը:


None of the parties will enter into the Master Agreement or any of the Transactions for simulating another transaction (partly or entirely): each party has intended to create the legal consequences corresponding to the Master Agreement and each Transaction.

2.2.6 Որևէ կամ բոլոր Գործարքների առնչությամբ առկա չեն Սնանկության ընդհանուր օրենքի 54(1)(ե) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16(1)(ե) հոդվածներով նախատեսված հետգանձման հիմքեր:


There are no grounds for “clawback” of any or all of the Transactions on the grounds of Article 54(1)(e) of the General Bankruptcy Law and Article 16(1)(e) of the Financial Institutions Bankruptcy Law (as described under Section 4.3(d) below).

2.2.7 Գլխավոր համաձայնագրի յուրաքանչյուր կողմ կձեռնարկի բոլոր հետագա գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն Գլխավոր համաձայնագրին և

Each party to the Master Agreement will undertake any further acts required to give full force and effect to the Master Agreement and each Transaction.



	յուրաքանչյուր Գործարքին ամբողջական իրավական ուժ տալու համար:	
2.2.8	Գլխավոր համաձայնագիրը կամ որևէ Գործարք փոփոխող կամ դրա նկատմամբ գերակայող որևէ համաձայնության (համաձայնագրի, պայմանագրի կամ որևէ այլ գործիքի) բացակայություն:	Absence of any arrangement (agreement, contract or any other instrument) modifying or superseding the Master Agreement or any Transaction.
2.2.9	Գլխավոր համաձայնագրի յուրաքանչյուր կողմ պահպանում է (սկսած Գլխավոր համաձայնագրի կնքման ամսաթվից մինչև դրա դադարեցումը) բոլոր համապատասխան երկրների փողերի լվացման դեմ պայքարի մասին, հակակոռուպցիոն և այլ նմանատիպ օրենքները, կարգավորումները և պահանջները:	Each party to the Master Agreement complies (starting from the date of entering into the Master Agreement until termination thereof) with all anti-money laundering, anti-corruption and similar laws, regulations and requirements in all relevant jurisdictions.
2.2.10	Գլխավոր համաձայնագրի յուրաքանչյուր կողմի պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս կատարումը ամբողջությամբ օրինական է համապատասխան երկրի օրենքների ներքո:	Performance of obligations of each party to the Master Agreement in any jurisdiction other than Armenia is entirely legal under the laws of such jurisdiction.
2.3.	Սույն եզրակացության ծանոթագրություններն են.	This opinion is subject to the following qualifications:
2.3.1.	Սույն եզրակացությունը կազմված է Գլխավոր համաձայնագրի, Ապահովության համաձայնագրի, ԱՖԳ հասկացությունների և Հավելվածի հիման վրա:	This opinion has been drafted upon the Master Agreement, the Credit Support Annex, the SFT Definitions and the Schedule.
2.3.3.	Գլխավոր համաձայնագրի ներքո վաղաժամկետ դադարեցման և փակման զուտացման դրույթների կիրարկման և սույն եզրակացության առարկա այլ հարցերի առնչությամբ դատական պրակտիկա առկա չէ: Չնայած մենք կարծում ենք, որ սույն եզրակացությամբ արտահայտված կարծիքները լավ հիմնավորված և պատճառաբանված են, մենք չենք կարող կանխատեսել դրանց նկատմամբ Հայաստանի	No case law has been generated in relation to issues of enforceability of early termination and close-out netting provisions provided under the Master Agreement and other issues addressed under this opinion. While we believe that the opinions expressed hereunder are legally well-grounded and reasoned, we may not predict the position of Armenian courts or any relevant authorities regarding the opinions expressed hereunder.



Հանրապետության դատարանների կամ այլ իրավասու մարմինների դիրքորոշումը:

2.3.4. Սույն եզրակացությունը չի անդրադառնում փաստերի վերաբերյալ որևէ հարցի:

We express no opinion as to matters of fact.

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

SUMMARY OF CONCLUSIONS

Սույն եզրակացության մեջ ներառված ենթադրությունների և ծանոթագրությունների, 5-րդ գլխում ներկայացվող վերլուծության հիման վրա ստորև ներկայացնում են մեր եզրակացության ամփոփ եզրահանգումները.

Based on the assumptions and qualifications provided hereunder and subject to the analysis provided under Section 0 hereof, the summary of our opinion is the following:

3.1. Եթե Գլխավոր համաձայնագրի կողմերը Ավտոմատ վաղաժամկետ դադարեցումը չեն ընտրում որպես կիրառելի, Գլխավոր համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կողմի անվճարունակության դեպքում բոլոր Գործարքները ծանուցմամբ լուծելու մասին դրույթները ենթակա են կիրարկման Պարտավորությունները չխախտող կողմից կողմից :


If the parties have not selected Automatic Early Termination in the Master Agreement , the provisions of the Master Agreement to terminate by notice all the Transactions upon insolvency of the Armenian entity would be enforceable by the Non-Defaulting Party.

3.2. Եթե Գլխավոր համաձայնագրի կողմերը Ավտոմատ վաղաժամկետ դադարեցումը ընտրում են որպես կիրառելի, Գլխավոր համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կողմի անվճարունակության դեպքում բոլոր Գործարքները ծանուցմամբ լուծելու մասին դրույթները Պարտավորությունները չխախտող կողմից կողմից կիրարկման ենթակա են:


If the parties have selected Automatic Early Termination in the Master Agreement, provisions of the Master Agreement to terminate without notice all the Transactions upon insolvency of the Armenian entity would be enforceable by the Non-Defaulting Party.

3.3. Մենք կարծում ենք, որ Սնանկության ընդհանուր օրենքի 40.1(1)(բ) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(5)(բ) հոդվածներում առկա «արժեքի, շուկայական արժեքի, լիկվիդացիոն արժեքի կամ այդ պարտավորությունը


We believe that when considering the interpretation of the terms "...value, market value, liquidation value or replacement value..." provided under Article 40.1(1)(b) of the General Bankruptcy Law and Article 16.1(5)(b) of the Financial Institutions Bankruptcy Law, an Armenian insolvency court



	փոխարինելու արժեքի» տերմինները մեկնաբանելիս ՀՀ սնանկության դատարանը կկիրառի Գլխավոր համաձայնագրի՝ դադարեցման արժեքների հաշվարկման համապատասխան կանոնները:	will apply respective rules on determination of termination values provided under the Master Agreement.
3.4.	Գլխավոր համաձայնագրի առնվազն մեկ կողմի՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի[148] իմաստով ոչ ռեզիդենտ հանդիսանալու դեպքում (i) ՀՀ սնանկության դատարանը կեզրակացնի, որ Դադարեցման արժույթով զուտ դադարեցման մասին պահանջը ենթակա է կիրարկման, և (ii) այդպիսի պահանջը կբավարարվի սնանկության գործընթացում՝ առանց ՀՀ դրամի փոխարկման:	To the extent that at least one party to the Master Agreement is a non-resident within the meaning of Article 3 of the Currency Regulation and Currency Control Law, (i) an Armenian insolvency court would enforce a claim for the net termination amount in the Termination Currency, and (ii) a claim for the net termination amount can be proved in insolvency proceedings in Armenia without conversion into local currency.
3.5.	Հայկական իրավունքի ներքո արտահայտված՝ Գլխավոր համաձայնագրի փակման զուտացման կիրարկման հնարավորության մասին մեր եզրահանգումները չեն փոխվի, եթե Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ բանկը Գլխավոր համաձայնագիր կնքի բազմամասնաճյուղ սկզբունքով:	As a matter of Armenian law, our conclusions concerning the enforceability of close-out netting under the Master Agreement would not change based upon the fact that the Armenian resident bank has entered into the Master Agreement on a multibranch basis.
3.6.	Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներքո որոշակի հանգամանքներում Բանկ Ֆ-ի դեմ կարող է հարուցվել առանձին վարույթ, ինչի դեպքում ՀՀ դատարանները կկասեցնեն այն և հիմք կընդունեն Երկիր Հ-ում տեղի ունեցող վարույթները՝ այնքանով, որքանով համապատասխան օտարերկրյա դատարանի վճիռը ճանաչվել է Հայաստանի Հանրապետությունում (տես ստորև):	Under Armenian law, in certain circumstances separate proceedings can be initiated against the Bank F. Armenian courts would stay the process and defer to the proceedings in Country H to the extent and in the event a relevant foreign court judgement is recognized by Armenian court (see below).
3.7.	Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի ներքո Տեղական մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների նկատմամբ չի	No separate proceedings can be initiated in respect of the assets and liabilities of the Local Branch by virtue of Financial Institutions Bankruptcy Law. However, in the unlikely event that separate insolvency proceedings are initiated



	կարող հարուցվել առանձին վարույթ: Այնուամենայնիվ, Բանկ Ֆ-ի դեմ Ընդհանուր սնանկության օրենքի ներքո առանձին վարույթի հարուցման քիչ հավանական դեպքում և այնքանով, որքանով այդ վարույթը չի կասեցվում (սառեցվում) այնպիսի միջազգային պայմանագրի ուժով, որի կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը (տես ստորև 4.1. կետը), կամ Բանկ Ֆ-ի երկրի դատարանի վճռով, այդպիսի տեղական ընթացակարգերը վարվում են ՀՀ սնանկության մասին կիրառելի օրենսդրության հիման վրա (ներառյալ՝ փակման զուտացման մասին դրույթները):	against the Bank F by virtue of General Bankruptcy Law and to the extent that such insolvency proceedings are not suspended (stayed) by virtue of an international treaty to which Armenia is a party (as further explained under 4.1. below), or by virtue of a recognized judgement of the foreign court of the jurisdiction of the Bank F, such local proceedings shall be conducted in accordance with the rules of the applicable Armenian insolvency laws, including the close-out netting provisions.
3.8.	Մենք հաստատում ենք, որ 3.5, 3.6. և 3.7. կետերում նշված եզրահանգումները չեն փոխվի՝ պայմանավորված այն հանգամանքով, թե արդյոք բազմամասնաճյուղ սկզբունքով գործող ՀՀ բանկը Գործարքները կնքել է իր գլխամասային թե Զուտացում չճանաչող երկրում տեղակայված գրասենյակի միջոցով:	We confirm that the answers under 0, 0. and **Error! Reference source not found.**. remain the s ame in the case of insolvency proceedings for an Armenian bank acting as a multibranch party which has booked Transactions through its home office and one or more branches located in Non-Netting Jurisdiction.
3.9.	Մենք հաստատում ենք, որ 3.5, 3.6. և 3.7. կետերում նշված եզրահանգումները չեն փոխվի՝ պայմանավորված այն հանգամանքով, թե արդյոք բազմամասնաճյուղ սկզբունքով գործող Բանկ Ֆ-ի Տեղական մասնաճյուղը Գործարքները կնքել է (i) իր գլխամասային գրասենյալի, (ii) Տեղական մասնաճյուղի թե (iii) այլ երկրներում տեղակայված Չզուտացնող մասնաճյուղ(եր)ի միջոցով:	We confirm that the answers under 3.5, 3.6. and 3.7. remain the same in case of an insolvency proceeding for a Local Branch of Bank F acting as a multibranch party which has booked Transactions through (i) its home office, (ii) its Local Branch and (iii) one or more Non-Netting Branches in other jurisdictions.
3.10	Սնանկության ընդհանուր օրենքի 40.1(1)(բ) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(5)(բ) հոդվածների ներքո բազմամասնաճյուղ գլխավոր համաձայնագրերը (ինչպիսին է Գլխավոր համաձայնագիրը) Հայաստանի	By virtue of Article 40.1(1)(d) of the General Bankruptcy Law and Article 16.1(5)(d) of the Financial Institutions Bankruptcy Law, a multibranch master agreement such as the Master Agreement would be treated as a single, unified agreement by a receiver under the laws of Armenia regardless of the treatment by an



Հանրապետության օրենսդրության իմաստով համարվում են մեկ միասնական համաձայնագիր՝ անկախ այլ երկրների (որոնցում փակման զուտացումը կիրարկման չէ) սնանկության մարմինների վերաբերմունքից:

insolvency official in a country where close-out netting may be unenforceable.

3.11 Գլխավոր համաձայնագրում որևէ Ֆորս մաժորային իրավիճակի ներառումը չի ազդի Գլխավոր համաձայնագրի փակման զուտացման դրույթների մասին մեր եզրահանգումների վրա:

Inclusion of a Force Majeure Event into Master Agreement would not affect our opinion on the enforceability of termination and close-out netting provisions of the Master Agreement .

3.12 Հավելվածում ԱՖԳ դրույթների ներառումը չի ազդի սույն եզրակացության մեջ ներառված եզրահանգումների վրա:

Inclusion of SFT Schedule Provisions in the Master Agreement would not change the conclusions provided hereunder.

3.13 Կողմերի պարտավորությունների վաղաժամկետ կատարումը ենթակա է կիրարկման՝ անկախ նրանից, թե արդյոք դա կատարվում է Գլխավոր համաձայնագրի ներքո կնքված բոլոր թե որոշակի Գործարքների առնչությամբ:

Acceleration of parties' obligations would be enforceable, irrespective of whether it is exercised in respect of some or all Transactions under the Master Agreement.

4. ՀՀ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

GENERAL OVERVIEW OF THE ARMENIAN BANKRUPTCY LEGISLATION

Սույն գլուխը ներկայացնում է ՀՀ սնանկության օրենսդրության կարճ վերլուծությունը և անդրադառնում է սույն եզրակացության համար կարևոր դրույթներին:

This Section provides for a brief analysis of the Armenian bankruptcy legislation and emphasizes the key provisions being relevant to issues addressed under this opinion.

4.1. Օրենսդրական դաշտ


Legislative Framework

Ընդհանուր կիրառելիություն


General Application

Իրավաբանական անձանց սնանկության հիմնարար սկզբունքներն ամրագրված են Քաղաքացիական օրենսգրքում: Ավելի մանրամասնորեն սնանկության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են Սնանկության ընդհանուր օրենքով և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքով:

Fundamental principles of bankruptcy of legal entities are stipulated under the Civil Code. Furthermore, bankruptcy relations are regulated in more detail under the General Bankruptcy Law and Financial Institutions Bankruptcy Law.



	Սնանկության ընդհանուր օրենքի 2(1) հոդվածի համաձայն՝ Սնանկության ընդհանուր օրենքը կիրառվում է ֆիզիկական և Իրավաբանական անձանց նկատմամբ, բայց չի կիրառվում.	Pursuant to Article 2(1) of the General Bankruptcy Law, the General Bankruptcy Law applies to bankruptcy proceedings in relation to individuals and Corporations but does not apply to:
(a)	Հայաստանի Հանրապետության,	the Republic of Armenia;
(b)	համայնքների,	communities;
(c)	Կենտրոնական բանկի,	the Central Bank;
(d)	բանկերի,	banks;
(e)	վարկային կազմակերպությունների,	credit organizations;
(f)	ներդրումային ընկերությունների,	investment companies;
(g)	ներդրումային ֆոնդերի կառավարիչների,	investment fund managers;
(h)	ապահովագրական ընկերությունների և	insurance companies; and
(i)	«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված հատուցման հիմնադրամի (**«Հատուցման հիմնադրամ»**) նկատմամբ:	the compensation foundation established on the basis of the Law of the Republic of Armenia on Compensation of Damages Caused to Life or Health of Servicemen during Protection of the Republic of Armenia (the "**Compensation Foundation**").
	Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 1(1) հոդվածի համաձայն՝ Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքը կիրառվում է, երբ պարտապանը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ է, վարկային կազմակերպություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ կամ ապահովագրական ընկերություն (**«Բանկ»**):	In accordance with Article 1(1) of the Financial Institutions Bankruptcy Law, the Financial Institutions Bankruptcy Law shall apply, where the debtor is a bank, credit organization, investment company, investment fund manager or an insurance company operating in the territory of the Republic of Armenia (a **"Bank"**).
	Հայաստանի Հանրապետության, Կենտրոնական բանկի և Հատուցման հիմնադրամի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում չի կարող	The Republic of Armenia, communities, the Central Bank and the Compensation Foundation are not subject to any insolvency/bankruptcy proceeding in the Republic of Armenia (i.e. no insolvency/bankruptcy application may be



հարուցվել որևէ անվճարունակության/սնանկության գործընթաց (այսինքն՝ ՀՀ իրավունքի ներքո նշված անձանց դեմ չի կարող անվճարունակության/սնանկության դիմում ներկայացվել):

submitted against the referred entities under Armenian law).

Սնանկության ընդհանուր օրենքի կիրառումն «օտարերկրյա անձանց» նկատմամբ

Application of the General Bankruptcy Law to "foreign persons"

Սնանկության ընդհանուր օրենքի 2(3) և 2(4) հոդվածները կարգավորում են այդ օրենքի կիրառումն «օտարերկրյա անձանց» նկատմամբ և օտարերկրյա դատարանների՝ ավճարունակությանը (սնանկությանը) վերաբերող որոշումների (վճիռների)՝ Հայաստանի Հանրապետությունում կիրարկումը:

Articles 2(3) and 2(4) of the General Bankruptcy Law regulate the application of the law towards "foreign persons" and enforceability of foreign court decisions (judgements) relating to insolvency (bankruptcy) in the Republic of Armenia.

Մասնավորապես, Սնանկության ընդհանուր օրենքը կիրառվում է օտարերկրյա կամ քաղաքացիություն չունեցող անձ պարտապանի ավճարունակության (սնանկության) նկատմամբ, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված չէ հակառակը: Այս պահի դրությամբ մենք տեղյակ չենք որևէ այդպիսի միջազգային պայմանագրի մասին, որով բացառվում է Սնանկության ընդհանուր օրենքի կիրառումը:


In particular, the General Bankruptcy Law shall apply to the insolvency (bankruptcy) of a foreign person debtor or an individual debtor without citizenship, unless otherwise provided under international treaties of the Republic of Armenia. As of now, we are not aware of any such international treaty, which would exclude the application of the General Bankruptcy Law.

Օտարերկրյա դատարանների՝ ավճարունակությանը (սնանկությանը) վերաբերող որոշումները (վճիռները) պետք է ճանաչվեն Հայաստանի Հանրապետությունում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (դրանց բացակայության դեպքում՝ փոխադարձության սկզբունքով):

Decisions (judgements) of foreign courts regarding insolvency (bankruptcy) shall be recognized in the Republic of Armenia in accordance with international treaties of the Republic of Armenia (upon the reciprocity principle, in case of absence of such international treaties).

4.2. Սնանկության գործընթացի մեկնարկը և պարտապանին սնանկ ճանաչելը

Initiation of a Bankruptcy Proceeding and Declaration of Bankruptcy of the Debtor



Սնանկության ընդհանուր օրենքի 3(1) հոդվածը սահմանում է, որ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի որոշմամբ՝ պարտապանի նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

Article 3(1) of the General Bankruptcy Law stipulates that a debtor may be declared bankrupt by a decision of the court, upon initiation of the debtor (voluntary bankruptcy application) or creditor (mandatory bankruptcy application), if the debtor is insolvent.

Ավելին, համաձայն նույն օրենքի 3(2)(2.2) հոդվածի՝ պարտապանն իրավունք ունի դիմելու դատարան կանխատեսվող սնանկության դեպքում, երբ ակնհայտ է, որ առաջանալու են պարտապանի սեփական սնանկությունը ճանաչելու հիմքերը:

Additionally, according to Article 3(2)(2.2) of the same law, an imminent bankruptcy application may be submitted to the court by the debtor, should it be evident that grounds for voluntary bankruptcy of the debtor will arise with the lapse of time.

Սնանկության ընդհանուր օրենքի 3(2) հոդվածի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել.

According to Article 3(2) of the General Bankruptcy Law, the debtor may be declared bankrupt:

(a) «հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

"upon compulsory bankruptcy application, if the debtor has a delay of 90 or more days in relation to an undisputable payment obligation in an amount exceeding AMD 2,000,000, and such delay is continuing as of the date of decision of the court (actual insolvency). The payment obligation is deemed indisputable, if the debtor does not object to it, or the debtor objects, but any of the following exists:

(i) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

the payment obligation is recognized by decision (judgement) of a court, which has taken effect, and no possibility of set-off exists;


(ii) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

the claim emanates from a written agreement, and the debtor does not prove to have sufficient grounds to object to such claim (including set-off);




(iii)	պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր, այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),	the claim emanates from a legal obligation of the debtor to pay taxes, duties or other payments, and the debtor does not prove to have sufficient grounds to object to such claim (including set-off); or
(iv)	պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը,	the part of the claim, which is not being objected, exceeds AMD 2,000,000;
(v)	:[1]	…
(b)	կամավոր սնանկության դիմումի հիման վրա, եթե.	upon voluntary bankruptcy application, if:
(i)	եթե պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն), կամ	the obligations of the debtor exceed the value of its assets in an amount equal to or exceeding AMD 2,000,000, on the basis of appraisals carried out in accordance with accounting rules (balance sheet insolvency); or
(ii)	եթե պարտապանի հանրային իրավական դրամական պահանջներով կատարման ենթակա պարտավորությունները գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն):»[4]	the obligations of the debtor emanating from public legal monetary claims exceed the value of its assets, on the basis of appraisals carried out in accordance with accounting rules (balance sheet insolvency)".
	Ինչ վերաբերում է Բանկերին, Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 3(1) և 3(2) հոդվածները սահմանում են, որ Բանկը կարող է դատարանի կողմից սնանկ ճանաչվել միայն Կենտրոնական բանկի	As to the Banks, Article 3(1) and 3(2) of the Financial Institutions Bankruptcy Law stipulates that a Bank may be declared bankrupt by the court solely upon initiation (application) of the Central Bank. Bankruptcy of the Bank may be declared

[1] 3(2) հոդվածի (ե) կետը կապված է ֆիզիկական անձանց սնանկության հետ և վերաբերելի չէ սույն կարծիքին:
Article 3(2)(a)(v) refers to the bankruptcy of natural persons and is irrelevant to this opinion.



նախաձեռնությամբ (դիմումով): Բանկը սնանկ է ճանաչվում Կենտրոնական բանկի կողմից այն անվճարունակ ճանաչվելու հիման վրա:	upon insolvency of the latter, which is declared by the Central Bank.
Որպես սնանկության գործընթացի մեկնարկման այլընտրանք՝ համաձայն Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 2(3)(ա) հոդվածի՝ Կենտրոնական բանկը երկշաբաթյա ժամկետում կարող է Բանկի ֆինանսական առողջացման նպատակով նշանակել ժամանակավոր ադմինիստրացիա: Այդպիսի իրադարձությունը Գլխավոր համաձայնագրի 6.1.7. բաժնի իմաստով կհամարվի անվճարունակություն:	As an alternative to initiation of a bankruptcy proceeding, pursuant to Article 2(3)(a) of the Financial Institutions Bankruptcy Law, the Central Bank may, upon declaration of insolvency of the Bank, appoint temporary administration for financial rehabilitation of the Bank. Such an event shall constitute a bankruptcy event within the meaning of section 6.1.7. of the Master Agreement.
Բանկը համարվում է անվճարունակ, եթե առկա է հետևյալ հիմքերից առնվազն մեկը.	The Bank is deemed insolvent if any of the following exists:
(a) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին,	(a) it has exhausted 50 or more percent of its core capital;
(b) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները,	(b) it is unable to satisfy the lawful claims of its creditors;
(c) բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից,	(c) the aggregate score of its indicators is lower than that provided for Banks by the board of the Central Bank; or
(d) պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը:	(d) it regularly violates the mandatory reserve standard.
2(1) հոդվածով սահմանված անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում Կենտրոնական բանկը կարող է ձեռնարկել Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 2(3) հոդվածով սահմանված միջոցները: Հետևաբար, ենթադրյալ	Upon discovering the existence of the grounds for insolvency provided under Article 2(1) the Central Bank can take any of the following measures provided Article 2(3) of the Financial Institutions Bankruptcy Law. As a result, deemed insolvency does not automatically lead to an automatic declaration of insolvency and additional action from the Central Bank of Armenia is required.



անվճարունակությունը ավտոմատաբար չի հանեցնում սնանկության ճանաչմանը. Կենտրոնական բանկը պետք է ձեռնարկի լրացուցիչ գործողություններ:

Ավելին, Կենտրոնական բանկը կարող է, համաձայն Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 24-րդ հոդվածի, դատարան ներկայացնել սնանկության դիմում, եթե ժամանակավոր ադմինիստրացիայի գործունեության ընթացքում Կենտրոնական բանկի համար ակնհայտ է դառնում, որ Բանկի լուծարման դեպքում հնարավոր է պահպանել բանկի միջոցների առավել մեծ քանակ, քան ադմինիստրացիայի գործունեությունը շարունակելիս, կամ չի հաջողվում վերականգնել բանկի կայուն վճարունակությունը:

Additionally, the Central Bank may, in accordance with Article 24 of the Financial Institutions Bankruptcy law, submit a bankruptcy application to the court, if during operation of the temporary administration, it becomes evident to the Central Bank that in case of liquidation of the Bank it would be possible to preserve more assets of the Bank (compared to the situation, where the temporary administration continues to operate), or the sustainable solvency of the Bank fails to be restored.

4.3. Զուտացում/զուտացման համաձայնություն

Netting/Netting Arrangement

2016 հոկտեմբերին ՀՀ-ում կատարվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց նպատակն էր՝ ապահովել որոշակի ֆինանսական գործարքների հետ կապված փակման զուտացման համաձայնությունների կիրարկումը: Ի թիվս այլնի՝ կատարվել են փոփոխություններ Սնանկության ընդհանուր օրենքում, Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքում (հիմնականում՝ համապատասխանաբար 40.1. և 16.1 հոդվածները), ինչպես նաև Քաղաքացիական օրենսգրքում, որոնք կապահովեին ISDA գլխավոր համաձայնագրերի զուտացման դրույթների կիրառելիությունը:


In October 2016, legislative reforms aimed at assurance of enforceability of close-out netting arrangements in respect of certain financial transactions have been implemented in Armenia. Inter alia, respective amendments to enable netting, as described under the ISDA Master Agreements, have been made to both the General Bankruptcy Law and Financial Institutions Bankruptcy Law (mostly under Article 40.1. and Article 16.1 respectively), as well as the Civil Code.

(a) Սահմանումներ/կիրառում


Definitions/Applicability

Սնանկության ընդհանուր օրենքի և Ֆինանսական կազմակերպությունների


Definitions of netting, netting arrangements and related notions, as well as provisions aimed at assurance of enforceability thereof, are




	սնանկության օրենքի (հիմնականում՝ համապատասխանաբար 40.1. և 16.1 հոդվածներում) զուտացման, զուտացման համաձայնությունների և փոխկապակցված հասկացությունների սահմանումները, ինչպես դրանց կիրարկման ապահովմանն ուղղված դրույթները միատեսակ են:	introduced in a similar way under the General Bankruptcy Law and Financial Institutions Bankruptcy Law (mostly under Article 40.1. and Article 16.1 respectively).
	Ստորև ներկայացված են ՀՀ իրավունքի ներքո նշված հասկացությունների սահմանումները.	Below are presented the definitions of the aforementioned notions under Armenian law.
	Հայաստանյան իրավունքի ներքո **զուտացումը** նշանակում է.	**Netting** under Armenia law means:
(a)	զուտացման համաձայնության ներքո մեկ կամ մի քանի ֆինանսական գործարքներով և ապահովության պայմանագրերով վճարման կամ մատակարարման պարտավորությունները վաղաժամկետ կատարելը կամ վաղաժամկետ դադարեցնելը, և	early performance or early termination of any payment or delivery obligations under **netting arrangements** entered into under one or more **financial transactions and collateral arrangements**; and
(b)	(a) կետով նախատեսված յուրաքանչյուր վճարման կամ մատակարարման պարտավորության կատարման այդպիսի դադարեցման և (կամ) վաղաժամկետ կատարում պահանջելու ուժով առաջացած արժեքի, շուկայական արժեքի, լիկվիդացիոն արժեքի կամ այդ պարտավորությունը փոխարինելու արժեքի գնահատումը և հաշվարկը, և (կամ)	calculation and estimation of value, market value, liquidation value or replacement value occurred by force of early termination and/or execution of each payment or delivery obligation under point (a) above; and (or)
(c)	(b) կետով հաշվարկված կամ գնահատված արժեքների փոխարկումը մեկ արժույթի, և	conversion into a single currency of values calculated or estimated as per point (b) above; and
(d)	(b) կետով հաշվարկված, ինչպես նաև (c) կետով նույն արժույթի փոխարկված արժեքների զուտ հաշվեկշռի որոշումը՝ հաշվանցի կամ այլ միջոցներով:	determination of the net balance of values calculated as per point (b) above and converted as per point (c) above, whether through set-off or otherwise.



	Հայաստանյան իրավունքի ներքո **զուտացման համաձայնությունը** նշանակում է կողմերի գրավոր համաձայնությունը, որը.	**A netting arrangement** under Armenian law is a written arrangement between the parties, which:
(a)	նախատեսում է գլխավոր համաձայնագրի շրջանակներում կնքվող մեկ կամ մի քանի ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող վճարման կամ մատակարարման ներկա կամ ապագա իրավունքների կամ պարտավորությունների զուտացման իրավունք,	provides for a netting right of present or future payment or delivery obligations or entitlements emanating from one or more financial transactions and collateral arrangements entered into under a master agreement;|
(b)	նախատեսում է զուտացման իրավունք երկու և ավելի գլխավոր համաձայնագրերի միջև	provides for a right to netting under two or more master agreements; or
(c)	վերոնշյալ (a) կամ (b) կետերով նախատեսված համաձայնագրերի հետ կապված կամ դրանց մաս կազմող ապահովության պայմանագիրը:	involves a collateral arrangement related to or forming part of arrangements referred to under points (a) and (b) above.
	Հայաստանյան իրավունքի ներքո **ապահովության պայմանագիրը** նշանակում է.	**A collateral arrangement** under Armenian law means:
(a)	Ֆինանսական գործարքների հետ կապված հետևյալ ապահովված իրավունքները.	the following secured rights relating to financial transactions:
(i)	արժեթղթերի և դրամական միջոցների նկատմամբ ապահովված իրավունքը,	secured rights upon securities and financial means;
(ii)	երաշխավորությունը և երաշխիքը,	guarantee and suretyship;
(iii)	մարժայի և նույնաբնույթ այլ պայմանագիրը,	margin and other similar agreement;
(iv)	գրավչության գործիքները,	credit enhancement.
(b)	այն գործարքները, որոնց պարտադիր բաղկացուցիչ մաս է կազմում որպես ապահովման միջոց արժեթղթերի կամ դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը, ներառյալ՝ ռեպո գործարքները, արժեթղթերի	agreements related to financial transactions, which have a component of transfer of title over securities or financial means as security, including repo agreements, agreements to borrow securities, agreements to buy and resell securities.



	փոխառության գործարքները, արժեթղթերը գնելու և հետ վաճառելու հետ կապված գործարքները:	
	Հայաստանյան իրավունքի ներքո **ֆինանսական գործարքը** նշանակում է Քաղաքացիական օրենսգրքի 252.1-ին հոդվածով նախատեսված գործարքները.	**A financial transaction** under Armenia law means any of the transactions determined under Article 252.1 of the Civil Code, which are:
(a)	«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով նախատեսված ածանցյալ ֆինանսական գործիքները,	derivative financial instruments provided under the Securities Market Law;
(b)	Կենտրոնական բանկի սահմանած պահանջները բավարարող գլխավոր համաձայնագրերի շրջանակներում կնքված գործարքները:	transactions entered into under written master agreements meeting the requirements established by the Central Bank.
	Քաղաքացիական օրենսգրքի 252.1-ին հոդվածի 2-րդ մասի շրջանակներում ներառվող գլխավոր համաձայնագրերի ցանկը սահմանված է Որոշում 67-ով, որի 1-ին կետը սահմանում է, որ Քաղաքացիական օրենսգրքի 252.1-ին հոդվածի նպատակների համար հետևյալ մոդելային ձևաչափերով կնքված գլխավոր համաձայնագրերի ներքո իրականացվող գործարքները համարվում են ֆինանսական գործարքներ.	The list of master agreements qualifying for the purposes of Article 252.1(2) of the Civil Code has been approved under the Resolution 67. Clause 1 of the Resolution 67 provides that for the purposes of Article 252.1 of the Civil Code, transactions executed under master agreements entered into in the form of the following model agreements shall qualify as financial transactions:
(i)	Սվոփերի և ածանցյալների միջազգային ասոցիացիայի (International Swaps and Derivatives Association (ISDA)) Գլխավոր համաձայնագրեր (ISDA Master Agreements), ինչպես նաև դրանց հետ կապված կամ դրանց մաս կազմող ապահովության համաձայնագրերը («Քրեդիթ Սըփորթ Անեքս» (Credit Support Annex), «Քրեդիթ Սըփորթ Դիդ» (Credit Support Deed) և այլն),	Master Agreements published by the International Swaps and Derivatives Association Inc. (ISDA), as well as collateral arrangements (Credit Support Annex, Credit Support Deed, etc.) related to or constituting a part thereof;



(ii) Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (International Capital Market Association (ICMA)) Գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրեր (ICMA Global Master Repurchase Agreements),

Global Master Repurchase Agreements published by International Capital Market Association (ICMA).

(iii) Արժեթղթերի փոխառության միջազգային ասոցիացիայի (International Securities Lending Association (ISLA)) Գլոբալ գլխավոր արժեթղթերի փոխառության համաձայնագրերը (ISLA Global Master Securities Lending Agreements),

Global Master Securities Lending Agreements published by the International Securities Lending Association (ISLA),

(iv) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կամ Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ այլ անձի կողմից հրապարակված՝ Հայաստանի օրենսդրությամբ կարգավորվող «Ածանցյալ ֆինանսական գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը», ինչպես նաև դրա հետ կապված կամ դրա մաս կազմող ապահովության համաձայնագրերը կամ այլ փաստաթղթերը:

"Armenian law governed Derivative Financial Instruments Master Agreement" published either by the Central Bank of the Republic of Armenia or by another person with the consent of the Central Bank, as well as any credit support agreements or other documents related to or forming part thereof.

Ավելին, Որոշում 67-ի 2-րդ կետը սահմանում է, որ վերոնշյալ գլխավոր համաձայնագրերի շրջանակներում կնքված գործարքները համարվում են ֆինանսական գործարքներ:

Additionally, Clause 2 of the Resolution 67 provides that transactions entered into under the master agreements referred to above shall also be deemed financial transactions.

Այսպիսով, Գլխավոր համաձայնագրի ներքո կնքված Գործարքները ՀՀ իրավունքի ներքով համարվում են ֆինանսական գործարքներ:


Thus, all Transactions entered into under the Master Agreement would fall under the notion of a financial transaction for the purposes of Armenian law.

(b) Սառեցման (մորատորիումի) չկիրառում

Exemption from Stay (Moratorium)

Սնանկության ընդհանուր օրենքի 39(3)(ե) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 14(4)(դ) հոդվածները սահմանում են, որ Մորատորիումի գործողությունը չի տարածվում ֆինանսական գործարքներից և ապահովության

Article 39(3)(e) of the General Bankruptcy Law and Article 14(4)(d) of the Financial Institutions Bankruptcy Law provide that netting shall not fall under the scope of stay (i.e. netting is authorized irrespective of any limitations (regarding, inter alia, set-off) applied within the scope of the stay).



պայմանագրերից բխող զուտացման վրա (այսինքն, զուտացումը (ներառյալ, ի թիվս այլնի՝ հաշվանցը) իրականացվում է՝ առանց մորատորիումի շրջանակներում սովորաբար կիրառվող որևէ սահմանափակման):

(c) ***Հետգանձման չկիրառում***


Սնանկության ընդհանուր օրենքի 40.1(8) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(8) հոդվածների համաձայն՝ սնանկության կառավարիչը (եթե պարտապանը Բանկ է՝ ադմինիստրացիայի ղեկավարը) չի կարող զուտացման համաձայնության, ինչպես նաև ֆինանսական գործարքների կամ ապահովության պայմանագրերի ներքո պարտապանի կողմից փոխանցված կամ ստացված ապահովության կամ դրամական միջոցների նկատմամբ իրականացնել սնանկության գործընթացում իրեն վերապահված «հետգանձման» իրավունքները (կապված պարտապանի կատարած որոշակի փոխանցումների հետ ստացման, որոշակի համաձայնություններ անվավեր ճանաչման և այլնի հետ):

Այնուամենայնիվ, համաձայն Սնանկության ընդհանուր օրենքի 54(1)(ե) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16(1)(ե) հոդվածների՝ զուտացման համաձայնության և/կամ ապահովության պայմանագրի ներքո բռնագանձված ապահովությունը կարող է վերադարձվել պարտապանին (ըստ Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի ձևակերպման՝ «զուտացման համաձայնությունը և (կամ) ապահովության պայմանագիրը կարող է անվավեր ճանաչել») սահմանափակ հանգամանքներում, եթե բավարարված են բոլոր հետևյալ պայմանները.

Exemption from "Clawback"

Pursuant to Article 40.1(8) of the General Bankruptcy Law and Article 16.1(8) of the Financial Institutions Bankruptcy Law, the bankruptcy administrator (head of administration in case the debtor is a Bank) may not make use of its "clawback" rights within the scope of a bankruptcy proceeding (in connection with refunding certain transfers made by the debtor, voidance of certain arrangements, etc.) in relation to collateral or financial means retained or received from the debtor under a netting arrangement, as well as financial transactions and collateral arrangements.

However, pursuant to Article 54(1)(e) of the General Bankruptcy Law and Article 16(1)(e) of the Financial Institutions Bankruptcy Law, collateral foreclosed in accordance with a netting and/or collateral arrangement may be refunded to the debtor ("a netting and (or) collateral arrangement may be voided" as per the wording of the Financial Institutions Bankruptcy Law) in limited circumstances, where all of the following cumulative conditions are met:



(a) զուտացման համաձայնությունը և/կամ ապահովության պայմանագիրը կնքվել է դատարան սնանկության դիմումի ներկայացմանը (Բանկի դեպքում՝ ադմինիստրացիայի նշանակմանը) նախորդող իննսուն օրվա ընթացքում,

(a) the netting and/or collateral arrangement has been entered into within 90 days prior to submission of a bankruptcy application to the court (within 90 days prior to designation of administration in case the debtor is a Bank);

(b) զուտացման համաձայնության և/կամ ապահովության պայմանագրի կնքման պահին պարտապան բանկի համար սնանկությունը կամ սնանկության հնարավորությունը կանխատեսելի էր, և

(b) bankruptcy or possibility of bankruptcy of the debtor was predictable as of the moment of execution of the netting and/or collateral arrangement; and

(c) զուտացման համաձայնություն և (կամ) ապահովության պայմանագիր կնքելը չէր բխում պարտապանի շահերից և հետապնդում էր բացառապես ակտիվները սնանկության գործընթացից դուրս բերելու նպատակ:

(c) the entering into the netting and/or collateral arrangement did not emanate from the interests of the debtor and followed the sole purpose of removing the assets of the debtor out of the bankruptcy proceeding.

Որպեսզի դատարանը բավարարի նման պահանջը, կառավարիչը պետք է ապացուցի, որ առկա են Սնանկության ընդհանուր օրենքի 54(1)(ե) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16(1)(ե) հոդվածներով սահմանված բոլոր չափանիշները:


For the court to satisfy such a request, it will be up to the administrator to prove that all the criteria provided under Article 54(1)(e) of the General Bankruptcy Law and Article 16(1)(e) of the Financial Institutions Bankruptcy Law are in place.

Այնուամենայնիվ, համաձայն 2020թ. ապրիլի 15-ին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների (ՀՕ-294-Ն օրենք)՝ կառավարիչը չի կարող դիմել դատարան զուտացման համաձայնության և/կամ ապահովության պայմանագրի հիման վրա բռնագանձված ապահովության հետգանձման պահանջով, եթե առկա է պարտատերերի ժողովի որոշումն այդպիսի գործողություններից ձեռնպահ մնալու մասին:

However, in accordance with legislative amendments entered into force on April 15, 2020 (Law ՀՕ-294-Ն), the administrator cannot apply to court with a claim on refunding collateral foreclosed in accordance with a netting and/or collateral arrangement, if there is a resolution of the meeting of creditors on refraining from such actions.

Ավելին, Սնանկության ընդհանուր օրենքի 54(1)(ե) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16(1)(ե) հոդվածների կանոնները

Additionally, the rules of Article 54(1)(e) of the General Bankruptcy Law and Article 16(1)(e) of the Financial Institutions Bankruptcy Law apply to the Master Agreement entered into within 90



կիրառվում են այն Գլխավոր համաձայնագրի նկատմամբ, որոնք կնքվել են սնանկության դիմումի ներկայացմանը (Բանկի դեպքում՝ ադմինիստրացիայի նշանակմանը) նախորդող իննսուն օրերի ընթացքում: Հետևաբար, այդ իննսունօրյա ժամկետից առաջ Գլխավոր համաձայնագրի ներքո կնքված գործարքները չեն կարող հետգանձվել Սնանկության ընդհանուր օրենքի 54(1)(ե) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16(1)(ե) հոդվածների ներքո:

days prior to submission of a bankruptcy application (within 90 days prior to designation of administration in case the debtor is a Bank) and therefore transactions executed under Master Agreement entered into prior to the 90 days period may not be clawed back in accordance with the rules of Article 54(1)(e) of the General Bankruptcy Law and Article 16(1)(e) of the Financial Institutions Bankruptcy Law.

5. ԿԱՐԾԻՔ

OPINION

A. Փակման զուտացումը Գլխավոր համաձայնագրի ներքո

Close-out Netting Under Master Agreement

5.1. Եթե կողմերը սնանկության որոշակի դեպքերի առնչությամբ Ավտոմատ վաղաժամկետ դադարեցումը չընտրեն որպես ՀՀ-ում գրանցված սնանկ կողմի նկատմամբ կիրառելի, արդյո՞ք Գլխավոր համաձայնագրի՝ Պարտավորությունները չխախտող կողմին բոլոր Գործարքները լուծելու իրավասություն վերապահող դրույթները կլինեն Հայաստանի Հանրապետությունում կիրարկման ենթակա:


Assuming that the parties have not selected Automatic Early Termination upon certain insolvency events to apply to the insolvent counterparty organized in Armenia, are the provisions of the Master Agreement permitting the Non-Defaulting Party to terminate all the Transactions upon the insolvency of its counterparty enforceable under the laws of Armenia?

Եթե կողմերը Գլխավոր համաձայնագրում Ավտոմատ վաղաժամկետ դադարեցումը չընտրեն որպես կիրառելի, Գլխավոր համաձայնագրի՝ Պարտավորությունները չխախտող կողմին բոլոր Գործարքները ծանուցմամբ լուծելու իրավասություն վերապահող դրույթները կլինեն Հայաստանի Հանրապետությունում կիրարկման ենթակա:


If the parties have not selected Automatic Early Termination in the Master Agreement, the provisions of the Master Agreement to terminate by notice all the Transactions upon insolvency of the Armenian entity would be enforceable by the Non-Defaulting Party.

ՀՀ ընդհանուր պայմանագրային իրավունքը չի բացառում կողմերի՝ պայմանագրում սնանկությունը որպես խախտում նախատեսելու և դրա

Armenian general contract law does not prevent the parties to the contract from including the occurrence of insolvency events as an event of default triggering the right for termination of the contract.



	հետևանքով պայմանագրի դադարեցման իրավասության առաջացում սահմանելու հնարավորությունը:	
	Ավելին՝ Սնանկության ընդհանուր օրենքի 40.1(1) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(5) հոդվածներով սահմանված՝ զուտացման սահմանումները նախատեսում են մեկ կամ մի քանի այնպիսի ֆինանսական գործարքներով (համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 252.1 հոդվածի բնորոշման) սահմանված պարտավորությունների վաղաժամկետ դադարեցման հնարավորությունը, որոնց կողմ է հանդիսանում սնանկ անձը: Համաձայն Սնանկության ընդհանուր օրենքի 39(3)(ե) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 14(4)(դ) հոդվածների՝ մորատորիումը չի տարածվում ֆինանսական գործարքների (համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 252.1 հոդվածի բնորոշման) հետ կապված զուտացման վրա, և, հետևաբար, ՀՀ իրավունքի ներքո ՀՀ-ում գրանցված անձի սնանկության դեպքում բոլոր Գործարքների դադարեցման նկատմամբ չի կարող մորատորիում կիրառվել:	In addition, definitions of netting provided under part Article 40.1(1) of the General Bankruptcy Law and Article 16.1(5) of the Financial Institutions Bankruptcy Law cover the early termination of the obligations under one or a number of financial transactions (as defined under Article 252.1 of the Civil Code) to which an insolvent entity is a party. Pursuant to Article 39(3)(e) of the General Bankruptcy Law and Article 14(4)(d) of the Financial Institutions Bankruptcy Law, stay rules do not apply to netting in respect of financial transactions (as defined under Article 252.1 of the Civil Code) and, as a result, the termination of all the Transactions upon the insolvency event of an Armenian Entity cannot be stayed by virtue of Armenian insolvency laws.
5.2.	**Եթե կողմերը սնանկության որոշակի դեպքերի առնչությամբ Ավտոմատ վաղաժամկետ դադարեցումը ընտրեն որպես ՀՀ-ում գրանցված սնանկ կողմի նկատմամբ կիրառելի, արդյո՞ք Գլխավոր համաձայնագրի՝ Պարտավորությունները չխախտող կողմին բոլոր Գործարքները լուծելու իրավասություն վերապահող դրույթները կլինեն Հայաստանի Հանրապետությունում կիրարկման ենթակա:**	**Assuming that the parties have selected Automatic Early Termination upon certain insolvency events to apply to the insolvent party organized in Armenia, are the provisions of the Master Agreement automatically terminating all the Transactions upon the insolvency of a counterparty enforceable under the laws of Armenia?**
	Եթե կողմերը Ավտոմատ վաղաժամկետ դադարեցումը ընտրեն որպես կիրառելի,	If the parties have selected Automatic Early Termination in the Master Agreement, the provisions of the Master Agreement to terminate



Գլխավոր համաձայնագրի՝ Պարտավորությունները չխախտող կողմին բոլոր Գործարքները ծանուցմամբ լուծելու իրավասություն վերապահող դրույթները կլինեն Հայաստանի Հանրապետությունում կիրարկման ենթակա:

without notice all the Transactions upon insolvency of the Armenian entity would be enforceable by the Non-Defaulting Party.

Ինչպես նշված է 5.1. կետում, Սնանկության ընդհանուր օրենքի 40.1(1) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(5) հոդվածները նախատեսում են Զուտացման համաձայնությամբ սահմանված պարտավորությունների վաղաժամկետ դադարեցման հնարավորությունը: Միևնույն ժամանակ, Սնանկության ընդհանուր օրենքի 40.1 և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1 հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս հանգել եզրակացության, որ Զուտացման համաձայնության ներքո Պարտավորությունները չխախտող կողմի կողմից զուտացման իրականացումը (համաձայն Գլխավոր համաձայնագրի) ենթակա է խախտող կողմ համարվող՝ ՀՀ-ում գրանցված անձի դեմ կիրարկման:


As mentioned under 0. above, Article 40.1(1) of the General Bankruptcy Law and Article 16.1(5) of the Financial Institutions Bankruptcy Law cover the early termination under the Netting Arrangement. At the same time, analysis of Article 40.1 of the General Bankruptcy Law and Article 16.1 of the Financial Institutions Bankruptcy Law allows us to come to a conclusion that implementation of netting in accordance with the terms of the Netting Arrangement is permitted (as provided under the Master Agreement). As a result, if the Netting Arrangement provides for an Automatic Early Termination, such termination by the Non-Defaulting Party will be enforceable against a defaulting Armenian Entity.

5.3. Արդյո՞ք Գլխավոր համաձայնագրի՝ կողմի սնանկության դեպքում մեկ թվով արտահայտված դադարեցման գումարի որոշման նպատակով դադարեցման արժեքների զուտացման մասին դրույթները ՀՀ իրավունքի ներքո ենթակա են կիրարկման: Խնդրում ենք նաև հաստատել սնանկությունից անկախ վճարումների զուտացման կիրարկման հնարավորությունը:


Are the provisions of the Master Agreement providing for the netting of termination values in determining a single lump-sum termination amount upon the insolvency of a counterparty enforceable under the laws of Armenia? Please also confirm the enforceability of payment netting outside of insolvency.

Սնանկության ընդհանուր օրենքի 40.1(1)(դ) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(5)(դ) հոդվածները նախատեսում են, որ զուտացումը ներառում է «(բ) կետով հաշվարկված, ինչպես նաև (գ) կետով նույն արժույթի

Pursuant to Article 40.1(1)(d) of the General Bankruptcy Law and Article 16.1(5)(d) of the Financial Institutions Bankruptcy Law, the netting includes the “determination of the net balance of the values calculated under section (b), as well as converted into a single currency under section (c), whether by operation of set-off or otherwise”.



	փոխարկված արժեքների զուտ հաշվեկշռի որոշումը՝ հաշվանցի կամ այլ միջոցներով»:	
	Սնանկության ընդհանուր օրենքի 40.1(1)(բ) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(5)(բ) հոդվածները նախատեսում են արժեքները, որոնք ներառվում են զուտացման սահմանման ներքո, մասնավորապես. *«արժեք, շուկայական արժեք, լիկվիդացիոն արժեք կամ պարտավորությունը փոխարինելու արժեք, որոնք ծագում են վճարման կամ մատակարարման պարտավորությունները վաղաժամկետ կատարելու կամ վաղաժամկետ դադարեցնելու հետևանքով…»:*	Article 40.1(1)(b) of the General Bankruptcy Law and Article 16.1(5)(b) of the Financial Institutions Bankruptcy Law lay out the values that fall under the definition of netting, particularly referring to *"...value, market value, liquidation value or replacement value arising from acceleration or early termination of payment or delivery obligations provided under the netting arrangements of financial transactions or collateral arrangements...".*
	Մեր կարծիքով.	We believe that:
(a)	Սնանկության ընդհանուր օրենքի 40.1(1)(բ) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(5)(բ) հոդվածներով սահմանված *«արժեք, շուկայական արժեք, լիկվիդացիոն արժեք կամ պարտավորությունը փոխարինելու արժեք…»* եզրույթները մեկնաբանելիս ՀՀ սնանկության դատարանը կկիրառի Գլխավոր համաձայնագրի՝ դադարեցման արժեքների որոշման կանոնները,	when considering the interpretation of the terms "...value, market value, liquidation value or replacement value..." provided under Article 40.1(1)(b) of the General Bankruptcy Law and Article 16.1(5)(b) of the Financial Institutions Bankruptcy Law, an Armenian insolvency court will apply the rules on determination of termination values provided under the Master Agreement;
(b)	Հետևաբար, Սնանկության ընդհանուր օրենքի 40.1(1)(բ) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(5)(բ) հոդվածների ուժով մեկ թվով արտահայտված դադարեցման գումարի որոշման նպատակով դադարեցման արժեքների զուտացման դրույթները կիրարկելի են ՀՀ օրենսդրության ներքո,	as a result, under Article 40.1(1)(b) of the General Bankruptcy Law and Article 16.1(5)(b) of the Financial Institutions Bankruptcy Law, the netting of termination values in determining a single lump-sum termination amount upon the insolvency of a counterparty will be enforceable under the laws of Armenia;
(c)	ՀՀ օրենսդրության ներքո զուտացման դրույթները կիրարկելի են միայն այն դեպքում, եթե առկա է սնանկության վարույթ (ՀՀ իրավունքի ներքո):	netting provisions under Armenian law are applicable only if a bankruptcy proceeding (for the purposes of Armenian law) is present. Consequently, netting provisions under Armenian law shall not be applicable, if there are no



Հետևաբար, ՀՀ իրավունքի ներքո զուտացման դրույթները կիրառելի չեն, եթե առկա չէ սնանկության վարույթ (ՀՀ իրավունքի իմաստով): Սնանկության վարույթի բացակայության դեպքում կկիրառվեն հաշվանցի սովորական կանոնները:

bankruptcy proceedings for the purposes of Armenian law. In the absence of bankruptcy proceedings, the general rules of set-off shall apply.

5.4. Եթե կողմերը կնքել են Գլխավոր համաձայնագիր, կողմերից մեկը սնանկ է, և կողմերը որպես Դադարեցման արժույթ են ընտրել սնանկ կողմի գրանցման երկրի արժույթից տարբերվող արժույթ.

Assuming that the parties have entered Master Agreement, one of the parties is insolvent and the parties have selected a Termination Currency other than the currency of the jurisdiction in which the insolvent party is organized:

(a) արդյո՞ք ՀՀ դատարանը կկիրարկի Դադարեցման արժույթով զուտ դադարեցման գումարի որոշման պահանջը,

would a court in Armenia enforce a claim for the net termination amount in the Termination Currency?

(b) կարո՞ղ է Դադարեցման արժույթով զուտ դադարեցման գումարի որոշման պահանջը բավարարվել սնանկության վարույթում՝ առանց տեղական արժույթի փոխարկման:

can a claim for the net termination amount be proved in insolvency proceedings in Armenia without conversion into a local currency?

Սնանկության ընդհանուր օրենքի 40.1(1)(գ) և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1(5)(գ) հոդվածների համաձայն՝ զուտացումը ներառում է *«(բ) կետով հաշվարկված կամ գնահատված արժեքների փոխարկումը մեկ արժույթի»:*


Pursuant to Article 40.1(1)(c) of the General Bankruptcy Law and Article 16.1(5)(c) of the Financial Institutions Bankruptcy Law, the netting includes *"conversion of any values calculated or estimated under part (b) into a single currency".*

Հետևաբար, եթե Գլխավոր համաձայնագրի առնվազն մեկ կողմը «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 3-րդ հոդվածի իմաստով ոչ ռեզիդենտ է.

As a result, and to the extent that at least one party to the Master Agreement is a non-resident within the meaning of Article 3 of the Currency Regulation and Currency Control Law:

(a) ՀՀ սնակության դատարանը կկիրարկի Դադարեցման արժույթով զուտ դադարեցման գումարի որոշման պահանջը,

Armenian insolvency court would enforce a claim for the net termination amount in the Termination Currency; and



(b) Դադարեցման արժույթով զուտ դադարեցման գումարի որոշման պահանջը կարող է բավարարվել սնանկության վարույթում՝ առանց տեղական արժույթի փոխարկման:

a claim for the net termination amount can be proved in insolvency proceedings in Armenia without conversion into a local currency.

Այս համատեքստում վերաբերելի է նաև «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում ՀՕ-359-Ն օրենքով կատարված փոփոխությունը: Մասնավորապես, 2020թ. հուլիսի 8-ին ընդունված և 2020թ. հուլիսի 17-ին ուժի մեջ մտած օրենքի ուժով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» 6-րդ հոդվածը լրացվեց 9-րդ մասով, որը սահմանում է, որ բացառությամբ Կենտրոնական բանկի սահմանած դեպքերի՝ հետևյալ պարտավորությունները կարող են կատարվել այն արժույթով, որով դրանք արտահայտված են.

In this context an amendment made to the Currency Regulation and Currency Control Law by Law ՀՕ-359-Ն is also of relevance. In particular, by virtue of the mentioned Law adopted on July 8, 2020 and entered into force on July 17, 2020 Part 9 was added to Article 6 of Currency Regulation and Currency Control Law, which stipulates that the following payments may be made in the currency in which the relevant obligation has been assumed, except for cases established by the Central Bank:

(a) արտարժութային վարկերի գծով տոկոսագումարների վճարումները (վարկառուի ցակությամբ),

payments related to interests of loans provided in foreign currency (subject to choice of the borrower);

(b) արտարժույթով ներգրավված ավանդների գծով տոկոսագումարների վճարումները (ավանդատուի ցակությամբ),

payments related to interests of deposits denominated in foreign currency (subject to choice of customer);

(c) արտարժութային պարտատոմսերի գծով վճարումները (ներառյալ՝ արժեկտրոնները),


payments related to bonds denominated in foreign currency (including coupon payments);

(d) «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված՝ արտարժույթով արտահայտված արժեթղթերի գծով վճարումները (փոխանցումները),

payments (transfers) stemming from securities denominated in foreign currency (as described in Securities Market Law);

(e) «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված՝ արտարժույթի կամ տոկոսադրույքի հետ կապված ածանցյալ ֆինանսական գործարքների գծով վճարումները (փոխանցումները),

payments (transfers) stemming from derivative financial instruments related to foreign currency or interest rates (as described in Securities Market Law); and



(f) ռեպո պայմանագրերի գծով վճարումները (փոխանցումները):

payments (transfers) stemming from repo agreements.

Նշված դրույթը ևս հիմնավորում է հետևյալ եզրակացությունները.

The mentioned provision also supports the conclusion that:

(a) ՀՀ սնակության դատարանը կկիրարկի Դադարեցման արժույթով զուտ դադարեցման գումարի որոշման պահանջը,

Armenian insolvency court would enforce a claim for the net termination amount in the Termination Currency; and

(b) Դադարեցման արժույթով զուտ դադարեցման գումարի որոշման պահանջը կարող է բավարարվել սնանկության վարույթում՝ առանց տեղական արժույթի փոխարկման:

a claim for the net termination amount can be proved in insolvency proceedings in Armenia without conversion into a local currency.

Ավելին, նշված դրույթի ուժով արտարժույթի կամ տոկոսադրույքի հետ կապված ածանցյալ ֆինանսական գործարքների գծով Դադարեցման արժույթով (առանց տեղական արժույթի փոխարկման) զուտ դադարեցման գումարի որոշման պահանջը կարող է բավարարվել (ներառյալ՝ սնանկության վարույթում) նաև այն դեպքում, երբ երկու կողմերը ՀՀ ռեզիդենտներ են:

Moreover, by virtue of the mentioned provision claims for net termination amount in the Termination Currency without conversion into local currency (including in insolvency proceedings in Armenia) arising from derivatives based on foreign currency or interest rates will be enforceable even in cases when both parties are residents of the Republic of Armenia.

B. Բազմամասնաճյուղ կողմերի փակման զուտացումը


Close-out Netting for Multibranch Parties

5.5. Արդյո՞ք Գլխավոր համաձայնագրի ներքո փակման զուտացման մասին Ձեր եզրահանգումները կփոփոխվեն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տեղական բանկը Գլխավոր համաձայնագիր կնքի բազմամասնաճյուղ սկզբունքով և մինչև սնանկության վրա հասնելը այդ սկզբունքով շարունակի իրահարաբերությունը:

Would there be change in your conclusions concerning the enforceability of close-out netting under the Master Agreement based upon the fact that the local bank has entered into Master Agreement on a multibranch basis and then conducted business in that fashion prior to its insolvency?

Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է մասնաճյուղերի իրավական կարգավիճակի հիմքերը: Ավելին, համաձայն «Բանկերի և բանկային

The Civil Code provides for the basics of the legal status of branches. Furthermore, Articles 14(1) and 14(2) of the Banks and Banking Law stipulate that banks may operate through their branches (located in or outside the territory of Armenia),



	գործունեության մասին» օրենքի 14(1) և 14(2) հոդվածների՝ բանկերը կարող են գործել իրենց մասնաճյուղերի (հայաստանյան կամ օտարերկրյա) միջոցով, որոնք բանկի առանձնացված ստորաբաժանումներ են, չունեն իրավաբանական անձի կարգավիճակ և գործում են բանկի կանոնադրության հիման վրա (բանկի անունից կատարելով նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը):	which are a separate subdivision of the bank, not having the status of a legal entity and operating on the basis of the charter of the bank (performing, on behalf of the bank, all or part of functions of the latter).
	Իրավաբանական անձի կարգավիճակի բացակայությունը և այն հանգամանքը, որ մասնաճյուղը գործում է բանկի անունից, ստեղծում է մի իրավիճակ, որում մասնաճյուղի կողմից կնքված բոլոր գործարքներն իրավաբանորեն համարվում են բանկի կնքած գործարքներ:	The absence of the status of a legal entity and the fact that the branch acts on behalf of the bank creates a situation where any transaction entered into by the branch is legally deemed to be entered into by the bank itself.
	Հետևաբար, Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքը չի սահմանում հայկական բանկերի տեղական և օտարերկրյա մասնաճյուղերի մասին առանձնահատուկ կարգավորումներ, քանի որ այդ օրենքը չի կիրառվում այդպիսի մասնաճյուղերի նկատմամբ:	Consequently, Financial Institutions Bankruptcy Law does not provide any specific rules governing the affairs of local or foreign branches of Armenian banks, as such branches fall out of the scope of application of the law.
	Այսպիսով, ՀՀ իրավունքի ներքո մեր եզրահանգումները՝ կապված Գլխավոր համաձայնագրի ներքո փակման զուտացման կիրարկման հնարավորության հետ, չեն փոփոխվի՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տեղական բանկը Գլխավոր համաձայնագիր կնքի բազմամասնաճյուղ սկզբունքով:	As a result, as a matter of Armenian law, our conclusions concerning the enforceability of close-out netting under Master Agreement would not change based on the fact that the Armenian bank has entered into a Master Agreement on a multi-branch basis.
5.6.	**Արդյո՞ք Բանկ Ֆ-ի նկատմամբ Երկիր Հ-ում սնանկության գործընթաց սկսվելու դեպքում Ձեր երկրում նրա Տեղական մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների առնչությամբ կնախաձեռնվի առանձին վարույթ: Կամ**	**Would there be a separate proceeding in your jurisdiction with respect to the assets and liabilities of the Local Branch at the start of the insolvency proceeding for Bank F in Country H? Or would the relevant authorities in your jurisdiction defer to the proceedings in Country H so that the assets and liabilities of the Local Branch would be handled as part of the**

արդյո՞ք Ձեր երկրի համապատասխան իշխանությունները կհիմնվեն Երկիր Հ-ում իրականացվող գործընթացի վրա՝ Տեղական մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների առնչությամբ կիրառելով այնպիսի մոտեցում, որը կհամարվի Երկիր Հ-ում Բանկ Ֆ-ի նկատմամբ իրականացվող գործընթացի մաս: Կարող ե՞ն Տեղական մասնաճյուղի տեղական պարտատերերը Ձեր երկրում նախաձեռնել առանձին վարույթ նույնիսկ այն հանգամանքներում, եթե համապատասխան իշխանություններն այդպիսին չեն նախաձեռնել:

proceeding for Bank F in Country H? Could local creditors of the Local Branch initiate a separate proceeding in your jurisdiction even if the relevant authorities in your jurisdiction did not do so?

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքը չի պարունակում օտարերկրյա բանկի տեղական մասնաճյուղերի վերաբերյալ առանձնահատուկ դրույթներ: Հետևաբար, այդպիսի մասնաճյուղերը ենթակա են վերոնշյալ 5.5. կետում նկարագրված՝ մասնաճյուղերի վերաբերյալ ընդհանուր դրույթներին:


The Banks and Banking Law does not contain any provision on a specific legal status of a local branch of a foreign bank. Consequently, such local branches shall be subject to general provisions regarding branches set out in 5.5 above.

Այսպիսով, օտարերկրյա բանկի տեղական լիցենզավորված մասնաճյուղը չի կարգավորվում Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքով (ինչպես նշված է վերոնշյալ 5.5. կետում), բայց կարող է կարգավորվել Սնանկության ընդհանուր օրենքով (ինչպես նկարագրված է ներքևում): Հետևաբար, ՀՀ իրավունքի ներքո Տեղական մասնաճյուղի հետ կնքված զուտացման համաձայնությունները չեն դիտարկվի որպես Բանկ Ֆ-ից առանձին անձի կնքած համաձայնություններ (5.5. կետում նշված պատճառաբանությամբ):

As a result, a local branch of a foreign bank holding a banking license in Armenia does not fall under Financial Institutions Bankruptcy Law (as mentioned under 5.5 above), but could fall under the General Bankruptcy Law (as described below). Therefore, under Armenian law, netting arrangements entered into with the Local Branch would not be treated as agreements entered separately from Bank F (for the same reasoning under 5.5 above).

Այնուամենայնիվ, Սնանկության ընդհանուր օրենքի 2(3) հոդվածի ուժով առկա է Երկիր Հ-ում գործընթացի մեկնարկի դեպքում Բանկ Ֆ-ի ակտիվների և պարտավորությունների

However, there is a possibility for separate (independent) proceedings in Armenia with respect to the assets and liabilities of Bank F at the start of the insolvency proceeding for Bank F in Country H on the grounds of Article 2(3) of the General Bankruptcy Law as follows:



նկատմամբ ՀՀ-ում առանձին (անկախ) գործընթացի մեկնարկի հնարավորություն.

Համաձայն Սնանկության ընդհանուր օրենքի 2(1) հոդվածի՝ ցանկացած իրավաբանական (հաշվի առնելով սույն կարծիքի 4.1. գլխում նկարագրված բացառությունները) կամ ֆիզիկական անձ կարող է ենթակա լինել այդ օրենքով սահմանված սնանկության գործընթացների: Սնանկության ընդհանուր օրենքի 2(1) հոդվածից բացառությունների շարքում ներառված «բանկ» եզրույթը վերաբերում է միայն ՀՀ-ում գրանցված և Կենտրոնական բնկի կողմից լիցենզավորված բանկերին: Այսպիսով, Բանկ Ֆ-ին կարող է ենթակա լինել Սնանկության ընդհանուր օրենքին:

Pursuant to Article 2(1) of the General Bankruptcy Law, any legal entity (subject to exceptions described under Section 4.1 of this opinion) or individual can become a debtor under the insolvency proceedings provided by the law. The term “bank” falling under the referred exception of Article 2(1) of the General Bankruptcy Law shall relate only to those being incorporated in Armenia (licensed by the Central Bank). Thus, Bank F potentially falls within the scope of application of the General Bankruptcy Law on the grounds described below.

Ավելին՝ համաձայն Սնանկության ընդհանուր օրենքի 2(3) հոդվածի՝ եթե այլ բան սահմանված չէ այն միջազգային պայմանագրերով, որոնց կողմ է հանդիսանում ՀՀ-ն, Սնանկության ընդհանուր օրենքը կիրառելի է նաև օտարերկրյա և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ: Սույն կարծիքի տրամադրման օրվա դրությամբ առկա չէ 2(3) հոդվածի՝ օտարերկրյա անձանց հանդեպ կիրառմանը վերաբերող դատական պրակտիկա (այն համատեքստում, թե որքանով է «օտարերկրյա անձ» եզրույթը կիրառվում ՀՀ-ում մասնաճյուղեր և/կամ ակտիվներ ունեցող օտարերկրյա իրավաբանական անձանց (ներառյալ՝ բանկերի) նկատմամբ): Ավելին, մեր կարծիքով՝ այդպիսի գործընթացի մեկնարկի քիչ հավանական դեպքում Սնանկության ընդհանուր օրենքի մի շարք հոդվածների կիրառումը Բանկ Ֆ-ի նկատմամբ պրակտիկորեն արդյունավետ չի լինի, ինչն ընդհանուր գործընթացը դարձնում է բազմաթիվ մարտահրավերների համար խոցելի:


Moreover, pursuant to Article 2(3) of the General Bankruptcy Law, unless otherwise provided under the international treaties to which Armenia is a party, the General Bankruptcy Law applies to foreign persons and individuals not having a citizenship. As of the date of this opinion, no case law has been generated on the issue of application of Article 2(3) to foreign entities (i.e. the extent to which the term “foreign persons” applies to foreign legal entities (including banks) having branches and/or assets in Armenia). In addition, we believe that should, in the unlikely event, such proceedings be initiated in Armenia on the grounds that the term foreign persons under Article 2(3) applies to the Bank F, the practical application of a number of provisions of the bankruptcy procedure provided under the General Bankruptcy Law would remain without effective application, thus making the entire process vulnerable to numerous challenges.

Համաձայն Սնանկության ընդհանուր օրենքի 2(4) հոդվածի՝ օտարերկրյա սնանկության դատարանների որոշումների (վճիռների) ճանաչումն իրականացվում է այն կիրառելի միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց կողմ է հնդիսանում ՀՀ-ն, իսկ դրանց բացակայության դեպքում՝ փոխադարձության սկզբունքով: Համաձայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 346(5) հոդվածի՝ եթե օտարերկրյա դատական ակտի ճանաչումը և կատարումը կախված են փոխադարձությունից, ապա փոխադարձությունը համարվում է գոյություն ունեցող, քանի դեռ չի ապացուցվել հակառակը:

Pursuant to Article 2(4) of the General Bankruptcy Law, the recognition of foreign insolvency court decisions (judgments) is carried out in accordance with applicable international treaties to which Armenia is a party or, in the absence of such agreements, based on the reciprocity principle. In accordance with Article 346(5) of the Civil Procedure Code (which applies to the insolvency proceedings, to the extent, there is no contradiction with the special insolvency rules), in the event the recognition and enforcement of a foreign judgment are based on the reciprocity principle, the existence of such reciprocity shall be deemed in place unless the contrary is proven.

Հետևաբար, եթե առկա չեն Բանկ Ֆ-ի գրացման երկրի և ՀՀ-ի միջև առանձին միջազգային պայմանագրեր, որոնք սահմանում են համապատասխան երկրներում գրանցված անձանց սնանկության հետ կապված առանձնահատուկ դրույթներ, հնարավոր է, որ ՀՀ սնանկության դատարանը վարույթ ընդունի Բանկ Ֆ-ի վերաբերյալ առանձին (անկախ) պահանջ (հաշվի առնելով Տեղական մասնաճյուղի ակտիվների պարտավորությունների վերաբերյալ վերոնշյալ կարգավորումները): Այնուամենանիվ, կարծում ենք՝ այդպիսի վարույթը կկասեցվի այն պահից, երբ օտարերկրյա դատարանի վճիռը ճանաչվի ՀՀ-ում: Ավելին, կարծում ենք, որ այդպիսի վճռի ճանաչման պահից սնանկության դատարանը կհիմնվի Երկիր Հ-ում իրականացվող գործընթացի վրա՝ Տեղական մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների առնչությամբ կիրառելով այնպիսի մոտեցում, որը կհամարվի Երկիր Հ-ում Բանկ Ֆ-ի

As a result, to the extent there are no separate international treaties between the country of incorporation of the Bank F and the Republic of Armenia, which provides for a special regime in case of insolvency proceedings in respect of the entities from respective jurisdictions, it is possible that Armenian insolvency court entertains a separate (independent) insolvency petition in respect of the Bank F (and in line the with the description above the assets and liabilities of its Local Branch). However, we believe that such proceedings shall be stayed from the moment when a judgment of a foreign court is recognized by Armenian courts. We additionally believe, that upon recognition of such a judgment, an Armenian insolvency court would defer to the proceedings in County H so that the assets and liabilities of the Local Branch would be handled as part of the proceeding for Bank F in Country H.




նկատմամբ իրականացվող գործընթացի մաս:

5.7. **Եթե ՀՀ-ում Տեղական մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների առնչությամբ նախաձեռնվի առանձին վարույթ, արդյո՞ք լուծարային կառավարիչը և ՀՀ դատարանները Բանկ Ֆ-ի՝ Գլխավոր համաձայնագրի ներքո դիրքը ամբողջությամբ կամ մասնակիորեն կներառի Տեղական մասնաճյուղի ակտիվների կազմում: Եթե այո, արդյո՞ք լուծարային կառավարիչը և ՀՀ դատարանները կկիրարկեն Գլխավոր համաձայնագրի՝ փակման զուտացում նախատեսող դրույթները: Մեծագույն խնդիրը կապված կլինի այն սցենարի հետ, եթե լուծարային կառավարիչը կամ ՀՀ դատարանները մեկ Գլխավոր համաձայնագրի առնչությամբ Բանկ Ֆ-ի Տեղական մասնաճյուղից պահանջեն վճարել Տեղական մասնաճյուղի հետ կնքված Գործարքների շուկայական արժեքը, ինչը մյուս կողմին կստիպի Երկիր Հ-ի վարույթում պահանջել նույն Գլխավոր համաձայնագրի ներքո կնքված այլ Գործարքների զուտ արժեքները: Սույն հարցի առնչությամբ պետք է ենթադրել որ բոլոր Գլխավոր համաձայնագրերի ներքո զուտացումը կիրարկելի է Երկիր Հ-ում Բանկ Ֆ-ի նկատմամբ հարուցված վարույթի շրջանակներում:**

If there would be a separate proceeding in Armenia with respect to the assets and liabilities of the Local Branch, would the receiver or liquidator in Armenia and the courts in Armenia, on the facts above, include Bank F's position under Master Agreement, in whole or in part, among the assets of the Local Branch and, if so, would the receiver or liquidator and the courts of Armenia recognize the close-out netting provisions of Master Agreement in accordance with their terms? The most significant concern would arise if the receiver, liquidator or court in Armenia considering a single Master Agreement would require a counterparty of the Local Branch of Bank F to pay the mark-to-market value of Transactions entered into with the Local Branch to the Liquidator or Receiver of the Local Branch while at the same time forcing the counterparty to claim in the proceedings in Country H for its net value from other Transactions with Bank F under the same Master Agreement. In considering this issue, we assume that the close-out netting under all the relevant Master Agreements would be enforced in accordance with its terms in the proceedings for Bank F in Country H.

Ինչպես նկարագրված է վերոնշյալ 5.6. կետում, Տեղական մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների առնչությամբ չեն կարող հարուցվել առանձին վարույթներ: Այնուամենայնիվ, եթե Սնանկության ընդհանուր օրենքի 2(3) հոդվածի հիմքով Բանկ Ֆ-ի նկատմամբ հարուցվի առանձին վարույթ, և այն չկասեցվի ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրի կամ օտարերկրյա (Բանկ Ֆ-ի գրանցման

As mentioned under 0. above, under Armenian law, no separate proceedings can be initiated in respect of the assets and liabilities of the Local Branch. Should, however, separate insolvency proceedings be initiated against Bank F on the grounds of Article 2(3) of the General Insolvency Law, and to the extent that such insolvency proceedings are not suspended (stayed) by virtue of an international treaty to which Armenia is a party or a recognized judgment of the foreign court of the jurisdiction of the Bank F, such local proceedings shall be conducted in accordance with the rules of the General Insolvency Law,



երկրի) դատարանի ճանաչված վճռի հիման վրա, այդպիսի տեղական վարույթը կիրականացվի Սնանկության ընդհանուր օրենքի ներքո, ներառյալ՝ 40.1. հոդվածով սահմանված՝ զուտացման դրույթները:

including the close-out netting provisions under the Article 40.1.

5.8. Արդյո՞ք 5.5., 5.6. և 5.7. կետերի պատասխանները կփոփոխվեն՝ պայմանավորված որևէ այլ այնպիսի երկրի սնանկության իշխանությունների կամ դատարանների գործողություններով, որտեղ փակման զուտացումը կարող է կիրարկելի չլինել: Այդպիսի գործողությունները ներառում են հետևյալ սցենարները.


Would the answers under 0., 0. and 0. remain the same, notwithstanding possible actions that could be taken by an insolvency official or court in another jurisdiction where close-out netting may be unenforceable (the "Non-Netting Jurisdiction"). Such actions taken by insolvency official of a Non-Insolvency Jurisdiction include the following scenarios:

(a) տեղական բանկի (ՀՀ-ում գրանցված) սնանկության դեպքում՝ այդ տեղական բանկը, գործելով բազմամասնաճյուղ սկզբունքով, Գործարքներ է կնքել իր գլխամասային գրասենյակի և զուտացումը չճանաչող որևէ երկրում գործող մեկ կամ ավելի մասնաճյուղերի միջոցով:

in the case of an insolvency proceedings for a local bank (a bank organized under the laws of Armenia), the local bank, acting as a multibranch party, has booked Transactions through its home office and one or more branches located in Non-Netting Jurisdiction (the "Non-Netting Branches").

Հաշվի առնելով վերոնշյալ 5.5. և 5.6. կետերի վերլուծությունները՝ հաստատում ենք, որ ՀՀ-ում գրանցված և բազմամասնաճյուղ սկզբունքով գործող և իր գլխամասային գրասենյակի և զուտացումը չճանաչող որևէ երկրում գործող մեկ կամ ավելի մասնաճյուղերի միջոցով Գործարքներ կնքած բանկի սնանկության սցենարում 5.5., 5.6. և 5.7. հարցերին մեր պատասխանները չեն փոխվի: Ինչպես նկարագրված է վերևում, ՀՀ իրավունքի ներքո մասնաճյուղերը (անկախ տեղակայման վայրից) չեն համարվում առանձին իրավաբանական անձինք, և, հետևաբար, ՀՀ-ում գրանցված և սնանկության վարույթում գտնվող բանկի նկատմամբ կիրառելի՝ փակման զուտացման դրույթները լիարժեքորեն կիրառվում են նրա մասնաճյուղերի նկատմամբ:

In light of the analysis under 5.5 and 5.6 above, we confirm that the answers under 0., 0. and 0. remain the same in the case of insolvency proceedings for an Armenian bank, acting as a multibranch party which has booked Transactions through its home office and one or more branches located in Non-Netting Jurisdiction. As described above, under Armenian law, branches (regardless of their location) are not treated as a separate legal entity and, therefore, the close-out netting rules applicable to the insolvent Armenian bank would fully apply to its branches.



Միևնույն ժամանակ, ՀՀ իրավունքի ներքո փակման զուտացման դրույթների պատշաճ կիրառումը և կիրարկումը օտարերկրյա մասնաճյուղի հանդեպ նաև կախված է այդ մասնաճյուղի՝ զուտացումը չճանաչող երկրի օրենքների ներքո սահմանված կարգավիճակից, ներառյալ՝ արդյո՞ք այդ օրենքներով օտարերկրյա մասնաճյուղը համարվում է ՀՀ-ում գրանցված բանկի՝ առանձին իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող առանձնացված ստորաբաժանում:

At the same time, we note that the successful implementation and enforcement of Armenian law close-out netting provisions in respect of its foreign branch also depends on the treatment that foreign branch shall receive under the laws of Non-Netting Jurisdiction, including, whether under the laws of Non-Netting Jurisdiction the foreign branch is treated as a separated subdivision of the Armenian bank not having separate legal entity status.

(b) **Բանկ Ֆ-ի Տեղական մասնաճյուղի սնանկության վարույթի դեպքում՝ եթե Բանկ Ֆ-ն, գործելով բազմամասնաճյուղ սկզբունքով, Գործարքներ է կնքել իր (i) գլխամասային գրասենյակի, (ii) Տեղական մասնաճյուղի և (iii) զուտացումը չճանաչող որևէ երկրում գործող մեկ կամ ավելի մասնաճյուղերի միջոցով.**


in the case of an insolvency proceeding for a Local Branch of Bank F, Bank F acting as a multibranch party, has booked Transactions through (i) its home office, (ii) its Local Branch and (iii) one or more Non-Netting Branches in other jurisdictions.

Վերնշյալ վերլուծության լույսի ներքո հաշվի առնելով, որ ՀՀ իրավունքի ներքո Տեղական մասնաճյուղը ենթակա չէ ՀՀ սնանկության օրենսդրությանը, և Սնանկության ընդհանուր օրենքի 2(4) հոդվածում նշված միջազգային պայմանագրերի դրույթները՝ հաստատում ենք, որ 5.5., 5.6. և 5.7. հարցերին մեր պատասխանները չեն փոփոխվի՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Բանկ Ֆ-ն, գործելով բազմամասնաճյուղ սկզբունքով, Գործարքներ է կնքել իր (i) գլխամասային գրասենյակի, (ii) Տեղական մասնաճյուղի և (iii) զուտացումը չճանաչող որևէ երկրում գործող մեկ կամ ավելի մասնաճյուղերի միջոցով, և Տեղական մասնաճյուղի հանդեպ հարուցվել է սնանկության վարույթ:

In light of the analysis above, considering that under Armenian law, the Local Branch is not subject to Armenian insolvency laws and subject to the provisions of international treaties referred to in Article 2(4) of the General Bankruptcy Law, we confirm that the answers under 0., 0. and 0. remain the same in case of an insolvency proceeding for a Local Branch of a Bank acting as a multi-branch party that has booked Transactions through (i) its home office, (ii) its Local Branch, and (iii) one or more Non-Netting Branches in other jurisdictions.

5.9. **Եթե ՀՀ դատարաններն իրավասություն ունենան տեղական բանկի կամ Տեղական մասնաճյուղի ակտիվների**

Where the courts in Armenia have jurisdiction over the assets of a local bank or a Local Branch, would a multibranch master agreement such as



առնչությամբ, արդյո՞ք բազմամասնաճյուղ գլխավոր համաձայնագրերը (օրինակ՝ Գլխավոր համաձայնագիրը) ստացողի տեսանկյունից ՀՀ օրենսդրության ներքո կդիտարկվեն որպես մեկ միասնական պայմանագիր՝ անկախ զուտացումը չճանաչող երկրների սնանկության իշխանությունների՝ Գլխավոր համանաձնագրի կամ դրա հիման վրա կնքված Գործարքների նակատմամբ վերաբերմունքից:

the Master Agreement be treated as a single, unified agreement by a receiver under the laws of Armenia regardless of the treatment of the Master Agreement or Transaction thereunder by an insolvency official in a country where close-out netting may be unenforceable?

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 252.1(2), «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածների և Որոշում 67-ի՝ բազմամասնաճյուղ գլխավոր համաձայնագրերը (օրինակ՝ Գլխավոր համաձայնագիրը) ՀՀ իրավունքի ներքով ստացողի տեսանկյունից համարվում են մեկ միասնական պայմանագիր՝ անկախ զուտացումը չճանաչող երկրների սնանկության իշխանությունների՝ Գլխավոր համաձայնագրի կամ դրա հիման վրա կնքված Գործարքների նկատմամբ վերաբերմունքից:

By virtue of Article 252.1(2) of the Civil Code, Article 3 of the Securities Market Law, and Resolution 67, a multi-branch master agreement such as the Master Agreement would be treated as a single, unified agreement by a receiver under the laws of Armenia regardless of the treatment of the Master Agreement or Transaction thereunder by an insolvency official in a country where close-out netting may be unenforceable.

Ինչպես նշվել է վերոնշյալ 5.6. կետում, Տեղական մասնաճյուղը չի կարգավորվում Սնանկության ընդհանուր օրենքով և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքով, և, հետևաբար, ՀՀ իրավունքի ներքո փակման զուտացման դրույթները չեն տարածվում Տեղական մասնաճյուղի վրա: Այսպիսով, ՀՀ դատարաններն այդպիսի Տեղական մասնաճյուղի ակտիվների նկատմամբ իրավասություն չունեն:

As discussed under the 5.6 above, the Local Branch does not fall under the General Bankruptcy Law and Financial Institutions Bankruptcy Law, and, therefore, Armenian close-out netting rules do not apply to the Local Branch. As a result, Armenian bankruptcy courts shall not have jurisdiction over the assets of such Local Branch.

Հարգանքով,

Respectfully Yours,

Վարուժան Ավետիքյան

Կառավարող գործընկեր

Varoujan Avedikian

Managing Partner

Միսակ Բաբաջանյան

Ավագ գործընկեր

Misak Babajanyan

Senior Partner

Լարիսա Գևորգյան

Ավագ իրավախորհրդատու,

Ֆինանսական ծառայությունների ուղղության ղեկավար

Larisa Gevorgyan

Senior Associate,

Financial Practice Lead Counsel

Մերի Համբարձումյան

Իրավախորհրդատու

Mary Hambardzumyan

Associate

Սույն փաստաթուղթը կազմվել է Ճապոնիայի ֆինանսական աջակցությամբ
This document has been produced with the financial assistance of Japan

ANDERSEN

Հասցեագրված է՝ ՀՀ կենտրոնական բանկին, ՀՀ ֆինանսական շուկայի մասնակիցներին

3 հուլիսի, 2025թ.

Addressed to the Central Bank of Armenia, the Armenian financial market participants


3 July, 2025

ԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

COLLATERAL OPINION (COLLATERAL PROVIDER INSOLVENCY)

Սույն իրավական եզրակացության («**Եզրակացություն**») շրջանակներում անդրադարձ է կատարվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ Հայաստանի օրենսդրությամբ կարգավորվող «Ածանցյալ ֆինանսական գործարքների կնքման գլխավոր համաձայնագրին» («**Համաձայնագիր**») կից Ապահովության պայմանագրի («**Պայմանագիր**»), Հավելվածի (ներառյալ՝ ԱՖԳ դրույթները) և ԱՖԳ հասկացությունների ներքո պարտավորությունների ապահովմանը վերաբերող դրույթների՝ հայկական իրավունքի ներքո վավերությանը և իրացման հնարավորությանը:

This legal opinion (the **"Opinion"**) addresses the enforceability under Armenian law of the collateral provisions of the Credit Support Annex (**"CSA" or "Credit Support Annex"**), Schedule (including SFT Provisions) and SFT Definitions in the framework of Derivative Financial Instruments Master Agreement (**"MA" or "Master Agreement"**) published by the Central Bank of Armenia.



1. ՀԻՄՔ, ՇՐՋԱՆԱԿ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. BASIS, SCOPE, GENERAL INFORMATION, DEFINITIONS AND INTERPRETATION

1.1. Սույն Եզրակացությունը դիտարկում է Համաձայնագրի 6.1.3 (Ապահովության խախտում), 6.1.5 (Նախապես սահմանված գործարքի խախտում), 6.1.6 (Խաչաձև խախտում) բաժինները և դրանց հետ կապված՝ Նախաբանի և 2-րդ բաժնի հասկացությունները, ինչպես նաև Պայմանագրի բոլոր դրույթները:

This Opinion is focused on the provisions of Sections 6.1.3 (Credit Support Default), 6.1.5 (Default under Specified Transaction), 6.1.6 (Cross-Default) and related definitions in the Preamble and Section 2 of the Master Agreement and all provisions of the Credit Support Annex.

1.2. Սույն Եզրակացությունն անդրադառնում է բացառապես հետևյալ անձանց՝ որպես հնարավոր կոնտրագենտների՝


This Opinion addresses exclusively the following entities as possible counterparts:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի, Քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերություններ մասին» օրենքի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի (ըստ կիրառելիության) ներքո բաց կամ փակ բաժնետիրական ընկերության, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ կոոպերատիվի կազակերպական-իրավական ձևով ստեղծված և կարգավորվող բանկեր: Մասնաճյուղերի հիշատակման դեպքում սույն Եզրակացությունը կիրառվում է նաև ՀՀ բանկերի՝ այլ պետություններում ստեղծված մասնաճյուղերի և օտարերկրյա բանկերի՝ ՀՀ-ում ստեղծված մասնաճյուղերի նկատմամբ,


banks incorporated in the form of an open or closed joint stock company, a limited liability company, or a cooperative under the Banks and Banking Law, Civil Code, the Joint Stock Companies Law, Limited Liability Companies Law (as applicable) and regulated under the Banks and Banking Law. Where we make specific reference to branches, this Opinion also addresses branches of Armenian banks located in other countries and Armenian branches of foreign banks;

«Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի, Քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերություններ մասին» օրենքի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի (ըստ կիրառելիության) ներքո բաց կամ փակ բաժնետիրական ընկերության, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ կոոպերատիվի կազակերպական-իրավական ձևով ստեղծված և

credit organizations incorporated in the form of an open or closed joint stock company, a limited liability company or a cooperative under the Credit Organizations Law, the Civil Code, the Joint Stock Companies Law, or Limited Liability Companies Law (as applicable) and regulated under the Credit Organizations Law; and



կարգավորվող վարկային կազմակերպություններ, և	
«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի, Քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերություններ մասին» օրենքի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի (ըստ կիրառելիության) ներքո բաց կամ փակ բաժնետիրական ընկերության, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազակերպական-իրավական ձևով ստեղծված և կարգավորվող ներդրումային ընկերություններ,	investment companies incorporated in the form of an open or closed joint stock company or a limited liability company under the Securities Market Law, Civil Code, and the Joint Stock Companies Law or the Limited Liability Companies Law (as applicable) and regulated under the Securities Market Law,
«Կենտրոնական բանկի մասին» օրենքի ներքո ստեղծված ԿԲ-ն,	the Central Bank established under the Law on the Central Bank,
«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի, «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի, Քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի (ըստ կիրառելիության) ներքո բաց կամ փակ բաժնետիրական ընկերության, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազակերպական-իրավական ձևով կամ որպես ակտիվների համախումբ ստեղծված և կարգավորվող ներդրումային ֆոնդեր (ներառյալ՝ որպես ակտիվենրի համախումբ ստեղծված կենսաթոշակային ֆոնդեր),	investment funds incorporated in the form of an open or closed joint stock company or a limited liability company or as a pool of assets (including pension funds incorporated as pools of assets) under the Law on Investment Funds, Law on Funded Pensions, Civil Code, the Joint Stock Companies Law or the Limited Liability Companies Law (as applicable) and regulated thereunder,
«Ապահովագրության մասին» օրենքի ներքո բաց կամ փակ բաժնետիրական ընկերության, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազակերպական-իրավական ձևով ստեղծված և կարգավորվող ապահովագրական ընկերություններ,	Insurance companies incorporated in the form of an open or closed joint stock company or a limited liability company under the Insurance Law and regulated thereunder,
«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի հիման վրա ստեղծված բաց կամ	open or close joint stock companies and limited liability companies established under the Joint Stock Companies Law or the Limited Liability Companies Law (as applicable) and regulated thereunder.



փակ բաժնետիրական ընկերություններ և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ:

1.3. Սույն Եզրակացությունը կազմված է բացառապես սույն փաստաթղթի ստորագրման ամսաթվի դրությամբ գործող ՀՀ օրենսդրության վերաբերյալ: Մենք հիմնվել ենք այն կանխավարկածի վրա, որ ոչ մի օտարերկրյա օրենսդրություն չի ազդում մեր վերլուծությունների և եզրակացությունների վրա: Սույնով որևէ այլ յուրիսդիկցիայի օրենքների վերաբերյալ կարծիք չի արտահայտվում կամ ենթադրվում: Մենք կարծիք չենք արտահայտում որևէ փաստական հանգամանքների վերաբերյալ:

This Opinion is issued only with respect to Armenian law in force as of the date hereof. We have assumed that no foreign law affects our analysis and conclusions. No opinion is expressed or implied as to the laws of any other jurisdiction. No opinion is expressed on matters of fact.

1.4. Եզրակացության կազմման համար մենք ուսումնասիրել ենք Համաձայնագիրը, ԱՖԳ հասկացությունները և Պայմանագիրը: Եզրակացության տրամադրման համար մենք չենք ուսումնասիրել որևէ այլ պայմանագիր, գործիք կամ այլ փաստաթուղթ: Մենք որևէ կարծիք չենք հայտնում և չենք մեկնաբանում այն առևտրային պայմանները, որոնք սովորաբար ամրագրվում են սույն Եզրակացությունում վկայակոչված փաստաթղթերում, կամ այդ փաստաթղթերին համապատասխան կատարված գործարքների բնույթն ու հետևանքները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվածների:


For the purpose of giving the Opinion, we have examined the MA, the SFT Definitions and the CSA. We have not, for the purposes of giving this Opinion, examined any other contracts, instruments, or other documents. We express no opinion on, and make no comment in respect of, the commercial terms typically negotiated in the documents opined on in this Opinion or the nature and effect, otherwise than under Armenian law, of the transactions effected pursuant to those documents.

1.5. Այնքանով, որքանով փակման զուտացման մասին Համաձայնագրի դրույթների վավերականության և իրացվելիության հարցերը կարող են առնչվել սույն փաստաթղթում քննարկվող հարցերին, մենք հղում ենք կատարում սույն եզրակացության հետ միաժամանակ հրապարակված՝ փակման զուտացման կիրարկման մասին մեր եզրակացությանը:

To the extent that the issues of validity and enforceability of the close-out netting provisions in the Agreement may be relevant to the issues opined on herein, we refer you to our netting opinion published simultaneously with this opinion.

1.6. Մենք չենք ստանձնում օրենսդրության, փաստերի կամ հանգամանքների փոփոխության հետևանքով սույն Եզրակացությունը թարմացնելու պարտավորություն, եթե չստանանք թարմացման առանձին հանձնարարություն: Այնուամենայնիվ,

We assume no obligation to update the opinions expressed herein if laws, facts or circumstances change after the date hereof, unless separately instructed to provide an update. However, as of the date of this Opinion, we are not aware of any



սույն Եզրակացության տրամադրման ամսաթվի դրությամբ մեզ հայտնի չեն օրենսդրության որևէ սպասվող փոփոխություններ, որոնք կարող են էական և բացասական ազդեցություն ունենալ սույն Եզրակացությամբ արտահայտված եզրահանգումների վրա:

pending developments which would have a material and adverse impact on the conclusions herein.

1.7. Քանի որ Համաձայնագրի, ԱՖԳ հասկացությունների և Պայմանագրի ներքո պարտավորությունների ապահովման վերաբերյալ դրույթների իրացվելիության հնարավորության վերաբերյալ դատական պրակտիկա առկա չէ, «կարծում ենք» և այլ նմանատիպ արտահայտությունները նշանակում են, որ մեր եզրահանգումները հիմնված են գործող ՀՀ օրենսդրության մեր վերլուծության վրա: Այդպիսի վերլուծության համար օգտագործել են մեր մասնագիտական փորձը և սույն Եզրակացության ամսաթվի դրությամբ հասանելի իրավական աղբյուրները:


For the purposes of this Opinion and because no guiding case law has been generated on the issues of enforceability of the collateral provisions of the Armenian law governed Master Agreement, SFT Definitions and Credit Support Annex, any reference to "belief" or words of similar import means that our assessment is based upon our own analysis of Armenian law presently in effect, using our professional experience and the relevant legal sources available as of the date of this Opinion.

1.8. Սույն Եզրակացության մեջ «իրացման/կիրարկման ենթակա» և այլ նմանատիպ արտահայտությունները օգտագործվում են՝ արտահայտելու կողմի կարողությունը՝ իր պայմանագրային իրավունքներն իրականացնել պայմանագրային դրույթներին համապատասխան՝ այնպես, ինչպես, մեր կարծիքով, համահունչ է սույն Եզրակացության տրամադրման ամսաթվի դրությամբ գործող ՀՀ օրենսդրության հետ: Այդպիսի կարծիքները չպետք է մեկնաբանվեն որպես մեր հավաստիացումներ առ այն, որ ՀՀ դատարանները կթույլատրեն որևէ համաձայնության/դրույթի կատարումը:

For the purposes of this Opinion, references to the word "enforceable" and similar terms are used to refer to the ability of a party to exercise its contractual rights in accordance with their terms in a manner which, according to our belief, is consistent with the Armenian laws in force as of the date of this Opinion. Any such reference shall not be deemed an assurance from our side that the Armenian courts will enforce a specific arrangement/provision.

1.9. Մեծատառերով սկսվող և սույն Եզրակացությամբ չսահմանված հասկացություններն ունեն Համաձայնագրով, ԱՖԳ հասկացություններով և Պայմանագրով դրանց տրված նշանակությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ համատեքստից այլ նշանակություն է բխում: Սույն Եզրակացության մեջ.

Capitalized terms used and not defined herein shall have the meanings ascribed to them in the MA, SDT Definitions and CSA, unless the context requires otherwise. In addition, in this Opinion:



(i) **«Սահմանադրություն»** նշանակում է 06.12.2015թ.-ին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը,

"Constitution" means the Constitution of the Republic of Armenia, adopted on 06.12.2015;

(ii) **«Քաղաքացիական օրենսգիրք»** նշանակում է 05.05.1998թ.-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (ՀՕ-239),

"Civil Code" means Civil Code of the Republic of Armenia, adopted on 05.05.1998 (No ՀՕ-239);

(iii) **«Հարկային օրենսգիրք»** նշանակում է 04.10.2016թ.-ին ընդունված ՀՀ հարկային օրենսգիրքը (ՀՕ-165-Ն),

"Tax Code" means the Tax Code of the Republic of Armenia, adopted on 04.10.2016 (ՀՕ-165-Ն);

(iv) **«Կենտրոնական բանկի մասին օրենք»** նշանակում է 30.07.1996թ.-ին ընդունված «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-69),

"Law on the Central Bank" means the Law of the Republic of Armenia "On the Central Bank", adopted on 30.07.1996 (No ՀՕ-69);

(v) **«Ներդրումային ֆոնդերի մասին օրենք»** նշանակում է 22.12.2010թ.-ին ընդունված «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-245-Ն),

"Law on Investment Funds" means the Law of the Republic of Armenia "On Investment Funds", adopted on 22.12.2010 (No ՀՕ-245-Ն);

(vi) **«Կուտակային կենսաթոշակների մասին օրենք»** նշանակում է 22.12.2010թ.-ին ընդունված «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-244-Ն),

"Law on Funded Pensions" means the Law of the Republic of Armenia "On Funded Pensions", adopted on 22.12.2010 (No ՀՕ-244-Ն);

(vii) **«Արժեթղթերի շուկայի մասին օրենք»** նշանակում է 11.10.2007թ.-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-195-Ն),

"Law on Securities Market" means the Law of the Republic of Armenia "On the Securities Market", adopted on 11.10.2007 (No ՀՕ-195-Ն);

(viii) **«Բանկերի և բանկային գործունեության մասին օրենք»** նշանակում է 30.06.1996թ.-ին ընդունված «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-68),

"Law on Banks and Banking" means the Law of the Republic of Armenia "On Banks and Banking", adopted on 30.06.1996 (No ՀՕ-68);

(ix) **«Ապահովագրության մասին օրենք»** նշանակում է 09.04.2007թ.-ին ընդունված «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-177-Ն),


"Insurance Law" means the Law of the Republic of Armenia "On Insurance and Insurance Activity", adopted on 09.04.2007 (No ՀՕ-177-Ն);

(x) **«Վարկային կազմակերպությունների մասին օրենք»** նշանակում է 29.05.2002թ.-ին ընդունված «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-359-Ն),

"Law on Credit Institutions" means the Law of the Republic of Armenia "On Credit Institutions", adopted on 29.05.2002 (No ՀՕ-359-Ն);

(xi) **«Սնանկության ընդհանուր օրենք»** նշանակում է 25.12.2006թ.-ին ընդունված «Սնանկության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-51-Ն),

"General Bankruptcy Law" means the Law of the Republic of Armenia on Bankruptcy, adopted on 25.12.2006 (No ՀՕ-51-Ն);



(xii) **«Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենք»** նշանակում է 06.11.2001թ.-ին ընդունված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-262-Ն),

"Financial Institutions Bankruptcy Law" means the Law of the Republic of Armenia "On Bankruptcy of Banks, Credit Organizations, Investment Companies, Investment Fund Managers and Insurance Companies", adopted on 06.11.2001 (No ՀՕ-262-Ն);

(xiii) **«Բաժնետիրական ընկերությունների մասին օրենք»** նշանակում է 25.09.2001թ.-ին ընդունված «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-232),

"Joint-Stock Companies Law" means the Law of the Republic of Armenia on Joint-Stock Companies adopted on 25.09.2001 (No ՀՕ-232);

(xiv) **«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենք»** նշանակում է 24.10.2001թ.-ին ընդունված «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-252),

"Limited Liability Companies Law" means the Law of the Republic of Armenia on Limited Liability Companies adopted on 24.10.2001 (No ՀՕ-252);

(xv) **«Կանոնակարգ 4/18»** նշանակում է 15.09.2017թ.-ին ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը «Ածանցյալ ֆինանսական գործիքների կարգավորումները» կանոնակարգ 4/18-ը հաստատելու մասին (թիվ 205-Ն),

"Regulation 4/18" means the Resolution of the Board of the Central Bank of the Republic of Armenia on the approval of Regulation 4/18 "Regulations of derivative financial instruments", adopted on 15.09.2017 (No 205-Ն);

(xvi) **«Կանոնակարգ 33»** նշանակում է 06.02.2007թ.-ին ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ը հաստատելու մասին (թիվ 33-Ն),


"Regulation 33" means the Resolution of the Board of the Central Bank of the Republic of Armenia on the approval of Regulation 33 "Securities custodial activities", adopted on 06.02.2007 (No 33-Ն);

(xvii) **«Կանոնակարգ 2»** նշանակում է 09.02.2007թ.-ին ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին (թիվ 39-Ն),

"Regulation 2" means the Resolution of the Board of the Central Bank of the Republic of Armenia on the approval of Regulation 2 "Regulation of Bank Activity, Main Prudential Standards of Bank Activity", adopted on 09.02.2007 (No 39-Ն);

(xviii) **«Որոշում 67»** նշանակում է 17.03.2017թ.-ին Կենտրոնական բանկի խորհրդի «Միջազգային շուկաներում լայնորեն կիրառվող ածանցյալ ֆինանսական գործիքների և ֆինանսական գործարքների տիպային պայմանագրերը

"Resolution 67" means the Resolution of the Board of the Central Bank of the Republic of Armenia "On the Approval of Agreement Templates for Derivative Financial Instruments, Financial Transactions Widely Used in International Markets, as well as Requirements



սահմանելու, ինչպես նաև գլխավոր համաձայնագրերի վերաբերյալ պահանջները սահմանելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշումը (թիվ 67-Ն),

towards Master Agreements", adopted on 17.03.2017 (No 67-Ն);

(xix) **«Պաշտոնական պարզաբանում 1»** նշանակում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 03.07.2020թ.-ի թիվ 1 պաշտոնական պարզաբանումը ««Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին, 15-րդ և 68-րդ հոդվածի 5-րդ մասերի, ինչպես նաև «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի մասին»,

"Official Interpretation 1" means the Official Interpretation of the Board of the Central Bank "On Articles 39 (1), (15) AND 68 (5) of the Law of the Republic of Armenia on Funded Pensions, as well as Article 39 (4) of the Law of the Republic of Armenia on Investment Funds", adopted on 03.07.2020;

(xx) **«ՀԿԴ կանոններ»** նշանակում է ԿԲ-ի կողմից 20.12.2023թ.-ին գրանցված «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոնները»,

"CDA Rules" means "Rules on Operating Unified System of Securities Registration and Settlement" of the Central Depository of Armenia OJSC, registered by the CBA on 20.12.2023;

(xxi) **«Կենտրոնական բանկ»** կամ **«ԿԲ»** նշանակում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

"Central Bank" or "CBA" means the Central Bank of the Republic of Armenia.

2. ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ASSUMPTIONS AND QUALIFICATIONS

Սույն եզրակացության տրամադրման նպատակով մենք հիմնվել ենք հետևյալ ենթադրությունների վրա.


We make the following assumptions throughout the Opinion:

2.1. Այնքանով, որքանով Համաձայնագրի, ԱՖԳ հասկացությունների և Պայմանագրի հետ կապված որևէ պարտավորություն պետք է իրականացվի ՀՀ-ից դուրս գտնվող յուրիսդիկցիայի ներքո, այդպիսի պարտավորությունները և դրանց կատարումը օրինական են, ենթակա են կատարման և իրավական ուժ ունեն նման յուրիսդիկցիայում:


To the extent that any obligation under the MA, SFT Definitions and CSA is to be performed in a jurisdiction outside of Armenia, such obligations and their performance are legal, enforceable, and effective in such jurisdictions.

2.2. Կողմերից յուրաքանչյուրը (1) պատշաճ կերպով գրանցված է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, (2) իրավասու է կնքել Համաձայնագիրը, դրա ներքո ցանկացած

Each party: (i) is duly incorporated under the laws of the Republic of Armenia; (ii) is able to lawfully enter into the MA, any Transaction or CSA under the laws of the Republic of Armenia; (iii) has been



	գործարք կամ Պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, (3) ստացել է բոլոր կիրառելի կորպորատիվ և կարգավորող ընթացակարգերը, որոնց համաձայն պատշաճ կերպով լիազորված է կնքել Համաձայնագիրը, դրա ներքո ցանկացած գործարք կամ Պայմանագիրը, և (4) պատշաճ կարգով կնքել է Համաձայնագիրը, դրա ներքո ցանկացած գործարք կամ Պայմանագիրը:	duly authorized, subject to compliance with any applicable corporate and regulatory processes, to enter into the MA, any Transaction or CSA and (iv) has duly executed the MA, any Transaction or CSA.
2.3.	Համաձայնագրի, դրա ներքո ցանկացած գործարքի կամ Պայմանագրի կնքման պահին կողմերից ոչ մեկի նկատմամբ սնանկության վարույթ չի հարուցվել, և նրանք չեն դարձել կամ չեն դառնա անվճարունակ կամ ոչ ի վիճակի վճարելու իրենց պարտքերը Համաձայնագրի, դրա ներքո ցանկացած գործարքի կամ Պայմանագրի կնքման արդյունքում:	At the time that the MA, any Transaction, or CSA is entered into, no bankruptcy proceeding has been initiated against any of the parties, nor have they become or will become insolvent or unable to pay their debts as a result of entering into the MA, any Transaction or CSA.
2.4.	Պայմանագրի ներքո ցանկացած ապահովություն **(«Ապահովություն»)** փոխանցող ունի այդպիսի ապահովության նկատմամբ սեփականության իրավունք:	Any transferor of collateral under the CSA **("Credit Support")** has ownership title over such Credit Support.
2.5.	Համաձայնագրի և Պայմանագրի որևէ դրույթ որևէ էական առումով չի փոխվել:	Any provisions of the MA and the relevant CSA have not been altered in any material respect.
2.6.	Որպես Ապահովությունները կազմված են ազատ փոխարկելի արժույթից և որոշակի՝ (i) ՀՀ-ում կամ (ii) ՀՀ-ից դուրս գտնվող արժեթղթերից:	The Credit Support will include cash in a freely convertible currency and certain types of securities that are Located or deemed Located either (i) in Armenia, or (ii) outside Armenia.
2.7.	Ապահովություն տրամադրողը Համաձայնագրի ներքո Ապահովություն ստացողի հետ կնքում է մի շարք Գործարքներ: Տեղի է ունեցել (Ապահովություն ստացողի տրամադրողի) Համաձայնագրի 6.1.7. սահմանված Խախտում, և Ապահովություն տրամադրողի նկատմամբ (կողմից) հարուցվել է ֆորմալ սնանկության, անվճարունակության, լուծարման, վերակազմակերպման, ադմինիստրացիայի կամ այլ նմանատիպ գործընթաց (այսուհետ՝ «սնանկություն»):	Pursuant to the terms and conditions of the Master Agreement, the Collateral Provider enters into a number of Transactions with the Collateral Taker. An Event of Default under Section 6.1.7. of the Master Agreement with respect to the Collateral Provider has occurred, and a formal bankruptcy, insolvency, liquidation, reorganization, administration, or comparable proceeding (collectively, the "insolvency") has been instituted by or against the Collateral Provider.



3. ՓԱՍՏԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

3.1. Մեր վերլուծությունը հիմնվում է հետևյալ երկու փաստական իրավիճակների վրա՝

(ա) Ապահովության գտնվելու վայրը ՀՀ տարածքից դուրս է,
(բ) Ապահովության գտնվելու վայրը ՀՀ-ն է:

3.2. Ապահովության «Գտնվելու վայրն» այն վայրն է, որտեղ գտնվում է տվյալ տեսակի ակտիվը՝ ՀՀ միջազգային մասնավոր իրավունքի նորմերին և օրենսդրության համապատասխան և ստորև պետք է մեկնաբանվի այդ կերպ:

4. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

4.1. Եզրակացության համատեքստը պարզաբանելու համար ներկայացնում ենք սնանկության (անվճարունակության) ոլորտում ՀՀ օրենսդրական դաշտի համառոտ վերլուծությունը: ՀՀ օրենսդրության ներքո առկա են անվճարունակության/սնանկության խնդիրները կարգավորող երկու օրենք՝ Սնանկության ընդհանուր օրենքը և Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքը:

Սնանկության ընդհանուր օրենք[1]

4.2. Սնանկության ընդհանուր օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այդ օրենքը կիրառելի է ՀՀ-ում գրանցված ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձի նկատմամբ (**«Պարտապան»**), բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության, ՀՀ համայնքների, և մի շարք ֆինանսական

FACT PATTERNS

Our analysis herein contemplates two following fact patterns:

(a) the Location of the Credit Support is outside Armenia;
(b) the Location of the Credit Support is in Armenia.

The "Location" of Credit Support is the place where an asset of that type is located under the private international law rules and legislation of Armenia and when used below it should be construed accordingly.

GENERAL OVERVIEW OF THE ARMENIAN BANKRUPTCY LEGISLATION

To elaborate on the context of the Opinion, we hereby provide a brief analysis of the Armenian legislative framework on bankruptcy (insolvency). There are two laws governing insolvency/bankruptcy under Armenian law – the General Bankruptcy Law and the Financial Institutions Bankruptcy Law.

General Bankruptcy Law

According to Article 2(1) of the General Bankruptcy Law, that law applies to all entities and individuals established in Armenia (the **"Debtor"**) except for the Republic of Armenia, communities of the Republic of Armenia, and a number of financial institutions – the Central Bank of

[1] Սույն Եզրակացության տրամադրման օրվա դրությամբ շրջանառության մեջ է գտնվում Սնանկության օրենսգրքի նախագիծը, որով նախատեսվում է սնանկության կարգավորման վերանայում (ներառյալ՝ ընթացիկ փուլում նախագծում առկա չէ սույն եզրակացության մեջ վկայակոչված՝ զուտացման համաձայնություններից բխող պարտավորությունների վերաբերյալ դրույթների գերակշիռ մասը): Սնանկության օրենսգրքի ընդունման (մասնավորապես՝ սույն Եզրակացության տրամադրման օրվա դրությամբ հրապարակված խմբագրությամբ) դեպքում սույն Եզրակացությունը կունենա վերանայման կարիք:
As of the date of provision of this Opinion, the draft Insolvency Code is in circulation, which revisits the insolvency regulation (including, the current draft does not envisage the majority of provisions related to obligations stemming from netting arrangements referred to in this Opinion). In case of adoption of the Insolvency Code (especially in the edition published as of the date of provision of this Opinion), this Opinion shall require a review.



կազմակերպությունների՝ Կենտրոնական բանկի, բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների:

Armenia, banks, credit organizations, investment companies, investment fund managers and insurance companies.

4.3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է սնանկության երկու ընթացակարգ՝ կամավոր՝ պարտապանի սեփական նախաձեռնությամբ և հարկադրված՝ պարտապանի պարտատիրոջ (պարտատերերի) պահանջով: Ցանկացած դեպքում, պարտապանը սնանկ է ճանաչվում դատարանի որոշմամբ: Բացի այդ, Սնանկության ընդհանուր օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է սնանկության ռիսկի (կանխատեսվող սնանկության) վարույթի շրջանակը:

Article 3(1) of the Law establishes two procedures for bankruptcy: voluntary – upon the debtor's own initiative and involuntary – upon an application by the creditor(s) of the Debtor. In any event, a creditor is declared bankrupt by the court. Additionally, Article 3(2) of the General Bankruptcy Law establishes the framework for the risk of bankruptcy (imminent bankruptcy) proceedings.

4.4. Հարկադրված սնանկության դեպքում իրավաբանական անձը կարող է սնանկ ճանաչվել միայն այն դեպքում, եթե բավարարում է դրամական հոսքերի չափանիշը՝ առնվազն 90 օրվա ընթացքում չի կատարել անվիճելի վճարային պարտավորությունը, և դատական վճռի կայացման պահին կետանցը շարունակվում է:

In the case of involuntary bankruptcy, an entity may be declared bankrupt only if it satisfies the cash flow test – it has defaulted on an undisputable payment obligation exceeding AMD 2,000,000 for at least 90 days, and that default continues on the date of the judgment.

4.5. Կամավոր սնանկության դեպքում կիրառվում է հաշվեկշռային չափանիշը (հաշվեկշռի թեստավորում): Պարտապանը սնանկ է ճանաչվում, եթե

(ա) պարտապանի պարտավորություններ 2,000,000 ՀՀ դրամ և ավելի չափով գերազանցում են նրա ակտիվների արժեքը, կամ

(բ) պարտապանի հանրային իրավական դրամական պահանջներով կատարման ենթակա պարտավորությունները գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը:


In the case of voluntary bankruptcy, the balance sheet test applies. A debtor should be declared bankrupt if:

(a) the value of their obligations exceeds the value of their assets by more than AMD 2,000,000 or

(b) the value of their public payment obligations exceeds the value of their assets.

4.6. Սնանկության ընդհանուր օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքում, երբ դատարանը պարտապանին սնանկ է ճանաչում, այն որևէ հաշվառված կառավարչի նշանակում է սնանկության գործով կառավարիչ և պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ նշանակում է պարտատերերի առաջին

According to Article 19(1) of the General Bankruptcy Law, in case the court declares the debtor bankrupt, it appoints an insolvency practitioner as a bankruptcy administrator and approves the date of the first meeting of creditors along with the final list of creditors. The bankruptcy administrator runs the debtor entity



ժողովի անցկացման օրը: Սնանկության գործով կառավարիչը կառավարում է պարտապան ընկերությունը՝ պարտատերերի շահերից ելնելով. վերջինս (պարտատերերի ժողովը) ընդունում է բոլոր կարևոր որոշումները՝ կապված պարտապանի հետագա կառավարման/լուծարման հետ:

for the benefit of the creditors: the latter (the meeting of the creditors) adopts all important resolutions regarding the future governance/liquidation of the debtor.

4.7. Սնանկության ընդհանուր օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից՝

(ա) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը, բացառությամբ Պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունների,

(բ) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի գույքի, ինչպես նաև նրա մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը, բացառությամբ Սնանկության ընդհանուր օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի (վերջինս վերաբերում է Պարտապանի փչացող ապրանքներին և նրա ակտիվներին, որոնք էական ծախսեր են պահանջում),

(գ) կասեցվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները, արգելվում են կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով գանձումները,

(դ) արգելվում է պարտատիրոջ՝ մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը Պարտապանի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորության հաշվանցը՝ Պարտապանի նկատմամբ ունեցած իր


According to Article 39(1) of the General Bankruptcy Law, upon lodging of the bankruptcy application:

(a) no action for satisfaction in cash or any other manner to their creditors for the purpose of performance of their contractual or any other obligations may be made by the Debtor without a court decision, except for obligations with respect to their day-to-day operation;

(b) no alienation, lease, pledge, or other encumbrance shall be imposed with respect to its assets, as well as the shares (stock, equity, or other equity securities, as applicable) of their shareholder (participants, stockholders, as applicable) without a court decision, except for cases provided under Article 55(2) of the General Bankruptcy Law (the latter refers to perishable goods of the Debtor and its assets requiring significant expenses);

(c) all enforcement proceedings of execution of their assets shall be suspended, and indisputable charges determined by a writ of execution and other instruments shall be prohibited;

(d) the set-off of obligations assumed by a creditor vis-à-vis the Debtor against such creditor's claims towards such counterparty prior to the filing of the bankruptcy petition shall be prohibited, *except for cases provided under Article 40.1 of the General Bankruptcy Law (pertaining to netting under financial transactions).*



պահանջի հետ, *բացառությամբ Սնանկության ընդհանուր օրենքի 40.1-ին հոդվածով նախատեսված դեպքերի (որը վերաբերում է ֆինանսական գործարքների ներքո զուտացմանը):*

4.8. Սնանկության վարույթի ռիսկի դեպքում նմանատիպ մորատորիումի (սառեցման) ռեժիմ է սահմանվում նաև Սնանկության ընդհանուր օրենքի 15.5-րդ հոդվածի համաձայն:

A similar moratorium (stay) regime is established under Article 15.5 of the General Bankruptcy Law for bankruptcy risk proceedings as well.

4.9. Ավելին, Սնանկության ընդհանուր օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝

(ա) պարտավորությունների կատարման ժամկետները համարվում են սկսված,

(բ) արգելվում է առանց դատարանի որոշման Պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, բացառությամբ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի, ինչպես նաև սնանկության վարույթում բնականոն գործունեության արդյունքով առաջացող հարկային և այլ վճարների գծով պարտավորությունների,

(գ) դադարում է Պարտապանի վճարային, ներառյալ՝ հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների նկատմամբ տոկոսների հաշվարկումը, ինչպես նաև այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ցանկացած տեսակի տույժերի, տոկոսների և տուգանքների հաշվեգրումը,

(դ) կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և Պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում,

Further, pursuant to Article 39(2) of the General Bankruptcy Law, upon entrance into force of the judgment on declaration of the bankruptcy:

(a) the terms for performance of obligations shall be deemed commenced;

(b) no action for satisfaction in cash or any other manner to their creditors for the purpose of performance of their contractual or any other obligations may be made by the Debtor without a court decision, except for cases provided under its financial rehabilitation plan, as well as obligations on tax and other payments arising as a result of day-to-day activities in bankruptcy proceedings;

(c) the accrual of interests upon the Debtor's payment obligations (including those relating to state taxes, duties, and other mandatory fees), as well as the accrual of any penalties, interests, and fines for non-performance or improper performance of such obligations, shall be terminated;

(d) all civil, administrative, or arbitral proceedings in relation to foreclosure or delivery of the Debtor's assets shall be dismissed or terminated, and all claims of their creditors shall become subject to submission under the bankruptcy proceedings;

(e) all enforcement proceedings in connection with the execution of the Debtor's assets and those having a non-proprietary nature, which affect the assets and rights of such counterparty, shall be dismissed, except for the cases provided under the law;

(f) all encumbrances and charges over the Debtor's assets shall be lifted.



(ե) կարճվում է Պարտապանի վերաբերյալ գույքային բռնագանձումներով կամ ոչ գույքային բնույթ ունեցող ցանկացած կատարողական վարույթ, որն ազդում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառվող գույքի և իրավունքների վրա, բացառությամբ օրենքով սահմանված այլ դեպքերի,


(զ) վերանում են Պարտապանի գույքի վրա դրված արգելանքներն ու սահմանափակումները:

4.10. Միևնույն ժամանակ, 39-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է ավտոմատ սառեցման ռեժիմից բացառություններ, որոնք ներառում են, մասնավորապես, զուտացումը: Հարկ է նշել, որ 40.1-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերի համաձայն, սառեցման ռեժիմից դուրս գտնվող «զուտացման համաձայնությունը» ներառում է, ի թիվս այլնի, արժեթղթերի և դրամական միջոցների նկատմամբ ապահովված իրավունքը, մարժայի և նույնաբնույթ այլ պայմանագիրը, ինչպես նաև գործարքները, որոնք նախատեսում են արժեթղթերի կամ դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում, որոնցից բոլորը պետք է կնքված լինեն ՀՀ օրենսդրությանը համապատասխան ֆինանսական գործարքների ներքո (օրինակ՝ Համաձայնագիրը):

However, Article 39(3) lays out the carve-out events of the automatic stay regime, which, include, *inter alia,* the performance of netting. Importantly, under Article 40.1(2), (4), and (5), the mentioned “netting arrangements” carved out of the stay regime include*, inter alia,* security interests over securities and cash, margin arrangements, as well as transactions providing for an outright transfer of title over securities and/or cash, all of them entered into in connection with a financial transaction as established under Armenian legislation (e. g. the Master Agreement).

4.11. Այսպիսով, կամավոր սնանկության մասին դիմում ներկայացնելու կամ դատարանի կողմից սնանկության ռիսկը ճանաչելու պահից Պարտապանի պարտավորությունների նկատմամբ տարածվում է մորատորիում: Մորատորիումը չի տարածվում ապահովված պարտավորությունների վրա, եթե դատարանը թույլատրել է համապատասխան պարտատիրոջ ապահովված իրավունքի արտադատական իրացումը: Որպեսզի նման դիմումը բավարարվի, պարտատիրոջ և Պարտապանի միջև համապատասխան համաձայնագիրը պետք է նախատեսի արտադատական կարգով իրացման հնարավորություն:

Thus, starting from the moment of lodging the voluntary bankruptcy application or approving by the court of the bankruptcy risk application, a moratorium is imposed on the Debtor’s obligations. The moratorium does not apply towards secured obligations if the court has allowed extra-judicial realization of the secured right of the relevant creditor. For such an application to be approved, the relevant agreement between the creditor and the Debtor must provide for the possibility of extra-judicial realization.



4.12. Սնանկության կառավարչի կողմից կառավարման երկու հնարավոր հետևանքներն են ֆինանսական առողջացումը կամ Պարտապանի լուծարումը և նրա ակտիվների բաշխումը պարտատերերի միջև:


The two possible outcomes of the management by the bankruptcy administrator are either financial rehabilitation or liquidation of the Debtor and distribution of their assets among the creditors.

4.13. Սնանկության ընդհանուր օրենքը սահմանում է պարտատերերի տարբեր կատեգորիաների համար օրենքով սահմանված հերթականություն: Սույն Եզրակացության նպատակների համար առավել կարևոր է այն, որ օրենքը հիմք է ապահովում պարտատերերի ապահովված (այդ թվում՝ գրավով ապահովված) իրավունքների պաշտպանության համար: Մասնավորապես, Սնանկության ընդհանուր օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապահովության առարկայի արժեքի հաշվին իր պահանջները բավարարելու համար ապահովված պարտատերը պետք է դիմի դատարան: Այդ պարագայում նա չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար ապահովված իրավունքի առարկայի իրացման հաշվին, անկախ այն հանգամանքից, թե դրա արժեքը բավարար է այդ պահանջը բավարարելու համար, թե ոչ: Այլապես, ապահովված պատրատերը կարող է ընդգրկվել պարտատերերի ցանկում: Այդ դեպքում նրա պահանջը կբավարարվի առաջին հերթին ապահովության արժեքի, իսկ դրա անբավարարության դեպքում՝ այլ ակտիվների արժեքի հաշվին:

The General Bankruptcy Law establishes the statutory order of priority for different classes of creditors. However, for the purposes of the Opinion, what is more important is that the Law provides a framework for the protection of secured (including collateralized) rights of creditors. In particular, according to Article 43(2) of the General Bankruptcy Law, to satisfy their claims from the value of the collateral, a secured creditor must apply to the court. In such case their name is not included in the general list of creditors, and their claim is satisfied exclusively at the expense of the collateral, regardless of whether the value thereof is sufficient to satisfy that claim or not. Alternatively, the secured creditor may be included in the list of creditors. In such case, their claim will be satisfied from the value of the collateral in the first place and in case it is not sufficient – from the value of other assets.


4.14. Ինչ վերաբերում է ֆինանսական առողջացմանը, ապա այն կարող է հանգեցնել Պարտապանի գործունեության հետ կապված մի շարք հետևանքների, այդ թվում՝ Պարտապանի ակտիվների վաճառքի կամ գրավադրման, այդ ակտիվների մի մասի (հիմնականում պահանջների) հաշվանցման պարտատերերի պահանջների դիմաց, ոչ շահութաբեր գործունեության ուղղությունների փակում կամ ընդհանուր բիզնես ռազմավարությունների վերանայում, ոչ շահութաբեր գործարքների

As to financial rehabilitation, it can lead to a number of outcomes relating to the activity of the Debtor, including the sale or pledge of the assets of the Debtor, setting off some of those assets (mainly claims) against the claims of creditors, closing off non-profitable business lines or revision of general business strategies, termination/amendment of non-profitable transactions, debt restructuring, collection of claims, the attraction of a new loans/investments, reorganization. According to Article 60(1) of the General Bankruptcy Law, a rehabilitation plan may




դադարեցում/փոփոխություն, պարտքի վերաձևակերպում, պահանջների հավաքագրում, նոր փոխառությունների/ներդրումների ներգրավում, վերակազմակերպում: Սնանկության ընդհանուր օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիր կարող են ներկայացնել պարտապանը, կառավարիչը, ապահովված պահանջների, չապահովված պահանջների կամ մասնակիցների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը: Սնանկության ընդհանուր օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե տվյալ պարտատերը գրավոր այլ համաձայնություն չի տվել, ապա պարտատերերից որևէ մեկը չպետք է ֆինանսական առողջացման ծրագրի նախատեսված արդյունքում նվազ նպաստավոր պայմաններում հայտնվի, քան եթե պարտապանը լուծարվեր: Ավելին, 61-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է ապահովված այն պարտատիրոջ համաձայնությունը ստանալու պարտադիր պահանջ, որի գրավը նախատեսվում է օգտագործել առողջացման ծրագրում: Առողջացման ծրագիրը ենթակա է հաստատման պարտատերերի ժողովում քվեարկության միջոցով: Այնուհետև, այն պետք է հաստատվի դատարանի կողմից: Հարկ է նաև ընդգծել, որ Սնանկության ընդհանուր օրենքի համաձայն, առողջացման ծրագիրը կարող է կիրառվել ոչ միայն կամավոր սնանկության դիմումի հիման վրա (այս դեպքում, ինչպես նկարագրված է վերևում, պետք է իրականացվի հաշվապահական հաշվառման ստուգում), այլ նաև պարտապանի "սնանկության ռիսկի" դիմումի հիման վրա (երբ հաշվապահական հաշվառման չափանիշը չի բավարարվում, բայց պարտապանն իրեն համարում է պարտատերերի պահանջները բավարարելու անկարող):

be proposed by the Debtor itself, the bankruptcy administrator or 1/3 of secured creditors, unsecured creditors or participants. Pursuant to Article 61(2) of the General Bankruptcy Law, no rehabilitation plan may place a creditor in a worse situation than they would have been in if the statutory order of satisfaction of creditor claims upon liquidation was applied unless that creditor provided their written consent. Moreover, Article 61(4) provides for the mandatory requirement to obtain the consent of the secured creditor whose collateral is intended to be used in a rehabilitation program. A rehabilitation plan is subject to approval by voting of the creditor meeting. Afterwards, it must be approved by the court. It is also worth highlighting that under the General Bankruptcy Law, a rehabilitation program can be employed not only on the basis of voluntary bankruptcy application (in which case, as described above, the balance sheet test must be satisfied), but also based on the Debtor's application of "bankruptcy risk" (when the balance sheet is not satisfied, but the Debtor considers themselves unable to satisfy the claims of the creditors).




	Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենք	**Financial Institutions Bankruptcy Law**
4.15.	Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքը, համաձայն 1-ին հոդվածի 1-ին մասի, կիրառվում է բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների («**Ֆինանսական կազմակերպություններ**») նկատմամբ:	The Financial Institutions Bankruptcy Law, according to Article 1(1), applies to banks, credit organizations, investment companies, investment fund managers, and insurance companies (the **"Financial Institutions"**).
4.16.	Ֆինանսական կազմակերպությունը կարող է սնանկ ճանաչվել, եթե (ա) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին, (բ) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները, (գ) նրա ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից, (դ) պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը:	A Financial Institution may be declared bankrupt if: (a) 50% of its general capital has been consumed; (b) it cannot satisfy the claims of its creditors; (c) the assessment value of the main indicia is less than the minimal value established by the Central Bank; (d) it periodically does not comply with the mandatory reserve requirement.
4.17.	Սնանկության մասին դիմումը դատարան է ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից: Այլապես, ԿԲ-ն կարող է նշանակել ժամանակավոր ադմինիստրացիա, որը պետք է միջոցներ ձեռնարկի՝ ուղղված Ֆինանսական կազմակերպության ֆինանսական առողջացմանը: Ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանվում է համապատասխան ֆինանսական առողջացման ծրագրով (որը պետք է հավանություն ստանա Կենտրոնական բանկի կողմից) և չի կարող գերազանցել մեկ տարին: Ինչպես սահմանվախ է Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Ֆինանսական առողջացման ծրագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո Կենտրոնական բանկը կարող է այն երկարաձգել ևս մեկ տարով: Բացի այդ, նույն	The court application for bankruptcy is filed by the Central Bank. Alternatively, it may appoint a temporary administration, which should endeavor measures aimed at the financial rehabilitation of the Financial Institution. The term of activity of such administration is established by the relevant financial rehabilitation program (approved by the Central Bank) and may not exceed one year. As provided in Article 7(2) of the Financial Institutions Bankruptcy Law, the Central Bank has the authority to extend the term for another year. Moreover, as per Article 18(1)(b) of the same law, the application for the bankruptcy (liquidation) of the Financial Institution may also be submitted during or following the operation of the financial rehabilitation plan (acting of the administration).



օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ Ֆինանսական կազմակերպության սնանկության (լուծարման) վերաբերյալ դիմում կարող է ներկայացվել նաև ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման (ադմինիստրացիայի գործունեության) ընթացքում կամ դրանից հետո:

4.18. Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կենտրոնական բանկն իրավունք ունի ադմինիստրացիայի գործողության ժամանակահատվածով սառեցնել բանկի պարտատերերի պահանջների բավարարումը (մորատորիում), որը որը, սակայն, ավտոմատ չի կիրառվում, և պարտադիր չէ: Ի տարբերություն իրավաբանական անձանց, որոնց վրա տարածվում է Սնանկության ընդհանուր օրենքը, Ֆինանսական կազմակերպությունների դեպքում մորատորիումը տարածվում է նաև ապահովված պահանջների վրա, եթե Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում չի կայացնում մորատորիումի շրջանակներում որոշ պահանջներ չներառելու մասին: *Սակայն, ինչպես Սնանկության ընդհանուր օրենքի 39-րդ և 40.1-ին, այնպես էլ Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 16.1-ին հոդվածի 6-րդ մասերը նախատեսում են, որ «զուտացման համաձայնությունները» (որոնք, ի թիվս այլնի, ներառում են արժեթղթերի և դրամական միջոցների նկատմամբ ապահովված իրավունքը, մարժայի և նույնաբնույթ այլ պայմանագիրը, ինչպես նաև գործարքները, որոնք նախատեսում են արժեթղթերի կամ դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում, որոնցից բոլորը պետք է կնքված լինեն միջազգայնորեն ճանաչված գլխավոր համաձայնագրի կամ Համաձայնագրի ներքո) դուրս են սառեցման (մորատորիումի) կիրառման շրջանակից:*

In accordance with Article 14(1) of the Financial Institutions Bankruptcy Law, the Central Bank *may* impose a moratorium (stay) on the creditor claims for the term of the activity of the administration, which is neither automatic nor mandatory. Unlike in the case of entities governed by the General Bankruptcy Law, in the case of Financial Institutions, the moratorium shall apply to the secured claims too, unless the Board of the Central Bank adopts a resolution on non-inclusion of some claims into the moratorium framework. *However, similar to Articles 39 and 40.1. of the General Bankruptcy Law, Articles 14(4) and 16.1(6) of the Financial Institutions Bankruptcy Law provide that "netting arrangements" (which include, inter alia, security interests over securities and cash, margin arrangements, as well as transactions providing for the outright transfer of title over securities and/or cash, all of them entered into in connection with an internationally recognized master agreement or the MA) are carved out of the stay (moratorium).*



4.19. Համաձայն Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատարանի կողմից հաստատված անվճարունակության դեպքում Ֆինանսական կազմակերպությունը ենթակա է լուծարման: Այնուհետև պարտատերերի պահանջները բավարարվում են օրենքով սահմանված հերթականությամբ: Գրավով ապահովված պահանջները բավարարվում են (այնքանով, որքանով գրավադրված գույքի արժեքը բավարար է) գրավադրված գույքի արժեքի հաշվին: Մնացած գումարը ենթակա է բավարարման օրենքով սահմանված հերթականությամբ:


According to Article 3(1) of the Financial Institutions Bankruptcy Law, if the court declares a Financial Institution bankrupt, it is subject to liquidation. Afterward, creditor claims are satisfied in the statutory order. Claims protected by a pledge are satisfied (to the extent the pledged asset value is sufficient) from the value of the pledged asset. The remaining value is subject to satisfaction in the statutory order.

Որոշակի կոնտրագենտների սնանկությանը վերաբերող հատուկ դրույթներ

4.20. *Կենտրոնական բանկ.* Կենտրոնական բանկի նկատմամբ սնանկության կամ անվճարունակության այլ ընթացակարգ հարուցելն արգելվում է օրենքով: Այսինքն՝ Կենտրոնական բանկը չի կարող սնանկ կամ անվճարունակ ճանաչվել: Մասնավորապես, Կենտրոնական բանկի մասին օրենքի 58-րդ հոդվածը սահմանում է, որ Կենտրոնական բանկի նկատմամբ սնանկության վարույթ չի կարող հարուցվել: Բացի այդ, Սնանկության ընդհանուր օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետը հստակ սահմանում է, որ Կենտրոնական բանկը չի կարող պարտապան լինել սնանկության վարույթում:

Specific Regulations relating to the Insolvency of Certain Counterparties


Central Bank. Initiation of bankruptcy or other insolvency proceedings against the Central Bank is prohibited by law. That is, the Central Bank may not be declared bankrupt or insolvent. Namely, Article 58 of the Law on the Central Bank provides that bankruptcy proceedings may not be initiated in relation to the Central Bank. Also, Article 2(1)(c) of the General Bankruptcy Law explicitly provides that the Central Bank may not be a debtor in a bankruptcy proceeding.



4.21. *Ներդրումային ֆոնդ, կենսաթոշակային ֆոնդ.*[2] ՀՀ օրենսդրության համաձայն՝ կենսաթոշակային ֆոնդերը հանդիսանում են ներդրումային ֆոնդերի տեսակներ: Ավելին, եթե ներդրումային ֆոնդերն ընդհանուր առմամբ կարող են լինել ինչպես պայմանագրային, այնպես էլ կորպորատիվ, ապա կենսաթոշակային ֆոնդերը միայն պայմանագրային են: Ինչպես նկարագրված է վերևում, Սնանկության ընդհանուր օրենքը վերաբերում է ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձի, բացառությամբ նրանց, ովքեր ուղղակիորեն բացառվում են, իսկ Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքը վերաբերում է բացառապես դրանում թվարկված կորպորատիվ ֆինանսական կազմակերպություններին: Քանի որ պայմանագրային ներդրումային ֆոնդը ոչ իրավաբանական անձ է, ոչ էլ ֆիզիկական, և քանի որ այն չի համապատասխանում Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքով սահմանված Ֆինանսական կազմակերպությունների ցանկին, այդպիսի ներդրումային ֆոնդերը դուրս են երկու օրենքների շրջանակից: Հետևաբար, պայմանագրային ներդրումային ֆոնդերը «պաշտպանված» են սնանկությունից/անվճարունակությունից, նման ֆոնդերի նկատմամբ սնանկության/անվճարունակության վարույթ չի կարող հարուցվել:

Investment Fund, Pension Fund. Under Armenian laws pension funds are types of investment funds. Furthermore, whereas Investment Funds in general may be both contractual and corporate, pension funds are only contractual. As described above, the General Bankruptcy Law applies to any legal or natural persons, except those that are explicitly excluded, and Financial Institutions Bankruptcy Law applies solely to corporate financial institutions enumerated therein. Since a contractual investment fund is neither a legal nor a natural person, also since it does not fall within the scope of the financial institutions under the Financial Institutions Bankruptcy Law, such investment funds fall out of the scope of both laws. Consequently, contractual investment funds are “immune” to bankruptcy/insolvency: no bankruptcy/insolvency proceedings may be initiated toward such funds.

[115] Սույն Եզրակացության տրամադրման օրվա դրությամբ շրջանառության մեջ է գտնվում Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի փոփոխությունների նախագիծը, որով նախատեսվում է ներդրումային (ներառյալ՝ կենսաթոշակային) ֆոնդերին ներառել այն ֆինանսական կազմակերպությունների ցանկում, որոնց նկատմամբ կիրառելի են օրենքով նախատեսված՝ սնանկության կառուցակարգերը:
As of the date of provision of this Opinion, the draft amendments to the Financial Institutions Bankruptcy Law are in circulation, which envisage including investment (including pension) funds into the list of financial institutions the bankruptcy of which is regulated by that Law.



5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

OPINION

<u>Ապահովության վավերությունը</u>

<u>Validity of Credit Support</u>

5.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներքո ո՞ր օրենքն է կարգավորում Պայմանագրի ներքո տրամադրվող ապահովության պայմանագրային ասպեկտները: Արդյո՞ք ՀՀ դատարանները կճանաչեն Պայմանագրի սեփականության իրավունքի փոխանցման վավերությունը:

Under the laws of the Republic of Armenia, what law governs the contractual aspects of credit support under the CSA? Would the courts of Armenia recognize the validity of a title transfer created under the CSA?

ՀՀ օրենսդրության համաձայն՝ ապահովության պայմանագրային ասպեկտները կարգավորող հիմնական օրենքը Քաղաքացիական օրենսգիրքն է:

Under Armenian law, the Civil Code of the Republic of Armenia is the main law governing the contractual aspects credit support arrangements.

Պայմանագիրը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, այսպիսով՝ վեճի առկայության դեպքում դատարանն առանց որևէ խոչընդոտի կիրառելու է ՀՀ իրավունքը:


The CSA is governed by the Armenian law, so in case of a dispute, the court will apply the laws of the Republic of Armenia without any obstacles.

Ինչ վերաբերում է ՀՀ դատարանների կողմից Պայմանագրի վավերության ճանաչմանը, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածը սահմանում է պայմանագրի ազատության սկզբունքը, այն է՝ կողմերը կարող են կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր: Այսպիսով՝ ՀՀ դատարաններին որևէ բան չի խոչընդոտում ճանաչելու Պայմանագրի վավերությունը:

As for the recognition of the validity of the CSA by the RA courts, Article 437 of the Civil Code of the Republic of Armenia establishes the principle of freedom of contract, namely: the parties may enter into a contract provided for as well as not provided for by law or other legal acts. Thus, nothing prevents the RA courts from recognizing the validity of the CSA.

5.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներքո ո՞ր օրենքն է կարգավորում Պայմանագրի ներքո սեփականության իրավունքով փոխանցվող Ապահովության գույքային ասպեկտները: Ի՞նչ գործոններ կարող են կարևոր լինել այս հարցի ներքո: Այն դեպքերում, երբ ապահովության գտնվելու վայրը (կամ ենթադրյալ գտնվելու վայրը) որոշիչ գործոն է, խնդրում ենք հակիրճ նկարագրել Ապահովության տարբեր տեսակների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը

Under the laws of the Republic of Armenia, what law governs the proprietary aspects of a title transfer arrangement under the CSA? What factors would be relevant to this question? Where the Location (or deemed Location) of the Credit Support is the determining factor, please briefly describe the principles governing such determination under the law of the Republic of Armenia with respect to the different types of Credit Support.



համապատասխան նման հստակեցման կարգավորող սկզբունքները:

Կարծում ենք, որ Եզրակացության 3.1 կետում նշված բոլոր փաստական օրինաչափությունների համատեքստում, յուրաքանչյուր դեպքում կկիրառվի Պայմանագիրը կարգավորող օրենսդրությունը, այսինքն՝ ՀՀ օրենսդրությունը:

Այս հարցի ներքո մեր հետագա վերլուծությունը կկենտրոնանա այն ձևական պահանջների վրա, որոնք անհրաժեշտ են սեփականության իրավունքի փոխանցումը ձևակերպելու և այն մրցակցող պահանջներից պաշտպանելու համար: Եթադրելով, որ ապահովության գտնվելու վայրը Հայաստանն է.

(ա) *Ըստ ներկայացնողի արժեթղթեր.* Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի՝ ըստ ներկայացնողի արժեթղթով հավաստված իրավունքներն այլ անձի փոխանցելու համար բավական է արժեթուղթը հանձնել այդ անձին:

(բ) *Սեփականության իրավունքի անմիջական գրանցմամբ անվանական արժեթղթեր.* Քաղաքացիական օրենսգրքի 146-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ արժեթղթով հավաստված իրավունքների իրականացման և փոխանցման համար բավարար են հատուկ գրանցամատյանում (սովորական կամ համակարգչային) դրանց ամրագրման մասին ապացույցները: Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 192-րդ հոդվածի 1ին մասի և 194-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ արժեթղթերի կենտրոնացված պահառությունն իրականացնում է Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիան («ՀԿԴ»)՝ էլեկտրոնային արժեթղթերի հաշիվների նացման և վարման միջոցով: Սեփականության իրավունքի անմիջական գրանցմամբ ապանյութականացված արժեթղթերի նկատմամբ սեփականության փոխանցումը գրանցվում է ՀԿԴ-ում: Ստորև մանրամասն կանդրադառնանք

We believe that in the context of all fact patterns referred to in 3.1. of the Opinion, the governing law of the CSA, that is – the Armenian law, would apply in each case.

Our further analysis under this question will focus on the formalities required to perfect a title transfer and protect it against competing claims. Assuming that the Location of the credit support is in Armenia:

(a) *Bearer securities.* According to Article 149(1) of the Civil Code, to transfer rights pertaining to bearer securities, the transfer of the security itself shall be sufficient.

(b) *Directly held registered securities:* Article 146(3) of the Civil Code provides that in cases and under the procedure envisaged by law, to execute and transfer rights pertaining to securities, proof of recording in a special register (ordinary or electronic) shall be sufficient, in addition to assignment of rights stemming from registered securities, as provided in Article 149(2) of the Civil Code. According to Article 192(1) and 194(1) and (2) of the Law on Securities Market, the centralized custody of securities is performed by the Central Depository of Armenia ("CDA"), via opening and maintaining electronic securities accounts. The title transfer to the directly held dematerialized securities maintained at the CDA are registered with the CDA. Below, we elaborate on the mechanisms of perfecting and protecting transfer of title via relevant depositary operations. The transfer of title must be registered as an ordinary operation of transferring a security. Cl. 290 of the CDA Rules establishes that a securities


համապատասխան դեպոզիտար գործարքների միջոցով փոխանցված սեփականության իրավունքի պահպանման և պաշտպանության մեխանիզմներին:

Սեփականության փոխանցումը պետք է գրանցվի արժեթղթերի փոխանցման սովորական գործարքի տեսքով: ՀԿԴ կանոնների 290-րդ կետը սահմանում է, որ արժեթղթերի փոխանցման գործառնություն կարող է կատարվել միայն այն դեպքում, եթե արժեթղթեր փոխանցող և ստացող կողմեր հանդիսացող հաշվետերերի արժեթղթերի հաշիվներն ունեն ակտիվ հաշվի կարգավիճակ: Այս գործարքի իրականացման համար փոխանցվող արժեթղթերի սեփականատերը (ապահովություն փոխանցողը) փոխանցման հանձնարարական է ուղարկում իր արժեթղթերի հաշիվը սպասարկող հաշվի օպերատորին, իսկ արժեթղթեր ստացող հաշվի սեփականատերը (ապահովություն ստացողը) արժեթղթեր ստանալու համապատասխան հանձնարարական է ուղարկում իր արժեթղթերի հաշիվը սպասարկող հաշվի օպերատորին: Երբ համակարգում հանձնարարականները համընկնում են, սեփականության իրավունքի փոխանցումն ուժի մեջ է մտնում:

transfer operation can only be performed if both parties to the transaction have active securities accounts. To effect such transfer, the account holder transferring the securities title submits an order for the transfer of securities to the account operator servicing their securities account, and the account holder receiving securities (submits a matching order for the receipt of securities to the account operator servicing their securities account. Once the orders match in the system, the title transfer becomes effective.

(գ) *Միջնորդավորված արժեթղթեր*. Վերջապես, միջնորդավորված արժեթղթերի նկատմամբ սեփականության փոխանցումը իրականացվում է պահառուի կողմից: Ինչպես ՀԿԴ-ի պարագայում, պահառուներն այն իրականացնում են մի կողմի հաշվից մյուս կողմի հաշվին արժեթղթերի պարզ փոխանցման միջոցով: Այս առումով հարկ է ընդգծել, որ 33.2.-րդ կետի համաձայն՝ պահառուն կարող է իրականացնել նման փոխանցումը նաև այլ պահառուի կողմից վարվող արժեթղթերի հաշվին: Այլ կերպ, փոխանցման նկատմամբ սեփականության իրավունքի ձևակերպման համար ինչպես ապահովություն տրամադրողի, այնպես էլ ապահովություն ստացողի

(c) *Intermediated securities:* Finally, the registration of transfer of title to intermediated securities shall be carried out by a custodian. Similar to the CDA, custodians exercise those by way of simple transfer of securities from one party's account to another's. In this regard, it is worth highlighting that under Cl. 33.2., the custodian can make such transfers to securities accounts run by other custodians as well. In other words, to perfect a title of transfer, it is not necessary for both credit support provider and credit support taker to have accounts with the same custodian.



	հաշիվներների առկայությունը միևնույն պահառուի մոտ պարտադիր պայման չէ:	
	Վերջում, խնդրում ենք հաշվի առնել, որ Կանոնակարգ 33-ը նախատեսում է բավականաչափ լայն կարգավորիչ դաշտ պահառուական և դեպոզիտար գործառնությունների համար: Մասնավորապես, հնարավոր է բացել և սպասարկել արժեթղթերի հաշիվների լայն շրջանակ՝ անձնական, անվանատիրոջ (ներառյալ՝ օմնիբուսային և սեգրեգացված) և այլն:	Finally, please also note that Regulation 33 provides for a very wide regulatory framework for custody and depository operations. In particular, a wide range of securities accounts – personal, nominee (including omnibus and segregated) etc. – can be opened and maintained.
	(դ) *Դրամական միջոցներ*. Փոխանցումը համապատասխան հաշվին բավարարչր է դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը հավաստելու համար:	(d) *Cash.* Transfer of cash to the relevant account shall be sufficient for the pruposes of documenting the transfer of title.
5.3.	***Կան արդյո՞ք հատուկ գործողություններ, պարտավորություններ կամ սահմանափակումներ, որոնք կիրառվում են Ապահովություն ստացողի նկատմամբ՝ կապված Պայմանագրի ներքո իր փրկագործման տակ գտնվող համապատասխան Ապահովության պահպանման հետ:***	***Are there any particular duties, obligations or limitations imposed on the Collateral Taker in relation to the care of the Credit Support held by it pursuant to the CSA?***
	Յուրաքանչյուր տեսակի Ընդունելի ապահովության պահպանման հետ կապված հատուկ պահանջներ չկան:	There are no specific requirements related to the care each type of Eligible Credit Support.
5.4.	***Ո՞րն է Պայմանագրով սահմանված՝ Ապահովության կարգավորումների՝ ՀՀ օրենսդրության ներքո կարգավիճակը: Արդյո՞ք առկա է Ապահովության՝ ՀՀ իրավունքի ներքո որպես ոչ թույլատրելի/անվավեր «վերաորակման ռիսկ», որի հետևանքով այն կարող է սնանկության վարույթում «հետգանձվել»:***	***What is the legal status of Credit Support arrangements documented under the CSA under Armenian law? Is there a risk of "re-characterisation" of Credit Support as non-eligible/void under Armenian law so that it could be "clawed back" in bankruptcy proceedings?***
	Ինչպես սահմանված է Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1 հոդվածի 2-րդ մասում և Սնանկության ընդհանուր օրենքի 40.1 հոդվածի 4-րդ մասում,	As provided by Article 16.1(2) of the Financial Institutions Bankruptcy Law and Article 40.1(4) of the General Bankruptcy law, **a collateral**

ապահովության պայմանագրեր են համարվում ֆինանսական գործարքների հետ կապված՝

ա) հետևյալ ապահովված իրավունքները.

(1) արժեթղթերի և դրամական միջոցների նկատմամբ ապահովված իրավունքը,

(2) երաշխավորությունը և երաշխիքը,

(3) մարժայի և նույնաբնույթ այլ պայմանագիրը,

(4) գրավչության գործիքները.

բ) այն գործարքները, որոնց պարտադիր բաղկացուցիչ մաս է կազմում որպես ապահովման միջոց արժեթղթերի կամ դրամական միջոցների նկատմամբ **սեփականության իրավունքի փոխանցումը**, ներառյալ՝ ռեպո գործարքները, արժեթղթերի փոխառության գործարքները, արժեթղթերը գնելու և հետ վաճառելու հետ կապված գործարքները:

arrangement is an agreement relating to financial transactions:

(i) providing for the following secured rights:

1) secured right against securities and monetary resources;

2) guarantee and suretyship;

3) margin and other similar agreement;

4) credit enhancement.

(ii) contracts mandating a **transfer of title** over collateral securities or monetary funds, including repo agreements, agreements to borrow securities, agreements to buy and sell securities.

Ինչպես սահմանված է Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1 հոդվածի 1-ին մասում և Սնանկության ընդհանուր օրենքի 40.1 հոդվածի 3-րդ մասում, **ֆինանսական գործարքներ** են համարվում Քաղաքացիական օրենսգրքի 252.1-ին հոդվածով նախատեսված գործարքները: Քաղաքացիական օրենսգրքի 252.1-ին հոդվածի համաձայն՝ ֆինանսականն գործարքներ են.

ա) Արժեթղթերի շուկայի մասին օրենքով նախատեսված ածանցյալ ֆինանսական գործիքները,

բ) Կենտրոնական բանկի սահմանած պահանջները բավարարող գլխավոր համաձայնագրերի շրջանակներում կնքված գործարքները:


252.1-ին հոդվածի 1-ին մասի նպատակների համար գլխավոր համձայնգրերի՝ Որոշում 67-ով սահմանված ցանկը լրացվել է՝ ներառելով ՀՀ իրավունքով կարգավորվող՝ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ ածանցյալ ֆինասական գործիքների գլխավոր համաձայնագիրը: Համաձայն Որոշում 67-ի՝ այդ Որոշմամբ նախատեսված գլխավոր

Article 16.1(1) of the Financial Institutions Bankruptcy Law and Article 40.1(3) of the Financial Institutions Bankruptcy Law provide that for the purposes thereof, **a financial transaction** shall mean any of the transactions determined under Article 252.1 of the Civil Code. The definition of financial transactions stipulated under Article 252.1(2) of the Civil Code provides that financial transactions are:

(i) derivative financial instruments provided under the Law of the Republic of Armenia on Securities Market (the "Law on Securities Market");

(ii) transactions entered into under master agreements meeting the requirements established by the CBA.

The list of master agreements qualifying for the purposes of Article 252.1(2), as established by the Resolution 67, has been amended include the Armenian law governed derivatives master agreement published by the Central Bank. Under the Resolution 67, for the purposes of Article 252.1 of the Civil Code, transactions executed under master agreements envisaged



համձայնագրերի ներքո կնքված գործարքները Քաղաքացիական օրենսգրքի 252.1-ին հոդվածի 1-ին մասի նպատակների համար որակվում են որպես ֆինանսական գործարքներ:

by that Resolution shall qualify as financial transactions.

Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքը և Սնանկության ընդհանուր օրենքը ֆինանսական գործարքների հետ կապված ապահովության համաձայնագրերին օժտում են կառավարչի՝ Օրենքների համապատասխանաբար 16-րդ և 54-րդ հոդվածներով նախատեսված «հետգանձման» իրավասությունից պաշտպանությամբ:

Մասնավորապես, այդպիսի ապահովության համաձայնագիրը (Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի դեպքում) կամ դրա ներքո ապահովության փոխանցումը (Սնանկության ընդհանուր օրենքի ներքո) կարող է անվավեր ճանաչվել միայ այն դեպքում, եթե կնքվել է ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող իննսուն օրվա ընթացքում, և.

(i) կնքման պահին պարտապանի համար սնանկությունը կամ սնանկության հնարավորությունը կանխատեսելի էր, և

(ii) այդպիսի համաձայնություն կնքելը չէր բխում պարտապանի շահերից և հետապնդում էր բացառապես ակտիվները սնանկության գործընթացից դուրս բերելու նպատակ:.

The Financial Institutions Bankruptcy Law and the General Bankruptcy Law endow transfers made under collateral arrangement associated with financial transactions with special immunity from the administrator's "claw back" powers determined under Article 16 and 54 of the Laws accordingly.

In particular, such collateral arrangement (in case of Financial Institutions Bankruptcy Law) or transfer of collateral thereunder (in case of General Bankruptcy Law) may be declared void only if entered into within 90 days preceding the appointment of the administrator and:

(i) bankruptcy or probability of bankruptcy was predictable at the moment of entering into such arrangement; and

(ii) entering into such arrangement was not in the interest of the debtor and its sole purpose was to take out assets from bankruptcy proceedings.

Գործարքների անվավերության իրավական հետևանքները սահմանված են Քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածու, որի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը մյուս կողմին է վերադարձնում գործարքի ներքո ամբողջ ստացածը, իսկ բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցում է դրա արժեքը դրամով, եթե գործարքի

The legal consequences of voidance of transactions are set forth under Article 304 of the Civil Code, pursuant to which in the event of voidance of a transaction each party shall return to the other party everything received under the transaction, and in case of impossibility of returning what was received in kind (including if what was received consisted of the right of use of property, performed work, or provided services) to compensate its value, unless other consequences of the voidance of the transaction are provided by law.



անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Ինչ վերաբերում է «վերաորակման ռիսկին», համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին մասի՝ պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել գրավով, տուժանքով, պարտապանի գույքի պահումով, երաշխավորությամբ, երաշխիքով, նախավճարով և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ եղանակներով: Այսինքն՝ կողմերն ազատ են ինչպես ընտրելու օրենքով սահմանված պահավության միջոց, այնպես պայմանագրով սահմանելու օերնքով տառացիոներեն չնախատեսված կամ դրանցից տարբերվող ապահովության միջոցներ: Սա վերաբերում է նաև այն ապահովության միջոցին, որի ներքո Ապահովության նկատմամբ սեփականության իրավունքն ամբողջապես փոխանցվում է պարտատիրոջը: ՀՀ օրենսդրության միակ կարգավորումը, որը կարող է ենթադրել «վերաորակման» ռիսկի առկայություն, Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված «շինծու գործարքների» կոնցեպտն է: Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի՝ շինծու գործարքը մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարք է: Շինծու գործարքը առոչինչ է:


Շինծու գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս: Այնումենալնիվ, կարծում ենք, որ Ախահովության պայմանագրի՝ սեփականության իրավունքի փոխանցման՝ ՀՀ իրավունքի ներքո որպես ապահովված իրավունք վերաորակման ռիսկը մինիմալ է հետևյալ պատճառաբանությամբ.

- Ապահովության պայմանագիրը հիմնված է միջազգայնորեն ճանաչված և ընդունված ձևանմուշային փաստաթղթի վրա, և սեփականության իրավունքի փոխանցումը դրա

As to “re-characterization risk”, according to Article 368(1) of the Civil Code, performance of obligations may be secured by pledge, penalty, retention of property of the debtor, surety, guaranty, prepayment and other means provided by law or contract. This means that the parties to contract are free to apply any of the security means determined under the law, but also provide under contract for security means that are not explicitly determined or differ from those mentioned in the law. This refers also to security means whereby the title over collateral is fully transferred to the creditor. The only aspect of Armenian legislation that implies a risk of re-characterisation of the “title transfer” approach as a security interest is the concept of so-called ''sham transactions'' envisaged under the Civil Code. Article 306, part 2 of the Civil Code defines a sham transaction is a transaction, entered into for the purpose of hiding another transaction. Sham transactions are null and void.

While deciding on the rules that shall apply to a sham transaction, the nature of transaction that the parties have attempted to hide is taken into account. However, we believe that the risk of re-characterisation of the ''title transfer'' approach of the CSA as a security interest under Armenian legislation is minimal for the following reasons:

- CSA is based on an internationally recognised and accepted sample document, and the Title Transfer is a standard term thereof, which will make it difficult to argue that the Title Transfer provision was intentionally added for the purpose of hiding of other transaction.
- The notion of transfer of title under collateral arrangements entered into in connection with financial transactions is provided and acceptable under Armenian legislation as well. Namely, Article 16.1, part 2 of the Financial



ստանդարտ դրույթներից է, ինչը քիչ հավանական է դարձնում այն փաստարկը, որ սեփականության իրավունքի փոխանցման դրույթը ներառվել է այլ գործարքի քաղարկման նպատակով,

- Ֆինանսական գործարքների հետ կապված պահովության համաձայնագրերի ներքո սեփականության իրավունքի փոխանցման կոնցեպտը նախատեսված և ընդունելի է ՀՀ օրենսդրությամբ: Մասնավորապես, Ֆինանսական կազմակերպությունների սնանկության օրենքի 16.1 հոդվածի 2-րդ մասը և Սնանկության ընդհանուր օրենքի 40.1 հոդվածի 4-րդ մասը սահմանում են ֆինանսական գործարքների առնչությամբ կնքվող ապահովության համաձայնագրերի տեսակները, որոնք, ի թիվս այլնի, ներառում են արժեթղթերի կամ դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում՝ որպես ապահովութուն՝ ներառյալ՝ ռեպո գործարքները, արժեթղթերի փոխառության գործարքները, արժեթղթերը գնելու և հետ վաճառելու հետ կապված գործարքները:

Institutions Bankruptcy Law and Article 40.1, part 4 of the General Bankruptcy Law enumerate the types of collateral arrangements entered into under financial transactions, which include, among others, transactions mandating transfer of title, as a security, over securities or cash, including repurchase agreements, securities lending transactions, transactions related to purchase and re-sale of securities.

Հարգանքով,

Respectfully Yours,

Վարուժան Ավետիքյան

Կառավարող գործընկեր

Varoujan Avedikian

Managing Partner

Միսակ Բաբաջանյան

Ավագ գործընկեր

Misak Babajanyan

Senior Partner

Լարիսա Գևորգյան

Ավագ իրավախորհրդատու,

Ֆինանսական ծառայությունների ուղղության ղեկավար

Larisa Gevorgyan

Senior Associate,


Financial Practice Lead Counsel

Մերի Համբարձումյան

Իրավախորհրդատու

Mary Hambardzumyan

Associate



ԻՐԱՎԱԿԱՆ ՀՐԱԺԱՐՈՒՄ

Ստանդարտ ձևաթղթերը հրապարակվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ շուկայում դրանց կիրառմանը նպաստելու, շուկայի մասնակիցների համար միասնական մոտեցումների կիրառումն ապահովելու նպատակով: Միաժամանակ, Կենտրոնական բանկը որևէ ուղղակի կամ ենթադրյալ հավաստիացում կամ երաշխիք չի տալիս սույն փաստաթղթում ներկայացված տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության վերաբերյալ: Կենտրոնական բանկը պատասխանատվություն չի կրում սույն ձևաթղթերի օգտագործման կամ կիրառման հետևանքով առաջացած հնարավոր հետևանքների համար: Սույն փաստաթղթերը մշակվել են միջազգային լավագույն փորձի հիման վրա, սակայն չեն համարվում իրավաբանական, ֆինանսական կամ որևէ այլ տեսակի անհատական խորհրդատվություն:

DISCLAIMER


The standard templates have been published by the Central Bank of the Republic of Armenia to facilitate their application in the market and to ensure the consistent implementation of approaches among market participants. At the same time, the Central Bank does not provide any direct or implied representation or warranty regarding the accuracy or completeness of the information presented in this document. The Central Bank accepts no liability for any potential consequences of using the templates. The documents have been developed based on the best international practice, but do not constitute legal, financial or any other individual advice.

ՎԶԵԲ-ը որևէ ուղղակի կամ ենթադրյալ հավաստիացում կամ երաշխիք չի տալիս սույն փաստաթղթում ներկայացված տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության վերաբերյալ: ՎԶԵԲ-ը ինքնուրույն կերպով չի սրուգել սույն փաստաթղթում ներառված որևէ տեղեկատվություն և որևէ պատասխանատվություն չի կրում դրանում պարունակվող տեղեկատվության, ոչ ճշգրիտ հայտարարության կամ բացթողման համար:

The EBRD makes no representation or warranty, express or implied, as to the accuracy or completeness of the information set forth in this document. The EBRD has not independently verified any of the information contained in this document and accept no liability whatsoever for any information, misstatement or omission contained therein.

«Անդերսեն Լիգըլ» ՓԲԸ-ն մշակել է սույն փաստաթղթում ներառված ստանդարտ ձևաթղթերը՝ հիմնվելով գործող օրենսդրության և ISDA-ի կողմից հրապարակված փաստաթղթերի վրա: Թեև ներդրվել են լավագույն ջանքեր՝ ձևաթղթերը ISDA-ի կողմից հրապարակված փաստաթղթերին

*Andersen Legal CJSC has developed these standardized templates based on the applicable legislation and the documentation published by ISDA. Although best efforts have been made to align the templates with the documents published by ISDA, the templates are not literal translations of those documents. Each provision has been **localized** to conform to Armenian law (including Armenian legal traditions and Armenian-language*



*համապատասխանեցնելու համար, այնուամենայնիվ ձևաթղթերը չեն հանդիսանում վերջիններիս բառացի թարգմանություններ. դրանց յուրաքանչյուր դրույթ **փեղայնացվել է**՝ համապատասխանեցվել ՀՀ իրավունքին (ներառյալ՝ ՀՀ իրավունքի ավանդույթներին և հայալեզու տերմինաբանությանը): Այսպիսով՝ ISDA-ի կողմից հրապարակված փաստաթղթերում համապատասխան անգլերեն տերմիններով նկարագրված հասկացությունները կարող են ամբողջությամբ չհամընկնել փաթեթում ներառված փաստաթղթերում կիրառված տերմինների և դրանց բովանդակության հետ:*

terminology). Therefore, the concepts described in the ISDA-published documents with corresponding English terms may not fully correspond to the terms used in the documents included in this package or to their content.

Միաժամանակ, «Անդերսեն Լիգըլ» ՓԲԸ-ն որևէ ուղղակի կամ ենթադրյալ հավաստիացում կամ երաշխիք չի տալիս որևէ կոնկրետ համատեքստում կամ գործարքում ձևաթղթերի ամբողջականության, ճշգրտության, նպատակահարմարության վերաբերյալ: «Անդերսեն Լիգըլ» ՓԲԸ-ն չի ստանձնում իրավական և/կամ կարգավորման փոփոխություններին կամ շուկայի զարգացումներին համապատասխան սույն ձևաթղթերը թարմացնելու կամ վերանայելու որևէ պարտավորություն և որևէ պատասխանատվություն չի կրում դրանց օգտագործման հետևանքների համար: Շուկայի մասնակիցներին խստորեն խորհուրդ է տրվում ստանալ իրավաբանական խորհրդատվություն՝ սույն փաստաթղթերի կնքումից կամ դրանց հիման վրա որևէ գործարք իրականացնելուց առաջ:

At the same time, Andersen Legal CJSC makes no representation or warranty, express or implied, as to the completeness, accuracy, or suitability of the templates in any particular context or transaction. Andersen Legal CJSC assumes no obligation to update or revise these templates to reflect legal and/or regulatory changes or market developments and bears no responsibility for any consequences arising from their use. Market participants are strongly advised to seek legal advice before executing these documents or undertaking any transaction based on them.